


39/199 սփ

# Բարքը



**ԱՄԱԼԻ.**—Բայց Սիկմընտ, նաեւ ցաւ մը ֆիզի-  
քական չէ, ապա ուրեմն ի՞նչ է:

**ՃԻՒՕՅՏ.**—Թերեւս մտքի ցաւ մը, հոգիի վէրք  
մը:

**ԱՄԱԼԻ.**—Հոգիի՞ վէրք մը: Սիկմընտ, դուն բծի՞շկ  
ես, թէ քահանայ: Դուն ի՞նչ գործ ու-  
նիս հոգիներուն հետ: Յաւորաւ ամոքու-  
մը, հիւանդներու քուծումը շատ սակի  
լա գործ է մարդու մը համար: Դուն  
պարզապէս բժշկութիւնը կիրարկէ,  
ինչպէս կը կիրարկեն վիեննայի քոլոր  
մեծ բժիշկները, որոնք աշխարհի լաւա-  
գոյնները կը համարուին:

**ՃԻՒՕՅՏ.**—Պէտք է որ մէկը սկսի: Պէտք է որ  
մէկը բանայ դուրը: Պէտք է գիտնալ,  
թէ ինչու անտեսանելի վէրք մը կրնայ  
անդամալուծել մարդ մը եւ խորտակել  
զայն:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.- * * *	«Կարմիր թիղ»ի թեկադրամբով
3.- Հ. ՏԱՆՔԵՐ	Կարմիր թիղը
32.- Ս. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	Հոգիմ
42.- Վ. ՇՈՒՇԱՆՆԱՆ	Ցիրուցան էջեր
62.- Վ. ԹԵՔԵԱՆ	Հաւատարմութիւն
64.- Գ. ԱԲԵԼԵԱՆ	Պէյրուք
79.- Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	Գիրքերու նահատակութիւնը
84.- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Երկու պատկեր եւ մէկ եզրակացութիւն
99.- Վ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ	Յովհաննէս Զարիֆեանի անյայտ տարիները
101.- Ս. ՎՐԱՑԵԱՆ	«Բոլոր տոմսակները ծախուած են»
104.- Ս. Դ. ԳԴԻԳՈՐԵԱՆ	Նիկողոս Աարաֆեան քանաստեղծը
113.- Պ. ՄՆԱՊԵԱՆ	«Ես իմ անուշ»ի ողիսականը
121.- ՇԱՀԱՆԴՈՒԽՏ	Միխայիլ Նայիմէի հետ
133.- Լ. ՇԱՌՈՅԵԱՆ	Ժ. Դանիէլեանի «Բանասիրական որոնումներ»ը
141.- * * *	Լոյս տեսան
147.- * * *	Մշակութային լուրեր



ԱՆՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

ԼԷ. ՏԱՐԻ ԹԻԻ 1 ՁՄԵՌ 1998 ՊԷՅՐՈՒԹ

«ԿԱՐՄԻՐ ԹԵԼ»Ի ԹԵԼԱԴՐԱՆՔՈՎ

Ոչ շատ յայտնի գրող մը՝ Հանրի Տանֆեր, յիսուական բուականներում լույս ընծայեց տիեզերահոջակ գիտնական Սիկմընտ Ֆրեյդի կեանքը եւ հոգեկան աշխարհին մէջ անոր ըրած յայտնութիւնները ընդգրկող երկ մը, «Կարմիր թելը», զօր ֆրանսացի Փօլ Գէնթէն ենթարկեց թատերական պատշանեցման, իսկ ուրիշ ֆրանսացի մը՝ Բէյսոն Բուլօ, 1983ին Փարիզի «Էժիմնագ» թատրոնի բեմէն հանդիսադրեց զայն:

Թատերգութիւնը ունէր տարրերակատար, որոնց ուրբերկրորդական պաշտօններով հանդէս կու գային, իսկ թատերախօսին ժամանակը մեծաւ մասամբ կը լցնէին միւս երկուքը՝ Ֆրեյդի կերպարը անձնատրած Գուրտ Ճարկընզ եւ Ֆրեյդի խնամքին յանձնուած անդամայոյծ աղջկան դերը մարմնատրած Նիէոլ Հիս:

Անոնք, որ առիթ ունեցած էին «Էժիմնագ»ի մէջ հանդիսատես դառնալու յիշեալ գոյգին խաղարկութեան, նոյնիսկ տարիներ ետէ՛ առաջին օրուան թատերախօսի կը յիշէին այն անմախքնազ յարուածութիւնը, որ Գուրտ Ճարկընզն ու Նիէոլ Հիսի համընդհանրապէս առաջին վայրկեանէն սկսած էր ու տեսած միջնակ վերջ, բերնէ բերան յեցուն թատերաարարը վերածելով միակտուր լուրսեան մը: Անձկութեամբ թաթառուն ու տառապալից խաղարկութեան աւարտին, երբ մանրագնին ու սպառիչ հարցումներուն տարափին տակ Ֆրեյդի կը կողմնակալութեան անդամայոյծ աղջկան անդամայոյծութեան զարտեմիքը եւ, շնորհիւ կատարուած անսխալ ախտաճանաչումին՝ վերջինը յանկարծ ոտի կ'ելլէ, իրեն հետ՝ հանդիսատեսները իրենց հետ, եւ մէկ մարդու պէս ոտի կը ցատկեն ու կը սկսին որոտընդոտու երկարատես ծափահարութեան մը, որ կը խաչածեւուի կեցցէներով, գուարթ սուպրոններով ու ազնկայոյզ քացազանչութիւններով:

Ներկաները կը վկայեն, որ Փարիզի թատերական բնագոտները շարքերու ու ամիսներ ամբողջ անդրադարձած են «Կարմիր թելը»ի բեմադրութեան ու թատրոնին հետ էիչ թէ շատ կապ ունեցող հազարաւոր ու հազարաւոր անձեր փութեցած են անպայման հանդիսատես ըլլալ մարդուն բարդ ներաշխարհին մէջ կատարուած ֆրեյդիական յայտնութիւններուն, հերթական ներկայացումներու աւարտին տատացիօրէն կրկնելով առաջին հանդիսատեսներուն որոտընդոտու ծափահարութիւններն ու խանդավառ քացազանչութիւնները:

Ի դէպ, «Կարմիր թելը», նշանաւոր դերասան Գուրտ Ճարկընզի գլխաւորութեամբ նորէն, վաթսուական բուականներու կեանքուն բեմադրուեցաւ նաեւ Պէլլուրի «Քաղնիս» տիւ Լիպանի թատերաարարին մէջ, եւ Լիբանանի քաղաքացի թատերասուերներ նոյնպէս ու

յոտընկալա ծափողջունեցին  
իրենց պարզեւում թատերակամ  
այդ բացառիկ վայելքը:

Հոն' եւ երկրորդ անգամ անոր  
քննադրութեան հոսեանդ իստես  
ըլլալէ ետք, մեմէ յանախ փորձած  
ենք մեր տրամադրութեան տակ  
ունենալ «Կարմիր թերթ» ինքնագի-  
րը, բայց անցնող տասնամեակնե-  
րուն յաջողութեամբ չպատկուեցաւ  
մեր հետաքրքրութիւնը:


Վերջին տարիներուն, մեր  
Քաղաքի քննարու վրայ ներկա-  
յացուած թարգմանալ թատեր-  
գութիւններուն առատութեան  
գուգահեռ, դարձեալ սկսաւ ներդ  
մեզ նոյն փափաքը եւ անի թուում  
դարձաւ անիկա, երբ «Քաղին» ի  
փարիզարմակ մեր քարերամերէն  
երկուքը՝ Յակոբ Արքիմեան եւ Ար-  
սէն Այնթապեան, յաջողաբար  
այցելեցին խմբագրատունս եւ մեմէ  
իրենց պարզեցինք մեր «անյոնի»  
փափաքը: Թէ՛ Արքիմեան եւ թէ՛  
Այնթապեան խոստացան հետա-  
պնդել երեսունհինգ տարի առաջ  
«Ճիւղնագ» ի կազմած խաղացան-  
կին այդ գլուխ-գործոցը:

Եւ, զարմանալի բան, ինչ որ  
տասնամեակներով չէր յաջողած  
մեզի, յաջողեցաւ նոյն տարուան  
ընթացքին եւ կրկնակ առումով:

Այս գարնան, Յակոբ Արքիմե-  
անի ստորագրութեամբ հասած  
երկտողի մը հետ՝ հասաւ նաեւ ըս-  
պասուած թատերգութեան լուսա-  
պատմէնը, գոր Արքիմեան յաջո-  
ղած էր ձեռք բերել մի քանաւոր մշա-  
կութային նախարարութեան մօտ  
աշխատող տիկինի մը միջոցով,  
իսկ ամառնամուտին, Արսէն Այն-  
թապեան անձամբ մեր սեղանին  
դրաւ «Ճիւղնագ» ի թղթածրարնե-  
րու խորերէն պատմէնահանուած  
երկրորդ օրինակ մը:

«Կարմիր թերթ» կը բաղկա-  
նայ չորս արարներէ, գորս պիտի  
ներկայացնենք ընթացիկ տար-  
ւան «Քաղին» ի յաջողակամ չորս  
համարներուն մէջ:

Ոչ մէկ կասկած այն մասին,  
որ թաւաղ դեպքերուն ընթաց-  
քին, ընթերցողը մեծ հետաքրք-  
րութեամբ պիտի հետեւի ֆը-  
րէտիւսեան յայտնութիւններուն:



# ԿԱՐՄԻՐ ԹԵԼԸ

ՀԵՂԻՆԱԿ  
ՀԱՆՐԻ ՏԱՆՔԵՐ  
ՊԱՏՇԱՆԵՑՈՒՄ  
ՓՕԼ ԳԷՆԹԵՆ

*Վիեննա, 1938: Փողոցէն կը լսուի նացիական քայլերդ մը: Մերունի մը, Ֆրէճօյտ, նստած է անուաւոր աթոռի մը եւ կը պրպտէ իր թղթածրարները: Մարթա կանգնած է մօտը: Յանկարծ կը հնչէ մուտքի զանգը: Նացիական տարագով մարդ մը կը բանայ դուռը, զինուորական բարեւի կը կենայ եւ, մէկ կողմ քաշուելով՝ ճամբայ կու տայ Տուկրասին:*

**ՖՐԷՕՅՏ (նացիին)**— Նայէ, ի վերջոյ սորվեցուցի՞նք քեզի գանգակը սեղմելով դուռ մը բանայ: Կեցցե՛ս: Ասիկա ուշագրաւ յառաջդիմութիւն մըն է: Զանգակով ու շունով մը Փարով դարձաւ հոչակաւոր: Ա՛մէն ինչ կարելի է:

*(Նացին դուռս կ'ելլէ՝ դուռը փակելով):*

- ՏՈՒԿԼԱՍ**— Բարեւ, փրոֆեսոր:
- ՖՐԷՕՅՏ**— Ա՛հ, պարո՞ն Տուկրաս: Ինքնաշարժը պատրա՞ստ է:
- ՏՈՒԿԼԱՍ**— Ոչ տակաւին, պարոն փրոֆեսոր:
- ՖՐԷՕՅՏ**— Միտքերդ ինչ փոխեցին: Պիտի չձգեն մեզի մեկնիլ:
- ՏՈՒԿԼԱՍ**— Այո, այո: Ի՞նչ երկու ժամէն կ'առնեմ շոգեկառքը...: Բարեւ, տիկին:
- ՄԱՐԹԱ**— Բարեւ, պարոն:



- ՖՐԷՕՅՏ.**— Ըսէ ինծի, պարոն Տուկլաս: Բան մը կայ, գոր ձեր դեսպանը չէ բացատրած: Քսաներորդ դարուն ինչպէ՞ս կը վնարեն փրկագին մը:
- ՏՈՒԿԼԱՍ.**— Աւստրիոյ մէջ ասիկա հաշուապահական պարզ հարց մըն է: Տիկին Պոնափարթի բոլոր հարըստութիւնները փոխանցուեցան նացի կառավարութեան:
- ՖՐԷՕՅՏ.**— Նացիներուն: Շատ պիտի ուզէի իմանալ գումարը: Պետական գաղտնի՞ք է ատիկա:
- ՏՈՒԿԼԱՍ.**— Ոչ: Քառորդ միլիոն շիլինկ: Լսեցի՞ր, իշխանուհի: Քառորդ միլիոն: Մեզի համար լաւ գին տրուած է:
- ՏՈՒԿԼԱՍ.**— Առանց տիկին Պոնափարթի օգնութեան, երբեք պիտի չկարենայինք կարգադրել ձեր մեկնումը:
- ՖՐԷՕՅՏ.**— Ես այնքան երկար պիտի չապրիմ՝ կարենալ հատուցանելու համար իմ պարտքս: Այդ մէկը գիտես, չէ՞:
- ՏՈՒԿԼԱՍ.**— Անգլիոյ մէջ դուք կ'ունենաք լաւագոյն բժիշկները:
- ՄԱՐԹԱ.**— Սիկմընտ:
- ՖՐԷՕՅՏ** (*տոանց մօտենալով՝ կ'ուզէ շեղել խօսակցութիւնը*).— Փրոֆեսէօր, Անգլիոյ մէջ կեանքը կը վերսկսի: Անդորրութիւնը: Ամբոխը՝ առանց տարագիր...: Համերգներ...: Դուք կը սիրէք երաժշտութիւնը: (*Կ'առնէ պարահանդէսի յայտագիր մը գրասեղանէն եւ կ'ուզէ զուարճանալ*): Նաեւ պարահանդէսներ՝ ինչպէս կը տեսնեմ: Վաղը դուք պիտի վերագտնէք այս բոլորը:
- ՖՐԷՕՅՏ** (*գրասեղանէն մէջ կը շարունակէ պրպտումը: Կ'առնէ յայտագիրը Տուկլասի ձեռքէն*).— Պարահանդէսներ: Տարօրինակ է: (*Մարթային*): Ասիկա բան մը չի՞ յիշեցներ Քեզի, Մարթա: Տե՛ս, բժշկական թղթածրարին մէջ պարահանդէսի յայտագիր մը: Էլիզապէթ վոն Բի պարագան: Գացած պէտք է ըլլայի՞ր Բիւնցլերի երեկոյթին: Կուզէի մօտէն դիտել Էլիզապէթը: Այդ գիշեր դուն նոյնիսկ ըսիր ինծի. «Սիկմընտ, ձգէ՛ բժշկութիւնը: Դարձիր պարուսոյց: Եւ մնմբ պիտի մեռնինք՝ երաժշտութեամբ: Լաւագոյն մահը»:
- ՄԱՐԹԱ** (*զուսպ*).— Ես երբևէ այդպէս չեմ ըսած:
- ՖՐԷՕՅՏ.**— Էլիզապէթի պարագան: Այնքան շատ բաներ կախում ունին անկէ: Իրեն համար եւ մեզի:
- ՄԱՐԹԱ.**— Իրեն համար՝ այո, բայց ոչ մեզի համար:

ՖՐԷՕՅՏ.— Այդ վայրկեանին դուն բնաւ չմտաեղբայրացա՞ր: Երբեք չկասկածեցա՞ր:

ՄԱՐԹԱ.— Երբեք չկարծեցի, որ դուն պիտի յաջողիս բուժել զինք:

ՖՐԷՕՅՏ (*Տուկլասին*).— Շատ յամառ է, երբ կ'ուզէ...

ՏՈՒՎԼԱՍ (*կ'երկարէ թուղթերը Ֆրէօյտին*).— Փրոֆեսէօր, ահաւասիկ ելի՛ ձեր վիզաները... շոգեկառփի ձեր տումակները: Նաեւ նամակ մը, գոր մեր դեսպանը խնդրած է ինձմէ անձնապէս յանձնել ձեզի:

ՖՐԷՕՅՏ.— Խնդրեմ, կարդա՛ ինձի:

ՏՈՒՎԼԱՍ (*կը բանայ նամակը եւ կը կարդայ*).— Փրոֆեսէօր Սիկմընտ Ֆրէօյտին, 10 Պերկաս, Վիեննա.

«Սիրելի փրոֆեսէօր,  
«Ուրախութեամբ կ'իմանամ, որ Ձեր ազատութիւնը ի վերջոյ արտօնուեցաւ: Կէս դարէ ի վեր դուք կը փորձէք բանալ այն դուռը, որ կ'առաջնորդէ մտքի գաղտնիքներուն: Ձեր շնորհիւ է, որ մարդ մը կրնայ ուրիշ մարդու մը ընծայել հասկացողութիւն, ներողամտութիւն եւ ապաքինում: Այսուհանդերձ, Ձեզ է, որ պէտք է պաշտպանել ատելութենէն եւ վերադարձնել պապեմական հոդը: Դուք ընտրած էք Անգլիան իրրեւ ապաստան: Բայց եթէ օր մը փափաքիք, գիտցէք, որ մեծ պիտի ըլլայ ուրախութիւնս Ձեր առջեւ բանայով իմ հայրենիքին դուռները: Դուք հոն Ձեզ միշտ ձեր տան մէջ պիտի զգաք:

Անկեղծօրէն եւ յարգանքով  
Միացեալ Նահանգներու նախագահ  
Ֆրանկլին Ռուզվելթ»

(*Ֆրէօյտ, գգացուած, կ'երկարէ ձեռքը եւ Տուկլաս կը յանձնէ նամակը անոր*): Ժամը վեցին կու գամ ինքնաշարժով առնելու ձեզ: Ձեր մեկնումէն ետք դեսպանատունէն մէկը կը գրադի այս բոլորով:

(*կը մատնանչէ կաշ-կարասիները եւ յարկաբաժինին առարկաները*):

ՄԱՐԹԱ.— Շնորհակալութիւն, պարոն:

(*Տուկլաս խոնարհութիւն ընելով դուրս կ'ելլէ*):

ՖՐԷՕՅՏ.- Քառասուններկու տարեկան: Ես քառասուններկու տարի աշխատեցայ այս դարմանատան մէջ եւ այսօր «դեսպանատունէն մէկը պիտի գրադի այս բոլորով»: *(Շուրջանակի աչք մը կը նետէ չորս դին)*: Տունիս՝ եւ պատուհանները փակ են: Վիեննա, ամրան օր մը... բոլոր Վիեննայի... աղմուկ Վիեննայի...: Հետանալ Վիեննայէն՝ նոր կեանքի մը համար, նոր երկրի մը մէջ՝ իրապէս քաջութիւն կ'ուզէ:

ՄԱՐԹԱ. *(փոխելու համար Ֆրէճօյտի տրամադրութիւնը)*.-- Սիկմընտ, պիտի ուզէի՞ր առնել գաւաթ մը վիեննական վերջին սուրճ:

ՖՐԷՕՅՏ.- Վերջին գաւաթ մը... *(Մարթա դուրս կ'ելլէ: Ֆրէճօյտ վերստին կը մխրճուի իր թղթածրարին մէջ)*: Էլիգապէթ վոն Բ.ի պարագան... *(Յանկարծ կանգ կ'առնէ)*: Անգլիական սո՞ւրճ: *(Մէկ անգամէն կը դառնայ իր անուաւոր աթոռին հետ)*: Մարթա՛, կ'երեւակայե՞ս, որ այսօրուրնէ սկսեալ պիտի խմենք անգլիական սուրճ: Ահաւասիկ իրական քաջութիւնը. հաւատա՛ ինձի:

*(Եւ կ'ուղղուի դէպի ելքը՝ քշելով աթոռը: Լոյսերը կը մարին: Երաժշտութիւն: Երբ լոյսերը դարձեալ կը վառին, մենք կը գտնուինք դարձեալ 1938ի յարկարածիներն մէջ: Մարթա Ֆրէճօյտ, մանկամարդ, մուտք կը գործէ: Ունի միակ վարդ մը կրող ծաղկաման մը եւ սիկարէթի տուփ մը, զոր կը զնէ բժիշկին գրասեղանին վրայ)*:

ՄԱՐԹԱ. *(կը կանչէ)*.-- Քաթի՛...  
 ՔԱԹԻ. *(կը մտնէ՝ ներսէն գալով)*.-- Այո:  
 ՄԱՐԹԱ.-- Փայտ դիր կրակին, եթէ կը հանիս:

*(Քաթի կ'ուղղուի դէպի անկիւնի շըմինէն)*:

ՔԱԹԻ.-- Եղաւ:  
*(Մարթա կ'ուղղուի դէպի նախասենեակին սեղանը եւ հոն կը զետեղէ ծաղկամանը, ապա կ'անհետանայ յարկարածիներն մէջ: Կը հնչէ մուտքի զանգակը)*:

ՄԱՐԹԱ. *(ներսէն)*.-- Կու գամ:



- ՔԱԹԻ (արագ մը կ'երթայ դէպի մուտքի դուռը)։- Ես կ'երթամ:
- ՄԱՐԹԱ (ներսէն)։- Մի անհանգստանար, Քաթի: Ես ինքս կը բանամ դուռը:
- ՔԱԹԻ։- Բայց ո՛չ: Ես արդէն հոն եմ:
- ՔԱԹԻ (Քաթի ինք կը բանայ դուռը, կը սպասէ՝ տեսնելու մէկը, զոր ինք լաւ կը ճանչնայ)։- Ինչպէ՞ս, նորէ՞ն դուք եք, պարոն...:
- ՖՐԵՏԵՐԻՔ։- Այս անգամ պիտի սպասեմ այնքան՝ որ անհրաժեշտ ըլլայ:

*(Բոլորովին ներս կը մտնէ: Քաթի կը գոցէ դուռը):*

- ՄԱՐԹԱ (ներսէն)։- Դո՛ւն ես, Սիէկի:
- ՔԱԹԻ։- Ո՛չ, տիկին, բժիշկը չէ: Դարձեալ այդ պարոնն է: Միշտ նոյնը (Ֆրետերիք կը մօտենայ գրասենեակի դրան, աչք մը կը նետէ հոն, ապա համարձակօրէն ներս կը մտնէ, որուն կը հետեւի Քաթի՝ գայրացկոտ): Յանախորդները սպասման սենեակին մէջ կը նստին, պարոն:
- ՖՐԵՏԵՐԻՔ։- Դէ՛, դէ՛: Վստահ եմ, որ տոբօրը ծածկելիք ոչինչ ունի ինձմէ: (Իր գայրոյթին մէջ պատասխան մը գտնելէ առաջ՝ Ֆրետերիք կը սկսի քննել յարկարածիւնն ու սենեակին անկիւնները, Քաթիին նայուածք մը ուղղելով): Կը գարմանամ, որ այսքան յանախորդ ունեցող բժիշկ մը թոյլ կու տայ ինքզինքին Վիկնայէն բացակայիլ այդքան երկար ժամանակ: Խնդիրը կը փոխուէր, եթէ իրականութիւնը տարբեր ըլլար:
- ՔԱԹԻ։- Վիկնայի մէջ մեծ բժիշկներ կան: Դուք կրնաք անոնց յանախորդներուն ցանկը գտնել թերթին մէջ, պարոն, մահագոյներու սիւնակին վրայ: Կարողա՞ք ահագին բան պիտի ունենաք հոն...: Եթէ հիմա գրասենեակէն դուրս սպասէ՞ք նամբան այս կողմէն է...

*(Ֆրետերիք ոչ մէկ ուշադրութիւն կ'ընծայէ Քաթիի եւ կը գննէ ֆարատէի գործիքը):*

- ՔԱԹԻ։- Բժիշկը արգիլած է դպչիլ այդ գործիքին: (Դիտողութիւնները չեն ազդեր Ֆրետերիքին: Քաթի կը ձգէ գայն եւ կ'ուղղուի դէպի նախասենեակ կանչելով): Տիկին, տիկին: (Կ'երթայ դէպի

յարկարածինին դուռը: Այդ վայրկեանին, խորքի դուռը կը բացուի անաղմուկ եւ ներս կը մտնէ Տոբթոր Ֆրէօյտ, որ կը կրէ պզտիկ պալուսակ մը եւ անձեռոց մը, զորս վար կը դնէ: Դարձեալ կ'առնէ անձեռոցը եւ կ'ուղղուի դէպի գրասենեակին դուռը: Բայց յարկարածինին դուռը բաց է: Ներս կը մտնէ Մարթա: Կողջագուրուին: Ունին զիրար գտած ըլլալու հանգիստ եւ ջերմ երեւոյթ մը: Բայց ակրնթարթի մը մէջ Մարթա կը զգայ, որ բան մը իր բնական ընթացքին մէջ չէ: Ներս կը մտնէ Քաթի: Բարեւ, պարոն տոբթոր:

ՄԱՐԹԱ. (Քաթին ետ զրկելու մտքով).-- Քաթի, հաճիս սուրբին ջուրը դիր:  
ՔԱԹԻ.-- Անմիջապէս: (Բժիշկին): Լաւ նամորդութիւն մը ըրի՞ք:

(Քաթի կը մեկնի՝ առանց պատասխանի սպասելու):

ՄԱՐԹԱ. (կը հպի Ֆրէօյտի ձեռքին).-- Բայց դուն սառած ես, սիրելիս: Շոգեկառքը ջեռուցուած չէ՞ր: Լիակ գլխացա՞ւդ:

ՖՐԷՕՅՏ.-- Խօսիմք քու մասին: Ժողովքը ի՞նչ ըսաւ քեզի:  
ՄԱՐԹԱ.-- Լաւ եմ: Բոլոր պարագաներուն, երեք շաբաթէն կատարելապէս լաւ պիտի ըլլամ: (Ֆրէօյտ կը համբուրէ Մարթան): Հիւանդ մը ունիս: Կողքի սենեակը կը սպասէ: (Ֆրէօյտ ցոյց կու տայ հետաքրքրական հակազդեցութիւն): Վերջին շաբթուն ամէն օր եկաւ: Ուզեց անպայման քեզի սպասել: Շատ յամառ է, գիտես:

ՖՐԷՕՅՏ.-- Եթէ հիւանդ է, իրաւունք ունի յամառ ըլլալու: Լաւ կ'ըլլայ անմիջապէս տեսնել զինք:

ՄԱՐԹԱ.-- Կրնամ նամբել, եթէ կ'ուզես:  
ՖՐԷՕՅՏ.-- Ո՛չ, ո՛չ: Երթամ տեսնել զինք:

(Կ'երթայ դէպի դուռը):

ՄԱՐԹԱ. (ի վերջոյ կ'ըսէ, ինչ որ զաղտնի պահած էր).-- Սիկմը՞նտ: (Ֆրէօյտ կը դառնայ Մարթայի կողմը): Երկու գիշեր շոգեկառքին մէջ եղար: Եւ ոչ իսկ վայրկեան մը չնացար, ատիկա կ'երեւի արդէն, առաւել՝ գլխու ցաւդ...  
ՖՐԷՕՅՏ. (զլիտով այդ կ'ընէ, ապա թէթեւ յանդիմանու-

*(Թեամբ մը) -- Իշխանուհի՛... սիրելիս... այդ մար-  
դը ինձի կը սպասէ:*

*(Մարթա կը ձգէ Ֆրէօյտը եւ կ'երթայ դէպի  
յարկարածինը: Ֆրէօյտ կը մտնէ իր գրասեն-  
եակը, ձեռքին՝ անձեռոցը: Ետեւէն կը գոցէ  
դուռը):*

ՖրէօՅՏ.-- Ինչ, պարոն...

*(Ֆրեաներիք ոտքի կ'ելլէ, քաղաքավարօրէն  
կ'երկարէ իր այցետուսը, որուն վրայ Ֆրէօյտ  
կը նետէ ակնարկ մը):*

ՖրէօՅՏ.-- Պարոն «Վոլմուք»... Դէ լաւ, պարոն Ֆրեաներիք  
Վոլմուք. ըսին ինձի, որ դուք անպայման զիս  
տեսնել կ'ուզէք:

Ֆրեաներիք *(կը զգացուի, որ ան պատրաստած է ըսելի-  
քը) --* Տո՛քոր, եթէ իմ դիրքս քեզի քիչ մը արտա-  
նոց կը թուի, ասիկա կու գայ անկէ՛, որ ես որեւէ  
վստահութիւն չունիմ բժիշկներուն հանդէպ:

ՖրէօՅՏ *(կէս-նեղուած, կէս-զուարճացած, բայց կամա-  
ւորապէս չէզոք) --* Ա՛հ...

Ֆրեաներիք.-- Վիսննայի մէջ, անլի ճիշդ ըլլալու համար՝  
ամբողջ Եւրոպայի մէջ բժիշկներուն լաւագոյն-  
նիրը տարբեր չեն յոռեզոյններէն:

ՖրէօՅՏ *(միշտ չէզոք) --* Եւ ամբողջ շարք մը սպասեցիք  
ինձի ասիկա ըսելու համար:

Ֆրեաներիք.-- Ես հոս եկայ, որովհետեւ ձեր մասին լսած եմ,  
ոչ ուրիշի մը:

ՖրէօՅՏ *(կը ճշդէ) --* Իբրեւ լաւագոյններէ՞ն մէկը, թէ յոռե-  
զոյններէն մէկը:

*(Կ'երթայ դէպի իր գրասենեակը, անձեռոցը  
վար կը դնէ ու կ'առնէ սիկար մը):*

Ֆրեաներիք.-- Թոսիկն էր, որ քեզ յանձնարարեց:

ՖրէօՅՏ.-- Թոսի՞կը: Լաւագոյններէն մէկը:

Ֆրեաներիք.-- Այո, շատ մեծ գովասանքներով խօսեցաւ ձեր  
մասին: *(Ապա, այդ մասին աւելի իմանալու  
համար մանաւանդ):* Մասնաւորաբար ձեր ա՛յն  
ոնին մասին, որ դուք բուժած էք մնայուն գլխա-  
ցաւով տառապող հիւանդ մը:

ՖրէօՅՏ.-- Թոսիկը գործածե՞ց «բուժել» բառը:

Ֆրեաներիք.-- Ա՛հ, պարագան գոյութիւն ունի ուրեմն:

ՖրէօՅՏ.-- Այո:

ՖՐԵՏԵՐԻՔ.- Կուգէի վստահ ըլլալ ատոր...: Հիմա կրնամք խօսիլ: Տոբոր Ֆրեոյտ, ես...

ՖՐԷՕՅՏ (կ'ընդմիջէ գինք).- Ուշադրութիւն: Ես չէ, որ արտասանեցի «բուժել» բառը: Այդ մարդուն գլխացաւը կրնայ վերսկսիլ: Նստեցէ՛ք. թոյլ տուէ՛ք, որ ծխեմ: Գլխացաւէ՞ք կը տառապի՛ք:

ՖՐԵՏԵՐԻՔ (կարկամած).- Ինչէն կը տառապի՞մ:

ՖՐԷՕՅՏ.- Այո:

ՖՐԵՏԵՐԻՔ (իր տրամադրութեան տակ պատրաստ նախադասութիւններ չունի այլեւս եւ յանկարծ ապահովութեան զգացումը կը լքէ գինք).- Ե՞ս: Ո՛չ: Ոչինչէն: Քեմիս է...: Ան է հիւանդը:

ՖՐԷՕՅՏ (ապարդիւն).- Ուրեմն ո՞վ է՞ դուք, անոր ներկայացուցի՞չը:

ՖՐԵՏԵՐԻՔ.- Քեմիս պարագան քաւական առանձին պարագայ մըն է: Իրականութեան մէջ տարօրինակ հիւանդ մըն է: (Յարձակողական): Որով՞ եթէ դուք կարենա՞ք պատասխանել իմ հարցումներուս, կրնամ գիտնալ, թէ պիտի կարենա՞ք բան մը ընել իրեն համար, թէ ո՛չ:

ՖՐԷՕՅՏ (կ'ընդմիջէ գինք).- Իսկ եթէ նախապէս դուք պատասխանէի՞ք կարգ մը հարցումներուս: Գիտէի՞ք արդեօք, թէ ինչ միջոցներով բուժեցի գլխացաւէ տառապող այդ մարդը:

ՖՐԵՏԵՐԻՔ.- Հիպնոսով, չէ՞:

ՖՐԷՕՅՏ.- Եւ ատիկա ձեզ չի՞ վախցնէր: Վիեննայի մէջ բժիշկներ կը մանչնամ, որոնք կը նախընտրեն իրենց հիւանդներուն մահը, քան կիրարկել հիպնոսը:

ՖՐԵՏԵՐԻՔ.- Թոսիկը զգուշացուց գիս:

ՖՐԷՕՅՏ.- Զգուշացուց նաեւ, որ ամէն անձի վրայ ազդեցութիւն չ'ունենար հիպնոթիզմը: Այո, կարգ մը անձերու վրայ ոչ մէկ անդրադարձ կ'ունենայ անիկա:

ՖՐԵՏԵՐԻՔ.- Գիտեմ: (Յոյսով եւ անձկութեամբ): Բայց եթէ ազդեցութիւն ունենայ՝ դուք կրնա՞ք առնել-լազն սփոփել գինք: Ուրիշ բժիշկներ յաւելուածական ոչ մէկ միջոց չ'ունենալով իր ցաւերուն ամոքման համար:

ՖՐԷՕՅՏ.- Ցաւերո՞ւն: Ի՞նչ տեսակ ցաւ: Երբէ՞ն ի վեր:

(Կը սկսի պաշուսակէն հանել կարգ մը իրեր եւ կ'երեւի ժանիւս չաստուծոյ արձանիկը):

ՖՐԵՏԵՐԻՔ (տաղտկացած եւ շփոթահար).- Եթէ յիշողու-

- Քիւնս չի դաւանանք ինծի, երեք տարի կ'ընէ, որ սկսած են իր յօդացանքը: Այո...: Մօտաւորապէս: Այո: Հօրը մեռած ժամանակներէն:
- ՖՐԷՕՅՏ.- Ա՛հ, հայրը մեռած է:
- ՖՐԵՏԵՐԻՔ.- Կը տեսնէ՞ք, հիւծեցաւ՝ գայն խնամելով: Աւելի-ին չէր կրնար տոկալ:
- ՖՐԷՕՅՏ.- Երկա՞ր ժամանակ խնամեց հայրը:
- ՖՐԵՏԵՐԻՔ.- Տարի մը: Եւ մա՛նաւանդ ձեզի հետ բոլորովին անկեղծ ըլլալու համար յայտնեմ, որ քիչ մըն ալ ինքզինքն մեղապարտ կը զգամ այս ամբողջ հարցին մէջ: Ինքն անձնապէս: Այո՛...:
- ՖՐԷՕՅՏ.- Ինչո՞ւ:
- ՖՐԵՏԵՐԻՔ.- Հիւծման այդ վիճակին մէջ երբեք պարտական չզգացի թոյլատրել իրեն գրադիլ Շարլոթով, որ կինս է: Վստահ եմ, բացարձակապէ՛ս վստահ, որ նուիրուածութիւնը, որով ան կը խնամէր հայրը, պատճառ դարձաւ իր տկարութեան, ուր յօդացաւի տագնապը երբեք դիմադրութիւն չգտաւ: Ուրեմն՝ յանցանքը իմս էր, կը տեսնէ՞ք...
- ՖՐԷՕՅՏ. (*պաղարիւն*).- Տօդացա՛ւր: Ատիկա պաշտօնական յայտարարութիւնն է: Վերջապէս, ա՛յդ է ախտանշանաչումը:
- ՖՐԵՏԵՐԻՔ.- Այո՛: Ակիզը այդպէս էր: Բայց շուտով աւելի լրջացաւ, հակառակ ի գործ դրած մեր բոլոր ճիգերուն: Կը տեսնէ՞ք, թէ ինչպէս կ'ընթանան գործերը: Բժիշկ մը կը յանձնարարէ պաշտօնական մը եւ կը սկսիս բժիշկէ բժիշկ երթալ...
- ՖՐԷՕՅՏ.- Եւ յուսախարութեան յուսախարութիւն...
- ՖՐԵՏԵՐԻՔ.- Բայց դուք բուժեցիք գլխացաւ ունեցող հիւանդը:
- ՖՐԷՕՅՏ.- Ձեր բնիկն ճիշդ ո՞ւր կը զգայ ցանքը:
- ՖՐԵՏԵՐԻՔ.- Սրունքներուն մէջ: Բայց ի՞նչ տարբերութիւն ունի թէ ուր: Ցաւը՝ ցաւ է, այնպէս չէ՞:
- ՖՐԷՕՅՏ. (*կ'ընդմիջէ զինք*).- Հիպնոթիզով բուժուող պարզ ցանքունն եւ սրունքներուն մէջ զգացուած երեքամեայ յօդացանքունն միջեւ ամբողջ աշխարհ մը կայ:
- ՖՐԵՏԵՐԻՔ. (*տաքի կ'ելլէ տագնապա՛ւար*).- Իրապէս կը հաւատամ, որ դուք կրնաք ամոքել զինք, եթէ միայն ուզէք փորձել:
- ՖՐԷՕՅՏ. (*չօր, բայց առանց չարութեան*).- Պարոն, զիս ձեր խանդավառութեան մի ենթարկէ՛ք: Կամ՝ անգիտութեան:
- ՖՐԵՏԵՐԻՔ. (*մէկ ծայրայեղութենէն միւսը երթալով*).- Իրաւունք չունիք կին մը տառապանքի դատապարտելու, առանց նոյնիսկ անգամ մը տեսնելու զինք:

ՖՐԵՅՅՏ.- Եթէ դարման մը ունենայի եւ մերժէի, այն ատեն միայն դատապարտած կ'ըլլայի զինք:

ՖՐԵՏՏԵՐԻՔ.- Բայց Թոսիկ ըսաւ...

ՖՐԵՅՅՏ.- Ուրեմն՝ կը կարծէք, որ ես ունիմ դարման մը, կախարդական թմրադեղ մը, գոր կը պահեմ թեզանիքիս մէջ եւ կը հանեմ ըստ կա՞մս: (*Սեղանը կը հրէ դէպի Ֆարատէի գործիքը եւ կ'երկարէ անոր ելեկտրական սարքը*): Ահաւասիկ մեր գերագոյն գէնէք: Հանէ ձեռնոցդ: (*Ֆրետերիք վայրկեան մը կը վարանի*): Սի վախնար: Ցաւ պիտի չպատճառեմ քեզի: (*Ֆրետերիք կը հանէ ձեռնոցը: Ֆրէյտ կ'աշխատցնէ ելեկտրական սարքը, կ'անցընէ ապակին վերէն վար ու, փոխադարձաբար, պատճառելով տեսանելի փայլփլումներ գործիքին եւ «Հիւանդին» ձեռքին միջեւ*): Ցաւ պատճառեցի՞ քեզի:

ՖՐԵՏՏԵՐԻՔ (*Հանգստացած*).- Ո՛չ, ո՛չ: Երբի՛ք: Նոյնիսկ բաւական հանելի է: (*Աճապարանօք*): Վստահ եմ, որ էլիգապէք որեւէ առարկութիւն պիտի չընէ այս դարմանումին դէմ: Կրնամ վստահեցնել ձեզ:

ՖՐԵՅՅՏ.- Դժբախտաբար կայ միակ անպատեհութիւն մը...: Դարմանումի այս ձեւը բոլորովին գուրկ է ազդեցութենէ: Նոյնիսկ անօգուտ:

(*Կը հրէ սեղանը իր առաջին տեղը*):

ՖՐԵՏՏԵՐԻՔ.- Ուրեմն ինչի՞ կը ծառայէ այդ գործիքը:

ՖՐԵՅՅՏ.- Ասիկա գիտական մեր վերջին խաղն է: Գիւտ մը, ահա՛ թէ ինչպէս կը կոչենք զայն մենք՝ շղային հիւանդութեանց մասնագէտներս: Մենք զայն կը կիրարկենք նուազագոյն գրգռութեանց առիթով, բոլոր պատրուակներուն ներքեւ, բայց ոչ ոք անսած է այս գործիքին բուժիչ յատկութիւնը: Բայց ո՛չ, կը չափազանցեմ: Անիկա վայրկեան մը ուշացրիւ կ'ընէ հիւանդը, կու տայ անոր լաւանալու պատրանք մը, բայց չի բուժեր...: Կը ցաւիմ, բայց ես ծայրայեղօրէն յոգնած եմ: Կարելի չէ երկար ատեն ֆնամալ շոգեկառփին մէջ:

ՖՐԵՏՏԵՐԻՔ.- Անշուշտ:

(*Կը լսուի մուտքի զանգին ձայնը*):

ՖՐԵՅՅՏ.- Դու՛ք պարոն վալմուք, կը քննէք անգիտակից-

Ներք: Ըստ ձեր ցկարագրութիւններուն, ես ոչինչ կրնամ ընել ձեր հիւանդին համար:  
ՖՐԵՏԵՐԻՔ.— Բայց եթէ գայն անձամբ տեսնէք...  
ՖՐԵՕՅՏ.— Ո՛չ:

*(Մարթա դարձեալ կ'երեւի դրան սեմին):*

ՖՐԵՏԵՐԻՔ.— Շատ մօտ է տեղը:

*(Յրէօյտի մայրը, Ամայի, կը մտնէ ներս, որուն կը հետեւի քոյրը, Տուֆի):*

ՖՐԵՕՅՏ *(կտրուկ)*— Ոչինչ կրնամ ընել իրեն համար:  
ՖՐԵՏԵՐԻՔ.— Անգամ մը հոս բերեմ զինք, խնդրեմ: Երկու վայրկեան շնորհեցէք ինծի:

ՖՐԵՕՅՏ *(վճռական)*— Ո՛չ: *(Այս վերաբերումը Յրետերիքին լռութիւն կը պարտադրէ: Մեղմաձայն):* Հաւատացէք ինծի, պարոն, ես աւելի պարկեշտ կ'ըլլամ մերժելով, քան ընդունելով զինք: Տեսնուի՞նք:

*(Յրետերիք կը վարանի, կը դառնայ, կ'երթայ դէպի դուռը, կը խոնարհի Ամայի ու Տուֆիի առջեւ եւ կը մեկնի: Ամայի կը հեռացնէ իրմէ տուփը՝ թոյլ տալու համար Մարթային, որ համրուէ զինք առանց ջերմութեան):*

ԱՄԱԼԻ.— Ուրեմն, Սիկմընտը եկած է:

*(Ան լուռ կը հետեւի Յրետերիքի մեկնումին):*

ՄԱՐԹԱ.— Քառորդ ժամ եղաւ:

ԱՄԱԼԻ.— Սուրբը տուի՞ր իրեն:

ՄԱՐԹԱ.— Ոչ տակաւին:

ԱՄԱԼԻ *(կ'երկարէ անուշեղէնին տուփը Մարթային)*—

*Ի՞նչ արեւելիք մէջ: Կեռասով կարկանդակ:*

ՄԱՐԹԱ *(կ'առնէ տուփը եւ կը նշմարէ պիտակը)*—Տեսնուի՞նք է...: Օ՛հ, մայր, խնայութիւն է:

*(Կը հանէ վերարկուն եւ ձեռնոցները):*

ԱՄԱԼԻ *(ժպտելէն՝ վերարկուն կու տայ Մարթային)*— Զակիս վերադարձին առիթով ինքզինքիս կրնամ թոյլատրել պատիկ անկարգութիւն մը, այնպէս չէ՞:

ՏՈՒՖԻ (Մարթային).-- Կօզմեմ ձեզի:  
(Ամալի կ'ուզէ արգելել Տոլֆիի մուտքը):

ՄԱՐԹԱ.-- Հոս սպասէ, Տոլֆի':

*(Բայց Տոլֆի եւ Մարթա արդէն դուրս ելած են:  
Ամալի կ'երթայ դէպի գրասենեակին դուռը ու  
կը գոցէ դռնը: Ֆրէճոյս գրադած է գրելով, բայց  
դրան աղմուկը կ'ընդմիջէ զինք: Կը նկատէ  
մայրը):*

ՖՐԷՅՅՏ.-- Մա՛յր...

*(Վար կը դնէ գրիչը ու կը համբուրէ Ամալիի  
ձեռքը: Մարթա կը բռնէ զաւելին ձեռքը):*

ԱՄԱԼԻ.-- Գոհ եմ, որ վերադարձար: Պաղ առած ես:  
ՖՐԷՅՅՏ (ցոյց կու տայ պատուհանը).-- Այո': Բնաւ տե-  
սած ես այսպիսի Մարտ ամիս մը: Կարծես պիտի  
ձիւնէ:

ԱՄԱԼԻ.-- Ո՛րքան պաղի՛ ա՛յնքան աւելի կը սիրեմ օդը:  
Մնաց որ, երբ դուն ներկայ ես, ամէն ինչ գեղեցիկ  
կը թուի ինծի: Արդեօք կը խանգարե՞մ քեզ:

ՖՐԷՅՅՏ.-- Երբե՛ք: Ժողովին երկտող մը գրելու վրայ էի,  
լուր տալու համար, որ հոս եմ:

ԱՄԱԼԻ.-- Պրէտորի՞ն:

ՖՐԷՅՅՏ.-- Այո:

ԱՄԱԼԻ.-- Գրէ: Գրէ: Պրէտորը նշանաւոր մարդ է, չէ՞:

ՖՐԷՅՅՏ (գուրգուրակից շեշտով).-- Մայր...

ԱՄԱԼԻ.-- Գրէ նամակդ:

ՖՐԷՅՅՏ.-- Կրնամ վայրկեան մը սպասել:

*(Կ'անցնի վայրկեան մը, բայց կարծես Ամալի  
երբեք ուշադրութիւն չընծայեր իրեն):*

ԱՄԱԼԻ.-- Ըսէ ինծի, Տոլֆոյր Պրէտորը ազդեցութիւն ունի՞  
Բժշկական Ակադեմիայի վրայ:

ՖՐԷՅՅՏ.-- Մա՛յր, դուն լաւ գիտես, որ Պրէտորը ամէն տեղ  
ազդեցութիւն ունի:

*(Տոլֆի կը խուժէ գրասենեակ: Քաթի կը հետե-  
ւի Տոլֆիի՝ սուրճի ամսէով մը, իսկ Մարթա  
կարկանդակ կը հիւրասիրէ):*

ՏՈՒՖԻ.-- Ա՛հ, Սիէկի':



**ՖՐԷՕՅՏ** (ստբի կ'ելլէ եւ կ'ուղղուի Տոլֆիի կողմը).-- Օ'հ, Տոլֆի': Ի՞նչ բախտ: Պէտք է որ ես աւելի յաճախ նամրորդեմ: Բայց դուն աւելի եւ աւելի գեղեցիկ կը դառնաս: (Կը համբուրէ զայն, ապա կը նայի անոր ու կ'երկարէ ամանը): Եւ կեռասները:

(Ճրէօյտ կը քննէ կարկանդակները եւ չի դիմա- նար անկէ հատ մը ճաշակելու փորձութեան):

**ՏՈԼՖԻ.**-- Տեմբեկն է:

**ՖՐԷՕՅՏ.**-- Կը պաշտեմ կեռասները: Շնորհակալութիւն, մա՛յր: (Կը համբուրէ Ամալին: Քաթի կը լեցնէ սուրճը: Ճրէօյտ կ'առնէ սուրճը եւ նամակը կ'երկարէ Քաթիի): Քաթի', ասիկա ուղղուած է Տոլֆոր Պրեօրի: Տար անմիջապէս:

(Քաթի դուրս կ'ելլէ):

**ԱՄԱԼԻ** (կը տեղաւորուի, բայց ուշադիր կ'ըլլայ, որպէս- զի իր հարցումները բնական թուին եւ գերծ ըլլան միտումէ).-- Ուրեմն, Սիկմընտ... Նանսիի նամրորդութիւնը... Հիւանդը... Լաւ արդիւնք տուա՞ւ:

**ՖՐԷՕՅՏ.**-- Ո՛չ: Պերնհայմը ինք եւս ոչինչ կըցած է ընել անոր: Նո՛յնիսկ ան...

**ԱՄԱԼԻ.**-- Ա՛հ, ասիկա աղէտ է: Բայց առնուազն այս նամ- րորդութեանն էմ ետք դուք տեղեկագիր պիտի պատ- րաստէք Բժշկական Ակադեմիային համար:

**ՖՐԷՕՅՏ.**-- Մա՛յր, զգո՛յշ: Այս երկրորդ անգամն է:

**ԱՄԱԼԻ** (անմեղ ձեւանալով).-- Երկրորդ անգամ:

**ՖՐԷՕՅՏ.**-- Այո՛, որ դուն ակնարկութիւն կ'ընես Ակադե- միային:

**ՄԱՐԹԱ** (զգուշացուած է Տոլֆիի կողմէ).-- Սիկմընտ: Զվերսկսիմէ: Ոչ այսօր: Ի՞նչն յոգնած ես եւ...

(Ամալի մէկ քայլ առաջ կու գայ):

**ԱՄԱԼԻ.**-- Երեք ամիս կ'ընէ, որ վերադարձած ես Փարի- զէն. դուն տեղեկագիր մը պատրաստեցի՞ր Ակա- դեմիային համար. այո՞ կամ ոչ:

**ՖՐԷՕՅՏ.**-- Այո:

**ԱՄԱԼԻ.**-- Ինչպէ՞ս կըցար ինքզինքիդ թոյլ տալ այդքան վտանգաւոր անխոհեմութիւն մը:

**ՖՐԷՕՅՏ.**-- Ծեր պարոններուն նոր գաղափարներ պարզելը թերեւս յիմարութիւն է: Բայց ես չեմ կարծեր, որ

ատիկա այդքան լուրջ հետեւանքներ կրնայ ունենալ: Ես ամենայն քարեացակամութեամբ «Արական ջղազրգուծեան» մասին կարդացի տեղեկագիր մը, ըստ Շարժոյի հետ կատարած աշխատանքներուս: Չիշոյ այդ նպատակին համար զիս Փարիզ դրկեցին: Հետեւաբար, այդ մասին չիսուիմք իբրեւ ապօրինի գործունէութիւն: Կը հասկնամ:

ԱՄԱԼԻ.- Անոնք համաձայն չեղան հետդ, չէ՞:

ՖՐԷՕՅՏ.- Ո՛չ, երբեք:

ԱՄԱԼԻ (*յաղթական*).- Կը տեսնե՞ս:

ՖՐԷՕՅՏ.- Մա՛յր, անոնք երբեք համաձայն չեն: Հիմնած են Ակադեմիան՝ պարծենալու համար միայն: (*Կը մատնանշէ կարկանդակները, որպէսզի կարճ կապէ տալիք բացատրութիւնը*): Ինձի ալ տուր:

ՏՈՒՖԻ.- Ա՛հ, դուն դեռ չունեցա՞ր:

ԱՄԱԼԻ.- Եւ սակայն անոնք, որ կը մասնակցին այդ ժողովին, վաւերակա՞ն բժիշկներ են, լսուա՞ծ, յարգըւա՞ծ:

ՖՐԷՕՅՏ.- Տուեալ հարցին կապակցութեամբ՝ բոլորովի՞ն երկրորդական:

ԱՄԱԼԻ.- Լաւ, տղա՛ս: Պաշտօնակիցներդ շատերը պահանջեցին հրաժարականդ, այնպէս չէ՞: Աստուած իմ, ինչո՞ւ այսքան տանջուիլ: (*Այս անգամ Մարթա կը հակադարձէ: Ան դեռ հարցէն լուր չունի: Ֆրէօյտ ակնարկ մը կը նետէ անոր կողմը: Կը լռէ*): Հրաժարակա՞ն պահանջեցին:

ՖՐԷՕՅՏ.- Բոլոր պարագաներուն այդ մէկը չեն տեսներ:

ԱՄԱԼԻ.- Բայց եւ կրնան տեսնել, մա՛նաւանդ այն վայրկեանին, երբ, օրինակ, հիւանդներէն մէկը խնայեցնայ:

ՏՈՒՖԻ.- Տո՛քոր Շոէնֆելտը...

ՖՐԷՕՅՏ (*նախատուած*).- Շոէնֆելտի հետ իմ մասի՞ս խօսեցար:

ԱՄԱԼԻ (*չատ անմեղունակ*).- Տիկին Շոէնֆելտը եւ ես թէյ մը կ'առնէինք, երբ տո՛քորը ներս մտաւ: Ան էր, որ խօսակցութիւնը բերաւ այդ կէտին: Կրնայի՞ք անմիջապէս ոտքի ելլել եւ մեկնիլ: Շոէնֆելտը ըսաւ, որ դուն հիպնոթիզմը կ'օգտագործես, անկցնելով, որ այդ մէկը շատ վտանգաւոր է:

ՖՐԷՕՅՏ.- Շոէնֆելտ ոչինչ կը հասկնայ հիպնոթիզմէն:

ԱՄԱԼԻ.- Կարելի է: Ամէն պարագայի, հիպնոթիզմով կատարուած դարմանումները դեռ լաւ նանաչում չեն գտած: Կը կարծուի նոյնիսկ, որ արկածներ պատահած են անոր գործածութեան ընթացքին:



ՖՐԷՅՅՏ.- Բայց մա՛յր, կարելի չէ օմլէթ պատրաստել առանց...

ԱՄԱԼԻ.- Սիկմընտ, կրնա՞յ ըլլալ, որ հրեայ մը աշխարհ գայ առանց տաղտուկի, առանց հաւկիթներ կոտրելու հանոյքին: Դուն կրնայիր վիեննայի բժիշկներէն ուրէ մէկէն աւելի վայելել կեանքը, եթէ միայն Մարթան ուզէր այդ մէկը:

ՖՐԷՅՅՏ.- Մա՛յր, կ'աղաչեմ: Մնա՛ եւ ճաշէ մեզի հետ եւ կը խօսինք այդ բոլորին մասին: Հանդարտօրէն: Ունի՞նք խնձորէ կարկանդակ:

ԱՄԱԼԻ.- Ի հարկէ: Բայց այդ խնդիրին մէջ ի՞նչ գործ ունի խնձորէ կարկանդակը: Մարթան կ'ուզէ ինչ բաժնի ինձմէ, ահա՛ թէ ինչ: Ներստեալ՝ ինչ պիտի հասցնէ միմչեւ մուրացկանութեան դուռները:

ՖՐԷՅՅՏ.- Գեղի արգիլեցի Մարթայի հետ վիճիլ այդ մասին:

ԱՄԱԼԻ.- Ահա՛ թէ ինչ: Դուն կը յամառիս բու ջնորժներու մէջ եւ Մարթան կը դաշնակցի հետոյ: Ինք կը սխալի, դուն կը պաշտպանես զինք: Այդ ընթացքով բու կեանքդ, ասպարէզդ, ամէնքը ջուրը կ'իյնան: Երբ դուն ծնար, դայեակը բաւաւ «Նայեցէ՛ք, մշան մը ունի, փոքրիկ դէմքին ունի թիծ մը եւ ես անմիջապէս գիտցայ, որ այս փոքրիկը պիտի դառնայ մեծ անձնաւորութիւն մը, որ գաւալս պիտի ունենայ համեարի բոց մը:

ՖՐԷՅՅՏ. (*Մարթային*).- Լսեցի՞ր, Մարթա՛, առաջին պիպերոնիս հետ լացած ատենս անգամ կը կրէի համեարի շեշտ մը:

ԱՄԱԼԻ. (*աւելի եւ աւելի շեշտելով*).- Այո՛, դուն կրնաս խնդալ, բայց ունէիր: Ես արգիլեցի ինչի աստեղ պէս փնացնել շնորհներդ: Ես ինչ արգիլեցի ուրանալ լաւագոյնը:

ՖՐԷՅՅՏ. (*վերսկսաւ երգելով, ինչպէս սովորութիւն ունէր երկար ատենէ ի վեր*).- Իմ լաւագոյնը...

ԱՄԱԼԻ.- Ոչ միայն կը մոլորիս անհեթեթ տեսութիւններու մէջ, այլեւ կը հեզնես զիս հիմա:

ՖՐԷՅՅՏ.- Մամուշքա, կը չափազանցես:

ԱՄԱԼԻ.- Կը կարծես: (*Այնպէս՝ ինչպէս մէկը քարթ մը կը տեղաւորէ, առանց անոր արժէքը ճանչնալու*): Դուն գիտես, որ ջղագարութիւնը շատ դժուար բան է:

ՖՐԷՅՅՏ.- Ա՛հ, այդպէս կ'երեւի, կը հասկնամ: Ծռենք՞ յտը:

ԱՄԱԼԻ.- Այո, Ծռենք՞ յտը: Ան կ'ըսէ, որ ատիկա տիեզերականօրէն մանչցուած իրողութիւն մըն է: Իրեն պէս կը մտածէ ամբողջ Ակադեմիան: Կ'ըսէ,



ջղագարութիւն բառը կու գայ յունարեմէն՝ *հիսթերոն*, որ կը նշանակէ...

ՖՐԷՕՅՏ (*կը ժպտի*)-- Գրեթէ... արգանդ...

ԱՄԱԼԻ (*հանգստացած*)-- Հետեւաբար՝ ջղագարութիւնը իգական բառ մըն է՝ պատկերացնելու համար կնոջական հիւանդութիւն մը: Բոլոր բժիշկները գիտեն ատիկա:

ՖՐԷՕՅՏ-- Նաեւ իրենց մայրերը, ինչպէս կ'ըսեն:

(*Տոլֆի խնդալէն կը մարի*):

ԱՄԱԼԻ-- Տոլֆի, ամէն պարագայի, Շոէնֆելտը ինծի հետ իրրեւ յետամնաց չի վարուիր...

ՖՐԷՕՅՏ (*հանդարտեցնելու համար՝ կը մօտենայ Ամալիին, կը բռնէ ձեռքը եւ կը բացատրէ*)-- Մա՛յր, կը յիշե՞ս, երբ ուսանող էի, տուն կը բերէի մարդկային միսերու մտոյշներ՝ վերլուծումներ կատարելու համար: Ջղային հիւսկէմներ, օրինակի համար:

ԱՄԱԼԻ (*պժգայով*)-- Ջանոնք միշտ քիթիս տակ կը դնէիր:

ՖՐԷՕՅՏ (*անսահման համբրատարութեամբ*)-- Այն ատեն կ'ուսումնասիրէի ջիդերու կտրուածքներուն հետքերը, գորս անոնք կը ձգէին ուղեղին մէջ: Երբ կը դիպնային անդամալոյծ մը, անհրաժեշտօրէն պարտաւոր են գտնել ուղեղին մէջ կամ ջղային համակարգին մէջ զգացուած ցաւին համապատասխան վնասուածք մը, որ վերջին հաշուով պատճառն է անդամալուծութեան:

ԱՄԱԼԻ-- Եւ դուն բու խոշորացոյցիդ մէջ կը գտնե՞ս այդ հետքերը:

ՖՐԷՕՅՏ-- Այո:

ԱՄԱԼԻ-- Ուրեմն, հարց չի մնար:

ՖՐԷՕՅՏ (*հեզեական*)-- Հագիւ թէ... Պարզապէս որոշ պարագաներու ոչինչ կը գտնուի: Ոչ մէկ հետք: Ոչ մէկ վնասուածք ընդհանրապէս:

ԱՄԱԼԻ-- Նոյնիսկ դո՞ւն չես գտներ:

ՖՐԷՕՅՏ-- Նոյնիսկ ես:

ԱՄԱԼԻ-- Եթէ դուն ալ ոչինչ կը գտնես, ուրեմն ոչինչ կայ: ՏՈԼՖԻ-- Օ, յա՛...

ՖՐԷՕՅՏ-- Տոլֆի՛...

ՖՐԷՕՅՏ (*կը շարունակէ*)-- ...Ոչինչ: Ահաւասիկ խորհրդաւորութիւնը: Կը մամի Նիւթընի խնձորին, որ վեր կը բարձրանայ, փոխանակ վար իյնալու: Անկարելի է: Գիտենք ատիկա: Այսուհանդերձ կրնայ այդպէս պատահիլ: Հիւանդ այր մը կամ

կիմ մը կը մամնի անդամալոյծի, կ'ապրի ու կը տեղափոխուի անդամալոյծի պէս: Իր ամբողջ գոյութեան ընթացքին: Բայց երբ դիագնոզն զինք, ֆիզիքական ոչ մէկ վնասուածք չի յայտ կու գայ: Տեսանելի ոչ մէկ հետք: Ոչի՛նչ: Առանց պատճառի հետեւանք մը:

ԱՄԱԼԻ.- Բայց Սիկմընտ, եթէ ցաւ մը ֆիզիքական չէ, ապա ուրեմն ի՞նչ է:

ՖՐԷՕՅՏ.- Թերեւս մտքի ցաւ մը, հոգիի վերք մը:

ԱՄԱԼԻ.- Հոգիի՞ վերք մը: Սիկմընտ, դուն բծի՞շկես, թէ քահանայ: Դուն ի՞նչ գործ ունիս հոգիներուն հետ: Ցաւերու ամոքումը, հիւանդներու բուժումը շատ աւելի լաւ գործ է մարդու մը համար: Դուն պարզապէս բժշկութիւնդ կիրարկէ, ինչպէս կը կիրարկեն Վիեննայի բոլոր մեծ բժիշկները, որոնք աշխարհի լաւագոյնները կը համարուին:

ՖՐԷՕՅՏ.- Պէտք է որ մէկը սկսի: Պէտք է որ մէկը քանայ դուրը: Պէտք է գիտնալ, թէ ինչու անտեսանելի վերք մը կրնայ անդամալուծել մարդ մը եւ խորտակել զայն:

ԱՄԱԼԻ.- Դուն ճիշդ ու ճիշդ հորդ կը մամնիս: Ամէն ոք կ'ըսէր անոր. «Հետացիր Թրէյպերկէն: Գնա՛ Վիեննա դրամ շահէ»: Բայց ան կը հետեւէր իր սեփական գաղափարին: Տաղտուկը գէշ բան է, Սիկմընտ: Դուն կիմ մը ունիս: Եւ շուտով պիտի ունենայ զաւակ մը:

ՄԱՐԹԱ. (*կ'ընդմիջէ զինք*).- Իր կնոջ տեղ թոյլ տուր, որ ես ինքն յօսիմ, կ'ուզե՞ս:

ԱՄԱԼԻ.- Դուն ըսելիք ոչինչ ունիս: Ֆրէյտը քանակաւ գոհողութիւններ ըրած է քեզի համար:

ՖՐԷՕՅՏ (*առաջին անգամ ըլլալով կը խօսի կոպտօրէն*).- Մա՛յր, հանգի՛ստ ձգէ Մարթան: Ես գիտեմ կարելիք անկարելիէն զանազանել: Բիչ մը առաջ նոր հիւանդ մը բերին, ինծի քաջածանօթ ախտանը՝ շաններով: Ես նամբեցի զինք, բայց ոչ՝ Ակադեմիայի իմ պաշտօնակիցներու հանոյք պատճառելու համար, հաւատա՛ ինծի: Պարզապէս որովհետեւ ոչինչ կրնայի ընել իրեն:

ԱՄԱԼԻ.- Ահա դարձեալ ինքզինքդ կը մեղադրես:

ՖՐԷՕՅՏ.- Այո, ես ինքզինքս կը մեղադրեմ, ես մեզ բոլորս կը մեղադրեմ: Մենք ամէնէն խաբեքաներ ենք: Մենք ոչինչ գիտեմք:

ԱՄԱԼԻ.- Բայց Սիկմընտ, ես քեզի ըսի...

ՖՐԷՕՅՏ (*կը բորբոքի*).- Կ'աղաչեմ, մա՛յր, հիմա հանգիստ ձգէ զիս:

*(Այս անգամ Ամալի ինք կը վիրաւորուի):*

ՄԱՐԹԱ.— Մա՛յր, կը խնդրեմ: Ետ յոգնած եմ:

*(Ամալի ոտքի կ'ելլէ առանց բան ըսելու. կ'առնէ վերարկուն ներքնասենեակէն եւ կ'երթայ դէպի մուտքի դուռը: Տոլֆի կը հետեւի իրեն):*

ԱՄԱԼԻ.— Թերեւս կը փնտոնես անտեսանելի վերքեր: Բայց դուն գիտես անոնց մարը:

ՏՈԼՖԻ.— Օ՛, մա՛յր:

*(Ամալի կը մեկնի: Տոլֆի կը հետեւի անոր: Ֆրէժոյտ կը վերադառնայ գրասենեակ, ուր կը տեսնէ Մարթան, որ լուռ կը նայի իրեն):*

ՖՐԷՅՅ.— Երբեք չի կրնար հաշտուիլ այն գաղափարին հետ, որ ես տասներկու տարեկան չեմ այլեւս... Ես պարտաւոր եմ խօսիլ քեզի հրաժարականի այս պատմութեան մասին. ներողութիւն, ես մոռցայ... Ո՛չ: Չմոռցայ, բայց չուզեցի քեզի մտահոգութիւն պատճառով: Մա՛նաւանդ այս վայրկեանիս, որովհետեւ... կրնար պատահիլ, որ մայրիկը իրաւունք ունէր:

ՄԱՐԹԱ.— Սիկմընտ...

ՖՐԷՅՅ.— Հոն՝ ուր ես կը խորասուզուիմ, ոչ ոք կրնայ հետեւիլ ինծի:

ՄԱՐԹԱ. *(Ժպտելով)*.— Ամէնէն առաջ դուն ինքդ խնամքի պէտք ունիս:

ՖՐԷՅՅ.— Ես չեմ կրնար այլեւս ընել ա՛յն, ինչ ուրիշներուն կ'ընեմ: Եւ այդ գլխու ցաւե՛րը: Ամէն անգամ, որ շոգեկառք մտիմ: Զուր կը տրամաբանեմ, երբ կ'ըսեմ ինքզինքիս.— Այս շոգեկառքը գիշերուան մէջ կը թաւալի ճշգրիտ ժամանակացոյցով մը, մեքենավարի մը ձեռքով, որ կը ցանցնայ իր արհեստը եւ ես, եթէ ուրիշ որեւէ կասկած ունեցայի, սուրիչը կը յիշեցնէր ինծի, որ հոն է եւ ուշադիր: Այսուհանդերձ, ինծի համար անիկա շոգեկառք մը չէ, անիկա քան մըն է, որ գիս կը տանի դէպի մահ: Ես կը մրափեմ եւ սուրիչը կ'արթնցնէ գիս: Անիկա կը մխրճուի գլխուս մէջ՝ ինչպէս դանակի մը շեղրը»: Բարձրաճայն կ'ըսեմ ինքզինքիս. «Բժիշկ, բժշկեա՛ գամձն էո», բայց ինչպէ՞ս, ինչո՞վ: Ա՛հ, եթէ կարեւնայի միայն ինքզինքն ազատել իմ անձկութիւններէս, իմ վախե-

րես, կամ, ի՞նչ գիտնամ, ընդհակառակը, մախ՝  
յաջողիլ Պրէօրրի պէս, այդ պարագային իմ վստա-  
հութեան պակասս, ու ցաւերս պիտի չճանային:

ՄԱՐԹԱ.— Յաջողի՞լ: Պարզապէս յաջողի՞լ: Ո՛չ, Սիկմընտ:  
ՅՐԷՕՅՏ.— Երբ Փարիզ կը գտնուէի, գրեցի Քեզի. «Ես  
հաննար մը չեմ. ես նոյնիսկ շատ օժտուած ալ  
չեմ: Պարզապէս աշխատանքի մեծ կարողութիւն  
մը ունիմ. ա՛յս է ամէնը:

ՄԱՐԹԱ. (*կը շարունակէ նախադասութիւնը*).— ...«Բայց  
Քաջ գիտեմ, որ պիտի գոհաբերէի կեանքս միակ  
վայրկեանի մը համար»: Դուն այս եւս գրած էիր  
ի՞նձի նոյն նամակին մէջ:

ՅՐԷՕՅՏ.— Այո՛, բայց ապագան ունէի առջեւ: Հիմա ապա-  
գան հոս է: Երեսուցեօքը տարեկանիս ես մինչեւ  
անգամ ի վիճակի չեմ ապրեցնելու կիմս, առանց  
դեռ խօսելու այն գաւակին մասին, զոր պիտի  
ունենանք: Ուրեմն, կը հասկնաս, Մարթա՛, կը  
վախնամ: Պարզապէս:

ՄԱՐԹԱ.— Բայց ի՞նչո՞ւ, Սիկմընտ: Ես երջանիկ եմ մեր  
ունեցածներով: Ուրիշ ոչինչ կը պահանջեմ:

ՅՐԷՕՅՏ.— Ո՛չ, Մարթա: Մայրիկը խօսեցաւ միայն Ակա-  
դեմիայէն հրաժարականիս մասին, բայց ակա-  
դեմականները կրնան արգիլել ի՞նձի հիւանդա-  
նոց մուտքս: Անոնք կրնան արգիլել ի՞նձի  
նո՛յնիսկ աշխատիլ:

ՄԱՐԹԱ.— Իրաւունք ունի՞մ:

ՅՐԷՕՅՏ.— Այո: Այն ատեն ի՞նչ պիտի ընեմ: Պիտի դառնամ  
տարրալուծարանի մէջ օգնական մը, որ իր կեանք-  
ը կ'անցընէ *տէ քոպայէք*ները կերակրելով: Ո՛չ:  
Ես լաւ փորձագետ մըն էի: Ունէի ախտահա-  
նաչման գգայնութիւնը: Պիտի վերսկսիմ: Պիտի  
ըլլամ իրենց պէս: Տե՛ս, ահաւասիկ յանցաւորը,  
Ժամիւսը: Աստուածը բոլոր այն բաներուն, որ  
կը սկսին, աստուածը բոլոր այն բաներուն, որ  
կ'աւարտին: Դէ լաւ, այսօր ամէն ինչ կը սկսի  
Ֆրէժոյտի համար, նոր տո՛թոր Ֆրէժոյտի համար:  
Հանգիստ մարդ մը, լաւ տեղաւորուած, լաւ յա-  
ճախորդներով, որ պիտի ունենայ Ակադեմիայի  
կողմէ ցանցուած ստոյգ հիւանդութիւններ:  
Մարդ մը, որ ի վիճակի է ինքզինքին նուիրելու  
ի՞նքնատիպ արձանիկները, զորս կը սիրէ, եւ ոչ  
թէ անոնց պատճենները, առաւել՝ արտագրում-  
ները:

ՄԱՐԹԱ.— Ուրեմն, մայրիկը իրաւունք ունէր: Ամէն ինչ

եղած է իմ սխալիս հետեւանքով:  
(Չափազանց գորովայիր՝ Ֆրէժոյտ զայն կ'առնէ իր բազուկներուն մէջ):

ՖրէժոՅՏ.- Մոռցիր՝ ինչ որ մայրիկը ըսաւ: Ես երբեք պէտք չէ նանսի երթալի: Մա՛նաւանդ այս վայրկեանին: Երեսակայէ, եթէ դուն արթննաս յանկարծ ելակի կարկանդակ մը ուտելու ախորժակով, գիշերը ո՞վ պիտի բերէ քեզի, հա՞:

ՄԱՐԹԱ.- Ո՛չ ելակի, Սիկմընտ, շա՛քարով վարունգի:  
ՖրէժոՅՏ.- Բայց դուն խորշամբ կը զգաս այդ վարունգներէն:

ՄԱՐԹԱ.- Ճիշդ է: Դէ լաւ, կը սպասեմ ներշնչման:

(Կ'ողջագուրուին, բայց զանգակը կ'ընդմիջէ գիրենք):

ՖրէժոՅՏ.- Թող Քաթին պատասխանէ:

ՄԱՐԹԱ.- Բայց դուն ժողովին դրկեցիր Քաթին:

ՖրէժոՅՏ.- Իշխանուհի, այլեւս բնաւ պիտի չհետամամ քեզմէ: (Մարթա կը նայի անոր կէս-թերահաւատ, կէս-հեզնական: Ֆրէժոյտ կը շարունակէ): Թող ուզածին չափ հնչէ...: Եւ մենք պիտի երթանք ապրիլ վանտըսպըրկ: (Կը սեղմէ Մարթան կուրծքին): Կը յիշե՞ս վանտըսպըրկի մէջ անցուցած մեր առաջին գիշերը: Պատիկ պանդոկի մը մէջ: Դեղին տապակը, որ միտաց ամբողջ գիշերը: Եւ յաջորդ առտու, երբ նախանշէն մնացած փշրանքները բաղերուն համար պատուհանէն դուրս նետեցինք: Ատիկա այն վայրկեանն էր, զոր երբեք պիտի չմոռնամ: Բայց տարրալուծարանի իմ տարիներէս ի՞նչ մնաց ինծի, Մարթա՛: Անոնք հոսեցան գլխիվայր: Ո՛չ: Այնուամենայնիւ, տո՛քոր Ֆրէժոյտի համար գեղեցկօրէն մթին կեանք մը եւ սիրով լի:

ՄԱՐԹԱ.- Եւ մնացեալ ժամանակը կնո՞ջը պիտի պատկանի:

ՖրէժոՅՏ.- Ո՛չ մնացեալը, սիրելիս, ամբողջութի՛ւնը:

ՄԱՐԹԱ (ժպտելէն).- Դուն այլեւս գլխու ցաւ չունիս: (Չանգակը նորէն կը հնչէ՝ ստիպողութիւն մը ազդարարելով: Ֆրէժոյտ կ'ուղղուի դէպի իր գրասենեակը: Մարթա կը բանայ դուռը եւ Ֆրէժոյտի հետ կը մտնէ վճռական երեւոյթով մը: Բայց Մարթա կը կանխէ գինք): Վայրկեան մը,





Քուրա Ջարիկանգ (Ֆրեյս) և Նիհայ Հիս (Ելիզապեթ)

*խնդրեմ: (Ազգարարելու համար Ֆրէօյտը):*  
Սիկմրնտ... նո՛ր կեանքդ:

*(Մարթա կ'առնէ ափսէն ու դուրս կ'ելլէ: Պէտք է բացուէր մուտքի դուռը, որովհետեւ դուրսէն ձայն մը կը լսուի):*

- ՁԱՅՆԸ.— ...Ապա կը վերադառնա մեզ տանելու, Փիթըր, եւ մա՛նւանդ զիս մի սպասցնել:
- ՖՐԷՕՅՏ (կը նշմարէ Ֆրետերիքը).— Կը կարծէի, որ ամէն ինչ կատարելապէս պարզ է:
- ՖՐԵՏՏԵՐԻՔ.— Այնքան շատ պնդեց, որ...
- ՖՐԷՕՅՏ.— Բացատրեցի թեզի, որ ոչինչ կրնայի ընել:
- ՖՐԵՏՏԵՐԻՔ.— Եթէ քանի մը բառ ըսէիր, ատիկա թերեւս բարիք պիտի ըլլար իրեն:
- ՖՐԷՕՅՏ.— Կը կրկնեմ...
- ՖՐԵՏՏԵՐԻՔ.— Ընդունեցէ՛ք զինք, կ'աղաչեմ:
- ՖՐԷՕՅՏ (յստակ).— Ո՛չ: Կը ցաւիմ, պարոն:

*(Սեմին կը նշմարէ մանկամարդ կին մը):*

- ԷԼԻՋԱՊԷԹ.— Տոբոբո Ֆրէօյտը դո՛ւք էք:
- ՖՐԷՕՅՏ (ուրիշ ընելիք չունեցողի երեւոյթով).— Օրիորդ: Ըսին ինձի, որ դուք որոշած էք զիս տեսնել:
- ԷԼԻՋԱՊԷԹ.— Մտածեցի, որ ոչինչ կը կորսնցնեմ ներս մտնելով: Մասնաւորաբար այսօր: Կը պաշտեմ Մարտ ամիսը, բայց ստո՛ւծ եմ: (Կը հասնի աթոռի մը, զդուշուժեամբ կը նստի, բոլորովին յանձնելով անթացուպերը Ֆրէօյտին, որ զանոնք կը կռթնեցնէ պատին: Էլիզապէթ կ'ընդմիջէ զինք): Ո՛չ, պիտի ուզէի, որ զանոնք ինձի վերադարձնէիք:

*(Շփոթահար՝ Ֆրէօյտ կը վերադարձնէ անթացուպերը. վայրկեան մը քննական ակնարկ մը կը նետէ Էլիզապէթին վրայ, ապա կ'ուղղուի դէպի իր գրասենեակը):*

- ՖՐԷՕՅՏ.— Այսպէս հանգի՞ստ կը գգաք:
- ԷԼԻՋԱՊԷԹ.— Դուք հոս միակ անձն էք, որ հանգիստ չէք գգար, տոբոբո: Կը տեսնէք, ասիկա խաղ մըն է, գոր կը խաղանք Ֆրետերիքը եւ ես: Ան կը ստիպէ ինձի, որ յաջորդաբար այցելեմ վիեննայի բոլոր բժիշկներուն: Ես կը հնազանդիմ, բայց իրեն հաճոյք պատճառելու համար միայն, որովհե-

- տել ան շատ ազնիւ տղայ մըն է, մա՛նաւանդ՝ երբ շատ յամառութիւն չ'ընկեր:
- ՅՐԵՕՅՏ.— Ան յամառ է, կը վստահեցնեմ ձեզ:
- ՅՐԵՏԵՐԻՔ.— Անհրաժեշտ էր այդպէս վարուիլ, այլապէս երբեք հոս պիտի չգար:
- ԷԼԻՋԱՊԷԹ (ընդմիջելով Ֆրեսերիքը).— Ես պարտաւոր էի մախազգուշացնել ձեզ, տո՛քո՛ր: Ֆրեսերիք կը խորշի, երբ իր մասին ճշմարտութիւններ ըստին, մա՛նաւանդ իր ներկայութեան:
- ՅՐԵՏԵՐԻՔ.— Էլիզապէ՛թ...
- ԷԼԻՋԱՊԷԹ.— Կը տեսնե՞ք, բրաժ դիտողութեանս պէս պզտիկ ճշմարտութիւն մը արդէն կ'անհամզատացնէ զինք: Ե՞ս էի, որ պահանջեցի հոս գալ:
- ՅՐԵՏԵՐԻՔ.— Էլիզապէ՛թ, կ'աղաչեմ...
- ԷԼԻՋԱՊԷԹ.— Երբ մերժեցի, առաջարկեց, որ առաջինը ինք մերս մտնէ, տեսնելու համար, թէ ով է այդ «Տո՛քո՛ր Ֆրէօյտը»: Ան պետք էր վերադառնար ու նկարագրէր ձեզի մանրամասնութիւնը: Այդպէս չէ՞: (Լուս բողոք՝ Ֆրեսերիքի կողմէ): Ի վերջոյ, ե՞ս էի առաջարկողը, թէ դուք:
- ՅՐԵՏԵՐԻՔ.— Էլիզապէ՛թ, որոշապէս...
- ԷԼԻՋԱՊԷԹ.— Դէ լաւ, երբ վերադարձաւ եւ ըսաւ ինձի, որ այդ տո՛քո՛րը կը մերժէր զիս ընդունիլ, խոստովանիմ, որ այդ պարագան զիս մատնեց փորձութեան: Առաջին անգամն էր: Վերջապէս...: Մենք շատ լաւ գիտեմք, որ ատիկա ոչինչի պիտի ծառայէ: Այդպէս չէ՞, տո՛քո՛ր: Դէ լաւ, հիմա գիտեմ, որ պետք է զիս ննջարկէ՛ք սովորական կատակերգութեան: Պիտի մննէ՛ք զիս, չէ՞:
- ՅՐԵՕՅՏ.— Կրնամք հրաժարիլ այդ կատակերգութենէն, օրիորդ, եթէ ատիկա նեղութիւն կը պատճառէ ձեզի:
- ԷԼԻՋԱՊԷԹ.— Բայց ոչ, խաղանք խաղը: Ես պահանջեցի շարժափարէն ինքնաշարժը հոս բերել առաջ՝ երկու անգամ ընել հանրային պարտեզին շրջանը:
- ՅՐԵՕՅՏ.— Ի՞նչնախորէ՞ն, թէ քառարշաւ: Այդ մէկուն ստուգումը կ'ուզեմ՝ պարզապէս գիտնալու համար, թէ տրամադրուած է՞ք տա՞սը, թէ երեսուն վայրկեան մնալ մօտս:
- ԷԼԻՋԱՊԷԹ (կը խնդայ).— Սովորաբար, Փիթըր քառորդ ժամ մը կը յատկացնէ:
- ՅՐԵՏԵՐԻՔ.— Կ'ուզեի՞ք, որ ես միջանցքին մէջ սպասեմ:
- ՅՐԵՕՅՏ.— Որեւէ պատճառ չկայ այդպէս ընելու, նստեցէ՛ք:
- ՅՐԵՏԵՐԻՔ.— Ինչպէս կը փափաքի՞ք, տո՛քո՛ր:

- ՖՐԵՕՅՏ.- Ըստք ինձի, օրիորդ... *(կը վարանի ամբողջացնել անունը)*: Ըստք ինձի, օրիորդ...
- ԷԼԻՉԱՊԵԹ *(մեղադրական շեշտով)*.- ...Վոն Ռիթըր... «Ըստք ինձի, օրիորդ վոն Ռիթըր, ե՞րբ սկսած է ձեր սրունքներուն ցաւը»...: Այդ չէ՞, որ կը նեղէ ձեզ:
- ՖՐԵՕՅՏ.- Ո՛չ: Երբե՛ք: Ես ինքզինքիս հարց կու տայի, թէ դուք կը գգա՞ք, թէ կեանքիս որ վայրկեանին հանդիպեցաք:
- ԷԼԻՉԱՊԵԹ.- Ես բոլորովին գուրկ եմ նախատեսելու կարողութեմէ:
- ՖՐԵՕՅՏ.- Վայրկեան մը առաջ, ինձի լսելի ճայնով մը կնոջս կըսէիք, որ մեմք՝ ջղային հիւանդութեանց մասնագէտներս, բոլորս ալ շատախօսներ ենք: Նենգամիտ խաբարներ, թէ ոչինչ գիտեմք:
- ԷԼԻՉԱՊԵԹ.- Տո՛քոր, դուք բժշկութեան չէ՞ք հաւատար: Ի՞նչ բախտ: Ե՛ս ալ չեմ հաւատար:
- ՖՐԵՕՅՏ.- Մեզի կը մնայ ուրեմն քաղաքավարօրէն սպասել Փիթըրին. յուսալով, որ ան շուտով կը հասնի:
- ՖՐԵՏԵՆՐԻԲ.- Էլիզապէթ, թերեւս դուք կարենայիք պատմել տո՛քորին, թէ ինչպէս երեք տարի առաջ, հորդ մահէն ետք...

*(Էլիզապէթ կը հակազդէ):*

- ՖՐԵՕՅՏ *(կը նայի անոր)*.- Հայրդ երեք տարի առաջ մեռած է: Ճիշդ է:
- ԷԼԻՉԱՊԵԹ.- Ուրկէ՞ գիտեք:
- ՖՐԵՕՅՏ.- Ձերտերի մատապէս խօսած է ձեր մասին. առիկա ներդրումն կը պատճառէ ձեզի:
- ՖՐԵՏԵՆՐԻԲ.- Պէտք էր, որ խօսէի, Էլիզապէթ...: Կրնամ հաստատօրէն ըսել տո՛քորին, թէ հայրը խնամելէ անմիջապէս ետք, Էլիզապէթ խնամեց նաեւ կինս՝ Շարլոթը, որ մեռաւ մէկ տարի առաջ:
- ՖՐԵՕՅՏ *(խօսակցութեան թունը թեթեւցած)*.- Այս ամէնը շատ հետաքրքրական է: Դէ լաւ, Օրիորդ վոն Ռիթըրը երեք տարիներէ ի վեր այս կացութեան մէջ կը գտնուի, նիշդ այդ կէտին մէջ պէտք է գտնել իր հաւասարակշռութիւնը, եւ թերեւս նոյնիսկ որոշ հանգիստ մը:
- ԷԼԻՉԱՊԵԹ.- Կատարելապէս: Ես ես ոեւէ մէկէն գուր չեմ հայցեր: Ես նոյնիսկ ինքզինքիս չեմ գթար: Փոխանակ այդ մէկը ընելու, ես ինձի համար յարգարած եմ սեփական կեանք մը: Լիալիր: Հարուստ: Յորդառատ եւ շահաւէտ: Ես ունիմ իմ

րանաստեղծութիւններու...: Համալսարանի քանկամաներէս ոմանք անոնց մէջ նոյնիսկ որոշ շահեկանութիւն կը գտնեն:

**ՖՐԵՏԵՐԻՔ.**— Անոնք մինչև անգամ պնդեցին, որ քանաստեղծութիւնները հրատարակուին համալսարանի իրենց հանդէսին մէջ:

*(Հիլզապէթ կ'ուրուացնէ նոյնիսկ պզտիկ ժպիտ մը, ձեւացնելով, որ չուզեր այդ մասին լսել: Յրէօյտ կը նայի անոր, ոչինչ կ'ըսէ, բայց իր տուփին մէջ կը փնտռէ ասեղ մը):*

**ԷԼԻՋԱՊԷԹ (յանկարծ).**— Ի՞նչ ընելու կը պատրաստուիս: **ՖՐԵՏԵՐԻՔ.**— Օ՛հ, ոչինչ, սիկարս մարած է, լուցկի կը փնտռեմ...: Կ'ըսէիք...

**ԷԼԻՋԱՊԷԹ (աճող ջղագրգռութեամբ մը).**— Ես իմ քանաստեղծութիւններս ունիմ, նկարչութիւնս, բարեսիրական գործերս...: Այո՛, կար կ'ընեմ աղբատներուն համար: Իմ ձեռքերով...

*(Յրէօյտ կ'անցնի Հիլզապէթի ետեւը, ձեռքին՝ ասեղը, նշան կ'ընէ Ֆրետերիքին, լուսթիւն պարտադրելով անոր):*

**ՖՐԵՏԵՐԻՔ.**— Դուք ձեզի հետ պետք է բերէիք ձեր գործերէն մէկը՝ ցոյց տալու համար տոբոբին: Թերեւս այդ մէկը հետաքրքրէր զիմք. «Բիւրեղեայ ծովուն վրայ» անուն քանաստեղծութիւնը, օրինակ, զոր քարեկամներդ կ'ուզէին ամենէն առաջ տպագրութեան տալ...

*(Այդ խօսակցութեան ընթացքին, Յրէօյտ կը մօտենայ Հիլզապէթի սրունքներուն: Ֆրետերիք, մտահոգ ոտքի կ'ելլէ եւ Հիլզապէթ նայլածք մը կը նետէ անոր կողմը: Յրէօյտ արագօրէն կ'օգտագործէ այդ ցրուածութիւնը եւ երկու անգամ կը մխրճէ ասեղը Հիլզապէթի սրունքին, որ որեւէ հակազդեցութիւն ցոյց չի տար: Ֆրետերիք կը հետեւի խաղի ամբողջ տեսարանին, բայց կը մնայ լուռ):*

**ԷԼԻՋԱՊԷԹ (չարունակելով).**— ...Ուրեմն, ինչպէս կը տեսնէք, ես չեմ վախնար ապագայէն, ոչ ալ ձանձորոթէն, ոչ ալ առանձնութենէն: Խորքին մէջ ունիմ միայն մէկ հարց, — վերջ տալ զիս բուծելու Ֆրետերիքի յամառութեան, երբ այդ մէկը ան-

կարելի է: Լաւ: Ահաւասիկ մեր տեսակցութիւնը հասած է իր լրումին, ինչպէս կ'ենթադրեմ: Ֆրետերիք, կ'ուզէի՞ր ստուգել, որ Փիթըր վերադարձած է, թէ ոչ:

Ֆրետերիք.- Դեռ ոչ, Լիէզէլ, դեռ շատ կանուխ է:

ՖրէՕՅՏ.- Օրիորդ, այնուամենայնիւ ես թոյլ պիտի չտայի մեկնիլ, առանց քեզի ուղղելու առնուազն ընթացիկ հարցումներէն մէկը,- զգացած է՞ք ցաւեր, զորս բոլորովին գաղտնի պահած ըլլաք:

Էլիզաւէթ.- Ո՛չ:

ՖրէՕՅՏ.- Սակայն որոշապէս կը զգաք, որ ամէն ինչ երթալով աւելի պիտի լրջանայ: Ինչո՞ւ:

Էլիզաւէթ.- Որովհետեւ ամէն ինչ օրըստօրէ աւելի կը ծանրանայ:

ՖրէՕՅՏ (զրգուելու համար էլիզաւէթը).- Եւ դուք դեռ կը յամառի՞ք:

Էլիզաւէթ.- Ո՛չ, պիտի փորձէի քալել ա՛յնքան՝ որ կրնայի: Նո՛յնիսկ առանց օգնութեան...

(Յոյց կու տայ անթացուպերը):

ՖրէՕՅՏ.- Ձեր տեղը ես պիտի փորձէի շարունակել... հակառակ անոր, որ քալելը շատ ցաւ կը պատճառէ, այնպէս չէ՞: (էլիզաւէթ չի պատասխաներ): Բայց ոչ այնքան ցաւ, որքան նստակեաց վիճակը կը պատճառէ, ինչպէս է բու պարագադ այս վայրկեանիս: (Լռութիւն): Ասիկա աւելի ցաւ կը պատճառէ մա՛նաւանդ կոնֆերն ի վար:

Էլիզաւէթ (զուսպ).- Ձեմ գիտեր:

ՖրէՕՅՏ.- Մնայո՞ւն ցաւ է, թէ պարբերաբար կը յայտնուի:

Էլիզաւէթ.- Ձեմ գիտեր:

ՖրէՕՅՏ.- Եւ այդ պարագային ամէնէն գէշը երկարած ըլլալն է, այնպէս չէ՞:

Էլիզաւէթ.- Բայց ես երբեք նման բան չըսի:

ՖրէՕՅՏ.- Ո՛չ: Դուք այդպէս բան չըսիք (կը հանէ ժամացոյցը): Դէ լաւ, հիմա կը հաւատամ, որ ձեր շատ պիտի վերջացած ըլլայ:

Էլիզաւէթ (յանկարծ).- Բա՞ն մը գտաք, ըսէք:

ՖրէՕՅՏ.- Ինչ բան ենթադրել կու տայ ձեզի, որ բան մը գտայ:

Էլիզաւէթ (յանկարծակի անձկութեամբ).- Մտածեցէք, որ ես կրնամ ամբողջովին անդամալուծուիլ:

ՖրէՕՅՏ.- Առաջին անգամ ե՞րբ որոշեցիք, որ ձեր ցաւը անբուժելի է...: Մի՛ պրկուիք: (Յրէջտ արագօրէն կ'ուղղուի դէպի անոր կողմը եւ կը բռնէ

*սրունքները: էլիզապէթ կը պրկուի՝ ցաւազին արտայայտութեամբ մը): Շա՞տ ցաւ պատճառեցի ինձի: Առաջին անգամ Ե՞րբ այսքան սուր ցաւ զգացիք:*

Է.Լ.ԶԱ.ՊԷԹ.— ...Բոլորս զիւր զացած էինք: Մայրս, քոյրս՝ Շարլոթը: Եւ Ֆրեանսիսը: Եւ քարեկամներ: Օրը գեղեցիկ էր, շատ տաք: Ումանք համրայ կլան՝ աւելի երկար պտոյտի մը համար...: Ֆրեանսիսի հետ ես միացայ անոնց... այն ատեն...

ՖՐԵՏԵՐԻԲ.— Էլիզապէթ, ըսէ՛ք տոբէրին, թէ ինչպէս սկսար ամբողջ օրը՝ Շարլոթը խնամելով: (*Ֆրէճօյտ գայրայից հակազդեցութիւն մը ցոյց կու տայ*): Բայց ինձի կը թուի, թէ այդ մէկը կարեւոր է:

ՖՐԷՕՅՏ.— Եթէ այդպէս շարունակէ՛ք, պիտի պահանջեմ, որ դուրս ելլէք:

ՖՐԵՏԵՐԻԲ.— Կը ցաւիմ:

ՖՐԷՕՅՏ.— Ուրեմն, օրհորդ...

Է.Լ.ԶԱ.ՊԷԹ.— Ուղղութեամբ դեպի բլուրի մը զագաթը, ուր տեսարանը հիանալի էր: Վայրկեան մը շունչ առիմք, երբ յանկարծ զգացի... անբացատրելի ցաւ մը:

ՔԱԹԻ (*կը հրէ դուռը եւ յանկարծ ներս կը մտնէ՝ պարզօրէն ընդմիջելով խօսակցութիւնը*)— Պարոն տոբէր...

ՖՐԷՕՅՏ.— Քաթի՛, ըսած եմ ինձի, որ երբեք չընդմիջես զիս, երբ հիւանդ մը կը քննեմ:

ՔԱԹԻ.— Կը ցաւիմ, պարոն, չէի գիտեր, որ մէկը ունիս մօտդ:

*(Ֆրէճօյտ ոտքի կ'ելլէ, գիտնալով, որ պէտք է ամէն ինչ սկիզբէն սկսիլ Քանի մը քայլ կ'առնէ զէպի նախասենեակին կողմը, ուր մուտք գործած է Պրէօրը):*

ՊՐԷՕՐԸ (*Նոյն ատեն*)— Սխալը իմա է, Սիկմընտ: Կը ներս: Բայց ստիպուած էի:

ՖՐԷՕՅՏ.— Այս պահուս չեմ կրնար:

ՊՐԷՕՐԸ.— Մահաբունի պարագայ մըն է, որ արագ կ'ընթացայ, եթէ դուն չգաս:

ՖՐԷՕՅՏ.— Ա՞յդ աստիճան:

ՊՐԷՕՐԸ.— Այո: Ծննդաբերութենէն ետք զգացուած գէշ վիճակ մը: Կինը կը մերժէ սնունդ առնել: Եւ երբ կը ստիպեն իրեն՝ կը դարձնէ ամէն ինչ:

ՖՐԷՕՅՏ.— Ե՞ս ինչ կրնամ ընել:

ՊՐԷՕՐԸ.— Կ'ապահովէ՛ք սնունդը... հիպնոթիզմի միջոցով:

- ՊՐԷՕԸՐ.- Կապահովե՛ք սնունդը... հիպնոթիզմի միջոցով:
- ՖՐԷՕՐՏ.- Եւ վտանգել ինչ համբարձի ալ:
- ՊՐԷՕԸՐ.- Գետի՛նն անցնի վտանգը: Ձմեռած՝ գտիր սնունդ առնելու միջոցը: Եկուր անմիջապէս:
- ՖՐԷՕՅՏ.- Վայրկեան մը ժամանակ տուէ՛ք ինձի: *(Յանկարծ գաղափար մը կը յաճախէ իրեն: Կ'երթայ դէպի Պրէօըր):* Ժողով, կ'ուզեմ որ ակնարկ մը նետես մանկամարդ հիւանդի մը վրայ: Եկուր ներկայացնեմ թե՛քի, եկու՛ր: Ջղապիրկ ցաւերու բացառիկ պարագայ մըն է: Ամէնէն տարօրինակը, որ տեսած ըլլամ:
- ՊՐԷՕԸՐ.- Ջղագարութեան ցաւերը միշտ արտառոց կ'ըլլան:
- ՖՐԷՕՅՏ.- Մասնաւորապէս այս մէկը: Լսէ: Սրունքներուն մէջ է ցաւը: Կը մխրենք ստեղ մը, բայց ցաւի ոչ մէկ նշան, ամբողջական անզգայութիւն...
- ՊՐԷՕԸՐ.- Ամբողջակա՞ն:
- ՖՐԷՕՅՏ.- Բացարձակ, բայց երբ ձեռքերով կը սեղմեմ, ամ կը զգայ... *(Պրէօըր հակազդեցութիւն մը ցոյց կու տայ):* Ջօրեղ հակազդեցութիւն: Տարօրինակ բան: Եկու՛ր: *(Կը մտնեն գրասենեակ):* Օրիորդ վոն Բիթըր... Պարոն Վոլմուր... պաշտօնակիցս, Տոթթոր ժողով Պրէօըր:
- ՊՐԷՕԸՐ.- Օրիորդ...
- ՖՐԷՏԵՐԻԲ.- Տոթթոր Պրէօըրը անշո՛ւշտ որ կը ցանջանմ:
- ՖՐԷՕՅՏ.- Օրիորդ, բախտ ունի՛ք, որ Տոթթոր Պրէօըր այս վայրկեանիս եկաւ զիս տեսնելու: Առիթէն օգտուելով՝ խնդրեցի իրմէ, որ անգամ մը թնկէ ձեզ:
- ԷԼԻԶԱՊԷԹ *(ուժգնօրէն)*.- Ո՛չ: Ձեմ ընդունիր, որ մէկը թնկէ զիս:
- ՖՐԷՕՅՏ.- Բայց ատիկա *էկզիպիսիոն* մը չէ...
- ԷԼԻԶԱՊԷԹ *(աւելի եւ աւելի ուժգին)*.- Կը մերժեմ ցուցափեղկի մը մէջ ցուցադրուող առարկայի մը պէս ցուցադրուիլ: Կը մերժեմ թնկութեան ենթարկուիլ ուրիշ շարլաթանի մը կողմէ: Ֆրետերի՛ք, տո՛ն տար զիս:
- (Հաստատելէ ետք, որ Ֆրետերիք օգնութեան որեւէ շարժում չ'ընեն, էլիզապէթ ճիգ կ'ընէ ոտքի ելլելու եւ հաւաքելու իր անթացուպերը):*
- ՖՐԷՏԵՐԻԲ.- Էլիզապէ՛ք: Էլիզապէ՛ք: Կ'աղաչեմ...



*(Ոչ մէկ բան կը փոխէ էլիզապէթը: Ֆրետերիք կը փորձէ նոյն տեղը տեղաւորել զինք ձախաւերօրէն):*

ԷԼԻԶԱՊԵԹ.— Անմիջապէս տուն տար զիս:

ՖՐԷՏԵՐԻՔ.— Ո՛չ: Ո՛չ: Թող մեկնի: Ձգէ՛ որ մեկնի...: Կան ուրիշ աղջիկներ՝ իրեն չափ երիտասարդ, իրեն չափ գեղեցիկ, որոնք նիզ կ'ընեն բալետ, վագել, պարել: Ինքը՛ ոչ: Ո՛չ: Մա՛նաւանդ ինքը: Ինք ի՛նչ պէտք ունի անոնց պէս ըլլալու: Ինք ունի իր նկարչութի՛ւնը, աղբատներուն համար կարի իր աշխատա՛նքը, «ի՛ր ձեռքերով»: Չմոռնանք: *(Շանթաւար՝ էլիզապէթ կանգ կ'առնէ, բայց հագիւ վայրկեան մը անց, կը շարունակէ քայլել դէպի դուռը):* Կը վերադառնա՞մ դէպի այդ կեանքը, օրիորդ: Այդքա՞ն անպարանգով եւ այդ խղճալի եւ ցաւակոծ սրտնեմերով: Այդ կեանքին համա՞ր է, որ ժամանակ չունիս մեզի յատկացնելու: Մեզի, որ կը փորձենք օգնել բեզի: Խօսքը մեր մէջ, օրիորդ, ձեր գաղտնի նպատակը, որուն համար դուք այնքան յամառօրէն եւ այնքան կանոնական ձեռով տարիէ մը ի վեր ինքզինքնիդ կը պատրաստէք, ատիկա պարզապէս անուարար արքունի մը ունենալ չէ՞...

*(Այս բառը կը կեցնէ զինք: Կը կանգնի Ֆրէտերտի դիմաց: Ֆրէտերտ կը նայի անոր՝ առանց շարժելու: էլիզապէթ կը վարանի բոպէ մը, ապա կը սկսի քայլել դէպի ելքի դուռը):*

*(Վերջ առաջին արարի)*



Ս. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

**ՀՈԳԻՆ**

-Ա-

Ես չեմ դիմանում այլես Կեանքին՝  
 Ամէն հպումից ցրիւ եմ գալիս.  
 Մատնուած Գոյի մութ տառապանքին՝  
 Յանձնութիւն եմ մտրում Վայրկեանից.  
 Եւ ամէն ինչում կասկածում եմ ես.  
 Եւ ոչ մի բանի ես չեմ հաւատում.  
 Ամէն ինչ լինում՝ չի լինում կարծես.  
 Կանգնած է անշարժ Կեանքը Անյայտում:

Թախիծն է միայն ազատ Մեկութեան  
 Հոգու մէջ անդորր արձագանգ տալիս.  
 Լսում եմ կանչը Անսահմանութեան՝  
 Երկինք ու Երկիր ինձ նեղ են գալիս.  
 Զարթնել եմ ուզում Նիսի երազից,  
 Որ տեսնեմ Աստուծոյ Աշխարհն իրական.  
 Կեանք ու Մահ անվերջ խանգարում են ինձ՝  
 Ապրելու այնտեղ, որտեղ ես չկամ...

-Բ-

Եւ իջնում անա, մտնում է ինձ  
 Եթերանման մի անհուն Ոգի.  
 Ընկնում է Լոյսի փառը իմ աչքից՝  
 Մետաղանման զնգոցով խօսքի.  
 Եւ արթնանում եմ ես խաւարի մէջ՝  
 Ներհուն, լուսաւոր եւ պայծառ այնքա՛ն...

Նրա դէմ Լոյսն այս Խաւար է մի եղծ.  
 Եւ Խաւարն այս՝ Լոյս մի անօգնական...  
 Եւ թեքուած անա ինքս ինձ վրայ՝  
 Ասես անանուն մի հին մեռելի.  
 Որպէս մոռացուած մի հեռու Երազ՝  
 Ջննում եմ դէմքն իմ՝ յաւէտ անցելի:

-Գ-

Եւ ճաքեր տալով՝ պայթում է յանկարծ  
 Աշխարհը իմ մէջ՝ իր խոր խորքերից.  
 Ասես մի ձեռքի վէրքից արնաբաց՝  
 Ծարաւը ժայթքում, ողողում է ինձ.  
 Ծարաւը Մտքի, Կարի, Ծանկութեան.  
 Տառապանքների թանձրուկը թունոտ.  
 Լորձունքը Խօսքի՝ զայթում, անկենդան.  
 Փրփուրն Ամօթի. Կրքի հոտը սոթ...

Եւ սարսած՝ ասես անեղ մի Բօթից,  
 Փախչում եմ հեռու Հեղձուկից անօդ.  
 Սակայն Փրկութեան դարպասների մօտ  
 Կանգնում եմ կարկամ ինչ-որ Ամօթից.  
 Կարօտ մի՝ աման մտեղէն Մեղքին,  
 Թախծով մի հին կանչում է ինձ յետ.  
 Ու ես թեւ սուած՝ սլանում եմ խենթ  
 Եւ փնտրում, փնտրում, փնտրում եմ Մէկին,  
 Որը չգիտեմ՝ Աստուած է, թէ՞ Կին.  
 Թէ՞ իմ իսկ կեանքն է, որ ինձնից քուած՝  
 Թափառում է կոյր անյայտ ճամբէքին՝  
 Տենչալով ինձ պէս մի սեծ վերադարձ...

Եւ դարձած մի խօլ հեղեղ գահավէժ՝  
 Աշխարհը անդարձ կլանում է ինձ.  
 Եւ նրա պղտոր յորձանքների մէջ  
 Լսում եմ ճիշն իմ Անգոյութիւնից...

-հ-

Անհուն մի հայեացք՝ անակն, անքթիթ,  
 Որ ցոլում է լուռ Յաւերծի վրայ.  
 Պայծառ Լոյսի մէջ՝ մի խաղաղ Հովիտ՝  
 Որպէս հայելային շողանքը նրա.  
 Եւ Լուսնեան մէջ յաւիտենական՝  
 Անդող ու անեղ մի Ներկայութիւն.  
 Չկայ ո՛չ Ծարժում՝ որպէս լոյծ սահման.  
 Եւ ոչ էլ Մահուան պատրանքն անանուն...

Եւ որպէս նրա մասնիկը անտես՝  
 Ապրում է Հոգին այդ լոյս ոլորտում.  
 Յաւիտենութեան ակնթարթի պէս  
 Չի պայծառանում եւ չի աղօտում.  
 Անդորր է՝ Լոյսի լուսնեան նման.  
 Ինքն է Մարմինն իր, ինքը՝ իր Հոգին.  
 Եւ ինքը իր իսկ Կեանքն է անսահման՝  
 Պարզ, անեղծական, անչայտ, անքնին...

-Ա՛խ, այդ ես եմ իմ՝ ծննդից առաջ.  
 Ա՛խ, այդ ես ինքս եմ՝ իմ մահից յետոյ.  
 Ա՛խ, այդ իմ միակ Կեանքն է աննուան,  
 Որը չի անցնում ո՛չ մի այլ կէտով...

-ե-

Ինչպէս արեւոտ անդնդի վրայ  
 Սահում է ամպի ստուերն աննկատ,  
 Այդպէս Անչայտի խաւարին անա  
 Իջնում է յանկարծ մի լոյս Ակնթարթ.  
 Եւ հանդիպում է Հոգին ինքն իրեն  
 Աշխարհից առաջ, Լոյսի սահմանում.  
 Որ ամէն մի Կեանք սպրած է արդէն.  
 Եւ ինքը՝ Կեանքը, Երազ է մնում:

Եւ այդ Երազում ոչինչ չի լինում.  
 Ո՛չ Մահ, ո՛չ Ծնունդ, ո՛չ Երբ, ո՛չ Վախճան.  
 Միայն աններկայ մի Ցիշողութիւն  
 Անշող՝ լուսն է ստուերի նման.  
 Եղել է գուցէ մի ինչ-որ Աշխարհ,  
 Որ ինչպէս եկել, անցել է այնպէս...  
 Եւ իբրեւ Գոյի վերջին գաղափար՝  
 Թողել է լոկ մի Լուսիսին անտես...

—Լուսեան Երզն այդ լսելու համար  
 Տիեզերքն իբր ունկ ստեղծեց Աստուած.  
 Սակայն Արարման աղմուկը խաւար  
 Կլանեց բոլոր հնչիւններն արծարծ...  
 Եւ խորհեց Աստուած խոհեր անհամար.  
 Եւ երկնեց Մարդուն՝ հոգին անդորրած,  
 Որ հնչիւններն այդ ժողովի կորած.  
 Պարզի Երզն իրեն, հետանայ խոնարհ...

-2-

Ես աշխարհ եկայ այդ Լուսեան մէջ:

Եւ տեսնում էի՝ առանց աչքերի.  
 Եւ լսում էի՝ առանց ունկերի.  
 Թօշափում էի՝ առանց ձեռքերի...

Ապրում էի ես Լուսիսինն այդ մեծ:

Եւ այս Աշխարհը Տեսիլքն էր կարծես  
 Մի այլ Աշխարհի, ուր Լոյսն էր անշարժ.  
 Լիճելութիւնը՝ անարար մի Ծէս,  
 Ներկայանում էր Տեսութեան մէջ պարզ.  
 Մի Հեռաստան էր պարզում ընդատաջ՝  
 Հորիզոնների ծիրերում լոխն.  
 Լեռներ ու Ծովեր՝ Արեւով վառուած.  
 Նկարուած ասես մի Ձեռքով վերին:

Եւ Հովի նման փչում էր մեղմի  
 Մի Շունչ՝ թափանցիկ ու արարչական.  
 Որ ծառայելով թրթռներ անթի՝  
 Սարսուռն էր բերում մի այլ Գոյութեան.  
 Ուր մի անստուեր Հովանու ներքոյ  
 Ապրում էր կեանքը իր կեանքը անբառ-  
 Ցաներծութիւնը Պահն էր յարագոյ,  
 Որ ծաղկի նման բացում էր դանդաղ:

Եւ անէջքի պէս մի լուսատենչիկ  
 Լոում էր մի Միջ՝ անծայն-անհնչիւն.  
 Ծնում էր Հոգուց Հոգին երջանիկ,  
 Որի մէջ երգն էր բոյրի պէս ննջում.  
 Անտես մի Ծովի խորքից անսահման  
 Դուրս լողաց յանկարծ Մարմինն աննկատ-  
 Եւ Հոգին Ցաւով զգեցաւ նրան.  
 Ու ես արթնացած՝ զգացի ինձ Մարդ...

—Ա՛խ իմ Մանկութիւն յախտենական...  
 Քո Լոյսի մէջ է իմ Երգը զնգում.  
 Եւ Յուշիդ անդարձ լուրջինն անգամ  
 Արձագանգում է յաւերժ Երկնքում.  
 Ես եկած ճամբով մի օր կը գնամ.  
 Կը դառնայ Երգն իմ ոտնակոխ փոշի-  
 Հոգիս Անյայտում ո՛ր էլ թափառի՝  
 Ես միշտ Ռեաւոր գգուանքդ կը զգամ...

-է-

Եւ ընկաւ Հոգուն յանկարծ մի Ստուեր-  
 Եւ խտանալով՝ դարձաւ կորդ Երկիր.  
 Որ մութ էր ու լուռ, խորդորդ, վարուվեր.  
 Եւ պտտում էր Խաւարում անծիր.  
 Եւ մոխրափոշին անցով Երագի՝  
 Իբրեւ թափանցիկ ու անգործ մի քող,  
 Իջնելով՝ ծածկեց երեսը Երկրի.  
 Եւ թանձրանալով՝ դարձաւ բերրի Հող...

Եւ մանուէց Հոգուն մշուշի նման  
 Անհուն մի Անկման թախիծն անփարատ.  
 Հեղեղէց նրան շանթերով Յասման  
 Տեղատարափը Մեղքի մի անլայտ.  
 Եւ արմատ նետեց Ծառ մի բազմաբուն՝  
 Երկրից մինչեւ Երկինքը ամբարձ.  
 Եւ պատեց Հոգին սարսափը յանկարծ.  
 Գտաւ նա իրեն անդարձ Աշխարհում...

—Աքսորեալ է նա մի անդենական,  
 Որ տարագրուած Ափերից հեռու,  
 Ծառի տակ նստած՝ թախծում է անձայն.  
 Ինքն այս ո՞ր ընկաւ՝ ե՞րբ, ինչպէ՞ս, ինչո՞ւ...  
 Բանտուած Մարմնի մէջ՝ կոյր ու անթափանց,  
 Գլխին՝ փուշ-պսակ Բանականութեան,  
 Քաւում է Մե՞ղքն իր՝ իր Անկմամբ գործած.  
 Թէ՞ Մեղքն այլ Մէկի՝ անլայտ յախտեան...

Եւ մնում է նա Տենչանքով անբառ՝  
 Ե՞րբ պիտ Յատերծի շրջանը լրի,  
 Որ լքած խաւար Տեսիլքը Երկրի՝  
 Յետ դառնայ այնտեղ, ուր ինքը շկար...

-Ը-

Եւ թռչող մի Խայթ Հոգին հրկիզեց.  
 Հեղեց նրա մէջ թոյնն իր շողշողուն.  
 Բոցէ Սրի պէս մէջտեղից կիսեց՝  
 Փայլատակելով գրեց մի Անուն.  
 Որ, իբրեւ շողքը անքնին Մէկի,  
 Աղեղեց Կամար Աշխարհի վրայ.  
 Եւ դարձաւ Հոգին բեկուած մի Հայելի,  
 Որ ցոլաց անշարժ Ստուերը նրա:

Եւ Հոգին իրեն կորցրեց իման.  
 Եւ տեսա իր դէմ Անդունդ մի մթին,  
 Որ բազմատարերք մարմինը Նիւթի  
 Գալարում էր խօլ Վիշապի նման.  
 Եւ բոլորելով Շրջաններ անթիւ՝  
 Մղում էր դէպի բարձունքը Երկնի,  
 Որ ճառագում էր մի անտես Անի՝  
 Աղամանդի պէս ճազարակնանի...

—Իմ Պատանութեան Երազանք անրիծ...  
 Զարթնեցիր սառը յատակում կեանքի.  
 Զգացիր ծառով մի անկարագիծ՝  
 Մարմին եւ ամբողջ եւ կիսատ Հոգի.  
 Տենդում էր շուրջը կոխ մի դժնի՝  
 Սաղրած մի Զեռքով՝ անլայտ ու խաւար.  
 Դատնում էր իրեն ամէն մի Ուղի.  
 Լաց եղար անլոյս եւ մտար Պայքար...

-թ-

Եւ կախուեց Հոգուն Գիշեր մի անծայր՝  
 Յօղում արծաթով սառնաղօտ Լուսնի.  
 Ետում էր Մտքի ճաթիճն անկոպար՝  
 Ժայթելով մրրկուն Ծուխ ու Գոլորշի.  
 Երբ իսսան Երկինք շիթերը պղտոր,  
 Իջա մի Անդորր՝ կողպ ու անարծարծ.  
 Շրջեց Լուսինը իր դէմքը բոլոր.  
 Եւ տեսա Հոգին Գաղտնիքը յանկարծ:

Բացուեց անտարած Անձա մի անհուն,  
 Որ փայլում էր լուռ մի սեւ Արեգակ.  
 Խաւարն էր անբա իր շողը միակ,  
 Որ դատնում էր Լոյս մի այլ Սահմանում.  
 Եւ անկերպարան Խորհուրդներ երկու՝  
 Գիշաթոշուններ ասես մոլազար,  
 Լկկում էին Տէք մարմինը Հոգու,  
 Մինչեւ որ Հոգին Հոգուն միանար...



—Եւ եկաւ Վերջը Ակօրից առաջ՝  
 Խորշակի տեսքով մի արհաւիրակից.  
 Փշում էին մութ ու բազմաշառայ  
 Չորս զոյգ Քամիներ՝ չորս զոյգ Ծագերից.  
 Կոյր Ազատութեամբ եղած շնչաճեղձ՝  
 Դարձաւ Անապատ Հովիտը ծաղկուն.  
 Թոշում էր Հոգին Դատարկութեան մէջ.  
 Եւ պիղծ էր թում ամէն Արբութիւն...

-Ժ-

Եւ հայեց Հոգին պատկերն իր զարթուր.  
 Տիղմով լեփկեցուն Անօթ մի անկերպ.  
 Կար ու Կրքերի փրփուր ու մրուր.  
 Անկուսի Սուսերի ծանգաճար մի շեղք...  
 Եւ տիրեց անշող մի Անշարժութիւն.  
 Դարձաւ Համայնը Ոչինչ՝ ոչնչից.  
 Հսկում էր Մեղքը Կեանց անդնդում՝  
 Իբրեւ Չգոյի տենչանքը անբիծ:

Այն, ինչ Դրսում էր, բացում էր Ներսում.  
 Հեղում էր Դրսում Ներսը անմեկին.  
 Ասես դաւադիր, մի յետին Ծէսում  
 Ջոճում էր Հոգին քինահար Մէկին.  
 Եւ ըմպէր պիտի Արիւնը նա իր,  
 Որ լրէր յագուրդ անպարտ մի Օրէնք.  
 Սգում էր Հոգին տրտմութեամբ անծիր...  
 Երբ փարուեց նրան Մարմինը աննենգ:

—Եւ եկաւ Մահը Կեանքին ընդառաջ՝  
 Սիրոյ բոցկլտուն ծաղիկը ձեռքին.  
 Երկնքից Երկիր կայծակեց մի Խաչ.  
 Ցետ եկաւ Հոգին ճիշով ցնծագին.  
 Եւ Ստուերների Ստուերը անդարձ  
 Հեռացաւ դէպի Խաւարն արտաքին.  
 Արծարծուեց կրկին Երազը հանգած.  
 Եւ անցաւ Հոգին Սահմանը վերին...

-ԺԱ-

Եւ Հաւատի մէջ մկրտուած նորոգ՝  
Թափառեց Հոգին Աշխարհի վրայ.  
Ծաշակեց անթի ծաւեր անամոք.  
Ընդունեց լին Մեղքերը նրա.  
Եւ Կայծակներ էր պարպում նա իր մէջ՝  
Մնալով կրկին անբիծ, անխաթար.  
Մեռնում անկորուստ, յառնում էր անեղծ.  
Լցում էր անվերջ, հեղում անդադար...

Դրոշմեց նա իր Հետքերն աստղազարդ.  
Դէմքին Անգայտի՝ Խաւարին ի տես.  
Ստեղծեց մի Նոր Երկինք անաղարտ.  
Անշարժ՝ Յայտնութեան ակնթարթի պէս.  
Եւ երկնեց նա Նոր Երկիր մի աննիւթ՝  
Որպէս Յանրժի հայեացքն անստուեր.  
Արարեց Սիրով Նոր Լոյս մի անմուտ՝  
Անբեկ ու անթարթ, անշեղ ու վաւեր...

—Եւ հաստեց նա Նոր Մարդ մի անմարմին՝  
Ջերժ կապանքներից Խօսքի պատրական.  
Եւ վանեց հեռու՝ Ոչնչից անդին  
Մթին Քառսը Բանականութեան.  
Սրբեց մէջտեղից Աշխարհը ի սպառ.  
Եւ զահավիժեց Օրէնքը Մահուան.  
Հաստատեց Կեանքը որպէս անարար.  
Եւ օծեց նրան Երգով անսահման...

-ԺԲ-

Եւ տեսաւ Հոգին Հն անպարագիծ՝  
Իր մէջ, իրենից, իրենով հաստուած.  
Արթնացած ասես մի կոյր Երագից՝  
Ծանաշեց նրան անստգիտ Աստուած.

Ծանեց նրա մէջ, նրանով իրեն.  
 Մասնիկն էր ինքը նրա մի Ծողբի.  
 Ծունր իջաւ խոնարհ Երգով նրա դէմ.  
 Եւ փոխուեց Կեանքը անանց Աղօթքի:

Եւ տրուեց Հոգուն Քամայն Թողութիւն՝  
 Մեղքերի Քամար անցած Աշխարհի.  
 Եւ նա սրբացած՝ լղուեց իր Աստծուն՝  
 Գալով Բարձունքում ինքն իր Քեւ ի մի.  
 Լրեց շրջանը Տախտենութեան.  
 Անցան փոշու պէս Երկինք ու Երկիր...  
 Մնաց լոկ Աստծոյ նշանը Անկման՝  
 Իբրեւ մարդկային մութ ժակատագիր:

—Աստուած իմ, շուտով եւ Քեզ մօտ կը գամ՝  
 Պարգած թեւերս՝ որպէս Աղանի.  
 Կը պատմեմ եւ Քեզ զարմանքով մանկան,  
 Թէ ի՞նչ տեսայ ես՝ Մա՛րդս երբեմնի.  
 Ինչե՞ր ապրեցի Երկրում Քեռատր՝  
 Տարակերպ Մարմին ու Հոգի հագած.  
 Կը լսես Դու ինձ ծայրտով անդորր.  
 Նայելով իրար՝ կը լռենք լանկարծ:

ՍԵՒԱԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

1988 թ., Երեւան  
 1997 թ., Մայնի Նրանկֆորտ



Վ. ՇՈՒՇԱՆՅԱՆ

## ՑԻՐՈՒՑԱՆ ԷՋԵՐ

Այս էջերը իրողութեան մէջ մաս կը կազմեն *Քրոնիկոն քնարական*ին: Այլիզը մէկ կողմ ձգուած, կարգ մը մտերիմ պատճառներով, յետ վերամշակութեան՝ այժմ պէտք է որ մտնեն վերոյիշեալ գրքին մէջ: Ջնջելով *Յիրուցան էջեր* խորագիրը ամբողջութեամբ կարելի է գտնում գետեղել *Քրոնիկոն քնարական*ի էջ հարիւր քսանը չորսէն անմիջապէս յետոյ:

Այս առթիւ աւելորդ չեմ համարեր շանի մը խօսք ըսել՝ գրքին ամբողջութեան սրբութեամբ կարգ մը ո՛չ գրական էջերուն շուրջ: Առաջին ակնարկով գուցէ աւելորդ բուրն ատում՝ մտնալ գրքի մը մէջ: Ու գուցէ կարծուի, թէ միայն ասոյն-անոյն գրուած կարգ մը էջեր վրկել է եղած նպատակ: Այլ ինձ կը թուի, թէ նոյնիսկ Էն արձակուանակ մասերը նոյն վնարական աղբիւրէն են ու կը պարզեն անհանգիստ հոգւոյս մէկ երեսը: Սիրային թրթռացումով իր գոյութեան իրաւունքին տիրացող էջ մը աւելի՛ յատկանշական է, օրինակ, Փանայիք Սրբաբիի մահուան նուիրուած հատուածը: Գրքին խորագիրը արդէն կը պարզէ լիովին միտումս, - *Քրոնիկոն քնարական*, այսինքն՝ ժամանակագրութիւնը կեանքի մը, որ կը բաւալի վնարական յուզումներու դրօշին տակ:

Մէկ Սեպտեմբեր հասար ինն հարիւր երեսունը վեց  
Սթրասպուրկ

**Զ** մեռը յաճախ դաժան էր ու սաստիկ, դուրսը պարտէզին մէջ: Գիշերը կը հիւսէր իր ծաղկեայ դրասանգները ապակիներուն վրայ: Հողմը կը շահէր, կը շառաչէր, կը ծեծէր ծառերուն մերկ իրանները: Լուսընկան ցրտօրէն կարմիր էր. անքթիթ ու հմայական: Ու պարտէզը, հակառակ տարերքի որոտին, շքեղ կը թուէր՝ հեռանը կարի մը պէս:

Այս պատճառաւ էր գուցէ, որ մեր տան ներքին լոյսը քաղցր էր ու տաք սեղանի սփռոցին վրայ ու մօրս դէմքը անուղղելիորէն, անդառնալիորէն գորովայի: Կարդալով նամակդ, կը լսեմ այդ ծեր մարդուն չոր ու կտրուկ ձայնը, կը յիշեմ ծեր ազնուականի իր սուր ու նուրբ դէմքը, անոր ձեռքերը խիստ ճերմակ, փափուկ ու անողոք միաժամանակ, սարսափելիորէն կանացի, վասնզի աններող: Կը լսեմ իր պաղ ու սպիտակ ձայնը, այդ ձայնին Հպարտ օտարութիւնը:

Այդ ծեր մարդը կը խօսի գիշերուան մէջ ու կ'ըսէ.  
-Ընդունիր միշտ գիւրին է: Միջակ անձերն են, որ միշտ ամէն ինչ կ'ընդունին: Հարկ է նաեւ Հրաժարիլ գիտնալ: Ձրկեայնները միշտ կ'ընդունին բոլոր թշուառութիւնները, տկարները՝ զօրաւորին Հեղինակութիւնը, կիները անձնատուութեամբ կ'ընդունին սէրը, ու քաղաքացիները՝ օրէնքը: Այլ այս լակոտը երբեք պիտի չհրաժարի իր աղանդներէն...

Այդ ծեր մարդը վրաս կը ձգէ Հայրաբար Հեղինական ակնարկ մը: Աչքերուն պաղ լոյսը անտանելի է:

-Դիտէ՛ գինքը,-կը յարէ,-լաւ սնած անասունի մը պէս է ու ծանրամարմին, անյագ, որկրամոյ: Այս տեսակ անձերէ բաղկացած մարդկութեան մըն է, որ Անաթոլ Ֆրանս որպէս առաջնորդ կ'ընդէր տալ Հեղինակութիւնն ու գուրբը: Հեղինակութիւնը՝ զանազանելու Համար իրական մարդիկը միւսներէն եւ գուրբը՝ այս վերջինները մխիթարելու Համար...

Յաճախ անմարդկային կը Համարէի այս ծեր մարդը, այս տարիներու ընթացքին, այլ այժմ կ'ըմբռնեմ իր միջին ծաղրը:



Այս թղթերուն առջեւ եմ, գորս Հարկ է մրտնել, վաղահաս գիշերէն առաջ, առանձին,-այլ ներքին ու ընտանի դեւը կեցած է ոտքի, քովս: Կը զգամ իր պաղ շունչը ծոծրակիս վրայ:

-Վերստին պիտի փորձես խարդախել,-կ'ըսէ անկենդան ձայնով մը,-պիտի փորձես յուսաւորեայ, գորովալիորէն դեղեցիկ դիմակ մը անցընել: Յուզիչ կամ սիրուն պատմութիւններ պիտի պատմես: Խուլ սաստկութեամբ մը գաղափարներ պիտի գարգացնես: Աւելի կամ նուազ ճարտարութեամբ պիտի խաղաս յաւիտենական բանին Հետ, պատրաստելու Համար այդ աղջիկը տենդաւար Հեշտութեան, գողնալու Համար անոր միակ ինչքն ու Հարստութիւնը,-կնոջ մարմին մը դողդոջուն ու նուիրեայ, որուն երբեք արժանի չեղար:

Չուզահեռաբար այս էջերուն՝ անասնական ու վայրագ ցանկութիւնը ոտքի պիտի ելլէ, պիտի ծեծէ երանքներդ, ուժ պիտի առնէ: Ու երբ դայն ունենաս, անկողնի մը վրայ, մերկ՝ ինչպէս ծառերը դարնան առաջին ամսուն ու երբ Հովը կը պազնէ զանոնք, դողաւար, պիտի մրմնջես սիրոյ դաշն բա-

ուեր, մեզմ ու հեշտաւէտ, բուռն ու քաղցր, միաժամանակ բրտորէն արու:

—Կը յիշե՞ս միջերկրականեան այն աղջիկը Լատինական թաղի բազմոցիդ վրայ, Մարիա Գայլուկ, ճերմակ, աղուոր գայլս, կ'ըսէիր, մտիկ ըրէ գիս: Դի՛ր սիրով սառած ու զով շրթունքներդ աչքերուս վրայ, ազնիւ ու գիտուն ձեռքերդ մէջքիս վրայ դիր: Մտիկ ըրէ գիս, գորովալի գառնուկս: Ձիստերդ յեցուն են, ու խարտեաչ, ո՛վ Մարիա Գայլուկ, գիստերդ փայլուն են՝ ինչպէս գամրիկներու յետոյքը Արեւելքի բոցավառ լոյսերուն տակ: Մի՞ծերդ խոշոր են ու անարատ, ինչպէս հրաշալի պտուղները Սպահանի պարտէզներուն:

Բանաստեղծութիւնը ի սպաս կը դնէիր, կ'ըսէ դեւը յետին պոռնկագրութեան, կը հագագէիր, կ'արտասանէիր է՛ն խենէչ ու քնարական երգերը մատղաչ խանդավառութեամբ ու ծեր հեշտութիւնով, —երաստանդ ճերմակ է, հեշտագրդ ու կ'ըր եւ երբ կը քալես, մերկ, սարսելով թիկունքներդ, ցնցելով մարմնիդ գիրդ պարարտութիւնը, կը մտածեմ Շամիրամի առկախ պարտէզներուն, Արեւելեան քաղաքներու հեթանոս շատրուաններուն, ջրի ցայտերուն, որ նիզակներու պէս կը պատեն գիշերը, —Մարիա՛, կանաչ աչքերով Սուլամիթս, բաց արունքներդ ու երգէ ինձ համար միջերկրականեան հին մեղեդի մը:

—Յետոյ ոտքի կ'ելլէիր, — կը յարէ ընտանի դեւը, —անսրբագրելիօրէն արհամարհոտ, ոխակալ, պահելով յագեցած մարդու անողոք ակնարկդ: Կը չափէիր սենեակը, գլանիկ մը շրթունքիդ, խուլ ձայնով մը կ'արտասանէիր բանաստեղծութեան բեկորներ: —Սրբապղծութիւն, —կ'աւելցնէ մեղմօրէն, գորովի բառ մը չըսելու համար կ'ապաստանէիր քնարերգութեան ծոցը...

Կը շարունակեմ գրել քեզի, այլ տրամախօսութիւնը կը տեւէ, ընտանի դեւիս ու իմ միջեւ, ուրիշ գծի մը վրայ:

—Առակդ կը վերաբերի անցելոյն, դեւ, —կ'ըսեմ վճատ, —անկէ ի վեր ծերութիւնը կը սողայ վրաս, փոր կը շինեմ, ինչպէս կ'ըսեն: Գորովը քաղցր է այժմ ձեռքերուս վրայ: Ինչո՞ւ չես յիշեր Լլոնան: Յաճախ կու գար սենեակս, երբեմն նոյնիսկ կը գիշերէր, այլ երբեք չհանդիպեցայ իրեն...

—Մտախօս ու կեղծաւոր, — կը հծծէ մեղմիւ, — ինչպէս միւսները: Երբ Մարիան մեկնեցաւ...

—Այսուհանդերձ, չես կրնար պնդել, թէ իրապէս չէի սիրեր միջերկրականեան այդ ճերմակ աղջիկը: Կը սիրէի նոյնիսկ իր երկիրը, այնքան խորունկ էր գորովս: Էջեր մը տածեմ իրեն համար...

—Աւելի՛ ճարտարութեամբ պատրելու համար գայն, կ'օգտագործէր անկէ եկած յուզումը ու ճիշդ այն պահուն, երբ սիրով բարախուն, սիրով խոնարհ աչքերով կը նայէր հաստ դէմքիդ՝ գայն վերստին կը կանչէիր հասարակ, գռեհիկ հեշ-

տուժեան: Հոլա՛, կ'ըսէիր, խարտեաչ աղջիկս, պառկէ՛ հոս ու հանէ՛ շապիկդ: Երեկոյեան, սեւ սուրճի մը առջեւ, անվերջ առատութեամբ մը, տրամաբանական ու ճշգրիտ սաստկութեամբ մը կը խօսէիր բանուորական իշխանապետութեան մասին կամ ծուլութեամբ գրքի մը շուրջ, որ նոր լոյս տեսած էր: Այլ խննչը ցանկութիւնն էր, որ կը մտրակէր արիւնդ...

Այսպէս էիր տարիներ առաջ ու այսպէս ես դեռ:

Ու այսպէս պիտի մնաս, կ'ըսէ ընտանի դեւը: Իրաւունք ունէր այդ ծեր մարդը: Հրաժարիլը երկրային որեւէ հաճոյքէ՝ կտոր մը մահ է միշտ: Արդ, պատրելու համար մեր յստակատեսութիւնը, գաղափարական շղարշ մը ձգելու համար մեր անագորոյն ատրճակներուն վրայ, դարերէ ի վեր կը ջանանք յաւիտենական բանը ծառայեցնել մեր ստոր բնագոյներուն: Կեանքի ամէն նոր շրջանի համար նոր փրկիստփայտութիւն:

Ծղճարտութիւնը անհանգիստ կ'ընէ՞ քեզ, իր սուր ցցունքներով, կ'ըրցուր գայն, ինչպէս մոլեկան ծովը կը տաշէ խիճերը, կը փայլեցնէ գանոնք: Կ'ըսես մեղմօրէն, թէ կեանքը երաժշտական նիւթ մըն է, խորին եղանակ մը, ծածուկ կշռոյթ մը՝ որ կ'իլլէ երկրին ընդերքներէն: Հրաժարիլ՝ քիչ մը մեռնիլ է միշտ, հրաժարիլ՝ շնչահեղձ ընել է հողին խորհրդաւոր խոյանքը, կարեւորը ապրիլը չէ, կ'ըսէիր տարիներ առաջ, այլ սպառիլը բուն ներուժութեամբ, սաստկութեամբ:

Ամէն օր կը մեռնինք արդէն քիչ մը, դե՛ւ, ամէն օր քիչ մը աւելի գարնանային ջրերը կը հեռանան մեր ափունքներէն: Սարսափելին, ահարկուն՝ յեղակարծ մահը չէ, այլ՝ միւսը, ամէն օրուանը, յամր, յամառ, որ ընտանութեամբ կը յամենայ մեր կեանքին է՛ն ծածուկ անկիւններուն մէջ իսկ, կ'ընդարձակէ իր իշխանութիւնն ու խարդախ գորութիւնը ամէն օր քիչ մը աւելի, անդադրում, անյեղի, ճշգրտօրէն հրէշային: Հանդարտօրէն կը ձգէ մեր խօլ, մեր կարմիր երիտասարդութեան վրայ իր թանձր մառախուղը:

Ձեռքերդ կորսնցուցած են արդէն իրենց առաջին ու մաքուր դողը, աչքերդ հրաշագուրկ են, առանց ոսկեայ մշուշի: Այժմ վիրաւորիչ արագութեամբ մըն է, գրեթէ շնութեամբ, որ ակնարկդ կը հանուեցնէ երիտասարդ աղջիկները փողոցին մէջ ու հաշուելով հաւանական քանակն ու որակը հասարակ հաճոյքին, որ կ'ընթացէ մարմնէ մը կարելի է ստանալ: Այս մէկուն գիտե՞րք երկար են, լի ու հաւանաբար խարտեաչ, միւսին բերանը հիւթեղ է ու բոսոր, աւելով ծանր պտուղի մը պէս, երրորդին կուրծքերը կ'ուռին չփակին տակ: Հրաժարիլ օրուան վերջին ճառագայթէն, որ մարմանդին վրայ ժանեակ կը հիւսէ, յապաղած պտուղներէն, վերջին գորով մը, որ վերջին ծաղիկի մը պէս կը ծլի, կը կարծես թէ ա՛յս է մարդուն արժանաւորութիւնը: Օ՛, ձմրան խոժոռ հողմը պիտի ելլէ վերստին ու պիտի ցնցէ մարմինդ ծեր ու գօս ծառի

մը պէս: Կեանքը ժլատ է ու անոր մագիւնները ժլատ են: Խլէ անկէ ի՛նչ որ կրնաս: Այս եւս փիլիսոփայութիւն մըն է: Տիկիննե՛ր, պարոննե՛ր, այս ալ փիլիսոփայութիւն մըն է:

Կեցած էինք բաց պատուհանի մը առջեւ: Երեկոյեան արեւը կ'ոռոգէր մեզ ու եղրեւանիի ծանր ողկոյզներ կ'արձակէին մեզմ բուրում մը: Երջանկութիւնը դիւրին կը թուէր, երբ այս երիտասարդ դասախօսը լռութիւնը խզեց, կապոյտ հայեացքը նետեց գետին ու ըսաւ.

—Ատենէ մը ի վեր սկսած եմ նախընտրել հասարակ, գոեհօրէն հասարակ, դիւրին, մատչելի աղջիկները բոլոր միւսներէն: Այլ չեմ գիտեր նախընտրութեանս պատճառը...

—Օ՛, —պատասխանեցի ժպտուն, —սուտ կը խօսիք, —զանոնք կը սիրէք, որովհետեւ իրենց սրունքները կը բանան առանց երկար յառաջարանի, առանց աւելորդ արարողութեան...

—Գուցէ իրաւունք ունիք, —ըսաւ մեղմօրէն: Այսքան միայն:

Ի՛նչ որ պատմեցի քեզի, կէսը սուտ կէսը իրաւ, իրօք զուրկ են կարեւորութենէ: Իրողութեան մէջ լոկ բարոյական արկածախնդիր մըն եմ: Ու ի՛նչ որ շատ կը սիրեմ՝ բանաստեղծութիւնն է մարդոց մօտ, ներքին հրկիզումը, որ կը կոփէ մեզ, արու բարեկամութիւնը, գրքերս ու գլակնիկներ: Ու քե՛զ այժմ՝ քաղցր, մեղամաղձիկ ակնարկիդ պատճառաւ: Այլեւ չէնչոզ երիտասարդութեանդ:

Յոյժ տրտում էի այս երեկոյ: Քիչ մը մոռնալու համար քեզ ու վիշտս, մութին անկումէն յետոյ, այցելեցի մեր խոհուն փաթրոնին, Ֆլուպերին: Բարեկամաբար դիտեց զիս ու ըսաւ.

—Շուտով խնձորենիները պիտի ծաղկին, պիտի հարս ելլէ երկիրը: Յայնժամ պիտի երթաս ծովեզերք ու բացերէն եկած հովը պիտի լուայ երեսդ իր խոնջէնքէն, խմէ՛ զայն, խոշոր ու մպերով, իմ կենացս ու պառկէ աղախնի մը հետ:

—Աղէ՛կ, —ըսի, —սիրելի մեծ մարդ...

Ու անցայ ճամբաս: Ու գիշերը զիս կրեց մեղմօրէն ու տաբաւ տուն, հովը անուշ էր:

Գուցէ գարնանային, մեղմաճոս գիշերն է յանցաւոր: Ինձ կը թուի, թէ բարոյապէս ու մտաւորապէս աւելի լաւ եմ, քան առհասարակ կը թուիմ մարդոց: Խորին գորով մը



կայ վրաս, ներքին անշիջելի լոյս մը ու երբեմն իրական բարութիւն: Յաճախ ծայրայեղօրէն գորովայի ըլլալուս Համար է, որ հպարտ կը թուիմ:

Ու արտաքին երեւոյթս դժբախտաբար հաճելի չէ՝ մեղմելու Համար այս անախորժ տպաւորութիւնը: Մանրամարմին եմ, հաստ, գրեթէ շատ կարճ, խիստ լայնաթիկունք: Միայն աչքերս են, որ քիչ մը կը լուսաւորեն, մեղմ տխրութեամբ մը, այս խոշոր ու ձախաւեր մարդու մարմինը: Գուցէ արտայայտիչ են այդ աչքերը, հաղորդական ու երբեմն ժպտուն: Մօրս աչքերն են, արուի հաստ ու խոպան դէմքի մը վրայ:



Ո՛ր, այս քաղաքը, յետաշրջական, կղերապաշտ, կեղծաւոր: Կարելի չէ քայլ մը ընել դէպի կիները, առանց նշմարուելու: Ու ես, նո՛յն մարդը, որ կը սիրէ քաղցր ու մշակութային բարձր աստիճանի վրայ գտնուող էակները, որ չի կրնար ստոյգ բարեկամութիւն մը մշակել երիտասարդ ու գեղամարմին կնոջ մը հետ՝ առանց զայն ցանկալու, առանց զայն ունենալու:

Ես որ այժմ լուկ քաղաքին մուտք, այլ վեհապանծ եկեղեցիներուն կիսամութր ունիմ, որպէս ապաւէն, անձնատուր ըլլալու համար երազներուս:



Փոքր, այլ հանապազօրեայ մանրամասնութիւնները չեն միայն, որ կրնան սեւեռի կեանքի մը ներքին մթնոլորտը, կլիման: Այս միջադէպերը կրնան լուսաւորել մեր դատողութիւնը, ճեղք մը բանալ, ուրկէ մեր ակնարկը կարենայ ներս սպրդիլ: Այս գիտողութիւնը ճիշդ է նաեւ մարդկային արարքներուն համար: Մինչեւ որ մարդ չյաջողի վերստեղծել էակի մը ներքին կլիման, չի կրնար ըմբռնել անոր շարժումները:

Արդ, հարկ չէ կարծել, թէ ինձ նման մէկը կրնայ կուսակից ըլլալ սեռային սանձարձակ բարքերու, հեշտութեան բացարձակ ազատութեան: Անշուշտ ցայժմ պոռնկութիւնը անըմբռնելի, զազրելի ու վատթար կը թուի ինձ, քաղաքակրթութեան մը մէջ, որ իբր թէ հիմնուած է մարդկային անձի անձեռնմխելիութեան սկզբունքին վրայ: Փոխանակ յարգելու կնոջ մէջ մայրը, փոխանակ ապահովելու անոր բարոյական մաքրութիւնը, բնկերութիւնը կը կոխտէ, կը ճնշէ, կը ծախէ զայն: Այլ կարելի չէ ընդունիլ նաեւ երկու սեռերու մէջ գոյութիւն ունեցող յարաբերութեանց վիճակը: Է՛ն ձեր բազատեալ կիներ իսկ կը կարծէ մեծ, եզակի շնորհ մը ըրած ըլլալ մարդու մը անոր հետ մէկ անկողնի մէջ պառկելով: Տեսականօրէն հաճոյքը փոխադարձ ըլլալով՝ չեմ ըմբռներ,

Թէ ինչո՞ւ արուն միշտ խնդրարկուի դերին մէջ պիտի գտնուի: Երբ մարդուն ցանկութիւնը կ'ելլէ, եռանդուն ու արու, կը կարծեմ, թէ անոր մարմինը առնուազն նոյնքան գեղեցիկ է, որքան կնոջ մը փափուկ իրանը: Անշուշտ կ'ըմբռնեմ երիտասարդ ու ազատ աղջկան մը յոգնութիւնն ու երբեմն զգուանքը, արական վայրագ ու գոեհիկ ախորժակներու միջեւ: Այլ միշտ կարելի է ետ հրել, մեղմօրէն, անցանկալի արուն. ինչ որ հարկ չէ մոռնալ սակայն՝ ցանկութեամ Երբեմն Գոյակ գեղեցկութիւնն է: Հեշտութիւնը արդար է, վասնզի բնական: Հարկ չէ մոռնալ, թէ ասդին-անդին, մարգոց բնականութեան վայրերուն մէջ զրկուած մարդիկ կան, որ երբեք պիտի չկրնան ստանալ սիրոյ իրենց բաժինը: Հարկ է ներել երկչոտ ու աշխատանքէ կարծրացած ձեռքերուն, որ կը հպին կնոջ ազուր մարմնի մը, որ իրենց ուրախութիւնը կ'որոնեն մեղսակից մութին մէջ:

Օ՛, այս բարբերուն ընդհանրացումը չէ, որ կը քատագործեմ, ոչ ալ կ'արդարացնեմ զանոնք եւ ոչ իսկ կ'ընդունիմ, այլ հոգիս կը ցանկայ, որ երկրի վրայ, տեղ մը, շատ թրթռուն ու շատ գարնանային աղջիկ մը զգայ այս զուրկ արուններու խելագար սիրոյ քաղցը ու ներողութեան անուշ ժպիտ մը ծիլի շրթներուն վրայ:

Այսքան միայն եւ ուրիշ ոչինչ:



Որոշ տարիքէ մը յետոյ, ահարկու հարցում մը կայ, որ կը ցցուի մարդուն առջեւ. - Ինչպէ՞ս կարելի է ապականեալ, աղարտեալ, գեղչեալ զգայարաններով ընդունիլ մաքուր ու այգային հրճուանքները, զորս կեանքը դեռ կրնայ պարգեւել մեզի:

Այս առաւօտ, ժամը եօթին, ոսկեայ կիսաթափանց ամպեր կային քաղաքին վրայ: Երկիրը կը դողդոջէր հեշտութենէ: Իրական երիտասարդ մը կրնա՞ր միթէ պաղարիւնութեամբ կենալ այդքան լուսաթափախ գեղեցկութեան, այդքան արքայական լոյսի դիմաց: Ո՛, կ'ըսէի, կեանքը որքա՞ն հրաշալիօրէն գեղեցիկ կրնայ ըլլալ ոչ պատրանաթափ էակներու համար: Այլ ո՛չ մէկ լուսածագ կրնայ ճաճանչաւուրիտ դարձնել ներքին մուսլի դաշտանկար մը:

Վիրաւորեցի սէրս բուն սաստկութեամբ  
 Ու այդ վերքը դեռ կ'արիւնի, կը կոտտայ:  
 Շատ սիրելի, մեզը պատած էր ողջ անձս,  
 Գիշերը զիս կործանած էր անկողնիս վրայ ու մարմնիս  
 Խոտովակոծ էր՝ պատերազմի վերջալոյսի մը նման. - Բառերը  
 Մեծ բան մը չեն նշանակեր ու կարօտը խոյարճ է, որ կը ճեղքէ  
 Մութը կեանքին, ստուերի մը պէս մերկ. - կարեւորը

Տենդն է, քերմութիւնը մեծ արեան, պելոծութիւնը ներքին.  
 Նայէ՛ ձեռքերուս, որ կ'որոնեն գիշերուան մէջ  
 Ոսկեայ թաւալումը վարսերուդ,-էութիւնս ծարախ է  
 Գորովիդ գիշերային, ձայնիդ՝ որ կ'ելլէ  
 Հովի պէս թեթև.-ոչինչ կորուսեալ է,  
 Ո՛չ մեղմ գուրգուրանքը կապոյտ հայեացքիդ, ո՛չ գիշերները  
 Անձկալի սպասման, երբ հողմը դուրսը  
 Կը համբուրէ կաղամախիներն արծաթածափ: Ո՛չ շրթներուդ  
 Տենդը անաղարտ, ոչ ալ եռյակապ շքեղութիւնը  
 Մերկութեանդ լրիւ, ոչինչ կորուսեալ է:  
 Պիտի բարձրանաս անկողնէդ արեւածագին վերստին  
 Աչքերդ լեցուն սիրով, պիտի նետես անունս  
 Ծառերուն դողահար, ընտանի առարկաներուն, առաւօտեան:  
 Ոչինչ կորուսեալ է: Ո՛չ հեշտութիւնը, որ քեզմէ կու գայ  
 Եւ որ կը խարագանէ թիկունքներս, ո՛չ քաղցր մտերմութիւնը,  
 Որ մարմինս անապաշտ արժանի կ'ընծայէ հոգւոյս.-  
 վերադարձի՞ր,

Շատ սիրելի, անարատ.-վերադարձի՞ր ինձ:  
 Գիշերը պիտի ըլլայ անուշ ու ամբերդ  
 Պիտի որոնեն զիս մութին մէջ: Տրտում դեմքիս վրայ  
 Պիտի զգամ զեփիադ ձայնիդ գգուական, շունչիդ փաղաքուշ,  
 Վերադարձի՞ր, ինչպէս այգը զարման, սարսուզին, ինչպէս  
 Հովը առաւօտեան գով, երի՞ր ինձ  
 Ու ուսիս վրայ ձգէ՛ քեզ անցելոյդ, սէ՞ր, օրերուն մոխիրը  
 Գորշ: Որոնէ՛ զիս, սիրելի՛ս, խորը այս տաքերուն  
 Առանձնութեան անափ:

*Որքա՛ն դժնդակ ու մթին էին ցայդային ժամերը: Ու որքա՛ն պղտոր էր ու անձկալի կտոր մը քունը, զոր գիշերը հաճեցաւ շնորհել ինձ: Գիշերուան խորէն ելար, երազիս պաստառին վրայ,- այլ աչքերուդ խորը ծանր յոգնութիւն մը կար: Երազեցի, թէ կ'ուզէիր մեկնիլ, իսկ ես կռթնած էի ձեր ծառի մը ու կը դիտէի քեզ: Կեցած էի հող, վիրաւոր ու ընկճեալ, այլ ո՛չ մէկ բառ կ'արտասանէի: Յանկարծ անակնկալ անձկութիւն մը սեղմեց կողորդս, ինքս ինձ կ'ըսէի,- ո՛չ, չի կրնար մեկնիլ ու ես՝ չեմ կրնար թողուլ, որ մեկնի: Աղաղակեցի սրտիս խորունկներէն,- տե՛ս, դողահար եմ ու կը դանդաչեմ: Զեռքերս չեն կրնար հրաժարիլ մեկնութենէդ ու շրթունքներս ծարախ են քեզմով, աչքերս լեցուն են սիրովդ: Վերադարձի՞ր, էութիւնս կը հայցէ գորովդ: Ո՛վ սէր, ո՛չ ոքի քով կրնաս գտնել այս խօլ խանդավառութիւնը, որ կը լուսաւորէ նոյնիսկ հաստ ձեռքերս, այս հեշտութիւնը, որ կը վառի, այս անփոխարինելի գորովը, որ աչքերուս խորը կը ծլի:*

●

Իմս պիտի ըլլաս տակաւին, միայն իմս:  
 Շրթներուդ վրայ՝ պիտի խմեմ նորահրաշ ալգուն լոյսը:  
 Կոպերուդ վրայ՝ պիտի ողջունեմ երկիրը: Պիտի ըլլաս գա-  
 րունս ու Մայիսի գեղեցիկ ամիսս: Պիտի ըլլաս ծաղ-կեալ եղ-  
 րեւանիս ու միակ քերթուածս: Ու երբ տրտում՝ անցեալը տա-  
 ժանելի պիտի թուի ուսերուս վրայ, պիտի հծծեմ. օրրէ՛ գիս  
 քիչ մը, պզտիկս, աղջիկս: Վասնզի քաղցր ու գորովալի էակ  
 մըն ես, կեանքը մաքուր ու գեղեցիկ է վրադ: Պիտի գոչեմ,  
 ոգեկոչելով անուշ դէմքը մօրս, -մայրիկ, նայէ՛, ի՛նչ գեղե-  
 ցիկ ու անուշ է այս աղջիկը ու որքա՛ն գրգայի է տղուդ հետ:  
 Մի՛րէ՛ գայն, մայրիկ, վասնզի առաջին կինն է, որ այս լրու-  
 թեամբ ինքզինքը կը նուիրէ ինձ: Աչքերուն խորը մանիշակի  
 ծիւր կան, ձեռքերուն վրայ շուշաններ կը բողբոջեն...  
 Ահա՛ կինս, մայրիկ, հարսս...

●

Ողջ կեանքիս ընթացքին խորշանք զգացած եմ գոեհ-  
 կուլթենէն: Արդ, դիւրին յաղթանակը, հեշտին նուա-  
 ճումները, առանց ճիգի ու առանց տառապանքի շահուած,  
 միշտ գոեհիկ թուած են ինձ: Այլ գիտեմ, թէ մարդիկ կան,  
 որ ամէն ինչ կը ստանան դիւրութեամբ: Ընկերներ գիտեմ,  
 որ կիներէն ստացած են ինչ որ կը ցանկան, ծայրայեղ արա-  
 գութեամբ մը: Այս երեւոյթը յաճախ նողկալի թուած է ինձ:  
 Չեմ սիրած նաեւ դիւրութեամբ գեղեցիկ կիները, որ իրենց  
 շնորհը կը պարտին բնութեան մէկ խաղին, անգիտակից ու  
 անճիգ ներդաշնակութեան մը, որ չեն վառիր ներքին կրակ-  
 ներէ: Տարիներ առաջ նոյնիսկ արհամարհած եմ գանոնք,  
 իրենց լկտի սնափառութեան, սնոտին նանրամտութեան  
 պատճառաւ:  
 Պատանի, աներդիք՝ երբեմն կը պատահէր, որ նստած ըլ-  
 լայի փողոցի մը անկիւնը: Կին մը կ'անցնէր, երիտասարդ,  
 ցանկալի, հեշտաբուրիկ, ցնցելով իրանը, երբեմն թաւալե-  
 լով չքնաղ մարմին մը: Մտքով կը հանուեցնէի գայն, ծառա-  
 յեցնելով այդ մարմինը մատղաշ հաճոյքիս, այլ վայրկեան մը  
 յետոյ կ'ըսէի ինքս ինձ, - խուսափի՛նք գոեհկուլթենէ:  
 Այժմ երբ կը մտածեմ այդ անիծեալ տարիներուն՝ տարօ-  
 րինակ ուրախութիւն մը գիս կը գրաւէ այսուհանդերձ:  
 Հպարտութիւնս այնքա՛ն բարձր էր, արու, այնքա՛ն խրոխտ:  
 Ինքս ինձ կ'ըսէի ու արդէն հմայաթափ հեզութիւն մը կը  
 ծլէր շրթանցս վրայ, -Չե՛ն կրնար միթէ՛ պարկեշտօրէն քա-  
 լել, առանց իրենց ճամբուն վրայ խռովք ու հեշտութիւն յա-  
 րուցանելու: Չե՛ն զգար միթէ՛, որ անպատիւ արարք մըն է  
 պատանիներու սիրոյ ծարաւը վառել:

պատանիներու սիրոյ ծարաւը վառել:

Ու այդ բոլոր կիները իրենց գօտիները կը քակէին՝ դրամին անարգ գօրութեան առջեւ: Դրամը խենչելութեամբ կը պագնէր անոնց պաղպաղուն ծիծերը: Մ', այդ աղտեղի ժամանակաշրջանը: Պիտի չմտնամ քնաւ ծաղրածու, գէշ ծամածռութիւնս, որով կը յարէի, -Մերկ՝ թաթխել այդ էգերը արեւելեան կոյուղիներու խորը: Այժմ գիտեմ, թէ ի՞նչ որ կը վիրաւորէր զիս՝ անոնց գոեհկութիւնն էր: Վասնզի միշտ անուղղելի խանդավառ մը, զգացական մը եղած եմ: Երազը միշտ բացարձակ գօրութիւն մը ունեցած է վրաս: Ու ի՞նչ երագներ կային, ոսկեայ՝ ամպերու պէս, զով՝ հովերու պէս, որ կը յածէին շուրջս: Հէնքը ընդհանրապէս նոյնն էր: Կլիման եւս:

Կախարդական պարտէզի մը մէջ՝ հրաշալիօրէն պայծառ աղջիկ մը կար, ճերմակ շղարչ հագած: Երեկոյեան դէմ, երբ արեւի փոշին կ'ոսկեգօծէ իրերն ու հակները, մեղմօրէն ու վեհափառօրէն կը սահէր դուրս: Քաղաքին փողոցները կը լուսաւորուէին իր քաղցր ներկայութեամբ, այլ երբեք իր խորունկ ու ոսկերիք աչքերուն անուշ լոյսը չէր ձգեր մարդոց վրայ: Արեւելեան խորհրդաւոր պայտաներէ, շէներէ ու լեռնային որջերէ, իրենց ներքին այեկոծութեամբ ու ներքին կրակներով, խօյ սիրականներ կու գային, - կու գային իշխանները արծաթափայլ ու վեհաշուք, բանաստեղծները կու գային ու գօրաւորները: Ու ամէն ոք իր ներքին մեծութիւնը կամ իր երկրային ինչքը կը բերէր ընծայ: Այլ աղջիկը կ'ըսէր ծորուն ու սրտակեղեք ձայնով մը:

Բանաստեղծները չեմ սիրեր, - վասնզի շաղակրատ եմ ու ողբերգու,-

Իշխանները գոռոզ եմ ու հասարակ գեղեցկութեամբ,-  
Չօրատրները վատ եմ տկարներուն հետ ու աղքատներուն:

Յայնժամ կու գային ոսկերարձ ուղտերով հարուստ վաճառականներն ու գէշ հասառուները, յաղթական գօրականներն ու գորովայի պատանիները: Կու գային կոյր թրուպատուրներն ու սիրով հրկիզեալ արեղաները: Այլ արքայական օրիորդը կը թուէր օտար ու հեռաւոր:

Վաճառականները պորտաբոյծներ են, - չեմ սիրեր զանոնք:  
Հասառուները կը նմանին անկեալ ծառերու,-  
Չօրականները ասլուշ են ու գուրկ խոնարհութենէ,  
Պատանիները գորովայի կ'ողորբն կամացի գութս,  
Թրուպատուրները լոկ հեկեկալ գիտեն, - չեմ սիրեր զանոնք:

Օր մը կ'անցնէր իր հանապազօրեայ աշխատանքէն խոնջ գիւղէ մը: Երիտասարդ շինական մը կ'աշխատէր գրան մը

երկիրը կը ինդար: Արքայական օրիորդը կանգ առաւ վայրկեան մը, վասնզի գեղջուկ տղան չէր նայեր իրեն: Շրթները դողդոջեցին, արտեւանունքներուն եզերքը արցունքի կայլակներ ցուլացին:

-Նայէ՛ ինձ,- ըսաւ շատ մեղմօրէն,- գեղեցիկ չե՞մ միթէ...  
Երիտասարդ շինականը բարձրացուց ականարկը ու խուլ զօրութեամբ մը դիտեց զայն, ինչպէս լաւ հերկուած արտ մը կը դիտէ մարդ, ցորեանի այետատան արտ մը, առողջ անասուն մը, բազկատարած ծառ մը, զոր վերջալոյսը կը համբուրէ:

-Այո՛, գեղեցիկ ես,- ըսաւ պահելով ականարկը,- գեղեցիկ ես Աստուծոյ իրական արարածի մը պէս, գեղեցիկ ես մայր երկրին պէս...

Այսքան միայն եւ ուրիշ ոչինչ:  
Օր մը այս պատմութիւնն կ'ըսէի մտուսնացած բարեկամուհիի մը, որ քիչ մը կը սիրէր զիս, իր ձանձրոյթի ժամերուն: Սկիզբը նուրբ անգթութեամբ մը ծաղրեց զիս անուղղելի մանկութեանս պատճառաւ: Այլ ըսպէ մը յետոյ, զգալով ցաւս, հարցուց.

- Յետոյ ի՞նչ կը պատահի... ի՞նչ կ'ընէ օրիորդը...
- Կը մեռնի սիրահար, վիրաւոր սիրով...
- Օ, կը կարծե՞ս...
- Անկասկած նման արքայական աղջիկ մը լոկ սէրէ կրնայ մեռնիլ, կը հասկնա՞ս, այդ է իր ճակատագիրը: Իր օրէնքը չքեղ հրկիզումն է, գարնանային հրդեհը...



Յայժմ չեմ բուժուած երագի այս խորին ծարաւէն: Անցեալ օր, մութին մէջ, ընկզմած թիկնաթոռի մը մէջ, կ'ունկընդդէի Պեթհոլէնի ԻՅՅԵՐՈՐԳ համանառագը: Ժամը մեղմօրէն անէական էր: Մէկը այն ժամերէն, զորս կեանքը ժլատօրէն կը պարզեւէ մեզի: Ու ինձ կը թուէր, թէ դիւրասահ, այլ առասպելական նաւու մը վրայ էի, որ կը յառաջանար հանդարտ վայելչութեամբ մը դէպի ոսկեայ հորիզոնը: Մովը լազարթ էր ու յոյժ խաղաղ: Այնպէ վրայ Տիկին Լուսնկան ձգած էր իր արծաթեայ լօղիկը: Մինակ էի, հրաշալիօրէն գգայուն գիշերուան դիմաց ու հովը կը պագնէր երեսս, յուզումնահար կ'արտասանէի խռովեալ բանաստեղծութիւն մը հին հայերէնով, երբ լսեցի յեղակարծօրէն յոյժ գրգայի ու ողորջի ձայն մը, որ ելաւ թաւշեայ գիշերուան խորէն՝ թռչունի մը սրտամորմոք, այլ կարկաչուն երգին պէս:

-Միրեցիր դեռածիլ ու քնքուշ աղջնակները  
Ճերմակ հարս ելած նշենիներու պէս,  
Ճերմակ երբ հովը կապոյտ կը պագնէր զանոնք:

Այլ անոնք գացին հարսանեկան առագաստներու :  
 Գացին մայրութեան բեղուն :  
 Միրեցիր՝ հայրենիքդ, որ վիրատու էր եւ որ չկար,-  
 Գրքերը հմայաթափ ձգեցին քեզ,- սիրեցիր երգերը,  
 Որ հագագիտ խորը խեղդուեցան : Վիշտը նուաստացուց քեզ,-  
 Միրեցիր ծառերը բազկատարած, ծաղիկները,  
 Երբ ակնարկի մը լոյսը կ'օծէր գանոնք.  
 Միրեցիր կիները,- այլ կիներ հոտ է նենգութեան  
 Ու գաղափարները, որ դաւադիր են ու ներսէն փտած :  
 -Յոյժ ողորքի ձայն, ըսի աղապատանքով յի.  
 Հակառակ շոյուն քաղցրութեանդ, կը վիրատուես զիս.  
 -Միրեցիր տենդերը,- այլ անոնք հիւանդագին էին,  
 Գիշերները, որ կը թուէին անստաօտ,  
 Այգերը՝ առանց նորահրաշ գեղեցկութեան : Ու քերթածները,  
 Որ խօլ կրքով մը սիրեցիր, սպանեցին քեզ :  
 -Ո՞վ ես դուն, ո՞վ կիներ, որ կ'եկես մերկ,  
 Արծաթեայ գիշերուան խորէն, պլլուած կապոյտ  
 սպարեգօտի մը մէջ...  
 -Քու երագդ էի երեկ ու տենչդ եմ այս ժամուն :  
 -Օ՛, գեղեցկութիւնդ տխուր է, կ'ուզէի որ մեկնէիր,  
 Վասնզի անափ ու ծորուն է գիշերը, ծովը կը ծփայ  
 Մինչեւ անհուճօրէն մանիշակ առտուն...  
 Քու երագդ եմ, որ կ'եկէ ընդերքներդ, որ կը յածի շուրջդ  
 Ըսելու համար քեզի, թէ... -ի՞նչ...  
 -Թէ լոկ զիս սիրեցիր, զիս կը սիրես դեռ...

*-Մուլար աստղ, լո՛յս կորուսեալ, ի՞նչ կ'ընէ սիրականս...  
 -Միրականդ հակած է աւազանի մը վրայ, ջրի հայելին  
 մէջ կ'որոնէ հոգիդ...  
 Երկնից թրթռուն բեկորի մը վրայ կը դողդոջէր այդ աստ-  
 ղը, պատուհանիս մօտ, կարծես թէ պիտի իյնար տոչորուն  
 ափիս մէջ :  
 Պիտի գայ, պիտի գայ գորովայի ժամը : Կեցած եմ հող,  
 սալայատակին վրայ, անձկայի, բարբախուն անհանգստու-  
 թեամբ ու կը սպասեմ կառաչարին : Պիտի գայ, պիտի գայ  
 կառաչարը՝ գիշերային երկաթաքարէ տարածութեանց խո-  
 ընէ,- արթուն, սրբնթաց, զանգուածեղ : Տեղ մը կը բարախէ  
 անոր հոգին, տեղ մը՝ ան կը պատուէ գիշերը : Պիտի գայ, պի-  
 տի գայ սիրոյ մեղեդիներուն ու նորոգ յարութեան ժամը :  
 Գիշերը պիտի գայ դէպի զիս ու դուն պիտի գաս անբուժելի-  
 օրէն սիրատուցոր, գիշերուան թեւերուն մէջ : Պարզապէս պի-  
 տի մօտենամ քեզի, շատ մեղմ շարժումներով ու պիտի գրկեմ  
 հասակդ : Աչացդ վրայ պիտի խմեմ աստղերուն ճերմակ գի-  
 նին, շրթներուդ վրայ պիտի թողնում ի՞նչ որ անբանաձեւե-  
 լի է ու մեղմ է, ներքին քաղցրութիւններու հովը : Նորածաղկ*

լի է ու մեղմ է, ներքին քաղցրութիւններու հովը: Նորածաղկ ու լի կուրծքերդ պիտի հպին կուրծքիս: Խորին լուսթեամբ պիտի քայնեք ու քաղաքը պիտի տանի մեզ, արեցեալ մեր երազէն: Պիտի գայ, պիտի գայ հեշտութեան շառագոյն նժոյգը, ու մեզ պիտի նետէ ուսին: Անոր հրեղէն բաշերէն բռնած պիտի ելլենք բարձունքները բոլոր արբեցումներուն: Պիտի գայ, պիտի գայ հրկիզման ժամը: Ափերովս պիտի հպիմ քեզի ու բերանս պիտի տոչորի իր պապակէն: Հպէ՛ կուրծքերուդ խոշոր պտուղներուն ու պիտի զգաս անոնց բեղուն ծանրութիւնը, հպէ՛ ծունկերուդ կափարիչներուն ու պիտի զգաս կրակը, որ կը վառէ գիս: Պիտի զգաս բերանս վրադ, տաք՝ ինչպէս վէրք մը: Գիշերը պիտի ըլլայ արքայական, գիշերը պիտի ըլլայ մեծապարզել: Պիտի մերձենամ քեզի խորին յուզումով մը ու սիրտս պիտի թնդայ,-վասնզի կայսերական է մարմինդ:

Երեսս ծունկերուդ վրայ, պիտի ողջունեմ առաւօտը, որ պիտի ծագի, պիտի ծագի՝ հրաշալիօրէն մերկ, սարսուռն: Շրթանցդ վրայ պիտի խմեմ անոր յաւիտենական լոյսը, բերանս պիտի հաւաքէ, մեղմ հեշտութեամբ մը, անոր ոսկի ալիւրը պարանոցիդ վրայ: Ուսերդ պիտի վառին անոր կարկաչուն շէնութեանէն: Ուսերդ պիտի բողբոջին՝ շուշաններու պէս, որ կ'ելլեն գիշերուան խորունկէն, աներեւակայելիօրէն ճերմակ:

-Մոլար աստղ, որ կը վառիս, ի՞նչ կ'ընէ սիրականս...  
 -Լարսերուն մէջ աստղի բեկորներ, կը սպասէ ձայնիդ:



Անգամ մը, ամրան երեկոյեան մը ընթացքին, տարիներ առաջ, կաղամախի մը հանդարտ ստուերին մէջ, կը շաղակրատէի երիտասարդ մտաւորական ընկերոջ մը հետ: Իրիկունը գաղջ էր, գրեթէ ծանր: Երկիրը խոնջ էր ու ամէն ինչ դժուարութեամբ կը շնչէր: Բոլոր շարժումները աւելորդ ու բոլոր բառերը անօգուտ կը թուէին: Այսուհանդերձ, քաղցր կը թուէր ապրելու հաճոյքը, ծուլօրէն որեւէ տեղ մը յամենայն հեշտութիւնը: Յետոյ գիշերը եկաւ, եկաւ վրաս ու անոր վրայ ծածկեց մեզ: Արծաթեայ ու յոյժ խաղաղ գիշեր մըն էր: Ըսաւ, թէ երբեմն արմուկները սեղանին վրայ, ժամերով մտիկ կ'ընէր անոր յետին շշուկը,- գորտերը, որ կը կռնչէին հեռուն, ծղրիթները, որ սուր աղմուկով մը կը պատուէին լուսթիւնը:

-Տարօրինակ է,- ըսաւ մեղմօրէն,- որեւէ յետին շարժում ընելէ առաջ կը դիտեմ ձեռքերս, կը նայիմ անձկութեամբ վաղիւ հմայաթափ երիտասարդի ձեռքերուս ու ողջ գորովս ու սիրոյ ծարաւս անօգուտ կը դառնան: Լոկ գիշերուան ընթացքին կը մտածեմ այդ աղջկան վրայ ծայրագոյն սիրով մը:



ինքս ինձ կ'ըսեմ,- վաղը հարկ է որ համարձակիմ ընել սիրոյ առաջին շարժումը: Լռութեամբ ձեռքս պիտի դնեմ անոր ձեռքին վրայ ու սիրով տոչորուն յուզումէն խզուած ձայնով մը պիտի ըսեմ,-աչքերուդ խորը կը նշմարեմ սարսուռն, դողահար կաղամախիներ ու վարսերուդ մէջ զիշերուան ոսկեայ բեկորներ: Կ'ուզե՞ս որ շրթունքներս հանգչեցնեմ շրթունքներուդ վրայ: Այլ երբ սիրոյ ժամը կը հնչէ՝ կը դիտեմ ձեռքերս ու ամէն ինչ կը թուի դժուար, տաժանելի...

Յամբ շարժում մը ըրաւ, գլուխը դանդաղօրէն դարձուց անդին ու յոգնութեամբ յարեց.

-Երբեք չեմ հպած որեւէ կնոջ սիրային գեղումով, երբեք չեմ հպած կնոջ մարմնի մը հեշտութեամբ: Այսուհանդերձ երկչոտ չեմ: Քանի մը օր առաջ գայրոյթս այնքան մեծ էր ու յուսալքուած, որ վստահ ըլլալու համար, թէ ընդունակ էի սիրոյ արարքի մը՝ յեղակարծօրէն գգուեցի դրացուհիի մը կուրծքերը: Տրամութեամբ նայեցաւ աչքերուս ու կարծեմ թէ գգացր որ այդ շարժումը ինձմէ չէր գար...

Լռեց ու երկարօրէն դիտեց ձեռքերը, որ ծանր էին ու ծածկուած էին ցանի հատիկներով: Մեղմիկ՝ տեղափոխեց գանոնք:

-Ի՞նչ է սէրը,-հարցուց անձկութեամբ,-գուցէ խորհրդաւոր ու եզակի կանչ մըն է: Ահա՛ ոտքի կեցած ես՝ հպարտօրէն անտարբեր, յաղթական, սանձարձակօրէն երիտասարդ ու յանկարծ գարունը կը տապալէ քեզ: Մարդ մըն էիր, արու եւ խորոխտ ու կը վերածուիս դողահար էութեան մը, իրի մը...

Բուպէ մը վարանեցաւ, աչքերը ձգեց դետին:

-Կը կարծե՞ս որ ճշմարիտ է ինչ որ ըսի: Ո՛չ, սէրը կ'ընդարձակէ, կը հարստացնէ մարդը: Հնարաւոր կը դարձնէ անոր լրիւ գարգացումն ու հոգւոյն լիութիւնը: Այլ ինչե՞ւ անդամայուծեալ եմ սիրոյ կարելիութեանց դիմաց, ինչո՞ւ...



Խոնջ էի ու տրտում, այլ հոգիս լի էր քեզմով: Բակին խորէն կը լսուէր մոլոր թռչնակի մը ձայնը: Արմուկներով կռթնած էի պատուհանին ու ինքս ինձ կ'ըսէի, մեղմ տխրութեամբ մը.

-Գողգոթուն պիտի սպասես քաղցր ժամուն ու երբ ժամը հնչէ՝ սիրտդ պիտի թպրտայ անձկութենէն: Չայն պիտի գանես, ինչպէս որ գայն կը տենչալիր, ինչպէս որ կը սիրէիր գայն գիշերային մենիկ ժամերու: Նուրբ ժպտով մը շրթնեւորուն վրայ պիտի դիմաւորէ քեզ ու քաղցր դէմքը պիտի շողայ երանութենէն: Այլ դուն շփոթահար ու յուզումնարեկ պիտի դիտես անոր հրապուրիչ իզութիւնը, խորին ցանկութեամբ մը պիտի տենչաս գայն ու գուցէ պիտի չհամարձակիս առաջին շարժումը ընել: Գուցէ պիտի չկրնաս հպիլ անոր

ըղձալի իրանին: Երթներդ պիտի վառին ծարաւով, այլ պիտի վարանիս բարի-գալուստի առաջին համբոյրը տայ, դուն որ մարդոց հրամայել ու երբեմն անկարգապահ խումբեր վարել գիտցար: Ինչո՞ւ համար ձեռքերդ կը դողան ու աչքերդ խոնաւ են յուզումէդ: Վասնզի սէրը գրաւած է ողջ անձդ, ի՞նչ է սէրը, կ'ըսէր տարիներ առաջ այդ տղան,-սէրը գուցէ այս տենդն է, որ քեզ կը ձգէ յոգնաբեկ անկողնիդ եզերքը: Կը ձգէ աննինջ գիշերուան խորունկը: Այս թեթեւ երազներն են, որ կը ծփան վրադ ու նախանձը, որ երբեմն կը լակէ արիւնդ: Յեղակարծօրէն կը գարթնուս, գիշերուան կիսուն ու բարակ սարսուռ մը կը վազէ թիկունքներէդ ու կ'ելլէ ուսերուդ,-սէրն է, որ կը համբուրէ քեզ: Չայնիդ մէջ արտակարգ քաղցրութիւն մը կը բեկբեկի,- գորովն է, որ մեղմօրէն կ'երգէ:

Օ՛, մտիկ ըրէ՛ գիս: Երբ սիրուն դունչը բարձրացուցած մօտենայ, երկարօրէն ըմպէ անոր աչքերուն լոյսը, սեղմէ զայն բազուկներուդ մէջ ու համբուրէ բերանը: Թող անոր շրթունքները զգան մարմնիդ տենդն ու անձկութիւնը: Վստահ եղիր, թէ ձեռքերդ պիտի դողդոջեն համաձայնութենէ ու բիրերը պիտի շողան ոսկեայ ցոլքերով: Դիր ձեռքերդ ուսերուն վրայ ու թո՛ղ ձայնդ չամչնայ իր յուզումէն: Ան գեղեցիկ պիտի ըլլայ սիրով, վասնզի երիտասարդութիւնը պիտի պագնէ ճակատը: Աչքերդ փակ՝ տակաւին պիտի զգաս զայն, իր խանդավառ մերկութեամբը, որ մարմնիդ պիտի պարգեւէ խաղաղութիւն ու հաճոյք, պիտի հծծես տենչավառ շրթներով սիրոյ խօլ ծարաւդ, կուրծքերդ խոշոր ու աղուոր են, մեծ պտուղներու պէս, որ արեւէն կը վառին: Ու քանի ձեռքերս փափկութեամբ կը սիրեն զանոնք՝ այնքան աւելի գարնանային կը թուին անոնց գունդերը: Կեանքը գուարթ ու յորդակոհակ է ի քեզ: Իրական ու լի կին մըն ես, որ կը սիրէ հաճոյքը, որ կ'ընդունի հեշտութիւնը բոցի մը պէս, որ կը մաքրէ մեր մարմինները կուտակուած աղտեղութենէ ու կըրէ: Փակէ՛ անուշ աչքերդ ու շրթունքներդ երկարէ՛ ինձ: Տո՛ւր ինձ բերնիդ գորովն ու դէմքիդ լոյսը: Տո՛ւր ինձ գարունդ:

Յիշատակը պիտի ըլլայ մեղմ ու կարկաչափոս,  
 Հին երգի մը պէս, որ մտերմօրէն կը վերադառնայ,  
 Հնգելու համար իր կարճ մեղեդին, ըսելու համար, թէ  
 Ժամը քաղցր է, մեղմօրէն կը սահի գարունը: Ողջ անձդ  
 Թրթուց, միակ գեղեցիկը պիտի ըլլաս,-չրթներուդ վրայ  
 Պիտի խմեմ այգային հովերը, թեթեւ բուրմունք ծաղիկներուն,  
 Պիտի ըլլաս դարդօցուն նուրբ շապիկիդ տակ, հեշտագրգիտ  
 Ու անձնատուր: Երգէ՛ ինձ համար ուրախութիւնդ, որ կը տուրայ,  
 Երգէ՛ հաճոյքդ, որ կ'ելլէ, երգէ՛ վշտերդ: Չտքդ  
 Կը տրոփէ ափիս մէջ: Երգէ՛ ինձ համար սէրդ, եկո՛ւր,-  
 Գիշերը աստեղաթաթախ է ու թափանցիկ

է շղարշո երկնից: Եկու՛ր,  
Քաղաքը կը ննջէ, ծածկած իր երանքներուն մէջ  
Անձկութիւնը, տրտմութիւնը մարդոց: Ողջ անձս կը հայցէ քեզ-  
Լսէ՛, կանչս, որ կը բարձրանայ գիշերուան խորունկէն, լսէ՛ զիս  
Ինչպէս երկիրը կը լսէ կանչը գարնան,-եկու՛ր...



Գրեթէ միշտ իրականութիւնը տարրեր է հրագէն: Երբեմն  
աւելի՛ բարախուն, աւելի՛ կենդանի, աւելի՛ ջերմ ու երբեմն  
նուազ հարուստ, նուազ նկարագեղ: Այլ սխալ է կարծել, թէ  
ան միշտ վհատեցուցիչ է, հմայագեղ:

Մէրեր կան, որ իրենց երանքներուն մէջ կը կրեն հրամա-  
յական, արքայական գորութիւն մը: Այս տեսակ սիրով մըն  
է, որ յաճախ սիրած եմ ճամբու վրայ գտնուող քաղցր էակ-  
ները, վերջինը այդ Տալմաթ աղջիկն էր, որ ձերմակ գայլս  
կ'անաւանէի: Եթէ զիս սիրէիր այն սաստկութեամբ, որ քեզ  
կը սիրեմ այժմ՝ պիտի նախանձէիր իր յիշատակէն իսկ: Վա-  
սընզի իրականութիւնը ծայր աստիճան յուզիչ, տենդավառ  
ու յորդագեղ էր անոր մօտ:

Հեշտութիւնը, գորովն ու բարեկամութիւնը կրնան մեր  
մարմինները նետել, բուռն սաստկութեամբ մը, եզակի զգայ-  
նութիւններու գիրկը: Մարդ կրնայ կորսնցնել ժամանակի  
ու ամանակի գիտակցութիւնը: Մահուան ու կեանքին միջեւ,  
որ թաւալելէն կ'ելլէ, սահմանները կրնան անհետանալ, ճամ-  
բայ տարու համար ծայրագոյն ինքնամոռացութեան մը, տա-  
րօրինակ արքանանքի մը: Այս պատճառաւ է, որ ներշնչեալ  
բանաստեղծները մահուան գլխապտոյտը կը զգան, զգլխան-  
քի պահերու, կը զգան անէութեան դառն ճաշակը: Յաճախ  
կ'որոնեն զայն:

Մահը կեանքին լրիւ ծլարձակումն է յաճախ ու ո՛չ այլ ինչ,  
գերագոյն վայրկեանը ժամանակին ու տարածութեան մէջ,  
հրաշայի դադար մը, ընդարձակում մը, ծաւալում մը, որ վեր-  
ջին ցունցի մը մէջ կ'ընդգրկէր մարդկային էակին բոլոր ար-  
թուն ուժերը: Ի՛նչ որ մարդ անձկութեամբ կը զգայ արուես-  
տի հազուագիւտ երկերու մէջ՝ անոր անկորնչելի ներկայու-  
թիւնն է, եզակի կշռոյթը: Մահուան ջերմ շունչն է, որ կեան-  
քին կը պարզեւէ առասպելական գեղեցկութիւն մը:

Մարդը կը հպի մահուան, կը քսէ անոր կապոյտ բոցին իր  
փխրուն թեւերը՝ ինչպէս ցայգաթիթեռը կրակին: Յաճախ հեշ-  
տութիւնն է, սուր ու բռնակալ, գորովը՝ անափ ու ախտագի-  
նօրէն քաղցր, որ մեր քայներուն առջեւ կը բանան գիշերա-  
յին այդ պայծառ արահետը: Մահուան դարպասելով է, անոր  
շուռայտ ու եզակի գեղեցկութեամբ գողգոջելով է, որ սիրա-  
հարները կը յաջողին յանգիլ ծայրագոյն սաստկութեան մը,  
հեշտութեան մէջ: Ամէն ճիգ, որ բուռն սպասումով կը

պրկուի ու ամէն լիութիւն կը ձգտին մահուան շքեղատեսիլ պայծառութեան: Երկրային միօրինակ ու հասարակ կեանքի սահմաններէն սուրալով անցնելէ վերջ միայն՝ իրական ստեղծագործողները, բանաստեղծներն ու սիրահարները, խորհրդապաշտներն ու տեսանողները կ'ողջունեն ուրախութեան խանդավառ արեգակը:

Յայնժամ իրականութիւնը կը վերածուի երագի: Արգելքներն ու ամբարտակները, որ կը բաժնեն գանոնք, կը կործանին: Մարդկային հակը մէկէն կ'ելլէ վեր երկրի աղտեղութիւններէն՝ սոսկալիօրէն մարդկային, ամբողջական՝ իր լիութեան մէջ: Այս հրճուանքը կայ, գոյութիւն ունի, այս լրացումը կայ, այս լիութիւնը կայ: Արդ, հեշտութիւնը մէկն է այս լրացման ուղիներէն: Այս պատճառաւ է, որ հասարակ ու գոհեհիկ գուգաւորման եւ այս զգլխանքի ծայրագոյն վիճակին միջեւ անդունդ մը կայ:

Անտարակոյս հեշտութիւնը երկրային է իր էութեամբ: Վասնզի կը բարձրանայ վեր հողէն, բեղուն ու ցած: Այլ իր նուաստագոյն ձեւին մէջ իսկ պէտք չէ գայն արհամարհել: Մարդուն՝ որ կը տառապի, կը կքի իր բեռան տակ, ան կը պարզելէ մոռացման գինի ու պատրանք: Ու իր բարձրագոյն ձեւին մէջ կ'այլափոխէ ու կը լրացնէ մարդը: Վասնզի խորքն է իր գորութիւնը, ամբողջական իր իշխանութիւնը ու յաղթական իր ցայտը: Ու քաղաքակրթօրէն յեղաշրջուած, զարգացած, առանց իրենց ուժգին ինքնութիւնը կորսնցնելու նրբացած հակներն են, որ կը հասնին իր մեծապարզել կատարելութեան: Անշուշտ հասարակ գուգաւորումը յաճախ անասնական է ու միակողմանի, այլ շքեղափառ է հեշտութիւնը ու իր բուռն բոցը կը վառէ մթնոլորտը: Ան յաճախ վարակիչ է: Երկու բարձրագոյն հակներ եւ որ հրդեհուած են սիրով, կրնան ստեղծել եզակի կլիմայ մը, որ լոկ իրենցն է, այլ որ չի դադրիր խորապէս մարդկային ըլլալէ, ինչպէս թափառական ու խօլ աւիչը, որ կը յորդի գարնանային երկրին վրայ, հեշտութիւնը վերստին կը նորոգէ մեզ ու մեր էութեան կը պարզելէ նորոգ խանդավառութիւն մը:



Այն հակներէն եմ, որ երբեք կ'իսով չեն վառիր, այլ կը բռնկին: Եթէ մեր երկուքէն մէկը վտանգաւոր կերպով թակարդը պիտի իյնայ, անկասկած այդ մէկը եւ պիտի ըլլամ: Իսկ դուն օր մը պիտի մեկնիս գուցէ՝ հիւսելու համար բոյնդ, այս գուարթ երկրին որեւէ մէկ անկիւնը: Այլ ես պիտի պահեմ քեզ վրաս, պիտի պահեմ քեզ մարմնիս վրայ՝ քաղցր վէրքի մը պէս եւ որ կը կոտտայ: Ինչպէս միւսը, որ տարիներ յետոյ դեռ կը բաբախէ վրաս, արեանս իւրաքանչիւր գարկին, կը բարախէ ու կը պայծառանայ վրաս:

Պարուն էր վերստին, շփացած, էգ գարուն մը: Մարիան կը բնակէր խուլ փողոցի մը մէջ, մտերիմ երրորդ յարկի սենեակ մը: Պիչերը վաղիւ կ'իջնէր վրան ու առաւօտը հագիւ թէ կը պագնէր պատուհանները: Հանրաքարշը մեզ կը նետէր հող դրան առջեւ, ու յեղակարծօրէն գիշերը կը խորունկնար ի պատիւ մեզի ու կը հիւրընկալէր մեր խօյ երիտասարդութիւնը: Հեշտութիւնը կը ծեծէր մեր թիկունքները սանդուխին առաջին աստիճաններէն իսկ: Կը բարձրանայինք՝ նախ, խորին լուսթեամբ մը, այլ ըտպէ մը յետոյ փաթթուած իրարու կը սպասէինք, որ լոյսը հեռանար մեզմէ: Յայնժամ կը քաշէր առջեւէս, շունչը ափին մէջ բռնած, սպասելով անօթի ձեռքերուս, որ չէին ուշանար իր թիկունքները գգուել: Երբեմն ձախ բազուկովս կը գրկէի զայն ու այլ ձեռքս կ'որոնէր իր մերկութիւնը, թեթեւ պարեգօտին տակ: Այդ բունն ու կարճ կռիւր մեր երկու մարմիններուն միջեւ անխուսափելի էր, ինչպէս անխուսափելի են առաւօտեան առաջին ձայները, որ եթէ պարտէզէ մը չելեն, կ'ելեն դրացի յարկարածնէ մը, կ'ելեն փողոցէն:

Անգամ մը երրորդ յարկը, սենեակին դրան առջեւ, երբ Մարիա կ'որոնէր նիզը, խոր մութի մէջ, մարմինը կը թպրտար մարմնիս քով: Եռուայտ սիրով մը կը գրկէի զինքը ու կը համբուրէի ծոծրակը, մինչ այլ սրունքս կ'անշարժացնէր անոր մարմնի վարի մասը: Անշուշտ կը սիրէր այս գողունի, այս գիշերային, այս խուղիչ գգուանքները, քանի որ կը յամենար ու կը ջանար ազատիլ ինձմէ, ինձ պարզեւելով աւելի սաստկօրէն մարմնին լիութիւնը: Այդ պահերուն կը հանդուրժէր նոյնիսկ գուարթ խնէչութեանս: Օր մը նոյնիսկ գիշերը մեզ գտաւ մերկ՝ իր սենեակին դրան մէջ: Անթափանց մութին մէջ, ուրիշ օր մը, զգացի սաստիկ բուրում մը ու յետոյ բերնին կրակը անրակիս վրայ:

—Վանի՛, հանուեցուր զիս, — ըսաւ ու իր ձայնը կը նմանէր մթին ջրի մը, որ կ'ելէ թաթթաբուր քարայրէ մը եւ որ կարկաչահոտ է, — մեղմօրէն հանուեցուր զիս...

Արդարեւ, մեղմօրէն, դանդաղօրէն հանուեցուցի զինքը, հանուեցուցի զինքը՝ պագնելով ծունկերուն վրայ ու ծիծերուն վրայ իր անուշ երիտասարդութիւնը, մինչեւ որ գիշերուան մէջ իր մերկութիւնը լուսաւորեց իրերը, մինչեւ որ ձեռքերս, որ անյագ էին գովացան անկէ: Գուցէ որովհետեւ գիշերը աներեւակայնիօրէն խորունկ էր քաղաքին վրայ, որ իր որովայնը կը գողար հեշտութենէ: Ողբերգականօրէն կենդանի կը թուէին իրերը ու իր մարմինը կը շողար ներքին սաստիկ լոյսով մը: Ափերուս վրայ, որ հրկիզեալ էին, կը զգայի մերկ իրանին վարի մասին ողջ ծանրութիւնը ու ինձ կը թուէր, թէ կեանքը անբացատրելիօրէն կարճ է: Կ'ուզէի շրթունքներուս պապակը յագեցնել ծունկերուն կափարիչներուն վրայ, որ ողորկ էին, այլ չնչին հպումով մը կեցուց զիս ու փսփսաց խորին լրջութեամբ մը, որ պատշաճ կը թուէր:

—Թո՛ղ տուր, որ հանուեցնեմ քեզ, սպասէ՛...  
 Կը պատկանէի իրեն, իրենն էի, ինչպէս սփոփուն բար-  
 տինները հովինն են, ինչպէս իր կուրծքը իրենն էր ու սրունք-  
 ները իրենն էին: Խորապէս կը զգայի ատիկա: Կը զգայի, որ  
 իրենն էի այլեւս այդ ժամուն: Հաճոյքով մը, ուրկէ անդին  
 կարելի չէ անցնիլ, ուրկէ անդին ոչինչ կայ այլեւս, առանց  
 նուաստացուցիչ տառապանքի: Յայնժամ ու այդպէս, այ-  
 սինքն՝ խորին մերկութեամբ տիեզերքին դիմաց, միասին՝  
 կարդացիւք քանի մը բանաստեղծութիւններ Ռենպոլէն, Ժի-  
 տէն՝ կարծր ու մետաղային էջեր, շղթայելով իրերուն քաղցր  
 տրտմութեան հետ, գգուանքները, որ յաւերժէն կու գան ու  
 տառապանքը, որ հողէն կու գայ մարդուն: Երազը հպատակ  
 խոնարհութեամբ մը կը պառկէր մեր ոտքերուն առջեւ ու  
 յաղթական բառը կ'ընդարձակէր հեշտութեան ու արբշուան-  
 քի սահմանները:

Յետոյ գիշերը նետեց վրանիս քունի մթին վերարկուն,  
 ծածկելով մեր հարստութիւնը Լիւթէններու պագշտտ ակնար-  
 կէն, Լիւթէններու, որ կը մրթմրթային եղկելի յանկերգ մը,  
 առաստաղին տակ:

Հակառակ իր անափ թուող հորիզոններուն, երազը այ-  
 սուհանդերձ ունի իր սահմանները, քանի որ ոսկեայ ամպի  
 մը պէս կ'ելլէ մեր ներքին հողերէն, քանի որ մեր ներքին  
 անձէն է, որ կը յայտնուի գաղտնի արարչութեան մը: Է՛ն  
 ճառագայթարձակ, է՛ն առասպելական, է՛ն դիւթիւ ու է՛ն անի-  
 րական երազը կը համապատասխանէ կարելիութեան մը, որ  
 ի նինջ է մեր մարմնին խորը, կը բխի հրաշալիօրէն ներքին  
 աղբիւրէ մը, որ ի մեզ կը խոխոջէ: Որքան ալ եթերային՝ ան  
 կը համապատասխանէ ներքին թրթռացումի մը, յուզական  
 վիճակի մը, զգայարանական գործունէութեան մը եւ որ ի  
 կատար է ու հագիւ թէ նշմարելի:

Այս պատճառաւ է, որ մեզմէ իւրաքանչիւրը իշխանօրէն  
 կը վայելէ իր երազներուն արքայութիւնը, մեզմէ իւրաքան-  
 չիւրը ունի իր ինքնատիպ երազները: Անիրական ու անըջա-  
 յին հեռանկարները, որ կրնամ ստեղծել, կը համապատաս-  
 խանեն տեսողական փորձառութեանս, այլեւ երեւակայու-  
 թեանս զօրութեան ու քմայքին, որ կը ձեւափոխէ, կը կրկնէ,  
 կը վերստեղծէ եւ որուն մեկնման կէտը այսուհանդերձ իրա-  
 կան դիտողութիւն մըն է, հպանցիկ նշմար մը:



Գիշերը տրտում երգի մը պէս կ'իյնայ վրաս: Կարծես  
 նստած եմ մթին ծառի մը տակ ու խորունկէն մէկը կը նուա-  
 գէ տխրաթաւալ մեղեդի մը: Հոգիս այսպէս է այս գիշերը,  
 պատրաստ ընդունելու կեանքին անյուսուցիւնը:

Ինձ կը թուի, թէ տակաւին անաղարտ ու նորահրաշ եմ՝ կեանքին գէշ ուժերուն դիմաց: Անտարակոյս դեռ չես սիրած էութեանդ բոլոր կարելիութիւններովը, մարմնիդ ողջ իրողութեամբը միաժամանակ: Ոչինչ ես, կին մը միայն, ժամանակին ու տարածութեան մէջ, այլ ողջ տիեզերքը կը բաբախէ վրայ: Աչքերուդ խորը՝ կը տարածուին ու կ'ալեկոծին հեռաւոր ծովեր, լեռներ կապոյտ՝ որոնց կատարներուն վրայ կը տատանին բիւրեղեայ ամպեր, ծառեր՝ որ կը սրսփան մեղմազնաց գետերու եզերքն ի վեր: Աչքերուդ խորը՝ կորուսիւնները, գծերն ու բազմազան ձևերը գեղեցիկ են: Ու ուրիշ են քու աչքերդ, վասնզի քուկդ են: Ահա՛ դաշն հեռանկարներ, որ հոն կը ծփան, դաշն ու գրիթէ ճշգրիտ, յատուկ միայն ձեր նուրբ ու հարուստ երկրին: Ո՛ր, դէմքեր Փրանսական, քաղցրացեալ, բանաստեղծեալ կնոջ մը թրջած ակնարկին մէջ, այժմ կը սիրեմ ձեզ: Հեշտութեան ժամուն իսկ, ափերս ծիծերուդ վրայ՝ կը նայիմ աչքերուդ ու ողջ անցեալը կը պայծառանայ:»

Ոչ այլ ինչ ես, կին մը միայն, բայց ողջ տիեզերքը կը ծփայ վրայ: Գուցէ ձայնիդ մէկ նուրբ, անզգալի ոլորումին մէջ պիտի լսեմ Սթանտալի շեշտը: Մարմնիդ վրայ, որ պիտի թրթռայ երկրին ներքին ձայնարձակումներով, պիտի սպառեմ բոլոր տենդերս: Հեշտութիւնը պիտի ըլլայ ամբողջական ու արթայական եւ պիտի գլխանցնի երազին մանիշակ հորիզոնները: Երթունքներդ աւելի՛ կարմիր ու լուսացայտ պիտի ըլլան, քան է՛ն արարչագեղ ծաղիկները: Վասնզի պիտի փայլին մեղմօրէն գորովիդ քաղցր շունչէն, ներքին ջերմութենէդ, հեշտասիրութենէդ, որ ինքնայատուկ է: Անոնց բարակ մորթին վրայ պիտի ծլի նոյնիսկ բարի հեգնութեան մը ծաղիկը: Կնոջ տենդահար բերան մը կրնայ արտայայտել երկրին ողջ գարունն ու հոգւոյդ ալեծփանքը: Յայնժամ մեր մարմիններուն բոլոր կարելիութիւններով պիտի սուրանք սիրոյ ջրերուն վրայէն ու երազը պիտի ըլլայ մերը: Ու երբ մեր բիբերուն վարագոյրները ծածկեն հեշտութեան պարզեւած գորովայի խոնջէնքը՝ երազը ոտքի պիտի կենայ, մեր մահիճին առջեւ, կամակատար դրանիկի մը պէս:

(Շար. 1)

ՎԱԶԳԷՆ ԵՈՒՇԱՆԵԱՆ



Վ. ԹԵՂԵԱՆ

**ՀԱՒԱՏԱՐՄ ՈՒԹԻՒՆ**

Քիրտ կինը եկած էր, լուացքը ըրած էր,  
 տանիք ելած էր փոելու,  
 գաղտնի տուն դարձայ, անկողին մտայ,  
 «Թշուառները» բացի կարդալու.  
 կէսօրուան մայրս իրար անցեր էր, քոյր-եղբայր  
 եկեր էին ինձմէ վատ,  
 վերջապէս դասընկեր մը ըսեր էր որ՝ առտուն  
 Վեհանոյշը հանգիստ չէր, տուն գնաց:  
 Սենեակիս դրան մէջ կայներ է մայրս, ձեռքը բերնին  
 «աֆերի՛մ» շարելով,  
 մինչեւ որ ձեռքիս մէջ տեսաւ հաստափորը,  
 եւ խնդա՛ց, խնդաց արեւոտ:

«Ճար չկար, տասնըինգ տարեկան՝ դպրոցէն փախած  
 սուսիկ-փուսիկ սենեակը կը կարդար,  
 ի՛նչ ընենք, Աստուածայ գրող  
 ստեղծեր է ասոր»,  
 մայրս իր հիւրին բացատրութիւն կու տար:  
 Այս անգամ իրապէս հիւանդ եմ, վայրըս մը  
 կոկորդիս փակեր փքեր է,  
 այդ դէպքէն՝ այս դէպքը ընդամէնը սանկ-նա՛նկ  
 երեսուն տարի անցեր է:

Ժան Վալժաններ խոնարհութիւն կ'ընեն թիվիէն,  
 մէկ չէ, երկու չէ, տասներե՛ք,  
 գիրքիս մէջ մէկ հատ էր, Քոպէթն այ մէկ հատ էր,  
 ե՛րբ եղան այսքան բազմադէմ:  
 Ամբողջ աշխարհը կը շրջին փառքով,  
 շպարուած, ցնցոտի մետաքսով,



Ես անօթի-ծարա՛ւ հանդիպեր էի իրենց  
Պէյրուֆի սենեակս կապտաւոր:

Անկէ ի վեր միլիոնաւոր գիրքեր գոցեցի,  
կեանքը դարձաւ կիրքի, միտքի կրակարան,  
Եւ աստուածներ տեսայ, տեսայ սրիկաներ,  
պատերազմներ ու խտի եւ վառող խաղաղութեան,  
բայց պատանութեան այդ սիրտ ճմլող գիրքը  
մնաց երանութեան շեմին նստած վիպասան:


Նայիրին եւ մամաս խոհանոցը միասին  
ճաշ կ'եփեն, կը խօսին քաղցրահամ.  
տասնըինգ եղաւ երկու օր առաջ,  
տրուած նուէրով  
կ'ուլէ «մուվիներու» եւ գրատուն երթալ  
գիրքեր, սիտիներ, ամսաթերթեր առնել,  
կը սարսափի մայրս քանիէրորդ անգամ  
«Մամայիդ պէս լուրջ գրող չըլլա՛ս»:  
Տպեր են իր գրութիւնը Պաղեստինեան Հարցի,  
իսկ անցեալ թիով մրցանակ տուին  
Ռոմիօ-Ճիլիէթի իր վերլուծման համար.  
«Սելքը ուրիշ բանի տուր, փաստաբա՛ն եղիր»  
մամաս իր կէտարեայ վախը կը պոռթկայ,  
բայց Նայիրին կը գրէ՝ քերթուած ու յօդուած,  
որքան գրէ՝ այնքան աւելի կը մեծնայ...

Ամէնէն առաջ ե՛ս վարմացեր եմ,  
թոնթոնջիկ պէպէքս կայներ է հիմա  
նիփնիհար, երկար մալերով,  
«Ե՞րբ մեծցար, Նայիրի՛»,  
պէյթունէ աչքերով կը խնդա՛յ...  
Շուտով պիտի գիտնայ որ՝ գիրէն աւելի  
մեծ է եւ դառն է  
եւ բուռն է կեանքը:  
Բայց ինչ կ'ըլլայ՝ տարբերէ՛ր իր կեանքի հմայքը,  
որ յարատեւ խնդայի՛ն այս պէյթունէ աչքերը:

Մարտ, 1997  
Փարամբու, Նիւ Ճըրզի

ՎԵՀԱՆՈՑԾ ԹԵՔԵԱՆ

Գ. ԱՐԷԼԵԱՆ



# ՊԵՅՐՈՒԹ



## ՍԻՐՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ամեն անգամ, որ տունեն նամրայ ելլէի Հայկազեան եր-  
թալու համար, հայրս ու մայրս կը սկսէին քարոզի: Մինչեւ որ  
մէկը միջակետի մը հասներ, միւսը նոր տող մը կը քանար...  
«Տղաս, չըլլայ, չըլլայ՝ որ Նահրի կողմերը երթաս...»: «Այդ  
Նահարի զայիմները կը սպաննեն քեզի, տղաս»...: «Հոն գործ  
չունիս. թեխասցիներէն աւելի վայրագ են անոնք»... «Այդ  
զայիմները իրարու դէմ կռուի կ'սլլեն եւ դուն կը գարնը-  
ւիս...»:

Քեսապի մէջ Նահրի այդ խուլիկանները հինէն ի վեր մեծ  
համրաւ կը վայելէին: Խորքին մէջ համագիւղացիներս կը  
սարսափէին այդ զայիմներէն, որոնք իրենց «սխրագործու-  
թիւններով» ահ ու սարսափ կը տարածէին ամեն կողմ:

Տակաւին Պէյրութ մեր առաջին այցելութեան ընթացքին  
իսկ, որոշ չափով նաշակած էինք Նահրի զայիմներուն մէկ  
ելոյթը:

Շարժապատկերի պիտի երթայինք: Երկաթէ կամուրջին  
տակ հանրակառփին կը սպասէինք: Յանկարծ կրակոցի ձայն  
մը ելաւ, որուն յաջորդեցին ուրիշներ...

—Փախէ՛ք, — ձայնեց Գարուն Նենէրս, — ասոնք մեր չըլլալիք  
զայիմներն են. հիմա հոս ալ կը հասնին. փախէ՛ք:

Շնչահատ տուն հասանք: Բաւական ժամանակ պէտք  
եղաւ կարենալ հանդարտելու համար:

—Ասոնք քանի մը օրը անգամ մը ասանկ «թաշխալա» մը  
կը հանեն. ո՛չ վախ ունին, ո՛չ ալ Աստուած: Թող երթան իրենց

նակտի քրտինքովը ապրին. չ'ըլլա՞ր: Աստուած իմ, աշխարհի վերջը եկեր է...

— Ինչո՞ւ հոս եկաք, աղբրկին, — մէջ մտաւ մայրս, — հոն՝ Բէսապ մնայի՞ք: Միշտ վախի մէջ ապրիլ կ'ըլլա՞յ:

— Ի՞նչ ընենք, աղջիկս. երիտասարդ տղաքը ի՞նչ ընեն գիւղը. ածո՞ւխ վառեն, երկրագործութի՞ւն ընեն. քաղաք կ'ուզեն, քաղա՞ք...

— Գոնէ մարդ չի վախճար գիւղին մէջ. այդ ի՞նչ յաղաղութիւն եւ ապահովութիւն է:

— Այդպէս է, աղջիկս, բայց հոս վարժուեցանք այլեւս. տղաքը ետ գիւղ չեն դառնար:

Պէյրութէն ստացած այդ շատ ժխտական պատկերը կը հալածէր զիս: Բնաւ տեսած չէի Նահրի գայիմ մը, բայց մտքիս մէջ էին միշտ. կը սարսափեցնէին զիս: Մայրս եւ հայրս ալ կը սարսափէին ատոնցմէ:

— Թող Աստուած ատոնց վերջը բերէ. ո՛չ վախ ունին, ոչ ալ գութ. մայր չունի՞ն ատոնք:

\*  
\* \*

59ի աշնան, երբ Պէյրութ կու գայի եւ կը դառնայի Հայկազեանի ուսանող, Նահրի գայիմները կ'ապրէին իրենց «նսկեղարը»: Լիբանանի քաղաքացիական պատերազմը, որ հազիւ քանի մը ամիս տեսած էր, ծնունդ տուած էր պէսպիսի գայիմներու: Անոնց քաղաքացիական կը շարունակէր տուրք տալ Լիբանանի հայութիւնը. յաճախ անմեղներն էին գոհերը:

Այս անուղղայ մարդիկը, իրենց արարքներով կը թունաւորէին պէյրութահայութեան առօրեան: Ոմանք նույնիսկ իրենք իրենց մասին «քանաստեղծութիւն» գրել կամ կենսագրութիւնները հրատարակել կու տային: Գաղափարական տարակարծութիւններով մէջտեղ եկած այս տարրերը տեղ մը հասած էին, ուր իրենց ենթադրել կը ջանային գաղափարաբանութեանց ղեկավարները. պարզապէս մոռցած էին գաղափարը եւ իրենց շահատակութիւններով կը փորձէին ապրիլ:

\*  
\* \*

Հակառակ անոնց առթած սարսափին եւ հակառակ ծնողներու յորդորներուն, դէպքերու դասաւորումով դարձայ այցելու դասատու Նահրի շրջանին մէջ:

Տակաւին ուսանող էի. հարկ էր որպէս պարտականու-

Քիւն դաս տալ, խորհրդատու ուսուցիչի մը հսկողութեան տակ: Դասաւորուեցաւ, որ դասապահներս շատցնեմ, որոշ վնարումի մը փոխարէն: Իրրիւ նորափետուր դասատու, բնականաբար ես ալ ինքզինքս կը կարծէի ամենագէտ եւ ամենա-իմաստուն մէկը...

Հայկազեանի մէջ, ինչ խօսք, որ գիւղէն եկած տղաքս շատ ժողովրդականութիւն չէինք վայելեր մեր դասընկերուհիներուն մօտ: Բախտաւոր չէինք. հոն բախտին ժպիտը վրադ կեդրոնացնելու համար հարկ էր բիչ մը լեցունկեկ գրպան. ինքնաշարժ ունենալը առաջին կարգի դրամագլուխ էր: Իսկ մենք յանախթոյլ կու տայինք, որ պարապ հանրակառքերը մեր առջեւն տողանցէին, որպէսզի 5 դահեկան խնայած ըլլայինք:

Հիմա սակայն, իրրիւ ուսուցիչ, ամսական պիտի գանձէի, այն ալ 100 Լիբանանեան ոսկի: Ի՞նչ մեծ գումար էր այդ: Տակաւին միեւնոյն դպրոցին մէջ ընկերներս դիմած էին նախաձեռնութեան մը. բացած էին գիշերային դպրոց, ուր դասաւանդելու հրաւիրուեցայ. հոն եւս 100 Լիբանանեան ոսկին կը սպասէր ինծի: Ինչ փոյթ, որ հալումաշ կ'ըլլայի: Գոլէնի դասերուս հետ՝ լիաժամ ուսուցչութիւն:

Բայց ինքզինքս բախտաւոր կը գգայի. է՛հ, այդ օրերուն 200 Լիբանանեան ոսկի ամսական առնելը: Հիմա որ գրպանիս մէջէն դրամը կ'անցներ, աւելի ինքնավստահ կը գգայի ես զիս: Է՛հ, եթէ Հայկազեանէն դասընկերուհիի մը շնորհքին չէի արժանանար, գոնէ իմ աշակերտուհիներէս պիտի չամտեսուէի: Այդպէս կը կարծէի...

\*  
\* \*

Պատմութեան դասարանին մէջ, շրջանաւարտ կարգէն ուշադրութիւնս գրաւեց, գրեթէ առաջին մէկ օրէն, խոշոր, աղուոր աչքերով, ներմակ մորթով աղջիկ մը: Դասի պահուն գրեթէ չէր խօսեր, բայց եւ այնպէս գրաւած էր սիրտս: Եւ իրրիւ մշակ, ինքզինքս արժանի կը գտնէի այսպէս գեղեցիկ վարձքի մը: Աւետարանն էր, որ կ'ըսէր, «Մշակը իր վարձքին արժանի է»...

Ես ինծի հաշիւ կ'ընէի, որ շատ զգուշաւորութեամբ պէտք էր շարժիլ, բնականաբար թէ՛ ինքզինքս եւ թէ՛ ալ այդ աղուոր աղջիկը չխայտառակելու համար: Եւ որքան շարաքները անցնէին, աւելի ու աւելի կը համոզուէի, որ կար ու չկար այդ չքնաղ էակը կար: Ա՛յո, որքան կ'ուրախանայի, երբ գէթ թեթեւ մը ժպտէր: Դասի պահուն կը ջանայի հարցումներովս աշա-

կերտները զգաստ վիճակի մէջ պահել: Բնականաբար կը ջանա-  
յի հարցումներէն քիչ մը աւելի քաժին համել իրեն, իր ձայնը  
լսելու, իր ակումները տեսնելու համար: Օ՛ր, ինչ անուշ եակ մըն  
էր սա: Ինչ փոյթ, եթէ յանախ չէր պատասխաներ. աչքերը վար  
կ'առնէր: Ես ուրախութիւն կը զգայի ներքնապէս, որովհետեւ  
կրնայի ուշադրութիւնս վրան կեդրոնացնել:

Քանի մը ամիս ետք, վստահելի պաշտօնակիցի մը հետ  
լուր դրկեցի իրեն: Պատասխանը ժխտական չէր, թէեւ դրական  
ալ չէր. «նայինք», ըսած էր իրր թէ: Պահանջած էր, որ իր վրայ  
ուշադրութիւն չկեդրոնացնէի, կասկածի տեղի չտալու հա-  
մար: Թէեւ դժուար բան էր պահանջքը, բայց ես պատրաստ էի  
թէկուզ եւ էվերեսք լնոն ի վեր մագլցիլ...: Զգուշութիւնը  
նուագագոյն գոհարերութիւն մը կրնար ըլլալ...

Իր գրաւորի թուղթերուն վրայ անունը չէր գրեր. փոքր  
շրջանակ մը կը գծէր, քանի մը փոքր հարուածներ կը կազմէին  
իւր անունը՝ Արփիկ: Անոր վրայ կ'աւելցուէր մականունը:  
Սկիզբը կը կարծէի, որ միայն իմ դասանիւթիս էր, որ այդպէս  
կ'ընէր. եւ որքա՛ն կ'երջանկանայի այդ ծածկագիր անունով:  
Յետոյ հաստատեցի, որ ուրիշ ուսուցիչներու եւսնոյնը կ'ընէր.  
Է՛հ, պէտք էր խանդոտիլ, ի՞նչ կար որ. ես վստահ էի, կը  
զգայի, որ ինք եւս կը սիրէր զիս: Բոլորէն առաջ իր թուղթն էր,  
որ կը սրբագրէի, ապա սրբագրուած թերթը կը դնէի կուրծ-  
քիս, սրտիս վրայ: Որքա՛ն ջերմութիւն կը զգայի այդ թուղ-  
թէն...

Թուղթին բովանդակութիւնը շատ ալ կարեւոր չէր. ի՞նչ  
կապ կար Պիզմարէի, Տիգրայելիի եւ մեր սիրոյն միջեւ: Ի՞նչ  
վնաս, եթէ ինք նափուտնը յաղթութեան դափնեպսակով վե-  
րադարձներ մաթերուի քակատամարտէն. կամ Պիզմարէ՝  
փոխան Գերմանիոյ, միացնելու ելլէր Բրիտանիան եւ կամ  
Ռուսիան: Իսկ Մեթերնիխը եթէ վիճարհա թագուհիին համար  
վարչապետ նշանակուած ըլլար իմ չմնաղ աշակերտուհիին  
կողմէ, աշխարհի վե՞րջը կու գար:

Իմ իրաւունքս էր, բնականաբար, այդ իրաւունքը ես  
իմծի վերապահած էի աղուոր, ինքուրն կերպով վարձատել  
զինք: Եւ իր իրաւունքէն բան չէի գեղջեր. ընդհակառակն...

Օր մը գրաւորի թերթին վրայ անունը գրած էր առանց  
նկարի. չէ, այդպէս կարելի չէր. սիրտս դող ելաւ: Նաեւ գայ-  
րացայ: Կրնա՞ր ըլլալ, որ միտքը փոխած էր. չէ՞ր սիրեր  
զիս...: Աստուա՛ծ իմ: Ելայ եւ ես իր անունը խորհրդանշող  
նկարը գծեցի...: Անկէ ետք միշտ գծեց իր անունը: Օ՛րս,  
ուրեմն դեռ կը սիրէր զիս, չէր նեղուած ինձմէ:

Ուրիշ օր մը լուր դրկած էր իմ ընկեր դասատուին հետ, որ պետք էր աւելի գգոյշ ըլլայի. պետք չէր որ նայուածքս վրան սեւեռէի. կրնայիմք բռնուիլ երկուքս ալ...: Է՛հ, շա՛տ էր քիչ մը գոհողութիւն, այսքան մեծ սէր մը փրկելու համար: Եւ սա ինքնին փաստերուն մեծագոյնը չէ՞ր, որ ինք եւս կը սիրէր զիս: Այլապէս ի՞նչ բացատրութիւն տալ իր պահանջին... Արդէն տարեկերջը մօտ էր. յաւելեալ գոհողութիւն մը վնաս չէր տար:

\*  
\* \*

Օր մը իր դասարանէն քանի մը աղջիկներ ներկայացան գրաւորի մը յետաձգումը խնդրելու համար: Ինք հետեւեցին չէր: Ի՞նչ հարկ կը մնար այդ խնդրանքին ընթացք տալու: Թո՞ղ զլուսնին քարին զարնէին եւ գրաւորը ընէին: Հագար ու մէկ փորձ կ'ընէին աղջիկները. մին կը գովէր զիս, ուրիշ մը իրենց ծանրաբեռնութիւնը կը յիշէր. ուրիշ մը այլ բան. հագար ու մէկ «նիվէ», իսկ եւ «քաջարար» կը տոկայի. բերդը չէր իյնար: «Նիշ պետք է հասցնել. թէ՛ իմ նիւթս կարեւոր էր, սանկ էր, սանկ էր»...: Բայց միւս կողմէ իւրովի կը մտածէի, որ եթէ անպիտան աղջիկը ինք եկած ըլլար, ո՛չ միայն կը յետաձգէի, այլեւ կը ջնջէի այդ չըլլալի՜ք գրաւորը. ի՞նչ էր եղածը որ. գրաւոր մը աւելի, գրաւոր մը պակաս, աշխարհին վերջը չէր գար...

Վերջապէս երեւցաւ երազներուս եւ նաեւ ջիղերուս թագուհին: Սա եւս միացաւ պահանջատիրուհիներու «երգչախումբին»...: Ես իբր թէ տեղի չէի տար. կ'ուզէի որ խօսէր, խօսէր հետս...

—Պարոն, ի՞նչ կ'ըլլաք. շատ, շա՛տ խնդուած ենք. մի մերժեք մեզ, պարոն: Միջիննիս կրնայ ցածնալ, պարոն, հանի՛ւ...

Սիրտ պետք էր, որ դիմանար. թէկուզ եւ կրանիտ ըլլար մարդ, չէր կրնար տոկալ: Մտէս կ'ըսէի, կրկնէ, կրկնէ, օխ, որքա՛ն անուշ կը հնչէ խնդրանքդ, հոգի՛ւ...

Բերդին գլխաւոր դարպասը ինքնաբերաբար կը բացուէր, եւ ես արդէն իսկ կը յանձնուէի զիս պաշարող հերոսուհիներու...: Վերջապէս, բաւական նազ ընելէ ետք, ձեռք գտայ եւ յետաձգեցի գրաւորը...: Բնականաբար արժանացայ քիչ մը յաւելեալ գովասանքներու, որոնք չեմ կարծեր, որ անկեղծ ըլլային: Ինչ փոյթ. կարեւորը այն էր, որ հրեշտակս ուղղակի հետս խօսած էր. եւ իր բերնէն ելած խօսքերը աւելի անուշ կը

հնչելին, քան Պեթիովենի մը կամ Խաչատուրեանի մը երածը՝ տուփունը...: Միայն մէկ վերապահութիւն՝ անպիտանը ամեն անգամ, որ պարոնը ըսէր, բնականաբար յոգնակիով կը խօսէր, ա՛խ, եթէ անունս տալով խօսէր, թէկուզ եւ հզակիով...:

Ուրիշ օր դարձեալ քանի մը աղջիկներ եկան ինչու. դժգոհ էին իրենց նիշերէն:

—Պարոն, պարոն, այնքան կը սերտենք եւ մեզի պէտք եղածին պէս նիշ չէք տար. ի՞նչ ընենք. ինչո՞ւ մեր այսինչ դասընկերուհիին բարձր նիշ կու տաք. ան դասարանը կրկնած է...: Ինքն ալ կը զարմանայ, թէ ինչո՞ւ այդքան բարձր նիշ կ'առնէ ձեր նիւթին:

Սրտահատորիս դասարան կրկնելը լաւ լուր մը չէր, իսկ սա աղջիկները քիթս բռնած էին զիս. պէտք էր ձերբազատուիլ: Կը զգայի, որ մինչեւ ականջներուս ծայրերը կակաչ կտրած էի, սա իմ մեծագոյն շնորհքն էր. ամեն առիթի կարմըրիլ...: Ժամանակ մը մինչեւ իսկ Կարմիր պարոնը տիտղոսին արժանացած էի:

Մէկ միջոց կար միայն: Պէտք էր զօրաւոր դիրքը դիմագրաւել սա բողոքող աղջիկներու: Ուստի որքան որ կրնայի բարկացայ իրենց. ջանացի խայտառակել եւ նամբու դրի: Գլուխնին կախ՝ գացին իրենց բանին:

Բայց արդեօ՞ք բաներ մը կը կասկածէին: Գլուխը քարի՛ն, ինչ ուզէր թող ան պատահէր. ես իմ սիրոյս տերն էի, թէեւ ջանացի աւելի զգոյշ ըլլալ անկէ ետք...:

\*  
\* \*

Գարունը հանելի էր: Տնօրէնութեան դիմեցի պատմութեան դասարանի աշակերտներս Պապիւք պտոյտի տանելու համար: Գործնական քայլ մըն էր. գէթ բերդ ըսուած բանը տեսնէին աշակերտներս: Սակայն տնօրէնը կը դժկամակերտակաւ ինքն ինքն մտքներուն մէջ թարմ էր Պեթիովենի աղէտը, որուն գոհ գացած էին Կեդր. Բարձ. Վարժարանի աւարտական կարգի աշակերտներուն մեծ մասը եւ նաեւ կարգ մը ուսուցչուհիներ: Վերջ ի վերջոյ կարելի եղաւ արտօնութիւն ձեռք բերել:

Մասնակից աշակերտ-աշակերտուհիները չափազանց գոհ մնացին պտոյտի գաղափարէն:

Փոխ գտած էի նկարչական քամերա մը: Գէթ այդ ձեռով պիտի տիրանայի սիրուհիիս նկարին: Պապիւքի մուտքին, մինչ քոյր աշակերտները կը փութային բերդ մտնել, ինք,

ընկերուհիի մը հետ, մէկ կողմ կեցած էր. երբ հարց տուի, թէ ինչո՞ւ ներս չէին անցնել, պատասխանեցին, որ դրամ չունէին:

Այնքան ուրախութեամբ եւ ցնծալով վճարեցի իրենց մուտքի տումսերուն համար եւ Պապապէի գլխաւոր դարպասին առջեւ առաջին նկարը նկարեցի: Որքա՞ն երջանիկ էի: Բերդը այցելելէ ետք ուղղուեցանք Այննար. հոն պիտի գալէինք: Քանի մը առիթներով նկարեցի զինք. չէր նեղուեր. ասկէ աւելի մեծ փաստ ուրկէ՞ գտնել...

Այննարի մէջ վաղեմի ծանօթի մը բակէն վարդի աղուոր փունջ մը կազմեցի: Փունջ կազմելը չէր հարցը: Ինչպէ՞ս տալ իրեն: Այլ աշակերտուհիի մը, որ ընկերոջս անպաշտօն նշանածն էր, տուի փունջը, պատուիրելով, որ տար սրտահատորիս: Աղջիկը ուղղակի շշմեցաւ.

— Ի՞նչ կ'ըսէք, պարոն. բնաւ մտքէս չէր անցնել. ես կը կարծէի, որ 10րդի Սալիմ է ձեր սիրուհին. սա ի՞նչ գաղտնապահութիւն է:

Աղեփսանդը Մեծը այդքան խոշոր յարթանակ ապահուած չէր վստահարար...: Սէրս գաղտնի էր մնացել...

— Ի՞նչ Սալիմ, ի՞նչ Սիլվա...: Դուն սա փունջը բոլոր դասընկերուհիիդ տուր:

Այլ աղջիկներ մէկական վարդ խնդրեցին. ես չէի փունջին տէրը. իսկ սա աղջիկը պատին մէջ տեղէն ելլելով աղջկանս տուաւ փունջը: Կ'ուզէի կարդալ դէմքին արտայայտութիւնը: Բայց չէի համարձակել ետին դառնալ. դարձեալ կակաչ կտրած էի...: Շունչս կը դժուարանար...: Կը զգայի, որ իր սիրուն դէմքը թթուեցուցած էր. բայց ի՞նչ կար. սա յորդառատ սէրս կարելի չէր պարտկել...

\*  
\* \*

Տարեկանը կը մօտենար: Ուրախ էի. վերջապէս պիտի կարենայի ազատ-համարձակ սէր առաջարկել աղջկանս. բայց միւս կողմէ հեռաւոր անորոշութիւն մը կը սեղմէր սիրտս...: Եթէ փոխադարձ չէ՞ սա զգացումը...: Եթէ ինք աշակերտուհի մնար, իսկ ես՝ ուսուցիչ, գոնէ գաղտնաբար զինք պիտի շարունակէի սիրել...: Թող տարիներով աշակերտուհի մնար, միայն թէ սէրս բարի չգարնուէր:

Խառն, շատ խառն էին զգացումներս: Մերթ կը ցաւէի տարեկանին համար. մերթ կ'ուրախանայի: Կը հաշուէի, որ այլեւս պէտք պիտի չմնար Ա. Նշանի կից Ա. զգային Երաժշտա-



նոցին շուրջ սլփտալ շաքաթը մէկ-երկու անգամ, ուր դաս առնելու կու գար: Այդ օրերուն, երբ ինք երաժշտանոց կու գար, Մորիս Պարէս փողոցը ինծի համար կը դառնար աշխարհի ամենափայլուն տեղը: Գէթ քանի մը երկվայրկեանով զինք տեսնելու առիթը մեծագոյն հաւոյժն էր ինծի համար: Հասկա իր բարեբօլը...

Միջոցառոցական ելոյթի մը ընթացքին ինք եւս ելոյթ պիտի ունենար: «Գալուստ Կիլպէնկեան» սրահին մէջ սրտատրոփ կը սպասէի իր հերթին: Վերջապէս բեմ բարձրացաւ. հարկ կա՞յ ըսելու, թէ ինքն էր ամենասքանչելի մասնակիցը: Շատ տարօրինակ փող մը ունէր ձեռքին մէջ. առաջին անգամն էր, որ կը տեսնէի: «Սանթա Լուչիա»ն վերացուցած էր գիւ. կը զգայի կակաչնալս...: Որքա՞նք երջանիկ էի. թող ժամերով նուագէր, փոյթ չէ թէ նոյն եղանակը, միայն թէ իր ձայնը լսցնէր ականջներս: Հագիւ ինք բեմէն վար իջած, դուրս ելայ սրահէն...: Գինովցած էի...: Սանթա Լուչիա՞... Սանթա Լուչիա՞...

\*  
\* \*

Ամալկերջի բնութիւններն ալ ժամանեցին. ի՞նչ հարկ կար այդքան անապարելու. թող դեռ մէկ-երկու ամիս ալ մնայինք...: Վերջին անգամն էր, որ իր թուղթը պիտի սրբագրէի...: Դող մը պատած էր գիւ. սրբագրեցի եւ, բնականաբար, շատ լաւ վարձատրեցի զինք: Ապա թուղթը կուրծքիս վրայ պահեցի...: Այնքա՞նք հանելի էր ստոր աղթած ջերմութիւնը: Իսկ այդ բոլորէն ետք, ես էի, որ պիտի արժանանայի նիշի, սիրո՞յ նիշին: Մերթ ինքնավստահ, մերթ երկչոտ՝ կը սպասէի, որ ամէն բան աւարտէր եւ հրաւիրէի զինք գրօսավայրի մը մէջ, միասնաբար բան մը խմէինք եւ ամէն, ամէն բան դասաւորէինք: Անկէ ետք արձակ-համարձակ զիրար պիտի սիրէինք: Նոյնիսկ կրնայի անպաշտօն կերպով ձեռքն ալ խնդրել ծնողքէն: Եւ վստահաբար տարի մը եւս պիտի սպասէր ինծի, մինչեւ որ աւարտէի գոլէնի ուսումս:

Օ՞ր, երազանքս ի կատար պիտի ելլէր. եւ ուր որ էր երջանկութիւնը պիտի բռնէր մեր օձիքներէն, բնաւ թող չտալու համար: Պիտի տիրանայի տիեզերքի ամենատաք ու գեղեցիկ աստղին...: Ո՞ր պիտի փախչէր սա երջանկութիւն ըսածը...

Նիշերը յանձնեցի տնօրէնին: Ուրախ էի: Այդ օր լուր պիտի դրկէի իրեն:

Ծս հարիւր առ հարիւր վստահ էի, որ սէրս միակողմանի չէր: Նոյնիսկ կը կարծէի, որ Արփիկը համոզելէ աւելի դժուար պիտի ըլլար պարագաներս համոզել...

Հայրս հարց պիտի տար, թէ հարո՞ւստ էր սէրս: Որոշ քարեկեցութեանէ մը ետք, ընտանիքս նիւթական շատ լուրջ դժուարութեանց մատնուած էր: Իսկ հայրս կը սիրէր հարստութիւնը: Ատոր համար իր հասկնալ ուզած առաջին բանը, ապագայ կողակիցիս գծով, պիտի ըլլար անոր հարուստ կամ աղքատ ըլլալը: Յանախ թելադրած էր ինծի հարուստ աղջիկ մը գտնել, ինչ որ սրտովս չէր եղած բնաւ: Իսկ սա աղջկան ո՛չ տունը տեսած էի, ոչ ալ անոր նիւթական կացութեանը ծանօթ էի. ես գի՛նք կը սիրէի:

Մայրս հարց պիտի տար անոր մօրը մասին:

—Տղաս, եթէ մայրը շնորհե՞նով չէ, չըլլա՛յ որ առնես: Նախ մայրը տես:

Ծս ի՞նչ ընէի մայրը. կարեւորը ի՛նքն էր:

Իսկ մեր փոքր գիւղին մէջ, երբ լուրը տարածուէր, որքան լեզու թափել հարկ պիտի ըլլար:

Չնիսկ պառաւը, թանին դոյլը երկարելէ ետք ինծի, երկու թեւերը մէջքին պիտի հանգրձէր ու յանդիմանական շեշտով մը ըսէր.

—Հոս աղջի՞կ չկայ. դուք ուսնայններդ այսպէս էք. կուտը հոս կ'ուտէք, հաւկիթը քաղաքը կ'ածէք:

Գիւղապետը իր կարգին պիտի եեզներ գիս.

—Հապա՛, եթէ ցած պատէ ցատկես, չ'ըլլար: Քաղաքէն աղջիկ պիտի առնես, որ բերնիդ համը առնես: Ծօ՛, դուն պէլրութեան կնիկիդ «համբան-փոտրան» պիտի կրնա՞ս հասցնել...

Կը կարծէի, որ սիրած աղջիկս համոզուած-վերջացած էր. դժուարը ծնողներս եւ համագիւղացիներս համոզելն էր... Կը կարծէի՛...

\*  
\* \*

Բակին մէջ կը մնային աշակերտներ. յատկապէս աւարական դասարանի տղաքը: Իրենց բով կեցած էի: Կը սպասէի, որ ինք եւս գար, բայց չէր գար. վա՛յ, կասկածը օձի մը պէս կը սողոսկէր սրտու ներս: Վատ բան չէ՞ր սա...

Տղոցմէ մէկը մօտեցաւ ինծի.

—Պարոն, բան մը պիտի ըսեմ ձեզի...

—Ըսէ՛, ա՛յ տղայ:

Հիմա չէ, պարոն, յետոյ կ'ըսեմ:  
 Տղան կը դժուարանար. չէր համարձակեր խօսիլ:  
 Սպասելու ի՞նչ պէտք կայ. ըսէ՛ ըսելիքդ:  
 Տղան կարմրեցաւ, դեղնեցաւ. թուր կլլեց, եւ վերջապէս  
 դուրս տուաւ. յայտնի էր, որ դժուարին առաջնութիւնը կը  
 ցնշէր գինք...  
 Պարոն, դուն Արփիկին կը սիրես եղբր...  
 Ռ՞վ ըսաւ Ֆեզի, անպիտան...  
 Կարեւոր չէ, բայց ձեռքդ պիտի քաշես անկէ. ան տէր  
 ունի:  
 Հիմա եօթնապատիկ կակաչցած էի...  
 Ռ՞վ է եղբր տէրը:  
 Չեմ կրնար ըսել, պարոն, մի ստիպեր ինձի. բայց տէրը  
 կ'ըսէ, որ եթէ ձեռքդ չքաշես... դուն գիտես...  
 Վա՛յ, ուրեմն այսպէս: Ամբողջ ինը ամիս իմ գաղտնի  
 սերս պարապ վախտի խաղալիք է եղեր. վայ ախմա՛խ, ըսի ես  
 ինձի: Բայց տակաւին չէի համոզուեր: Գտայ իրեն վարդի  
 փունջը տանող աղջիկը. ուզեցի որ ժամադրութիւն մը առ-  
 նէր:  
 Պարոն, ինք ձեզի չի սիրեր: Մեղք էք, պարապի մի  
 յոգնիք:  
 Պնդումիս վրայ գնաց եւ խօսեցաւ հետը. տեսակցութիւն  
 մըն էր պահանջածս, բացատրութեան համար:  
 Պարոն, բնաւ չ'ուզեր ձեր հետ տեսնուիլ. կը մերժէ,  
 կտրուկ ձեռով...  
 Հիմա հոս էր, որ գլուխը կը ցցէր նահրցի գայիմի կերպա-  
 րը: Սկսայ ինքզինքս այպանել.  
 Ա՛յ տղայ, քանի՞ գլուխ ունիս. թերեւս այս աղջիկը  
 սիրողը անոնցմէ մէկն է...: Թերեւս հայրը գոյգ ատրճանակ-  
 ներով գայիմ մըն է, կամ՝ քեռիները գայիմութեան կաթէն  
 խմած են...: Գու ինչո՞ւ է պէտք այս կողմերէն աղջիկ սի-  
 րելը...  
 Ես ինձի աւանակ ըսելն ալ շատ կը գտնէի:

\*  
 \* \*

Հիմա, շարժապատկերի ֆիլմի պէս, ետ դարձ կ'ընէի  
 անցնող մէկ տարեշրջանը. գրեթէ առաջին մէկ օրէն աչքիս  
 ինկած էր եւ «խածած» սիրտս: Ամբողջ տարեշրջան մը ուրիշ  
 աղջիկ չէի տեսած, ինքն էր, որ տիրապետած էր սրտիս եւ  
 աչքերուս, իսկ հիմա այսպէս...

Թերեւս վայրկեան առաջ այդ տեղէն հեռանալ էր պետք. եթէ չհեռանայի, հաւանաբար դիմացս ցցուէր ծուռ նայուած-  
 քով գայիմ մը, որ իր ամառնային շապիկին տակէն ցոյց տար  
 իր գոյգ ատրնանակները: Թէեւ գայիմի մտապատկերը կը  
 վրդովեցնէր զիս, բայց նաեւ մինչ այդ այդքան արիութիւն չէի  
 տեսած մէջս: Ի՞նչ գայիմ, ի՞նչ քան. ուզողը թող ուզածը  
 ընէր...: Ես սիրոյս տէրն էի: Բայց յետոյ կը մտածէի, քանի ինք  
 զիս չի սիրեր, ի՞նչ հարկ կար արկածախնդրութեան:

Որքան անհամբերութեամբ սպասած էի ամառվերջի հան-  
 դեսին, երբ ինք եւս բեմին վրայ պիտի բարձրանար հարսի մը  
 պէս: Մէկ մաղթանք ունեցած էի, ամիսներով. երազած էի, որ  
 աղջիկներուն ներմակ հագուստ հագցնէին, որպէսզի տես-  
 նէի, թէ հարսնութիւնը որքան պիտի վայելէր իրեն: Երազած  
 էի, որ անունը տալով աղուոր մը պիտի սեղմէի ձեռքը. եւ  
 վստահեցուցած էի ես զիս, որ անմամն աղջիկս պիտի ժպտէր  
 ինծի, եւ այդ ձեռով իր հաւանութիւնը սուած պիտի ըլլար...:  
 Իսկ հիմա'...

Տաջորդող քանի մը օրերուն սա գայիմի մտապատկերը  
 չէր հեռանար երեւակայութենէս. ես ինծի կը վերլուծէի երե-  
 տոյթները: Հիմա կը յիշէի հօրս եւ մօրս կրկնուող պատուերը՝

—Տղաս, նահրի մէջ դուն քան— գործ չունիս...  
 Եւ ես չէի կրցած ըմբռնել այդ. նահրցի սիրուհիս այդպէս  
 խայտառակ ըրած էր զիս. տակաւին, եթէ գոյգ ատրնանակնե-  
 րով գայիմ մըն ալ դրկէր դիմս...

Ամառվերջի հանդեսին սպասելը աւելորդ էր. սիրտ պէտք  
 էր ունենալ՝ իր սիրած տղան բովը տեսնելու համար...: Ձէ,  
 լաւագոյնն էր Գեսայ հասնիլ օր առաջ:

\*  
 \* \*

Քանի մը շաբաթ ետք, կը լսէի նշանտուփի լուրը՝ ծանօթ  
 երիտասարդի մը հետ. սա արուեստագէտ տղայ էր. դրամը  
 առատ. նոյնիսկ ինքնաշարժ ունէր: Ծօ, ախմախ, կ'այսպանէի  
 ինքզինքս, քու ինչի՞դ...

Տակաւին այլ ողորդութիւն մըն ալ վերապահուած էր  
 ինծի: Այն օրը, որ այդ տղան, սատանայէ մը աւելի տգեղ,  
 հաղորդած էր գոյժի պէս լուրը, մտամոլոր շունչս առած էի  
 Հայկազեան: Հոն եւս ուսանողները ցրուելու սկսած էին:  
 Հագիւ Ուէպ շէնքին պատշգամը հասած, դիմացս ելաւ հայկա-  
 կան ակումբի վարչական ընկերուհիներէս մէկը, թուխիկ ու  
 համակրելի աղջիկ մը:

-Գիտե՞ս,- ըսաւ,- ամէն օր հոս սպասած եմ քու վերադարձին...

Մեղա՛յ Տէր. սա ի՞նչ պատուհաս էր: Այն Արմիկը, որուն հետ մեր ակմբային աշխատանքները ծրագրած էինք, պտոյտներ կազմակերպած, «Նաւասարդ»ը խմբագրած, ամէն օր վերադարձիս սպասած ըլլար, եւ ես նկատած չըլլայի այդ աղուոր աղջկան սէրը. որքա՛ն կուրցուցած էր զիս այն միւսը... Տէր իմ, փրկութեան համար Ռաուշէի ծովախորշին դիմողները արդեօ՞ք ինծի քեւ կուրցածները չէին...

Ականջներուս չէի հաւատացած:

-Ի՞նչ կ'ըսես, ջան...

-Բան չկայ, մոռցիր...

Կ'ուզէի, որ դարձեալ կրկնէր սա կախարդական քանի մը խօսքերը: Պնդումներս սակայն ոչ մէկ արդիւնք տուին:

\*  
\* \*

Վերամուտին արդէն իսկ Ամերիկա կը մեկնէր թուլսիկը...

Զմրան, այնքա՛ն աղուոր լուր մը առի. գարունէն շատ աւելի լաւ լուր մը: Նախկին սիրուհիս ետ էր եղած...

Սրտանց ուրախացայ: Արդեօ՞ք նորէն փորձելու էր, մա՜նաւանդ որ գայիմի մտապատկեր ա'լ չկար հիմա...

Նայն Մորիս Պարէս փողոցն ի վար կը շտապէի: Դժուարութիւն մը սիրտս սեղմած էր: Պէտք էր Պուրն հասնիլ, ապա անկէ հիւանդանոց: Անապարանքիս մէջ, նշմարեցի զինք. վարէն կու գար: Է՛հ, հիմա վրէժս պիտի լուծէի: Անցած ըլլայ, օրիորդ, պիտի ըսէի, ու քալէի: Մօտեցանք իրարու. զգացի կակաչնալս...: Լեզուս չէր դառնար բերնիս մէջ: Աստուած իմ:

-Բարի լոյս, պարոն,- ըսաւ ժպտուն:

-Բարի լոյս,- հագիւ կրցայ արտաբերել...

-Ինչպէ՞ս էք...

-Շատ լաւ եմ,- ըսի ու արդէն իսկ հեռացած էի իրմէ...

Մեղա՛յ, ինչո՞ւ չկրցայ կանգնիլ եւ քանի մը ծանր խօսք ըսել իրեն. կամ ո՞վ գիտէ, եթէ երբեք կանգ առնէի եւ խօսքի բռնուէիմք...: Ես՝ որ այնքան անհամբերութեամբ երագած էի հետը խօսիլ...: Ի՞նչ վերապահուած պիտի ըլլար արդեօք: Զեղաւ:

Գլխիկոր եւ ալեկոծ գլուխով կը քալէի: Երբեմնի «Քափի-թօլ» շարժապատկերի սրահին դրան դիմաց կանգ առի: Ետ

դարձայ՝ տեսնելու համար այն աղջիկը, որ սիրտս գրաւած էր: Մոխրագոյն գեղեցիկ վերարկուի մը մէջ փաթթուած, կը բարձրանար փողոցն ի վեր...

Ձէի կրնար որոշել, թէ լա՞ւ էի ըրած, թէ գէշ: Ինչո՞ւ կանգ չէի առած. ինչո՞ւ խօսքի չէի բռնուած: Ով գիտէ, թերեւս վրէժս լուծէի. կամ ալ ով գիտէ, թերեւս մեր կեանքերուն մէկ նոր էջը արձանագրէիմք, միասնաբար...

Ձեմ յիշեր, թէ ինչպէ՞ս Պուրն հասայ: Որքա՞ն անուշ հնչած էր անպիտանին «բարի լոյսը», որքա՞ն քաղցրահնչիւն էր «Ինչպէ՞ս էք, պարոն»ը...: Անպիտա՞ն աղջիկ...

Անկէ ետք մերթ-անցած էի իրենց թաղէն. կարծէ՛ք կ'ուզէի դարձեալ ու դարձեալ տեսնել զինք: Ձէի հասկնար, վրէժի՞՞ հարց էր, թէ սիրոյ...: Բայց ընաւ չտեսայ զինք...

\*  
\* \*

Բարեկամի մը տունը, կէսօրուան համեղ ու ծանր ցաշէ մը ետք, ըստ իմ ամենաբարի սովորութեանս, կը նիրհէի: Տան փոքր տղան դուռը բանալէ ետք ձայնեց.

—Հիւր եկաւ, հի՛ւր...  
Արթնցայ: Սա աներես հիւրն ալ թող ինչ մը ուշ գար. թող ընաւ չգար. ի՞նչ կ'ըլլար:

Տանտէրը ծանօթացուց զիս...: Հիւրը անծանօթ մը չէր. նախկին ծանօթ մը Հայկազեանի օրերէն: Բովիմն ալ՝ տիկինը:

—Իսկ ալ կը քանչնամ պարոնը, ուրիշ բանով մը...  
Ի՞նչ բանով պիտի քանչնուէի սա անծանօթ տիկնոջ կողմէ:

—Պարոն, չնանչցա՞ք զիս:  
—Վստահ եմ, որ աշակերտուիի եղած ըլլալու ես ինծի:  
—Ո՛չ, ո՛չ, պարոն, ուրիշ բանով մը կը քանչնամ ձեզ:

Այդքան ալ կարեւոր ըլլալու չէր այդ «ուրիշ բանը». ի՞նչ կար:

Այլ նիւթերու անցանք. ամէն բանի մասին խօսեցանք, — քաղաքականութիւն, քանի որ դժուարութիւններ, գործի մասին, գաւակներու մասին, նախագահական ընտրութեանց մասին, հայրենիքի մասին...

Ինչ բանի մասին ալ դառնար խօսակցութիւնը, չէի կրնար չնկատել, որ ինծի անծանօթ սա դիմացի տիկինը փուշերու վրայ նստած էր. չէր կրնար համդարս մնալ. կ'ուզէր, որ յիշէի զինք:

Իսկ իմ յիշողութիւնս, աւելի միշդ՝ մոռացկոտութիւնս առասպելական բան էր: Հագարաւոր աշակերտներ ունեցած էի Այննար, Պէյրութ, Բուէյթ, Շքորա...: Ո՞ր մէկը յիշել ասոնց մէջ: Յանախ պատահած էր, որ մայթի մը վրայ տղամարդիկ կամ տիկիները բարեւէին զիս եւ զգալով, որ չեմ յիշած զիրենք, անմիջապէս տուած էին իրենց անունը, դժուարին կացութենէ փրկելով զիս: Իսկ սա կինը, կը տագնապէր, յայտնի էր, որ կ'ուզէր անպայմանօրէն մանչնայի զինք:

Եւ ուղեղս մշուշուած էր. աւելի միշդը՝ ապշուածութիւնը պաշարած էր զիս: Աստուած իմ, ո՞վ էր սա կինը. ինչո՞ւ կ'ուզէր, որ յիշէի զինք:

— Աւ, տիկին, հանիս աղջիկութեանդ մականունը տուր...

Եւ քառորդ դար առաջ գրաւոր իր թերթերուն վրայի անունն էր, որ դուրս կու գար իր շրթներէն:

Կարծեմ թէ կայծակնահար եղողները կ'ըլլան այնպէս՝ ինչպէս որ ես եղայ այդ պահուն:

Այն աղջիկը, որ օրօրած էր իմ խենթ երագներս, հիմա հոս էր, դիմացս. բոլորովին անսպասելի վայրի մը մէջ: Հասուն կին մըն էր եւ իր աղուորութենէն բան չէր զիջած, ընդհակառակն: Իսկ ես չէի կրցած մանչնալ զինք: Այդ ի՞նչ մշուշ էր, որ պատած էր ուղեղս...

Զեմ գիտեր, թէ ի՞նչ բան յօսեցայ այդ պահուն: Բանի մը վայրկեան ետք զգացի եօթնապատիկ կակաչնալս: Կինս զգաց հեւքս:

— Ինչո՞ւ այդպէս կը հեւաս, մարդ, մեղա՛յ Տէր. հիմա շունչդ պիտի կենայ կարծես:

— Բան չկայ, բան չկայ: Այս Պէյրութի օդին չեմ վարժուած. յետոյ այս միտիւիէն եւ օդին...

Որքան փորձէի ծածկել միտքս, այնքան աւելի կը խրէի անորոշութեան մէջ:

Խոհանոց գնաց կինս: Այնտեղէն կանչեց զիս:

— Երեւի այս է այնքան հոլոված Արփիկը:

Յանցանքի վրայ բռնուած աշակերտի պէս կրցայ այդ մը մը մը մը:

Որքան մեծ էր կնոջս յաղթանակը: Առիթով մը յիշած էի իրեն հին օրերու արկածախնդրութիւնս, առանց երբեք մանրամասնութեանց մէջ մտնելու: Ուզած էր նկարը տեսնել. ցոյց չէի տուած: Եւ հիմա, ահաասիկ կը տեսնէր իր երբեմնի անծանօթ ախոյեանուհին:

Որքան կը ջանայի սա քրտինք ըսուած բանը պարտկել, չէր ըլլար: Թուղթէ թաշկիմակները կը հալէին, իսկ քրտինքս կը հոսէր անընդհատ:

Իսկ իմ երբեմնի գեղուհին կը ժպտեր ու կը ժպտեր:  
Կարծե՛ք յաղթանակի ժպիտներ էին ատումք. այդպէս կը մեկնա-  
բանէի ես:

—Այս որքա՛ն փոքր է եղեր սա աշխարհը. որքա՛ն կլոր է  
եղեր ան,— կը կրկնէր:

Բաւական խօսակցեցանք բոլորով: Հիմա քրտինքներս  
դադրած էին. ոչ թէ անակնկալը իր գորութիւնը կորսնցուցած  
էր, այլ երեսի թէ հեղուկ չէր մնացած մէջս...

Պէտք էր մեկնիլ: Պարտաւորութիւններ ունէինք կատա-  
րելիք: Պէտք էր իջնել այդ օրերուն ահռելի բան էր: Պէտք էր  
յատուկ առիթներով քաղաք իջնել միայն: Եւ կարելի չէր պահ  
մը յաւերժացնել, որքան ալ փափաքէի ըլլար:


\*  
\* \*

Քանի մը տարի առաջ, Ամերիկա եմ: Հոն նոր հրատարա-  
կած գիրքիս գինեւոցը պիտի կատարուի: Սրահին մուտքին  
կը սպասեմ հանդիսականներուն: Յանկարծ հոն կը ժամանէ  
հին օրերու երագներու թագուհին...: Հա՛րկ կայ ըսելու, որ  
քրտինքներս նորէն սկսան հոսիլ...: Կը մօտենայ եւ երեսուն  
տարի ետք, առաջին եւ հաւանաբար նաեւ վերջին համբոյրնե-  
րու փոխանակումը կը կատարենք...: Տիկինս հոն չէ. այլապէս  
պիտի ըսէր, այդ ի՞նչ քրտինք էր, մարդս...

ԳԵՌՐԳ ԱՔԷԼԵԱՆ







Ն. ՉԱՐՄՈՒՏԵԱՆ

— Գ Ի Ր Ք Ե Ր ՈՒ —  
 — Ն Ա Հ Ա Տ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն Ը —

*«Ան որ կը սպաննէ մարդ մը, կը սպաննէ Աստուծոյ նմանութեամբ ստեղծուած բանաւոր էակ մը, բայց ան, որ կը փճացնէ լաւ գիրք մը, կը բնաջնջէ Բանականութիւնն իսկ», կը պատգամէ անգլիացի մեծ բանաստեղծ Յոն Միլթըն:*

Հին ժամանակներէ ի վեր, գիրքը շատերու կողմէ նկատուած է նուիրական աւանդ մը, Աստուծոյ իմաստութեան արտայայտութիւնը, մարդկութեան ներշնչարանը, իսկ ոմանց կողմէ՝ չարիքներուն մեծագոյնը, մարդոց երջանկութեան եւ ծրագիրներուն առջեւ ցցուող գերագոյն խոչընդոտը: Տգէտներուն եւ անբաններուն համար՝ թուրքերու տրցակ մը, որոնց վրայ շարուած են արտառոց, անիմաստ եւ անհասկնալի նշաններ:

Գիրքերը եղած են հակամարտութիւններու, յեղափոխութիւններու եւ պատերազմներու մեծագոյն գոհերը:

Ինչպէս մարդիկը՝ գիրքերն ալ կ'ենթարկուին մահուան եւ բնաջնջումի, որովհետեւ անոնց բովանդակած գաղափարները

կը նկատուին աւելի վտանգաւոր, քան ամբողջ բանակներ: Հին եւ նոր պատմութեան սորված ենք գիրքի մեծ դահիճներուն անունները:

642 թուականին, Օմար Նալիֆա գրաւեց Եգիպտոսը եւ անոր առաջին գործը եղաւ հրկիզել Աղեֆսանդրիոյ մատնադարանը, որ աշխարհի ամէնէն ճոխն էր եւ կը պարունակէր յոյն բանաստեղծներու եւ փիլիսոփաներու թանկարժէք ձեռագիրները: Որովհետեւ, ըստ իրեն, անոնց գոյութիւնը աւելորդ էր եւ անոնց գաղափարները կը հակասէին միակ ճշմարիտ եւ երկնատուր մատենանի՝ Ղուրանի պատգամներուն: Օմար Նալիֆա կը նկատուի գիրքերու մեծագոյն դահիճը, որովհետեւ այդ օրերուն շատ մը ձեռագիրներ մէկ հատիկ էին եւ անոնք, որ զոհ գացին անոր վառած հրդեհին, կորսուեցան ընդմիշտ:

Հին ժամանակներուն՝ ձեռագիր մատենաներու մեծ դահիճները եղան բարբարոս հորդաները, ձեռնկիզ խաները եւ Թիմուրիւնները, որոնք ո՛չ միայն քարուքանդ կ'ընէին քաղաքները եւ երկիրները, ո՛չ միայն սուրէ կ'անցընէին անպաշտպան ժողովուրդները, այլեւ կրակ կու տային եկեղեցիներուն եւ վանքերուն՝ անբաւարար վերածելով զանոնք եւ մոխրացնելով հոն պահուած մագաղաթները:

Նոր ժամանակներուն՝ գիրքերու մեծագոյն դահիճները եղան թուրքերը, համայնավարները եւ ճացիները:

Մասամբ մաւր լիբանանցիները, պատերազմի տարիներուն, գիտակցաբար եւ անգիտակցաբար, հակառակ անոր, որ անոնք կը սիրեն գիրքը եւ աշխարհի առաջին այբուբենը իրենց մախնիքներուն՝ փիւմիկեցիներուն գիտն էր, եւ անոնց քաղաքներէն մէկը, որ աշխարհի ենագոյններէն մէկն է, կը կոչուի Պիսյոս, այսինքն՝ Գիրք:

Հոս պէտք չկայ նկարագրելու հրդեհուած շէնքերը, ուժանակուած ու կողոպտուած վաճառատուները եւ փողոցներու մէջ լքուած դիակները: Ամէնէն շատ վնասուած հաստատութիւնները եղան մատնադարանները եւ գրատուները, որոնց դէմ կարծէք տգիտութիւնը եւ մոլեռանդութիւնը իրենց ամբողջ աստիութիւնը եւ մոլուցքը թափած են՝ ոչնչացնելու համար մշակոյթի եւ քաղաքակրթութեան այդ անպաշտպան գործիքները, զորս գիրք կը կոչենք:

Կը բաւեր շրջիլ քաղաքի փողոցներուն մէջ՝ տեսնելու համար, թէ ի՞նչ նուաստացումի եւ մարտիրոսութեան ենթարկուած էին այն գեղեցիկ հատորները, որոնց առջեւէն երկիւղածութեամբ կ'անցնէինք:

Այս բարբարոսութիւնը սակայն անպայ անհատներու եւ ցած դասակարգի գողերու գործը չէր: Գիրքերու այս նախնիրը կանխամտածուած ու ծրագրուած գործն էր բոլոր անոնց, որոնք

տիրոջ թոնուրսեմն օգտուելով, ուզեցին սպաննել Լիբանանի հոգին:

Որովհետև արուեստը, գիրքը եւ գրականութիւնը կը հանդիսանան քաղաքացիական ազգերու սնունդը, առանց որուն կարելի չէ գոյատեւել եւ դիմադրել ժամանակի մակընթացութեան եւ արտաքին սպառնալիքներուն: Այս գիտելիք բոլոր այն բանակալները՝ Օմար Խալիֆայէն եւ ձեռնկիզ Խանէն մինչեւ Ապտիւլ Համիտ, Ստալին եւ Հիթլեր, որոնք մարմինները սպաննելէ առաջ, կը շղթայէին հոգին եւ կը բեցնէին ճայնը գրագետներուն, բանաստեղծներուն եւ արուեստագետներուն, որպէսզի դադրին փառարանել շշմարտութիւնը, Գեղեցկութիւնը եւ Ազատութիւնը, երրորդութիւն մը, որուն դէմ կը խորտակուին աշխարհի բիրտ ուժերը:

Երկրորդ աշխարհամարտի աւարտին, ֆրանսացի հռչակաւոր բանաստեղծ Փօլ Վալերի, ի տես գործածուած գեներալ ահաւորութեան եւ անոնց պատճառած մարդկային ու նիւթական վնասներու անսահմանութեան, կը քաջագանջէր. «Քաղաքակրթութիւններ, դժբախտաբար մահկանացու էք»: Մահկանացու էք Պարթեմոնի, Ս. Յարութեան, Այա Սոփիայի եւ Ս. Պետրոսի տաճարներ: Մահկանացու էք Փարիզի, Շարքրի, Միլանայի, Գոլոնյի, Լոնտոնի, Պարսեթոնայի, Մոսկուայի, Ամիի եւ Էջմիածնի մայր եկեղեցիներ:

Մահկանացու էք Ֆիտիասի, Փրագիքի, Միլէ Աննիոյի, Իոնաթէլիի, Վիեննիի, Վերսալէզի, Կոյայի, Ռուպէնի, Ռամպրանի, Տիւրէրի, Փուսէնի, Տրյաքուայի, Ռընուարի, Վան Կոնի եւ Կոնկնի գծած պատարաններ: Մահկանացու էք Հոմերոսի, Վիրգիլիոսի, Տանթի, Սերվանթէսի, Շեքսպիրի, Մոլիերի, Կէօթի, Շիլլերի, Պալգաֆի, Հիւկոյի, Տիլլերի, Փոյի, Տոսթո-հուկի, Թոլսթոյի, Տյուստի եւ Պոպի յօրինած գլուխգործոցներ: Մահկանացու էք Նարեկացիի, Շնորհալիի, Սայեաթ-Նովայի, Արովեանի, Ռաֆֆիի, Նրուխանի, Ջօհրայի, Վարուժանի, Սիամանթոյի, Մեծարեւոյի, Դուրեանի, Չարեւոյի հայկական գոհարներ:

Որովհետև հասարակ յուցի մը կընայ ձեզ վերածել մոխիրի, եւ եւրոպական ոռոմը մը՝ անճանաչելի քարակոյտի:

Մինչ այդ, Պէյրութի մայրերուն վրայ, մեր բանաստեղծները եւ գրագետները կրկին կը նահատակուին՝ իրենց արեւան պարտքը տալէ ետք ձեռնկիզ Խանի թոններուն:

Հարկաւ պիտի գտնուին մարդիկ, որոնք պիտի այսպանեն այն խեղճները, որոնք քաղաքի աւերակներուն առջեւ կանգնած, իրենց գաւակներուն դիակներուն վրայ լացող մայրերէն ոչ շատ հեռու, կը խօսին գիրքերու նահատակութեան մասին: Այս մարդիկը, եթէ աւելի իրագրեկ ըլլային փոքրիկ ազգերու եւ մամաւանդ

Հայոց պատմութեամ, պիտի անդրադառնային, որ յուսահատութեան օրերուն, ինք վիրապներու յատակէն, յոյսի եւ փրկութեան մասին խօսող ձայները կը պատկանէին մեր բանաստեղծներուն եւ գրագէտներուն:

Արդի մարդկութիւնը բռնուած է մահուան մղձաւանջէն:

Որպէսզի հայութեան գետը շարունակէ հոսիլ, պէտք է որ անոր ակունքները առատ ջուր ստանան: Այդ ջուրը կրնան հայթայթել միայն իր հոգածու գաւակները:

Ֆրանսացի ծանօթ փիլիսոփայ Ժան-Փօլ Սարթրը, որ էր նաեւ տաղանդաւոր գրագէտ, արձագանգելով Փօլ Վալերիի մարգարէութեան, կը գրէ. *«Ոչինչ մեզ կը վստահեցնէ, որ գրականութիւնը անմահ է: Աշխարհ կրնայ գոյատեւել առանց արուեստի եւ գրականութեան: Բայց աշխարհ կրնայ նաեւ գոյատեւել առանց մարդ արարածին»:*

Ժան-Փօլ Սարթր բնի կ'ուզէ, որ գրականութիւնը նոյնքան արժէք ունի, որքան մարդ արարածը եւ այն մարդիկը, որոնք գրականութիւնը անկողող պարապմունք կը նկատեն, պարզապէս անպիտաններ են եւ քաղաքակրթութեան թշնամիներ:

Նքէ հարցը փոխադրենք հայութեան պարագային, պիտի ըսենք.

Աշխարհ կրնայ գոյատեւել առանց գրականութեան: Բայց հայութիւնը չի կրնար գոյատեւել առանց հայ լեզուի եւ գրականութեան:

Հետեւաբար, նոյնքան արդար է ու տրամաբանական ցաւի Պէլլուքի աներակներում տակ թաղուած անմեղ գոհերու մակատագրին, որքան մայրերու վրայ մահատակուող եայ գիրքերու լուռ ողբերգութեան:

Լիրանան ապրեցաւ մահացու օրեր, լիրանամահայերը տարտղնուեցան ու յարդի շիւղերու պէս էջուեցան շատ հետաւոր ասիեր: Բարեբախտաբար, շատեր չխարուեցան օտար ծովանոյշներու կանչէն եւ կուրծք տուին փոթորիկին՝ չկորսնցնելու համար այն փոքրիկ Հայաստանը, գոր կերտած էին իրենց գոհողութիւններով, գորգուրանով, բայց նաեւ արիւնով ու քրտինքով:

Մնացողները ֆրանսացի բանաստեղծին հետ կը կրկնէին. *«Մեկնիլ՝ մեռնիլ է քիչ մը»:* Մեռնիլ իր անցեալին համար, իր ծառանգութեան, իր սիրելիներուն, իր կերտած երկրորդ հայրենիքին համար:

Ամբողջ եօթանասուն տարի վայելեցինք այդ հիւրընկալ երկրին բարիքները: Հոն ապրեցանք ազատ ու ապահով, յարգուեցանք ու գնահատուեցանք, պահեցինք մեր ազգային դիմագիծը: Անոր կը պարտինք մեր տնտեսական նախանձելի վիճակը, մեր հայկականութիւնը, մեր ազգային լինելութեան եմփառող եկեղեցիներ, դպրոցներ, մամուլ, հրատարակութիւն, թատրոն,

մշակոյթ, եւայլն:

Լիբանան շատ բան տուաւ մեզի իր լաւ օրերուն, սասարեզ-  
մեր բացաւ մեր առջեւ եւ փոխարէնը մեզմէ ոչինչ պահանջեց:

Անոնք՝ որ հեռացան կամայ թէ ակամայ, գիտէին, որ  
աշխարհի վրայ դրախտ գոյութիւն չունի: Գիտէին, որ օտար եւ  
նոյնիսկ Խաղաղականի փոխում վրայ դիւրին չէ գերոյէն մեկ-  
նիլ, թէ՛ յանախ անձրեւէն փրկուելու համար, մարդ կը բռնուի  
կարկուտի, թէ՛ Քարիպտիսի յորձանքներէն խուսափիլ փորձող  
նաւը կրնայ բախիլ Սկիլլայի ապառաժին:

Բայց անոնք չէին գիտեր, որ Լիբանանէն մեկնելով պիտի  
կորսնցնեն իրենց հոգին, որ տեսակ մը մահ է:

«Մեկնիլ՝ մեռնիլ է քիչ մը», ըսած էր բանաստեղծը:

Մնացողները գիտէին այդ, ուստի՝ իրենց հոգին չկորսըն-  
ցընելու համար, նախընտրեցին տակալ ծծումբի եւ երկաթի անձ-  
րեւներուն եւ դիմակալեցին առօրեայ նահատակութիւնը եւ  
մահը:

Յարգանք ու պատիւ անոնց, որովհետեւ անոնք յաջողեցան  
կանգուն պահել այդ օճախը եւ վառ պահել հայութեան ջահը:

ՆՈՒՊԱՐ ՉԱՐԽՈՒՏԵԱՆ



Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

## ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ ԵՒ ՄԷԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ



Ժամանակաշրջանի մը մէջ, երբ լատենտղական «արձակ»ը տակաւ առ տակաւ կը դառնայ յառաջիկայ դարուն «վէպ»ը, տպագիր գիրին անփոխարինելիութիւնը պաշտպանող նոր լոյս տեսած իրաքանչիւր հրատարակութեան հետ գրականութիւնը կը մղէ իր անհասարգ գոյամարտը՝ ընդդէմ արտայայտչական այլապէս կարելիութիւններով օժտուած պատկերասփիւռային ֆիլմաշարին, շարժապատկերի ժապաւէնին եւ լատենտղական հաղորդակցութեան նորագոյն հնարատրութիւններուն (*ինթերնէթ, սիտի բոմ, վիսէօ քլիփ...*):

Պահ մը կը թուի, թէ յառաջիկայ դարը պիտի ըլլայ արագընթաց վարձացում ապրող պատկերասփիւռի արքանեակային սփռումներուն եւ ինթերնէթի ժամանակը, ակնդիր-ընթերցողին վգայարանքները (տեսողութիւն, լսողութիւն, քանականութիւն եւ հուսկ՝ նաեւ յուպաշխարհի ցանցերը) իր ամբողջական հակակշռին տակ լարուած պահող լատենտղական «հատոր»ը պիտի արձանագրէ նոր նուաճումներ, սիտիները, իրենց գործնական եւ արտայայտչական անմրցելի առաւելութիւններով՝ պիտի գրաւեն գրադարանին տեղը եւ գիրքը պիտի դառնայ հնաբոյր եւ անհետաքրքրական իր: Դարավերջի գլխաւոր ապահովիչներէն մէկը հանդիսացող այս վտանգին լրջութեան կը գիտակցին հրատարակիչներն ու գիրքի շուկայացման աշխատանքին (*ժարքէթինկ*) պատասխանատուները, որոնք կը մտածեն նոր լոյս տեսած գիրքը ընթերցողին ուշադրութեան յանձնելու ծանուցման նոր եղանակներու մասին, օգտագործելով նոյնիսկ համատարած չարիքին՝ պատկերասփիւռին լայն հնարատրութիւնները: Անոնք կ'ապրին իսկական տագնապ մը, որովհետեւ աշխարհի չորս տարածքին, քիչ մը ամէնուրեք, ընթերցանութիւնը կ'արձա-

նագրէ հետզհետէ աւելի մտահոգիչ դարձող նահանջ մը: Սակայն անոնք նաեւ կը գիտակցին, որ գիրքը՝ միշտ պեղելի անշարժ պատկերի (իմա՝ էջի) իր ամբողջականութեամբ, ընթերցող-գրութիւն իր տարաբնոյթ մտերմութեամբ, ամբողջական կեդրոնացման նախապայմանով, կարդացուած հատուածը վերստին կարդալու գրողական պարտադրանքով, տողերու միջեւ ըսուած անգիր խօսքը որսալու ներքին պահանջով, խոկումով ու երեւակայութեամբ պարզանալու եւ ամբողջանալու իր յատկանիշով, վերջապէս՝ ընթերցում-մասնակցութեան յաջորդած հոգեմտաւոր ըմբռնումի ապրումներով ու անդրադարձներով կը շարունակէ պահել իր գրաչութիւնն ու հետաքրքրականութիւնը:

Փաստօրէն, այս առնչութեամբ կատարուած քաղմաթիւ հարցախոյզներն ու ուսումնասիրութիւնները կ'ապացուցեն, որ օրրատօրէ աւելի մեքենայացող կեանքին գերին դարձած մարդկութիւնը ներկայիս կ'ապրի վիպապաշտ ապրումներու ժամանակաշրջանին վերադառնալու անգիտակից կարօտ մը, որ գիրքին ի նպաստ է եւ անոր գոյութեան վերաթեւորման լուրջ ազդակ մը կրնայ ըլլալ միայն: Էականը՝ գիրքին անհրաժեշտութիւնը, օգտակարութիւնը եւ գեղագիտական վայելքը ընթերցողին ուշադրութեան յանձնող, հետաքրքրութիւնը սրող ծանուցման նոր եղանակներու եւ գիրքի շուկայացման արդիական քաղաքականութեան մը որդեգրումն է, որմով կ'երաշխաւորուի գիրքը լուսարձակի տակ պահել փորձող ամէն լուրջ ճիգ:

Ընդունինք, որ տագնապը զուտ հայկական չէ, ունի շատ աւելի խոր արմատներ եւ համաշխարհային տարողութիւն, որմէ անմասն չեն նոյնիսկ Մեծն Բրիտանիոյ, Միացեալ Նահանգներու, Գերմանիոյ, Ֆրանսայի եւ Ճափոնի պէս հզօր երկիրներու հրատարակչական մեծ տուններն ու ընկերութիւնները: Վերջապէս, հարցը միայն տնտեսական եւ արհեստագիտական դժուարութիւնները չեն, որքան ալ կարելոր ըլլան անոնք: Հիմնականը՝ քաղաքակրթական տագնապն է, մշակութային ահաւոր նահանջը եւ համընդհանուր անտարբերութիւնը՝ քիչ մը ամէնուրեք:

Աշխարհի պարզած ընդհանուր պատկերը նկատի առած՝ պէտք է աւելցնել, որ տագնապը միայն այս տունայնէրով չի սահմանափակուիր: Գրականութեան լուսանցքայնացման մէջ որոշ բաժին ունի ո՛չ միայն մակերեսային ծանօթութիւններով գոհացող մարդկութեան մերօրեայ կենցաղը, այլեւ ի՛նք՝ մամուլը, դէպի մասնագիտացում ընթացող իր տեղական թէ միջազգային հրատարակութիւններով, որոնց ընդհանրական նպատակը, լուսագոյն պարագային, օրաթերթային միջին ընթերցողին ճաշակին ու հետաքրքրութիւններուն գոհացում տուող մակերեսային հարցազրոյցներ, թեթեւ յօդուածներ ու

կարճ գրախօսականներ հրատարակելն է: Այս հարցը երկարատեմ է ի վեր կը վբաղեցնէ գրական մամուլի պարզած այժմու պատկերով մտահոգ զանազան մտատրականներ ու մասնագէտներ, որոնք յաճախ ամենայն իրաւացիութեամբ դիտել տուին, որ նոյնիսկ գրական լուրջ հրատարակութիւններու, օրինակ, «Թայմզի գրական յաւելում»-ի, «Նիւ Եորք Րիվիու աֆ Պուքս»-ի, «Լանտըն Րիվիու»-ի, «Ինքաուինթըր»-ի, «Մակագին լիթերէր»-ի, «Լը Մոնտի մշակութային յաւելում»-ի էջերուն նուազագոյն չափով ներկայ է կենդանի գրականութիւնը կամ քաղաքակրթական ու մշակութային ընդհանուր հարցեր քննարկող, տեսլական ու նպատակակէտ ունեցող, պարզ խօսքով՝ քաղաքակրթական շարժում առաջացնելու, տիրող կացութիւնը բարեփոխելու նպատակով ճամբայ ելած մտատրականութեան յանձնատու կեցումը:

Կարճ ըսած՝ վերոնշեալ հրատարակութիւնները նոր խօսքի, բարեփոխող գրական շարժումի մը սկիզբը չեն, այլ այն կայանը, ուր կանգ կ'առնէ գրականութեան ստեղծագործ երթը: Հոն պարզապէս կը կատարուի ստեղծագործ գիրին յաջող մատուցումը, առանձնապէս պարագային՝ բարձրամակարդակ ներկայացման կամ խորաթափանց գրախօսականներու մէկտեղումով:

Տակաւին, նոյնիսկ մերօրեայ գրական հանդէսները, իրենց ջանքախիչ մեծամասնութեամբ, այսօր շատ աւելի համեստ նպատակներ կը հետապնդեն, քան դարասկիզբի կամ տակաւին երեք-չորս տասնամեակ առաջ լոյս տեսնող գրական բեմերը: Այսօր, ինչպէս կ'ընդգծեն մասնագէտները, անոնք նաեւ ենթարկուած են մասնագիտական կաշկանդումի, խտացած են գրականութեան երբեմնի սահմաններն ու քաղաքակրթական մտածողութեան լայն տարողութիւնը, որոնց հետեւանքով մեզի կը ներկայանան իբրեւ զուտ իմաստասիրական, զուտ հոգեբանական, զուտ լեզուագիտական, զուտ գեղանկարչական կամ իբր ինքնուրոյն այլ նկարագիր պարզող հրատարակութիւններ: Նոյնիսկ գրական մամուլը վերածուած է մասնագիտական կայուածներու նուիրում բեմերու եւ այսօր մենք կրնանք մեր ցանկացած գրատունէն ձեռք ձգել իւրայատուկ բնոյթ ունեցող գրական թերթեր՝ ակադեմական (բանասիրական), թատերական, բանաստեղծական կամ ստեղծագործական գրականութեան բոլոր սեռերը իր էջերուն հիւրընկալող արժէքատր ամսագիրներ ու հանդէսներ, որոնց գլխաւոր յատկանիշը յաջող գրութիւններու բծախրնդիւր մէկտեղումն է, կամ անուանի ստորագրութիւններու աշխատակցութեանց ապահովումը:

Մինչդեռ, քանական, երեսնական եւ նոյնիսկ յիսնական թուականներուն պատկերը հիմնովին տարբեր էր: Գրական թերթերը շարժում յառաջացնող, գեղանկարչութեան եւ իմաս-



տասիրութեան ընթացքը յեղաշրջող, գեղագիտական, իմացական, իմաստասիրական, այսինքն՝ քաղաքակրթական նոր ու անկախ հորիզոններ քացող, արժէքներն ու չափանիշները հարցադրող շարժումներ էին, ունէին քաղաքակրթական ընդհանուր տեսական, լուրջ յասկնութիւններ ու ճշդուած ձգտումներ, որոնց ետեւեւորող կենսունակութիւնը կը վարակէր սերունդներ ամբողջ եւ նոյնիսկ դուրս կու գար իր երկրին սահմաններէն՝ դառնալու համար ո՛չ միայն տեղական, այլեւ՝ համաշխարհային անդիմադրելի շարժում: Այս իրողութեան պերճախօս օրինակները կրնան հանդիսանալ բոլոր արեւտները յեղաշրջած, քսաներորդ դարու քաղաքակրթութեան վրայ իր անջնջելի կնիքը դրոշմած գերիապաշտ շարժումին «*Լա ռեւոլյուսիոն սիւրբէայիսթ*»ը, գոյապաշտութեան էութիւնն ու միտքը աշխարհով մէկ տարածած Ժան-Փօլ Սարթրի նշանաւոր «*Լէօ Թան մոտեռն*»ը կամ անելի համետ տարողութեամբ՝ Ֆիլիփ Բահլըի «*Փարթիզան ըրվիտեն*»: Խօսելով երեսնական-քառասնական թուականներու գրական մթնոլորտին մասին, շուրջ քառորդ դար առաջ Այրվինկ Հօ կը յայտնէր, թէ իր սերունդը անհամբեր կը սպասէր «*Փարթիզան ըրվիտեն*»ի, որուն հետ մրցիլ սկսած էր ձոն Գրէու Բանարնի «*Փէյլըն ըրվիտեն*»:

*Անոնցմէ իւրաքանչիւրը, - դիտել կու տար Այրվինկ Հօ, - կազմած էր համակիրներու ուժեղ խումբ մը, բաղկացած՝ քանաստեղծների, քննադատների, վիպագիրների եւ ուսուցիչների, այսինքն՝ մարդոցմէ, որոնք ունէին ա՛յն ապրումը, թէ թերթերուն իւրաքանչիւրին «կեցուածք»ը աղերս ունէր մշակութային մեծ պահու մը հետ, թէ՛ ան մեծ կարեւորութիւն կը ներկայացնէր քաղաքակրթական արժէքներու սահմանումին եւ վերասահմանումի աշխատանքներուն մէջը:*

Այսինքն՝ հարցադրողական մօտեցումով գրական բեմերը կը լծուէին քաղաքակրթական արժէքներու, նուիրականացած չափանիշներու, քարացած մտածումներու, մշակոյթի դերին ու կոչումին վերասահմանման աշխատանքին եւ, յետ կրքոտ քննարկումներու, իմացական բախումներու եւ անկէ բխած եկրակացութիւններու՝ կը յաջողէին առաջացնել խանդավառութեան ու վայրոյթի, պայքարի եւ նպատակաւայաց ձգտումի ուժեղ ապրումներ, մէկ խօսքով՝ կենարար ու հոգեփոխիչ քաղաքակրթական նոր շարժում մը:

Ըստ հարցը բազմակողմանի քննարկման ենթարկած ակադեմականներու եւ մտաւորականներու, փաստօրէն, այսօր դադրած են գոյութիւն ունենայէ ամբողջ անկո-աքսոն քաղաքակրթութեան փրկութեան առաքելութիւնը իրենց ուսերուն վերցուցած Էպրա Փաունտեր եւ անելի մեծ ու համաշխարհային փառասիրութիւններ հետապնդած Անտրէ Պրըթոններ, Թ. Ս. Էլիոթի «*Գրայթիթթըն*»ը կամ Անտրէ Ժիտի «*Էնովէլ Երանսէզ*»ը ժառանգորդներ չունին եւ մտաւորականները, մէկ ծայրայեղութենէն՝ յեղափոխական մեծ ծրագիրներէն,

անցած են միւս ծայրայեղութեան՝ գրականութիւնը լուսանց-  
քայնացնող, ինքն իր պատեանին մէջ ամփոփող մասնագի-  
տական նեղ մամուլի հասկացութեան:

Այսպէս, մերօրեայ մարդուն ներկայ կենցաղին պատճա-  
ռով (հարցերու մակերեսային մօտեցում, կեանքի մեքենայա-  
ցում, նոր արհեստագիտութեան արագընթաց պարզացում,  
ընկերային ու տնտեսական անհակակշռելի պայմաններ), դա-  
րավերջի մարդը սկսած է ենթարկուիլ մեքենայացած քաղա-  
քակրթութեան, իշխանութեան ու գոհանալ արագ ու  
դիրամատչելի հաղորդակցութեանց, այսինքն՝ օգտակարն  
ու հաճելին միախառնող արդի միջոցներով, - պատկերաս-  
փիւռ, սիտի, ինթերնէթ, Էսայլն: Բնականաբար՝ ընդհանուր  
ծանօթութիւններով բաւարարող վերոնշեալ «պատկերա-  
տուր գիրք»երը իրենց բացասական անդրադարձը կ'ունենան,  
չէին կրնան չունենալ եւ ապագային նաեւ պիտի ունենան  
մամուլին, գրականութեան եւ արուստի միւս կալուածներուն  
վրայ: Ահա թէ ինչու բարգաւաճ պետութիւնները, քաղաքա-  
կրթական որոշ մակարդակ ու որակ նուաճած պետութեանց  
կառավարութիւնները նիւթապէս կ'օժանդակեն գրական ու  
մշակութային լուրջ ձեռնարկներուն՝ անոնց գոյատեւումն ու  
բնականօրէն պարզացումը ապահովելու նպատակով: Բայց այդ  
օժանդակութիւնները կը դառնան երկասյրի սուր, երբ  
նպաստները անուղղակիօրէն կը պայմանաորուին քաղա-  
քական-գաղափարական կեցուածքներով եւ տասնեակ մի-  
լիոնաւոր պիւտճէէն յատկացում կը ստանան ա'յն թերթերն  
ու թատերախումբերը, որոնց գաղափարական վարքագիծը  
խոտոր չ'ընթանար իշխանութեան քաղաքական ուղեգիծին:  
Եւ այս մէկը տեղի կ'ունենայ ո'չ թէ մենատիրական վարչա-  
կարգեր ունեցող Երրորդ Աշխարհի երկիրներու, այլ եւ՝ նոյ-  
նիսկ ժողովրդավարութեան օրրան նկատուող արեւմտեան  
երկիրներու մէջ: Ժողովրդավարութեան ախոյեաններէն հան-  
դիսացող Անգլիոյ Արուեստի Խորհուրդի կիրարկած նպաստ-  
ներու քաղաքականութիւնը կրնայ դառնալ խօսուն նմուշը  
վերեւ նշուած իրողութեան:

<Ետեւաբար՝ քաղաքական ու կէս-քաղաքական կապերը  
կը դառնան անխուսափելի, տեսանելի եւ անտեսանելի  
հաշիւներ կը պարտադրեն իրենց նուրբ եւ աներեւոյթ կամքը,  
թերթերը կը հրաժարին քաղաքակրթական մեծ հարցերով  
վբաղելէ, կը բաւարարուին զուտ մասնագիտական սահմա-  
նափակ փաստաիրութիւններով եւ անուղղակիօրէն կը կաշ-  
կանդուի գրական մամուլին ապատութիւնը:

Եւ կամ՝ կը ստիպուին միաժամանակ պայքարիլ ե'ւ սպա-  
ռողական ընկերութեան, ե'ւ քաղաքական իշխանութեան, ե'ւ  
տնտեսական իշխանութեան դէմ՝ նուազագոյնի իջեցնելով  
իրենց էջերուն թիւն ու տպաքանակը եւ կը դառնան լուսանց-

քային գրական հրատարակություններ, ինչ որ է պարագան Անգլիոյ, Տրանսայի եւ Իտալիոյ մէջ լոյս տեսնող այն հարիւրաւոր գրական հանդէսներուն, որոնց տպաքանակը... քանի մը հարիւրը չ'անցնիր:

Դարավերջը կ'ապրի իր քաղաքակրթական լուրջ տագնապը, որ դարասկիզբի քաղաքակրթական սխրանքներուն հակադիր ուղղութեամբ կ'ընթանայ: Երբ քաղաքակրթական հարուստ անցեալ եւ ասանդներ ունեցող բազմամիլիոն ազգերու գրական հրատարակությունները տեղի կու տան սպառողական ընկերութեան անդիմադրելի ճնշումներուն, երբ նիւթապաշտութեան ու արհեստագիտական ապանայիքները օրըստօրէ աւելի լուրջ մարտահրաւէր կը կարդան գրական մամուլի գոյութեան եւ երբ պետական նպաստներն ու կէս-քաղաքական կապերը կը դառնան գրողին ապաստանը կաշկանդող ուղղակի եւ անուղղակի գործօններ, իր կոչումին հաւատարիմ ստեղծագործ մարդուն կը մնայ ձեռնարկել մէկէ աւելի ճակատներու վրայ մղուող պայքարի՝ գիրն ու մշակոյթը իր քաղաքակրթական դերակատարութեան պատուանդանին վրայ բարձրացնելու գիտակից նախանձախնդրութեամբ:

\*  
\* \*

Հայ գիրքն ու գրական մամուլը չեն կրնար հեռու մնալ քաղաքակրթական այս մտահոգիչ տանգնապէս: Վտանգը հանրահանուր է: Մեր պարագային՝ անիկա կրկնակ -չըսելու համար՝ քառեակ- տարողութիւն ունի եւ Սփիւռքի հայկական գաղթօճախները, ինչպէս նաեւ արեւմտեան չափանիշներն ու շուկայական յարաբերութեան մտածողութիւնը ամենայն շուտիկութեամբ որդեգրած Հայաստանի Հանրապետութիւնը չեն կրնար խուսափիլ դարավերջի քաղաքակրթական ապստ-նայիքներէն: Սփիւռքի արեւմտեան թէ միջին արեւելեան գաղութները, այս կամ այն տարողութեամբ, ենթակայ են իրենց երկիրներու քաղաքակրթական տագնապներուն, իսկ Հայաստանի Հանրապետութիւնը տակաւին չկարծրացած իր արմատները Հրատ մոլորակին վրայ հաստատող նորանկախ ծնունդ մը չէ: Ո՛չ մէկ կասկած, որ մեր պարագային հարցը ճգնաժամային տարողութիւն ունի եւ մենք ստիպուած ենք լուծումներ բերել մէկ կողմէ մեր պուտ հայկական մշակութային ու քաղաքակրթական օրըստօրէ աւելի բարդացող հարցերուն եւ, միւս կողմէ՝ ճակատ յարդարել մեր անմիջական շրջապատի, կարճ խօսքով՝ տագնապահար երկրագունդի մտահոգիչ անդրադարձներուն դէմ:

Աւելի՛ն. հայրենի պետութեան մշակութային կեանքի բնականոն ընթացքն ու պարզացումը վարելու կոչուած մեր «պե-

տական այրեր»ը, որոնք խորթ չեն գրական-մշակութային աշխարհի ցանկերուն եւ հիմնահարցերուն, որոնցմէ ոմանց անւան կապուած է գրական յարգելի անցեալ, իրենց կրատրական ընթացքը շարունակելու ո՛չ մէկ իրաւունք ունին: Չուտ քարոզչական նպատակներ հետապնդող եւ հաշուախնդիր մօտեցումով կազմակերպուած հայ մշակութի միջազգային փառատօներն ու ցուցահանդէսները նոյնիսկ կը դառնան անհետք Նախաձեռնութիւններ, եթէ անոնք չեն բխիր կենդանի մշակութի հարցերուն լուծում բերող մշակութային-քաղաքակրթական ընդհանուր եւ համապարփակ ծրագիրէ մը: Վերջապէս, ի՞նչ նպատակի կրնայ ծառայել հայ ժամանակակից գեղանկարչութեան քարոզչութեան նուիրուած արտահայատանեան այս կամ այն նախաձեռնութիւնը, երբ հայրենի մերօրեայ գեղանկարիչները լքուած են իրենց ճակատագիրին, իսկ մեր պետական մշակութային գանձարանը հանդիսացող թանգարանները կ'արժանանան ահաւոր անտարբերութեան, անխուսափելի աղքատացման եւ ամէնօրեայ ծերացման պետական «քարիք»ներուն: Կամ՝ ի՞նչ օգուտ պէտք է ակնկալել խնամիական կարգադրութեամբ քանի մը հայ բանաստեղծի Փարիզ կամ Պերլին գործուղումէն, երբ անոնք ամէն օր ստիպուած են ենթարկուիլ նիւթաբարոյական հապար ու մէկ վրկանքի, անհասարկ կոիւ մղել «շուկայական յարաբերութիւն» կոչուած անմշակոյթ հրէշին, պետութեան որդեգրած տնտեսական, ընկերային եւ մշակութային անհետատես քաղաքակաւութեան ուղղակի հետեւանքներէն մէկը հանդիսացող համաժողովրդային անտարբերութեան դէմ, եւ, միւս կողմէ՝ ճակատ յարդարել Արեւմուտքի եւ պայն կապկող երկիրներու մշակութային թափփութներուն, նորագոյն սանձարձակութիւններուն, «Պարզապէս՝ Մարիա» կոչուած լացակումած, անբովանդակ ու անարուեստ մելոտրամներուն, պոռնկագրական ածան հրատարակութիւններուն ու թունաւոր տեսերիկներուն, եւ դեռ՝ Արեւմուտքի «մշակութային» հապար ու մէկ աղբերուն ու հաշիշներուն դէմ:

Վերջապէս, ի՞նչ իմաստ կրնայ ունենալ նոյնիսկ բարերար անդրադարձներ ունեցող մշակութային ուղեւորութիւնը, երբ հայ գրողներու անստիպ ձեռագիրները կը քնանան իրենց դարաններու փոշիներուն տակ, իսկ հայ գրողին գալիք օրը միայն աւելի գորշ կրնայ ըլլալ:

Օրինակները կարելի է շարունակել: Բայց հարցը ա՛յդ չէ: Այսօր ազգովին կ'ապրինք հոգեմտաւոր աղքատացման ահաւոր ճգնաժամի մը մէջ, ուր Հայաստանն ու Հայութիւնը կերտած բարոյական, ոգեկան, հոգեմտաւոր եւ քաղաքակրթական արժէքները կ'ենթարկուին ուղղակի եւ անուղղակի արժեւրկման, յարատեւ ուրացումներու եւ անպատասխանատու վերաբերումի: Ապամշակութացման այս ընթացքը քաղա-

քակրթական սնանկությունն էն պատճառով մեկ տեղ կրնայ հասցնել մեզ, իսկ նորամանուկ մեր հանրապետության անրապրնդման եւ վարձացման նոյնիսկ համահայկական բովանդակ ճիգերը կը դառնան ուժերու եւ կարելիութեանց անհետանրկար ու մասամբ անիմաստ վարում, եթէ ամենաբարի ձգտումներն անգամ չչնչաւորուին ու չիմաստաւորուին հայ դարաւոր ոգիին ու քաղաքակրթութեան ազգային կենարար շունչով, աւինով ու խորհուրդներով:

Այո՛, առարկայական ամէն տուեալ ու պայման լրացնող, արհեստագիտական, տնտեսական, ուժային եւ ընկերային համապատասխան կառուցներով օժտուած հզօր, յատաշարէմ ու բարձրաւած Հայաստանի Հանրապետութիւնն անգամ կը դառնայ անհոգի եւ խորթ գոյութիւն, եթէ ան պուրկ է Հայաստանն ու Հայութիւնը իմաստնացուցած, ինքնորայնացուցած, գոյատեւման ու վարձացման արտակարգ, անլի ճիշդ՝ բացարձակ ու անփոխարինելի ներուժով վահանած Հայ Ոգիին հարապատ արտայայտութիւնը հանդիսացող նոր, թարմ եւ միշտ նորանոր բարձունքներու ձգտող հայ գիրին ու մեղեդիին, ձեւին ու կերպարին, շարժումին ու խոկումին մշակութային կենսունակութենէն:

Հայոց պատմութեան եւ, կարկինը ընդարձակելով՝ մարդկութեան պատմութեան էջերը խառնշուկելու կարիք չկայ կը կարծենք, փաստելու համար հապարհապար անգամ փաստուած այն անվիճելի ճշմարտութիւնը, որ քաղաքակրթական առողջ որակը նախապայման է նոյնիսկ ամէնէն ուժեղ կայսրութիւններու գոյատեւման, իսկ Հայաստանն ու գերպետութիւնները ահաւոր ցնցումներ ապրած են միայն ա՛յն պարագային, երբ հզօր ազգերու մօտ նահանջ արձանագրած են քաղաքակրթական գիտակցութիւնն ու արժէքները, որակն ու նկարագիրը, ոգին ու հետաքրքրութիւնները:

Ահա թէ ինչու յատաշիկայ դարն ու իր տագնապները, սպառնալիքներն ու մարտահրաւերները դիմակալող ո՛չ միայն մշակութային, այլեւ քաղաքակրթական վերապարթօնքը այսօր պարտի ըլլալ մեր նորամանուկ հանրապետութեան ճակատագրի լուրջ պատասխանատուութիւնը ստանձնելու պարտականութիւն ունեցող Հայաստանի կառավարութեան առաջնահերթ, ամէնօրեայ եւ գլխաւոր մտահոգութիւններէն մէկը, նոյնքան կենսասական ու կարեւոր, ո՛րքան Հայաստանի Հանրապետութեան հողային անբողջականութեան պաշտպանման, բռնագրաւուած տարածքներու ապատագրման, ճարտարագիտական, տնտեսական, ուժային եւ ընկերային կառուցներու վերականգնման ու հզօրացման անյետաձգելի ծրագիրները:

Դարավերջը տարբեր չի կրնար ըլլալ դարակիլիքէն: Պարտաւոր ենք ստեղծել մեր դարաւոր մշակոյթին կենսունակ

ակունքներին պապանակուած հայ նոր գրականութիւն ու արւեստ, նոր ժամանակներուն արժանի եւ բոլոր ժամանակներուն դիմացող թարմ, ուժեղ, ինքնուրոյն, մէկ խօսքով՝ Հայ Ոգիին քնացած եւ արթուն ակունքները նորովի սխրանքներով պայթեցնող մեծ գրականութիւն եւ արուեստ՝ բոլոր բնագիտութիւններն ներս եւ բոլորին բոլորանուէր ու ամբողջական մասնակցութեամբ:

Եթէ տակաւին վճռած ենք կենդանի մնալ: Այո՛, եթէ վճռած ենք իրրեւ քաղաքակիրթ ազգ գոյատուել, այսօր, աւելի քան երբեւիցէ, ստիպուած ենք մերը դարձնել, պետական մշակութային վարքագիծի ու դաւանանքի վերածել հայ անսպառ ոգիին պաշտամունքն ու պեղումը սրբապան տեսլական հոշակած, անդադար «արուեստին կատարեալ անկախութիւնը» պահանջած, «Ստեղծենք» ուխտը ոգեշնչող նուաճումներու վերածած մեհենականներուն ա՛յն հաւատքը, ըստ որում՝ *«Հայ Հոգին՝ Լոյսն է, Որժն է, Կեանքն է, մարմնաւորուած անդրիական շքեղութեանը մէջ ԱՐԻԱԿԱՆ ցեղին որուն կը պատկանինք»:*

Նո՛յն հաւատքով եւ քաղաքակրթական միեւնոյն գիտակցութեամբ: Պետական պատասխանատուութեամբ եւ համապատասխան ծրագրումով: Ամէնօրեայ հետապնդումով եւ արձանագրուած նուաճումները նորանոր սխրագործութիւններով, այսինքն՝ ստեղծագործական յարատեւ տենդով ու հոգածութեամբ հարստացնելու, գոյապնդելու քաղաքակրթական ամենայն գիտակցութեամբ, համապատասխան վերաբերումով եւ անսակարկելի նուիրումով:

\*  
\* \*

Պետականութենէ, պետական հնարաւորութիւններէ եւ հոգածութենէ զուրկ Սփիւռքի պարզած գրական-մշակութային պատկերը տարբեր չէ հայրենի իրականութենէն: Հակառակ նիւթական հակայական զոհողութիւններու դիմաց չընկրկող մեր մշակութային կառոյցներուն եւ անոնց դեկը ստանձնած մարմիններուն, հակառակ մշակութասէր սփիւռքահայ անձնաւորութիւններու ողջունելի մեծագումար ներդրումներուն, գրական ֆոնտերուն եւ հայ գրողին ստեղծագործական ճիգին զօրավիգ կանգնելու նպատակով հիմնուած ծափահարելի մատենաշարներուն, սփիւռքահայ մշակութային եւ ի մասնաւորի գրական կեանքը հեռու է առնուապն գոհացուցիչ ըլլալու իրավիճակէն:

Իր վիճակին լքուած, կեանքի տաք ու պաղին դէմ պայքարելով կարծրացած, գրեթէ համատարած անտարբերութեան դէմ հայ ոգիի պեղման ստեղծագործ տենդը սրբապան դրօշի մը պէս լայն ծածանած սփիւռքահայ գրողը հեռու չէ իր հայրե-

նի գրչեղբոր ճակատագիրեն: Աւելի ճիշդ՝ տակաին երէկ պե-  
տական պայմանաւորեալ հովանաւորութիւն վայելող, իսկ  
այսօր իր ճակատագիրին լքուած հայրենի գրողն է, որ ձեռով  
մը սկսած է կամաց-կամաց դառնալ ափիւղքահայ գրող, բաժ-  
նել նոյն դառն փորձառութիւնը եւ վարժուիլ անտէր, բայց  
ինքնիշխան ստեղծագործական կեանք վարելու ափիւղքեան  
օրինակին: Որոնեւ իր կեցութիւնը ապահովող ապրուստի այլ  
աղբիւրներ եւ հրաժարիլ իր գրչով ապրելու մօտիկ անցեալի  
քաղցր երազ դարձած յիշատակներէն:

Դժբախտաբար, ա՛յս է իրականութիւնը եւ իր գրողի արժա-  
նապատուութիւնը ամէն բանէ թանկ համարող հայ գրողը,  
հոս թէ հոն, ստիպուած է շարունակելու իր գոյութեան ստեղ-  
ծագործ գոյամարտը: Մտաւորականի, գրողի անկախութիւնը  
իւր գի՛նը ունի: Ըստ երեւոյթին, հայ գրողը պիտի շարունակէ  
վճարել այդ սուղ գինը, սպասելով այն հեքիաթային օրուան,  
երբ վերջապէս պիտի դառնայ նիւթապէս ապահովուած ընկե-  
րային էակ: Ա՛յս է իրականութիւնը եւ այս իրողութենէն տար-  
բեր չէ պարագան հայ բեմադրիչին, հայ դերասանին, հայ  
երգիչին: Կա՛մ կը դիմանայ հայ արուեստագետի դաժան ճա-  
կատագիրին եւ կամ այ կը հաշտուի դիւրին լուծումին հետ ու  
կը ծառայէ նիւթապէս աւելի պայծառ հեռանկարներ խոստա-  
ցող օտար շրջապատին:

Հարցը՝ հաւատքի եւ նուիրումի խնդիր է: Կոչումի եւ ար-  
ժանապատուութեան գիտակցութիւն: Հա՛յ արուեստագետի  
նախանձախնդրութիւն եւ անձնական վարքով հաստատուած  
կենդանի օրինակ: Ո՛չ աւելի աւելի, ոչ պակաս:

Սխալ չհասկցուի՛ք: Այս ըսել չէ երբեք, որ հայ գրողն ու  
արուեստագետը պէտք է լքուին իրենց ճակատագիրին՝ ամէն  
օր աւելի սուր տարողութեամբ մղելու բազմաթիւ ճակատնե-  
րու վրայ ճիւղատրուող իրենց գոյութեան սփիւֆեան կոխը:

Ո՛չ եւ հապար անգամ ոչ: Ժամանակն է, կը կարծենք, հա-  
մապիւղքեան տարողութեամբ տէր կանգնելու մեր մշակու-  
թային-գրական պատասխանատուութեան, եթէ իրապէս կը  
հաւատանք Հայաստանի Հանրապետութեան թեւ ու թիկունք  
հանդիսացող Սփիւղքի ուժին, կարողականութեան, անսպառ  
հնարարութիւններուն, բայց մա՛նաւանդ՝ հայրենակերտ  
ու հայակերտ դերին ու կոչումին:

Այս մարտահրաւերը կ'ենթադրէ ծրագրուած եւ համընդ-  
հանուր աշխատանք՝ ե՛ւ ափիւղքեան, ե՛ւ հայաստանեան մա-  
կարդակներուն վրայ, որուն բարոյական ու նիւթական պար-  
տաւորութիւնը առաջին հերթին կը ծանրանայ մեր սպգային  
եւ մշակութային պատասխանատու մարմիններու ուսերուն:  
Սիրողական միջոցառումներով խոսքիկայ դարուն մարտա-  
հրաւերները այլեւս չենք կրնար դիմագրաւել եւ ցարդ որ-  
դեզըրած կիսկատար լուծումներով կարելի չէ շարունակել

հայ գիրքի ու գրական մամուլի արդէն իսկ օրըստօրէ աւելի դժուարացող պայքարը: Մասնագիտական մօտեցումը դարուն պարտադրանքն է եւ մեր գրական-մշակութային կեանքը նաեւ ստիպուած է քայլ պահել դարուն կշռոյթին, պահանջներուն եւ պարտադրանքներուն հետ: Կամայ թէ ակամայ, զոհաբերելով նուազագոյնը, որպէսզի անխաթար եւ բարբախուն մնայ առաւելագոյնը:

Պարզապէս, նոյնիսկ հայ գիրքին լոյս ընծայումը կը դառնայ անիմաստ, եթէ չմտածուի պայն ընթերցողին ուշադրութեան յանձնելու, հասանելի դարձնելու գործնական նոր միջոցներու եւ եղանակներու մասին: Ճիշդ է, որ հայ գիրքին-կամ առհասարակ որեւէ արժէքաւոր գիրքի- ընթերցողը նեղ ժամանակով չի սահմանափակուիր, անիկա կը պատկանի բոլոր ժամանակներուն եւ գրական գլուխ-գործոցները նոյն հետաքրքրութեամբ կ'ընթերցուին նոյնիսկ տասնեակ տարիներ ու դարեր ետք, սակայն նոյնքան ճիշդ է նաեւ միւս ճշմարտութիւնը, որ արժէքաւոր գրողները կը ծնին ու կը բազմանան, կը ստեղծագործեն եւ հայ մշակոյթը կը հարստացնեն նորանոր գանձերով, երբ իրենց շուրջ կը գտնեն գրական ներգրաւող առողջ մթնոլորտը, կենսունակութիւն ու հետաքրքրութիւն, քաջակերանք եւ հոգածու վերաբերում:

Արդա՞րէ արդեօք սփիւռքահայ գրագէտէն պահանջել ամէն տեսակի զոհողութիւն, նուիրում եւ յարատեւ ստեղծագործական բերք, երբ, իբրեւ նիւթական-տնտեսական յայն հնարաւորութիւններով օժտուած գաղութներ՝ չենք մտածած, կամ ոչինչ ըրած ենք սփիւռքահայ վիպագիրին կամ նոյնիսկ թարգմանիչին հեղինակային իրաւունքը յարգող հրատարակչատուն մը հիմնելու մասին: Մի՞թէ Սփիւռքի մեր բազմատասնեակ մշակութային միութիւնները, հարիւրաւոր վարժարաններն ու հայ լեզուի եւ գրականութեան աւելի մեծաթիւ ուսուցիչները ի վիճակի չեն 2-3000 ընթերցող գոյացնելու, ըստ ընտրութեան եւ համապատասխան ծրագրումով լոյս տեսած տարին մէկ-երկու տասնեակ որակաւոր հատորներ սպառելու: Ինչո՞ւ Սփիւռքը պիտի չունենայ բոլոր գաղութներու մէջ իր մասնաճիւղերը ունեցող, զաղափարական եւ յարանուանական մեր բոլոր հոսանքներուն, կազմակերպութիւններուն ու մշակութային միութիւններուն հովանաւորութիւնը վայելող ի՞ր Փէն Գլայլը, որուն գոյութիւնը միայն յաւելեալ խթան կրնայ հանդիսանալ ո՛չ միայն հայ գրողին, այլեւ՝ մեր մշակութային միութեանց գործունէութեան:

Երևակայական դղեակներ չէ՛ որ կը կառուցենք: Գիտենք, որ մեր սփիւռքեան կառոյցներն ու միութիւնները, քիչ մը ամէնուրեք, կը դիմագրաւեն պիտոճէական լուրջ դժուարութիւններ: Անծանօթ չենք այս իրողութեան: Բայց նաեւ գիտենք եւ կը հաւատանք, որ արտաքնապէս արդիական վար-



ծարաններ ու հպարտութիւն ներշնչող Հայ Տուներ ու Կեդրոններ կառուցող մեր սփիւռքեան գաղութները ա՛յսքան բարեկեցիկ, չքուելու համար՝ ա՛յսքան ինքնաբաւ չեն եղած երբեւիցէ եւ այսօր ի վիճակի են ուղքի պահելու ո՛չ միայն մասնագիտական կառոյց ունեցող համասփիւռքեան հրատարակչատուն մը, այլ եւ՝ ստեղծելու հայ գրողին համար նիւթապէս բարենպաստ պայմաններ:

Էականը՝ կամենա՛լն է: Անյետաձգելի անհրաժեշտութենէ մը թիւած որոշումը առնելու գիտակցութիւնն ու քաջութիւնն է: Իսկ մնացեալը... թեքնիք մանրամասնութիւն: Այսօր գրեթէ չենք խօսիր Սփիւռքի գրական մամուլի աստիճանական շիջումին մասին, որ ուղղակիօրէն սերտ առնչութիւն ունի մեր օրերու սփիւռքահայու (եթէ իրաւամբ գոյութիւն ունի սփիւռքահայու մէկ եւ ընդհանրական կերպար) ընկերային, կենցաղային, տնտեսական, բայց մա՛նաւանդ քաղաքակրթական հետաքրքրութիւններուն եւ պայն տագնապեցնող հարցերուն հետ: Կ'արձանագրենք անվիճելի փաստը միայն, որ լոյս տեսնելէ դադրած իւրաքանչիւր հրատարակութեան դիմաց, միշտ ալ, մեր հասարակական-մշակութային կեանքին մէջ առաջացած է մեծ պարապօրէիւն մը: Փաստօրէն, պատմութեան անցած են արդէն Պոսթընի «Հայրենիք» ամսագիրը, Փարիզի «Մենք»ն ու «Անդաստան»ը, Թեհրանի «Ետր էջ»ը, Պելլուրի «Նայիրի»ն ու «Ահեկան»ը եւ գրական ու մերձ գրական այլ հրատարակութիւններ:

Անշուշտ, այս պարագային, հարցը չի վերաբերիր անոնց գրական-գեղարուեստական արժէքի կամ յառաջացուցած շարժումի գնահատումին, որքան քաղաքակրթական ներկայութեան: Տնտեսական եւ այլ պատճառներով «այսինքն» նաեւ ընթերցողներու թիւի մեծ անկումին հետեւանքով- լոյս տեսնելէ դադրած վերոնշեալ հրատարակութիւնները, շաբաթաթերթի վերածուած ամերիկեան ցամաքամասի մեր երբեմնի օրաթերթերը, փաստօրէն, մնացին անփոխարինելի, իսկ անոնց բացը մասամբ գոցելու կոչուած նոր հրատարակութիւնները, օրինակ, Փարիզի «Յառաջ»ի «Միտք եւ արուեստ» ամսական յաւելումը, «Հորիզոն»ի նոյնաբնոյթ «Փրական հորիզոն»ը կամ «Այիք»ի «Փրական յաւելում»ը եղան գաղութային անհրաժեշտութենէ մը ծնունդ առած հրատարակութիւններ եւ չլայտող ղեցան դուրս գալ իրենց երեկրի նեղ սահմաններէն: Նոյնը կարելի է ըսել նաեւ համեստ տպաքանակով լոյս տեսնող «Armenian Review»ի, «Rafé»ի կամ նոյնաբնոյթ այլ հրատարակութիւններու եւ հապիւ քանի մը թիւի կեանք ունեցած հետաքրքրական այլ նախաձեռնութիւններու՝ «Կամ»ի մասին, որոնք, ցաւօք սրտի, եղան մշակութային ընտրանիի մը լուրջ հետաքրքրութիւններուն գոհացում տուող հանդէսներ կամ տարեգիրքեր եւ, այդ իսկ պատճառով, չլայտողեցան վերած-

ւիլ մշակութային արդու ներկայութեան:

Փաստն այն է, որ լոյս տեսնելէ դադրեցան ո՛չ միայն անհատ մտաւորականներու նախաձեռնութիւնները հանդիսացող գրական թերթեր՝ հիմնադիր խմբագիրներուն մահուան հետ եւ նոյնիսկ անոնց շիջումէն առաջ, այլ եւ՝ խմբակներու եւ միութիւններու նիւթաբարոյական լոյժ կարեւոր աջակցութիւնը վայելող հրատարակութիւններ, ինչպէս էր պարագան «Հայրենիք» ամսագիրին, «Նոր գիր»ին, «Նոր էջ»ին, «Ահեկան»ին եւ նոյնիսկ աւելի մեծ թիւով ընթերցողներ ունեցող «Երիտասարդ հայ» շաբաթաթերթին ու «Ալմ»ի հայերէն տարբերակին:

Աւելի՛ն. վերոնշեալ հրատարակութիւնները, մեծաւ մասամբ, աւելի ճիշդ՝ բացի վերջինէն, հայ մամուլի պատմութեան էջերուն անցան երկար տարիներ առաջ, երբ պատկերասփիւռը, վիտէօն, համակարգիչը, սիւտին, տիշը եւ հաղորդակցութեան արդիական նորագոյն միջոցները տակաւին մեր տուներն ու գրասենեակները չէին գրասած, իսկ սփիւռքահայ գրողներու շարքերը այսքան չէին նօսրացած:

Կը գտնուինք մշակութային, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ քաղաքակրթական անխուսափելի անդունդի մը եզրին: Հակառակ վերջին երեք-չորս տասնամեակներուն ուռճացող համայնարանականներու թիւին, հակառակ պարզացած երիտասարդներու հսկայ բանակին, որ մշակութային-քաղաքակրթական կենսունակութեան մը գլխաւոր արդակներէն մէկը պէտք է հանդիսանար, այսօր Սփիւռքը կ'ապրի ապամշակութային այնպիսի՝ մոայլ կեանք մը, որուն պարպած մտահոգիչ պատկերին դիմաց ո՛չ ոք կրնայ խուլ եւ կոյր ձեւանալ: Նիւթապաշտութեան հրէշը օրրատօրէ աւելի կ'երկարէ իր մահացու եօթը թեւերը, անմիջական շրջապատին հետ յարմարելու պարտաւորական հոգեբանութիւնը հետպիտէտ ա՛լ աւելի հող կը շահի մեր իրականութեան մէջ եւ մամոնան դարպասողներուն թիւը կը սկսի, արդէն սկսած է դառնալ... միայն մտահոգութիւն պատճառող մեծամասնութիւն:

Բառերը չժամծմենք եւ ըսենք, որ ի՞նչ կ'արժէ համայնարանաւարտ վարձացած սփիւռքահայ երիտասարդութիւնը, Սփիւռքի մեր գաղութները ի՞նչ շահ կ'ապահովեն իրենց հարիւրաւոր բժիշկներէն, ճարտարապետներէն, դեղագործներէն եւ գիտական այլ մարկերու մէջ մասնագիտացած մեծաթիւ համայնարանաւարտներէն, երբ անոնք իրենց պորտակապերը խլած են հայ գիրին ու հոգիին, հայ մշակոյթին ու քաղաքակրթական արժէքներուն հետ: Աւելի՛ն. ի՞նչ տրամաբանութեամբ բարիք ու բերք պէտք է սպասել հայ նորահաս սերունդներու անփոխարինելի դարբնոցը հանդիսացող մեր պերճաշուք թէ համեստ վարժարաններէն, երբ անոնց տնօրէններն ու նոյնիսկ հայ լեզուի եւ գրականութեան ուսուցիչները, ջախջախիչ մեծամասնութեամբ, ո՛չ մէկ հետաքրքրութիւն

կը ցուցաբերեն հայ գրականության ներկային ու գալիքին նկատմամբ, կը բացակային նոյնիսկ մեր գրական-մշակութային ձեռնարկներէն, իսկ իրենց վստահուած առաքելութեան կը մօտենան պաշտօնեայի ցուրտ տրամադրութեամբ: Վերջապէս, ի՞նչ տրամաբանութեամբ գրական-մշակութային կենսունակութիւն պէտք է ակնկալել աւելի քան հարիւր հազարներ հաշուող մեր սփիւռքեան «մայրաքաղաք»ներէն, ուր միայն տասը թիւ «Մեհաճ» կը սպառի, իսկ գրավաճառներուն յանձնուած գրական ամսագիրներու ակաւաթիւ օրինակները, ամիսներ ետք, կիսով ետ կը դարձուին:

Չծաւալինք եւ ըսենք, որ այսօր կը շնչենք սպաւնակութային այնպիսի՝ անշնչելի մթնոլորտի մը մէջ, կ'սպրինք իմացական ու քաղաքակրթական այնպիսի՝ անակութիւն մը, որունց պատասխանատուութիւնը, այս կամ այն համեմատութեամբ, կը ծանրանայ բոլորիս ուսերուն՝ կրթական օճախներէն մինչեւ մշակութային ու երիտասարդական միութիւններ, «հրատարակչատուն»երէն (ի՞նչու չըսել՝ տպարաններէն) մինչեւ ազգային պատասխանատու մարմիններ եւ օրաթերթերէն մինչեւ գրական հանդէսներ:

Վերջապէս, ի՞նչ իրատուքով եւ ո՞ր տրամաբանութեամբ հայ գիրին հանդէպ հետաքրքրութիւն ու պաշտամունք կրնանք ակնկալել նորահաս սերունդներէն, երբ տակաին չունինք մանուկը ներգրաւող մասնագիտական մանկապատանեկան հրատարակչատուն մը՝ իր որակաւոր ամսագիրով, պատկերապարդ գիրքերով եւ գրական պարզացուած հատորներու մատենաշարով, իսկ մեր գրական լրած շաբաթաթերթերուն բացը գոցելու կոչուած մեր գրական էջերն ու յաւելուածները առհասարակ գերեզման կը հոտին, ո՛չ մէկ աղերս ունին թէկուպ կաղն ի կաղ ընթացող Սփիւռքի գրական կեանքի աօրեային հետ եւ ուր կը բացակայի գրող-ընթերցող խիստ անհրաժեշտ կըրտ ու կենարար երկիւստութիւնը:

Հասնական թիրիմացութեանց առաջքը առնելու համար ըսենք, որ վերջին երկու-երեք տասնամեակին կատարուած անձնական նախաձեռնութիւնները, խիստ օգտաշատ մատենաշարները, անոնց բարիքն ու օգտակարութիւնը ուրացողը չենք: Բայց այդ չէ՛ մեր խնդիրը: Եւկանը՝ մասնագիտական մօտեցումով գործող լուրջ եւ հեռանկարներ հետապնդող արդիական հրատարակչատան մը հարցն է: Հիմնականը՝ ամբողջական հոգեփոխութեան, մշակութային-քաղաքակրթական շարժումի մը նախաձեռնելու հրամայականն է, որուն յաջողութիւնը երաշխաւորող նշուած տուեալներն ու կառուցները կեանքի կոչելու աշխատանքը բոլորիս հոգու պարտքն է:

Ժամանակն է, որ Սփիւռքն ու Հայաստանը, համազգային գիտակցութեամբ, աննախապաշար յանձնառութեամբ, ամ-

բողջական նուիրումով, բայց մա՛նաւանդ դարավերջի մարտահրաւերները նկատի առնող գիտական յանձնառութեամբ ամբողջական քննարկման առարկայ դարձնեն հայ գիրին, մշակոյթին ու քաղաքակրթութեան բնականոն պարզացման սպառնացող արտաքին ու ներքին վտանգները, ճշդէն ցանկալի վերապարթօնքը երաշխաւորող անմիջական եւ ոչ անմիջական անհրաժեշտ նախաձեռնութիւններու տախտակը, յստակացնեն հանգրուանային թիրախները, մտածեն պանոնք կեանքի կոչելու եղանակներուն ու միջոցներուն մասին եւ միացեալ ուժերով աշխատանքի լծուին:

Ամենամտայլ ժամանակներուն մէջ անզամ գիր ու գրականութիւն, մանրանկարչութիւն ու երաժշտութիւն, ճարտարապետութիւն ու գիտութիւն, իմաստասիրութիւն եւ կեա՛նք կերտած հայ ժողովուրդը իրաւունք չունի այսօր ձեռնածայ նստելու: Քաղաքակրթական հոգեցունց եւ ոգեկերտ նոր շարժումը բոլորիս աւագ պարտականութիւններէն մէկն է: Ո՛չ որ իրաւունք ունի փախուստ տալու այս համապային պարտականութենէն, Հայ Ոգիին անյետաձգելի վերապարթօնքին մասնակցելու նուիրական կոչումէն ու քաղաքակիրթ հայ մարդու հոգու պարտքէն: Ո՛չ որ: Անցնի՛նք գործի, ապո՛վի՛ն, որովհետեւ վաղը կրնայ ուշ ըլլալ:

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



Վ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՐԻՖԵԱՆԻ  
ԱՆՅԱՅՏ ՏԱՐԻՆԵՐԸ**

Յովհաննէս Զարիֆեանը (1879-1937) դարասկիզբի հայ բեմար-  
ւեստի ամէնէն փայլուն դէմքերէն մէկը եղած է: 1920 թուականին  
մեկնելով Կոստանդնուպոլիս, այնուհետեւ Կովկաս վերադարձած  
չէ եւ մինչեւ մահ իր կեանքը անցուցած է տարագրութեան մէջ,  
դիտաւորաբար Միացեալ Նահանգներ: Կենսագիրներուն յայտնի է,  
որ 1932-1936 թուականներուն, Զարիֆեան թատերական գործունէ-  
ութիւն տարած է Հարաւային Ամերիկայի հայաշատ գաղութներուն  
մէջ՝ Արժանիին, Ուրուկուայ եւ Պրագիլ, թէ եւ բնակութիւն հաս-  
տատած է Պուէնոս-Այրէս: Սակայն, փաստաթուղթերու սակաւու-  
թիւնը եւ շրջանի մամուլի անմատչելիութիւնը թոյլ չեն տուած հան-  
գամանալի քննութիւն մը այդ քառամեայ ժամանակաշրջանին:

Ձեռնամուկ ըլլալով, որքան որ գոյութիւն ունեցող աղբիւր-  
ներ կը թուատրեն, Զարիֆեանի կեանքի այդ շրջանին քիչ թէ շատ  
մանրամասն վերականգնումին, Պուէնոս-Այրէսի «Արմենիա» թեր-  
թին մէջ-այդ ժամանակ՝ եռօրեայ-հանդիպեցանք Հայաստանի առա-  
ջին Հանրապետութեան վերջին վարչապետ Սիմոն Վրացեանի ստո-  
րեւ վերահրատարակուող յօդուածին, ուր անկախութեան շրջանին  
Զարիֆեանի գործունէութեան վերլուշը, ինչպէս նաեւ՝ հարաւամե-  
րիկեան չորս տարիներուն դերասանի ապրած վիճակին խտացումը  
արձանագրուած է:

Զարիֆեան լատ արժանուոյն չէ գնահատուած գաղութին մէջ,  
հակառակ իր թափած ջանքերուն: Թատերական շարժում ստեղծե-  
լու իր փորձերը, միաժամանակ՝ թատրոնի վաւերական գործերով  
ճաշակ մը տալու, բախած է մշակութային առումով ցած մակարդակ  
ունեցող եւ բնդհանրապէս անբովանդակ գաւելտներու հետամուտ  
հասարակութեան մը: Իր ներկայութիւնը, թէ եւ բնդհանրապէս գնա-  
հատուած մամուլի եւ հասկցող մարդոց կողմէ, չէ յաջողած հետք  
ձգել գաղութի թատերական կեանքին մէջ:

Հարկ է նշել, որ Վրացեան կուսակցական առաքելութեամբ  
մօտ երեք ամիս մնացած է Հարաւային Ամերիկա, որուն մասին

Հետագային գրած է «Կեանքի ուղիներով» յուշագրութեան մէջ՝ գուգադիպելով Յ. Զարիֆեանի կեցութեան վերջին շրջանին: Վրացեան եւ Զարիֆեան միեւնոյն նաւով մեկնած են Պուէնոս-Այրէսէն, 22 Սեպտեմբեր 1936ին:

Բայց նախքան այդ, կարծես Հնարարիմ ըլլալու համար հայկական անդիր աւանդութեան մը, 28 Օգոստոսի վերջին ներկայացումը բացառիկ յաջողութիւն արձանագրած է:

«Աւելորդ է լսել, որ «բոլոր տոմսակները ծախուած էին»: Դեռ աւելին. նախարահներն ու միջանցքները լեցուն էին բազմութեամբ, հարիւրաւորներ ոտքի վրայ էին, ամբողջ ներկայացման ընթացքին: Պուէնոս-Այրէսը քիչ անգամ այդպիսի բազմութիւն տեսած էր, ժողովուրդի բոլոր խաւերէն, առանց խորութեան» («Արմենիա», 11 Սեպտեմբեր 1936):

Ներկայացումէն ետք, «Բանախօսող Ս. Վրացեանը, - կը շարունակէ թղթակցութիւնը, - մաղթեց, որ վաստակաւոր դերասանի 40ամեայ յորելեանը արժանաւորապէս տօնուի մեր երկրի մէջ, եւ անոր բեմին վրայ»:

Յորելեանը յաջորդ տարին էր, բայց մաղթանքը մնաց պարզ մաղթանք. Զարիֆեան 1937ին մեռաւ Միացեալ Նահանգներու մէջ, մինչ Հայաստանի մէջ կը բեմադրուէր արեան ու սարսափի «տօն» մը...

Պուէնոս-Այրէս

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ



«ԲՈՒՆՈՐ ՏՈՄՍԱԿՆԵՐԸ ԾԱԽՈՒԱԾ ԵՆ»  
(Յ. ԶԱՐԻՅԵԱՆԻ «ՐԱԺԵՇԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԹԻԻ»)



Մշակույթը մի ժողովրդի հոգևոր ստեղծագործության պտուղն է: Մշակույթով է, որ ժողովուրդները բարձրանում են ֆադաֆակրթության աստիճաններով: Ազգերը մշակույթով նանաչում են, մշակույթը ազգերի անցագիրն է երբեք վարուց վկայականը, նաև հոգևոր դրօշակը: Մշակույթի գիտակցութիւնն ունեցող ու արժէքը գնահատող ժողովուրդները միայն իրաւունք ունեն ֆադաֆակրթ ազգերի շարքը դասուելու:

Մշակույթի բնագաւառում առանձնայատուկ տեղ է գրաւում քատրոնը: Իր բնույթով քատրոնը, դպրոցից յետոյ ամենէն մօտն է կեանքին, ամենէն ազդուն ու դաստիարակիչը, եւ հանրային բարքերի կրթութեան տեսակետով ամենէն անմիջականն ու ներգործողը: Այդ է պատճառը, որ բոլոր ժամանակների իշխանութիւնները այնպիսի մեծ ու շարունակելի են դարձրել քատրական «գուարնութիւնների» կազմակերպութեան վրայ: Իրանով է բացատրում նաև, որ բոլոր ֆադաֆակրթ երկրներում այսօր ազգային ու ժողովրդական քատրոնները պետական գործ են, համագգային ընդհանուր խնամքի եւ գուրգուրանքի առարկայ:

Մեր մէջ, դժբախտաբար, քատրոնի մասին դեռ չափազանց նախնական գադաֆար գոյութիւն ունի: Թատրոնի դաստիարակիչ ու ֆադաֆակրթող դերի գիտակցութիւնը շատ քոյլ է, ումանց մէջ նույնիսկ բացասական քատրոնը համարում է անպատիւ բան «բէատրօ կը խաղայ»-եւ պատուազգաց ծնողը քոյլ չի տայ, որ իր աղջիկը երեսայ բեմի վրայ: Մատերի համար էլ քատրոնը ազգասիրութեան խնդիր է, հայ քատրոն յանախել ազգասիրութիւն ցոյց տալու համար: Եւ անպատճառ դերասանը կամ ներկայացում կազմակերպողները պէտք է իր ոտքը գան, տունակ

բերեն և հազար տեսակ խորամանկութիւնների դիմեն, որպէսզի հայ ազգասէրը բարեհաճի հայ թատրոնը պատուել իր այցելութեամբ: Մինչդեռ ամէն օր կ'երթայ ու դրամ չի խնայում օտար թատրոնի ու ներկայացումների համար: Հայ ազգասէրի նաշակը այնքան նրբացած է, որ հայ թատրոնի ու հայ դերասանի խաղից ետոյ՛ջ չի ստանում:

Այսպէս չէր, սակայն, Հայաստանում և, անշուշտ, այժմ էլ այդպէս չէ: Յիշում եմ 1919-20 թուականները, երբ Հայաստանի Հանրապետութիւնը իր ուժի մէջ էր և կեանքը եռում էր մայրաքաղաք Երևանում: Եռուզեռ էր տիրում և թատերական երկու հաստատութիւնների մէջ - Պարլամենտում ու Ջամիօյանեան թատրոնում, ուր ամէնօրեայ ներկայացումների շարքն էր տալիս մեծատաղանդ դերասան Յովհաննէս Ջարիֆեանի խումբը: Ի՞նչ շքեղ ու փառաւոր էր այդ խումբը, որ Ջարիֆեանի հետ ողբերգութեան տակ համախմբուած էր հայ թատրոնի ընտրյալին - Արեղեանի [Արեւեան], Մայսուրեանի, Սաթեմիկ Արամեանի պէս բնական աստղեր - գրեթէ երեք տասնակիսյուն դերասաններ, որոնք անձնուիրութեամբ ծառայում էին վերածնունդ Հայրենիքի ազգային մշակոյթին: Խաղացանկը կազմուած էր գլխաւորապէս ժամանակակից սիւքերից - Իրսէն, Հաուպըտան, Շիրվանզադէ, Շանթ և ուրիշներ - որոշ խաղեր կրկնում էին բազմաթիւ անգամներ: Տոմսակները օրեր առաջ արդէն ծախուած-ապառած էին յիմում, և թատերասարհը միշտ լիցում էր բերնէ բերան: Անսահման ոգեւորութեան օրեր էին դրանք, և Ջարիֆեան՝ նորագաւ Հայաստանի թատրոնի շունչն ու ոգին...

Յիշում եմ նաև 1919 թ. Մայիսի 28ի օրով Հայաստանի Հանրապետութեան տարեդարձի տօնական հանդէսը:

Ամբողջ Երևանը դարձել էր մի հսկայ բնակարան, գիւղացիներ և բանուորներ, արհեստակցական միութիւնները, աշակերտութիւնը, ազգը համայն, ամէն ոք իր տեղն ու դերը ունէր: Եւ ամբողջ օր Հայաստանի ժողովուրդը ուրախացաւ Հայաստանի մայրաքաղաքի փողոցներում, հրապարակների վրայ ու սրահներում, մեր հայրենիքի ջիւղն ու կապոյտ երկնքի տակ, պարթեւ Մասիսի հովանու ներքեւ: Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի Յովհաննէս Ջարիֆեանն էր այդ հանդէսի բնամարտիկն ու վարիչը...

Եւ մէկ էլ հանդիպում եմ այստեղ, աշխարհի այս հեռու անկիւնում, Արժանիքի մայրաքաղաքի մէջ: Նորէն նոյն Ջարիֆեանն է - մեծատաղանդ ու խանդավառ, այսանգամ «վաստակաւոր» պատուանունն իր վրայ առած - վաստակաւոր դերասան Յովհաննէս Ջարիֆեան: Եւ սակայն, աւա՛ղ, ո՞ր է երեսնաման հասարակութիւնը, ո՞ր է այն օրերի ոգեւորութիւնն ու եռուզեռը: Ռ՞ւր են մակագրութիւնները թատրոնի դոմերի վրայ՝ «բոյոր տոմսակները ծախուած են»: Քաղաքական արհաւիրքները ազդել են և մեր մշակոյթի վրայ: Հայաստանի ազգային թատրոնը տարագրութեան մէջ է՝ հայ ժողովրդի պէս ցամ ու ցիր, տարտղմուած, ուժաբափ: Եւ միայն Ջարիֆեանի պէս աստուածային



հրով մերջնուած անկում ու խանդավառ կամֆերը չեն ընկնում եւ շարունակում են բարձր պահել հայ արուեստի մուհրական դրօշը: Բարձր պահած՝ պատուով առաջ տանել...

Շարաքօր Զարիֆեանի հրաժեշտի ներկայացումն է: Արժանքի մի հողը հիւրասէր չեղաւ հայ թատրոնի համար, եւ Զարիֆեանն էլ, անտարակոյս, դափնիներ չբարեց այստեղ: Ընդհակառակն, առատօրէն բարեց հիասթափութիւն եւ գրկանք:

Բայց արուեստագէտի եւ հայ մշակոյթի սիրահարի թափը երբեք չթուլացաւ մրա հոգում: Ընդհակառակն, Զարիֆեանի պէս իրենց կեանքը որեւէ գաղափարի մուհրած մարդիկ անյաջողութիւններից չեն յուսահատում ու չեն տխրում: Եթէ մէկը կայ, որ պէտք է տխրի, այդ էլ հասարակութիւնն է, որ չկարողացաւ ըմբռնել, թէ յանձնիմ Զարիֆեանի ի՞նչ գանձ ունէր իր մէջ: Եւ կը մաղթէի, որ գէթ այժմ, վերջին պահում, ըմբռնէր, թէ Զարիֆեանի հեռանալով ի՞նչ թանկագին գանձ է կորցրնում: Ըմբռնէր ու Շարաքօր մեծագանգուած բազմութեամբ լեցուէր Հայ Կեդրոնի՝ սրահը: Ու միանգամ էլ, ինչպէս այն օրերին Հայաստանում, կարգայ թատերասրահների դրան վրայ --

— Բոլոր տոմսակները ծախուած են... (Ստամբուլի «Արմենիա» եռօրեայ, Երեւէ-շարքի, 25-8-1936, Զ. տարի, թիւ 507):

ՄԻՄՈՆ ՎՐԱՅԵԱՆ

1) Հայ Կեդրոնի սրահը շինուած է 1982ին: Տասնամակներու ընթացքին, Պուրնու-Արեւի բոլոր տեսակի հաւաճոյթներու գլխաւոր ժամադրավայրը եղած է: Մինչեւ այսօր կը գործածուի որպէս թատերասրահ:



Ս. Պ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

## ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՆԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

ՆՈՒՆՈՒԼԾ ՏԱՐԱՇԻԱՐՔԻ  
ԱՏԵՂԾԱԳՈՐԾ ՈԳԻՆ

*«Անջրպետի մը գրաւումը»* քերթողագիրքէն մինչեւ *«Տեղատուութիւն եւ Մակընթացութիւն»* անցած է մօտաւորապէս տասը տարի: Բաւարար ժամանակաշրջան մը, որպէսզի տարաշխարհի ցամբորդը կարենայ նուաճել «անծանօթ երկրամաս»ը, հետագօտել իւրաքանչիւր մանրամասնութիւն եւ անճնական փորձառութիւններով ու ապրումներով աւելի եւս հարստանալ: Բանաստեղծը այլեւս գիտէ, թէ ո՛ր է ինք եւ զեպի ո՛ր պիտի երթայ: Սփիւտքը արդէն զայսցած է ո՛չ միայն իրրեւ վայր ու ժամանակ, այլեւ՝ իրրեւ հոգեվիճակ: *«Անջրպետի մը գրաւումը»* եթէ ինքնափնտրուի էր՝ օտար հողի մէջ, *«Տեղատուութիւն եւ մակընթացութիւն»*ը այդ հողին մէջ ապրելու ու գոյատեւելու ծրագիր է:

Կարելի է ըսել, որ Սարաֆեանի երրորդ քերթողագիրքը ազդակիօրէն շարունակութիւնն է առաջինին, սակայն աւելի խորացած ու հետագօտուած:

*«Տեղատուութիւն»* խորագրեալ առաջին պոեմը կը սկսի բնութեան տարրերուն հոսքը, թաւալումը, պոթեկումն ու շնչատութիւնը նկարագրող պատկերներով, որոնք շարժման մէջ կը դնեն նաեւ քերթողը եւ կ'ենեւեփեն անոր հակասական տրամադրութիւնը: Զմոռնանք, որ Սարաֆեանի ստեղծագործութիւնը պայմանաւորուած է զիրար հակասող զգացումներու եւ մտածումներու դրսեւորմամբ, որ շարժիչ ուժն է անոր քերթողութեան: Ամբողջ գիրքը հիմնուած է նոյն այդ հակասական տրամադրութիւններուն վրայ. Բայժայումին հետ՝ յարութիւն, փլուզման հետ՝ վերաշինութիւն, խաւարին հետ՝ յոյս, Բասիլին հետ՝ վերածնունդ: Ահա՛ Սարաֆեանի ստեղծագործութեան երկունքը պայմանաւորող ուժը, որ քայտումներու քիւրեղացմամբ յառաջ կը մղէ քերթողը:

«Տեղատուութիւն»ը գիշերուան մէջ կատարուած կառօնով համարորդութիւն մըն է, անտառներով եզերուած համրաներէ: Համարորդ լուսարացին է միայն, որ կը հասնի ծովափ, այդ ալ «Մակընթացութիւն» պանֆիլմ մէջ: Անտառով սկսող եւ ծովափով աւարտող համարորդութիւնը անտառին ու ծովուն կու տան այլաբանական իմաստ: Բանաստեղծը սիրահար մըն է՝ եւ անտառին, եւ ծովուն, որոնք կը մարմնաւորեն ենթակայական տազնապնդը անոր: Անտառը բառսին մէջ շարժումն է՝ դէպի բիրեղացման եւ լուսաւոր այգաբացի վայրը տանող համրան: Իսկ համրան «փիւնիկ»ն է, որով նոր իմաստ կը ստանայ «Տասնորորդ»ի մէջ յիշատակուած «փիւնիկն հուրէն կը ծնի» տողը:

Ծնած է փիւնիկը հիմա, որ կը համարողէ «կեանքին բացուող լայն վանդակ»ի մը մէջ, ուր էպիպոնիոյն ու յարութիւն աննորով, հոգիին մէջ ամբողջ անցեալի աշխարհ մը սպառելով կը վերածնի. «Նոր է, նոր, նոր որ անհիմ/ Այս հողերէն, թօթուկով մեր կեղծիքները բոլոր/ Այս քառուէն կը ծնիմ»: «Անհիմ» բառի յիշատակումով, «Աննրպիտի մը գրաւումը» գործին տրամադրութիւնը կ'երեւի հաս, «հասող ու անհիմ իրեր»ու վրայ հաստատուած իրողութիւնը, որ, սակայն, տարբեր երանգ մը կը կրէ այս անգամ: Հոս կը տեսնենք շարժումը, յարափոփոխ իրականութիւնը, որ «պոններ»ու մէջ առկայ՝ բանաստեղծին ներքին վիճակները կը պարզէ: Խօսելով այս մասին, Ա. Թովիշեան կ'ըսէ. «Անաշընթաց շարժումը միայն տարածութեան յարափոփում է, այն ռգու եւ գիտակցութեան միտումն է դէպի «նոր գանձերն ու նոր ապագան»<sup>17</sup>:

Շարժումն ու էպիպոնիոյն նոյն կշռոյթով կը շարունակուի պոեմը, նոյն ատեն յայտնաբերելով մտածումներու ամբողջ շղթայ մը. հշմարտութեան փնտռում, գաղափարներու տարազում, սեր, բնութեան ոգիին թափանցում, դարու հրաշալիքներուն ի տես հիացում, ահաբի իրավիճակին մէջ՝ միակ միտքարանձառ՝ աշխատանքէ արբեցում. «Աշխատանքը բերկրանք, յոյս/ Աշխատանքը հրազուած փրկութեան լաստ՝ իմ պարագ, յուսալքման օրերուս»: Տրամը կը քացւի կրկին, ներքին յոռովներ կ'արթննան վերստին, խորք ու օտար աշխարհի պատճառած յուզումները նոր խորք մը կը յայտնաբերեն, որ ինքնախոստովանութեան համագոր կը հնչէ: Ամբողջ գիրքը ինքնաճանաչման, ինքնադատումի, նոյնիսկ ինքնախարագանումի փորձաքար մըն է կարծես, երբ միջոցին մէջ կը լսուի տազնապնդէ թեթեւացած Սարաֆեանի մերկ ու վեհառ հոգիին երգը. «Օտար ու խորթ էր ինձի հայրենական սէրն անգամ», իսկ էիչ ետէ՝ «Տասը երկրի արեւոյ, պատկերներով, ձայներով/ Ես մեծցած մարդ որ իր մօր/ ինչուով հազիւ կը խօսի»: Ողբերգութիւն մը, որ սփիւռեան գոյավիճակին ամենէն խօսուն ապացոյցն է, հողի ու հաստատուն կայքի փլուզումով՝ տարագիր հայ մարդուն ամենէն գիտակցուած տառապանքը, նոյնքան արու սակայն, մանկութեան յուշերէն բարձ-

17) ԷՆ. Սարաֆեան. Երկեր, Երևան, 1988, էջ 7.

րացող խանդը. «Քաղցր, քաղցր ձայնն է դեռ/Քաղաքներուն անձանոթ/ Աղմուկին մէջ տենդագին Մանկութիւնս է, որ կ'անցնէր/ Մէկ երկրէն միւսն անդադար/ Անոր խանդին չափ դեռ թարմ/խանդ մը կ'երգէ կուրծքս ի վեր»:

Սարաֆեանի համար, մանկութեան վերջուշը տեսակ մը խթանիչ ուժ է, որպէսզի ենթագիտակիցը մղուի գիտակցականին ու շարունակուի շարժումը, երթը, գոյութիւնը: Մանկութեան յուշերը կը բերեն քարմուտիւն ու սպեղանի, որպէսզի կեանքը չկասի, այլ թաւալի նոր թափով. «Նոր է, նոր, նոր, որ անհիմ/ Այս հողերէն՝ կարծիքներն, մեր կեղծիքները ամէն/ Դառն խնդուքներն հեզներով, թօթափելով կը ծրնիմ»:

«Տեղատուութեան» աւարտին, բերթողը կը լսէ ձայնը կեանքին, որ կու գայ «Բջիջներէս իմ բոլոր. ապրիլ, տեւել տակաւին», մինչ զգայարամներէն ներս խուժող կեանքը կ'ամրապնդէ զինք, «մինչ կ'եռան, կը բարախեն յարաշարժ պտուտակները կառքին/ Արշաւանքով մ'անվարան»:

Ինչպէս Սարաֆեանի միւս գործերը, «Տեղատուութիւն եւ մակընթացութիւն»ն ալ պէտք է դիտել միայն Սփիւռքի մէջ ծլարակող ու գոյատեւող մարդուն ներհուն ապրումներու շրջածիրին մէջ: Սարաֆեանի բացած կարկինը անլի ընդգրկում է եւ մարդ արարածին՝ օտար հողի վրայ գոյութեանակա՞ն գիտակի՞ց պայքարը կը դրսեւորէ՝ թեթեւութիւններէ, հագեցեալ լիւսմաներէ, տագնապայի վիճակներէ ձերբազատելու եւ անհունին մէջ սաւառնելու ի խնդիր: «Կարելի է ասել, թէ բանաստեղծը ազգայինից գնում է դէպի ընդհանուրը, հայկականից՝ աշխարհայինը»<sup>18</sup>, իսկ «հայաւթնէն հեռացումը մօտեցում է հայութեան «ոգիին», հեռացումը կ'ըլլայ մարդկայինով, տարբերով. վերադարձը հայութեան հեռացումը չէ մարդկայինէն»<sup>19</sup>:

Այսպէս, ազգայինի եւ մարդկայինի փոխադարձ ներգործութեամբ հայկականն ու աշխարհայինը միախառնելով, Սարաֆեան 20րդ դարու, ժամանակակից էազաֆակրթութեան ամբողջ մեղքը կը վերագրէ իր անձին, կեանքի ու մահուան տենդագին վիճակներ կ'ապրի, ներքին բիւրեղացման հասնելու համար: Այս բոլորը՝ մարդկութեան ուղին բնարկելով, արիւնն ու մշակութային ժառանգները հարցադրելով, գոյութեան գաղտնիքը հետազօտելով: «Սարաֆեանական «տեղատուութիւնը» չպէտք է դիտել որպէս գուտ սփիւռքեան կամ նեղ ազգային երեւոյթ, որտեղ «քարի քայքայումով» անցեալը տեղը գիշում է ներկային: Աս ջաններորդ դարի մշակութային զարգացման ընդհանուր օրինաչափութիւնն է: «Տեղատուութիւն»ը նաեւ հեռացումն է սկզբնական վիճակից, գիտակցութեան մի նոր եզրի, ինքնութեան մի նոր երեսի հասնելու համար»<sup>20</sup>, կ'ըսէ Ալ. Թովչեան:

18) Վ. Գաթրիլեան. «Սփիւռքեայ դրականութիւն», Երևան, 1987, էջ 66.  
19) Գր. Պըլտեան. «Տրամ», Պէյրութ, 1980, էջ 408.  
20) Վ. Սարաֆեան. «Երկեր», Երևան, 1988, էջ 8.

\*  
\* \*

**«Մակընթացութիւն»** խորագրեալ պոեմը «նոր կեանք»ով իմաստնացած նոր բովանդակութիւնն է, տեղատուութեան մէջ գոյացած պարապը լեցնելու, անո՛վ ըլլալու: Գործը կը բացուի արեւին ջերմ մատազայթներով, ծովը կը յորդի, շուշանները քիւրեղներու պէս կը փայլին, տատասկներն ու որդերն անգամ մթնոլորտին մէջ շարժումի դաղը կը ստեղծեն: Կը զարթնին յուշերը, որոնք «համբոյր» ու «գորով» կը բերեն բանաստեղծին, ինքնակենսագրական էանի մը գիծերու յատնումով: **«Մովին տակ տունն էր մեր հին»**: Մօր պատկերը, մանուկ հոգիին երազական վիճակը կ'ուրուագծուին, ապա տղայական յուշեր, որոնք ապրուած անցեալի մը պատկերն են՝ վառնայի ծովուն դիմաց. **«Մեր տան դիմաց ծովը մերթ յովազ վազ աչքերով»**:

Շարժումի մէջ մնալու Սարափեանի յղացքը անգիտակից բնագրի մը մղումը ունի նոյն ատեն, որ կարծես պայմանաւորուած է բանաստեղծին ծնունդովն իսկ. **«Իմ ծրնած օրս Չատիկ, զանգերու զարկ էր ուժգին, Մեծ յարութիւն հողն ի վեր: Բեղնաւորում էր չորս դին»**: Պատումի աւարտին՝ հաստատումը հակասութիւններու. **«Ու թարմ արիւնքս կեանքին մակընթացումն հողին վրան, Տեղատուութիւնը կը զգար բնութեան յոգնած ուժերուն»**: Նորէն հակասական տրամադրութիւններ, զիրար ամբողջացնող հակադիր երեւոյթներ՝ պատանութեան տարիներու յիշատակումին ընդմէջէն. **«Խաւար երազ»**ին հետ՝ «ուժասպառ փախուստի կորով», դէպի «երակայ, պայծառ ծով»: Ապա՝ ծովուն ալիքներուն, աւազներուն, ծովային կենդանիներուն նկարագրութիւնները, որոնք բանաստեղծին հոգիէն նոր պարումներ կը խլեն, մինչեւ որ ան որդուի լոյսով. **«Մովն ահա խրոխտ: Անարգել մակընթացում. թիզ առ թիզ Գրաւում, գրաւում... Մարմնի, Մըտքի զարթում մը քիչ-քիչ: Վերազարթնումը սրտիս»**: Մակընթացող ջուրերուն հետ, կը բարձրանան յայգերը՝ բերթողին, որ ամբողջ տիեզերքը իր մէջ տեղադրելու գործիւնը կը զգայ: Մովուն հետ կ'ընդելուզուի ան, կը միայնատնուի անոր ջուրերուն, կը նորոգէ ինքզինք, «Տիրոջ շունչին» կախարդանքով կը քեթեցնէ իր ծանրաբեռնուած հոգին ու անանձնական սիրով մը կ'ողջունէ չարիքն անգամ. **«Ողջ'ն վրէժի, չարիքի խոցողներուն, վատերուն: Ո՛վ կը սպասէր, որ կրկին Դաւոնայի հեզ: Մովն ուսիս կը դընէ ձեռք մը բարի: Ու կեանքը քաղցր է, պայծառ: Ահա դարձեալ: Օ՛ երթան Եունչս ու նայուածքս գալիք օրերն ի վեր, դարէ դար»**:

Սարափեանի ողջոյնը ուղղուած է ո՛չ միայն չարիքին, վրէժին, ողջերուն ու վատերուն, այլեւ՝ մեքենական աշխարհի մետաղէ մարմիններուն, որ **«Մովուն վրայ կը ստանան Գեղեցկութիւն մը ահա»**: Նաեւ ցեղին. **«Ողջ'ն ցեղին, իր բոլոր մեռելներուն ճայնն է հոս»**: Ծովը ջուր չէ, ալիք ու աւազ չէ, այլ տիեզերքն է ամբողջ, անհունութեան մերձեցման վայր, ու բանաստեղծը կը զգայ

խորհուրդի մը հզօր ներկայութիւնը, մարդը գլխագիր ընող ուժը, որուն դիմաց անոր հոգին գեղեցկօրէն կը խոնարհի.

*Մերկ ահա ես, մեզ ծընող  
Մովուն առջեւ, կուրծքըս լայն, Հովերուն դէմ...  
պաղ, հսկայ*

*Կանաչին մէջ յարափոխ  
Հրճուանք: Ողջո՛յն իմ ներքին հակասանքիս, ողջո՛յն մեծ  
Մակընթացման ողորդող,  
Ողջո՛յն ծովուն, որ այս նոր վերածնունդս օծեց:*

Մերկութիւն, հրճուանք, հակասութիւն, մակընթացութիւն եւ ծով: Ահա՛ Սարափեանի ճգտումնաւոր բանաստեղծութեան փուլերն ու զարգացման համակարգը, որ զայն կը տանի ներքին աշխարհի մաքրաչրման, ինքնաստեղծումին: Մովը կը ստանայ այլաբանական իմաստ...

\*

«Տեղատուութիւն եւ մակընթացութիւն» հատորին մէջ տեղ գտած միւս գործերը տարբեր հոգեվիճակներու արտայայտութիւն են: Հոն եւս կան կենսագրական գիծեր եւ անցած օրերու յուշեր («Որդը», «Տարագիր», «Անյիշատակ յիշատակներ», եւ այլն), անօրէական ապրումներ, սիրոյ եւ բնութեան պատկերներ («Արեւ-Անձրեւ», «Փարնան երեկոյ անտառին մէջ», «Անձրեւին տակ», «Յանձնըւինք, սէր, մեր սիրոյն», «Փիշերներ», եւ այլն), ուր բանաստեղծին զգացումներուն կ'ընկերանան մտային դեգերումները, անձնական փորձառութեան ճաղատած խոհերն ու խորհրդածութիւնները, ներքին փոթորկումներուն տալով փիլիսոփայական երանգ. «Այս փոթորկումը ներքին, զուր գալարման պէս մահուան /Անոր պոռթկումն յաւակնոտ՝ այս հողերուն մէջ օտար, /Սրբազան հուրն են կեանքի, որ կը քալէ դարէ դար, Մովն անսահման՝ ուրկէ դուրս կրնայ գալ նոր, յաղթական /Աստղիկ մը դեռ», որ պիտի բարձրանայ նիւթապաշտ աշխարհի խեղճութիւններն անտեսելով եւ պիտի լուսաւորէ մարդկային, «աստուածային իր շունչով» ու պիտի ըլլայ «մտածում եւ մարմին, գեղեցկութիւն հագնելով»:

Սարափեանի իմաստասիրական խոհերուն մէջ յատկանշական տեղ մը զննելն կեանքն ու մատը, որոնք ոչ թէ գիրար հակասող երեւոյթներ են, այլ մէկգմէկով պայմանաւորուած ամբողջութիւն: Ինչպէս «Անջրպետի մը գրաւումը» գործին մէջ բանաստեղծը կ'երգէ մահը իրեն ստեղծագործութեան աղբիւր, հոս եւս, եւ՛ յատկապէս «Երբ կը խորհիմ ես մահուան» եւ «Անէացում» էրթուածներուն մէջ, մահը կը վերածուի կենսագործող ուժի. «Մտածելով է մահուան որ կը սորվիմ ես ապրիլ, կը զօրանամ օրէ օր»: Մահուան գաղափարը Սարափեանը կը մղէ կեանքը իմաստաւորելու, զայն գեղեցիկ խտելներով հարստացնելու, մի՛շտ յուսալով «Աշխարհ մը նոր, նոր կեանք մը ինձ տալու համար»:

Նոր կեանքին հասնելու, հո՛ն ապրելու ձգտումն է, որ «Անէացում» քերթուածը այս մտածումով կը յօրինէ. «*Լուսնի լոյսով գմուռուած դիակս ծրփար ծովն ի վար*»: Յետ-մահու բաղձանք մը անշուշտ, բայց հետո՛ւ արանդական, խունկ ու մոխի, արցունքի ու պատանքի, դագաղային վիճակներէ: Մահէն ետք անգամ, ստեղծագործելու, շարժելու, ըլլալու հաւատքը ունի քերթողը, իսկ դիակը իր՝ «*Յաւերժութեան մէջ սուզուած՝ շնածուկի պէս երթար*» տարրալուծուելու եւ վերստին գոյանալու համար, քանզի Սարափեան «Բան»էն աւելի «Գոյ» կը ստեղծէ: Այլ խօսքով, երբ կեանքը՝ օտարող ու օտարեալ՝ սփիւտեան պարապ մը կու տայ քանաստեղծին, իբր մախանիւթ գրականութեան. «*Երբ ոչ մէկ աշխարհ ունի ան «... (իր) խոռով /Մատնեղու(ն) տակ, որ իրմոր /ըլլար, լուսէ կաւ, մարմար...»*», այն ատեն բանաստեղծին կը մնայ... ստեղծել կեանք»<sup>21</sup>:

Այսպէս է, որ Սարափեան կը յաջողի իր ինքնութեան, նոր իրավիճակին տալ կեանքին մշտանորոգ խորհուրդը եւ եպէս բարձրացնել ինքնութեան գաղտնիքը, որպէսզի սփիւտահայր ո՛չ միայն մասնակից դառնայ յարաշարժութեան հոլովոյթին, այլեւ համամարդկային քաղաքակրթութեան գանձարանին նուիրաբերէ իր ստեղծագործ ռզիին արգասիքը:

**«ՄԻՋՆԱԲԵՐԴ»Ի ՍԱՀՄԱՆՆԵՐԸ**

«Միջնաբերդ»ը յատկանշական է իբրեւ խորագիր ու բովանդակութիւն. միջնաբերդ, այսինքն՝ գագաթն ու ամրացը հեղինակին եւ իմացական, եւ ազգային, եւ արուեստի ըմբռնումներուն. միջնաբերդ՝ մարդը, հայն ու արուեստագետը համախմբող, իրարու ձուլող եւ հեղինակին դեգերումները հասունցնող, յատկապէս երբ նկատի առնենք այն հանգամանքը, որ Ն. Սարափեան կը գտնուի հասուն տարիքի մէջ:

«*Հրահաւ*» պոեմը առաջին գործն է «Միջնաբերդ»ին: Անկէկա այլարանական հեքիաթ մը ըլլալով հանդերձ, կը տարբերի դասական հեքիաթէն: Հեղինակը սարափեանական շեղումով մը կը յաջողի հեքիաթը ենթարկել իրեն: Կատարուած շեղումը կը փրկէ բանաստեղծը, որ չիյնայ արանդական հեքիաթին ծուղակը, այլ հեքիաթը իբրեւ միջոց գործածէ իր մտածումներուն եւ հանգրուանի իբրեւ մարդ ապրելու յստակ ծրագիրի մը դրսեւորման:

«*Հրահաւ*»ը կը սկսի «հեքիաթ է, պատմել հեքիաթի նման» նախադասութեամբ, պատումը ընելով «տաղերու խենթ կաղ» տղու

21) Յ. Քիրքեան. *ՆՆ. Սարափեան. Զափսուց երկեր*. Պարոյ, 1988, էջ 406.

մը, որ խոյս կու տայ իր անհրապոյր առօրեայէն՝ հասնելու համար ազատութեան ոլորտը, ուր կը հաւատայ գտնել երազած սէրն ու փառքը: Գիւղէն հետամալով, ան կը սկսի ճամբորդել առասպելական աշխարհի մը մէջ, ուր դեւեր կը բնակին: Տղան՝ միակ մահկանացուն, կը յաջողի սպաննել «հոգեկան ամուրթեան իր չար ոգին» խորհրդանշող եօթգլխանի հրէշը, որ կը սպառնար ոչնչացնել դեւերու ցեղը՝ Բաղափին ջուրի ակը փակելով: Փառքի ու պատիւի կ'արժանանայ ան, իր այս արարքով եւ, իբրեւ վարձատրութիւն, արքան անոր կ'ընծայէ նիւթական հարստութիւն, պերճ ու շքեղ կեանքի յարմարութիւններ եւ իր մէկ հատիկ աղջիկը:

Աւանդական հեքիաթը հոս պիտի վերջանար. թայց Սարաֆեանի իմացական որոնումներն ու երեւակայութիւնը ասկէ անդին կ'անցնին, երբ տղան՝ տիրամայի հոգի փառքի ու գինձ սիրող կնոջ մը արտին, կը մերժէ նիւթական աշխարհի մը բոլոր գանձերն ու կարելիութիւնները, որովհետեւ կը զգայ, որ տիրամալով իր երազին, պիտի գերեզմանէր իր հոգիին թոյլէն, բարձրացման տենդը, ինքզինք ըլլալու, ազատութեան ճամբուն վրայ ինքզինք այրելու եւ ատու՛լ իսկ խոյանալու այնքա՛ն հոգեզրաւ հնարաւորութիւնը. «Ո՞ր ես, աշխարհ, ուր ես ինձի պիտի ըլլամ՝ ես ինքըս ես, / Ես՝ փրկելով զիս ուրիշին գերի տանող սին իմ ետեւ...»:

Արդ, տղան, ինքզինք ըլլալու իր յանդգնութեամբ, արքայէն կը խնդրէ այն հսկայ թռչունը՝ հրահաւը, որ պոստին մէջ այլաբանական ներկայութիւն է՝ «Մտածում»ը խորհրդանշող: Մտածում, որով մարդը պիտի հասնի «Լոյսի արդար կատարներուն», այն պայմանով, որ այդ թռչունը դիտեցէ իր սեփական միտով ու արիւնով: Այսպէս, իմացական որոնումներու ճամբուն վրայ, նուաճելէ հոգ տարաշխարհն ու անոր ստեղծագործ ոգիին բռնկումը զգալով իր ներսիդին, բանաստեղծը ձեւ ու մարմին կու տայ իր հոգեմտաւոր էութիւնը անուցանող ռզնդէն ուժին, որ պիտի փայլատակէր միայն ու միայն մարդկային տառապանքին ու անհատական ցաւին ընդմէջէն, մինչ միտքը կը հասնէր խոհի բարձրութեան: Կը սուրայ տղան՝ մեծ թռչունին կռնակին «ու կը մեծնար հըր-հըւանքն իր միշտ, Բանի ետին կը ձգէր/Անցեայն իր սեւ, որ կը սուգուէր տարածութեան մէջ մոռացման/Բանի դեռ շուրջը կը փթթէին կապեր, կ'անէր անդորրաբեր/Ճաւի մը մէջ իր անձն այսպէս՝ ազատութեան ճամբուն վրան»: Ազատութեան ճամբան նոյնինքն ստեղծագործութեան գործընթացն է, որ, ըստ բանաստեղծին, պէտք չէ աւարտի, այլապէս՝ կը տիրէ ամուրթիւնը եւ կը խափանուի նոր նուաճումներու ճամբան: «Անունք, որ իրենց հոգւոյն ծայրն եկան/Տեսան, թէ իրենց կատարը չէ ան»: Այսպէս է, որ Սարաֆեան կը նորոգէ, կը բարձրացնէ, կը սպառէ ինքզինք՝ յանուն արարման գաղափարին, որ յարանորոգ աւիշ կը ներարկէ գոյութեանապաշտ իր էութեան:

Պոստին վերջին երկու հատուածները կը զարգացնեն սարաֆեանական շեղումը եւ հեքիաթը կը վերածեն անձնական



ապրումներու եւ համոզումներու շքեղ պաստառի. «Առաւօտեան դառնութիւն: Կը սահմակիմ տրդոց պէս/Կարօտ լոյսի, արնաբամ այդ մարդուն պէս կ'իյնամ ես, խոյանէիս մէջ փրկութեան իմ այդ տուրէն ու ժասպան»... որպէսզի յարութիւն առնէ իտեալը, գեղեցկութիւնը, արուեստը եւ հեռանայ ամութեան վտանգը, որ «Արուեստագէտին, «ազատութեան եամբուն վրայ» սլացող Մարդուն, Բան ստեղծող, գեղեցկութիւն ու մտածում ստեղծող, անընդհատ զանցումներով ու ինքնազանցումով սեփական գոյը ստեղծող Մարդու»<sup>23</sup> շարժիչ աւժն իսկ է, այլարանօրէն ներկայացուած:

Հատուածը կը փակուի քարձումնէի հասած մարդու մը ազօր-  
 ժովը առ Գեղեցկութիւն, որ բերկրութեան, անդորրութեան, հոգե-  
 կան ազատութեան ու ինքնակերտումի միակ գրաւականը ըլլալով  
 հանդերձ, Կ'նաւ սպասման, խռովի, երկունքի խորհուրդ, գրո-  
 դական արուեստի արարչագործ ոգի, որ իր ուշացումով ու դան-  
 դաղումով աւելի եւս կը ներշնչէ բանաստեղծը եւ զայն կ'ընէ Բանի  
 ու Գոյի արարիչ. «Լաւ է, որ միշտ ուշանաս, ըստասեմ, գիս խը-  
 ռովես/Չըգա'ս, Բանի որ իմ մէջս այդպէս է, լոկ որ միշտ կաս...»:

Ինքնարձագրման արժէք ներկայացնող «Հրահաւ» ին մէջ,  
 Սարաֆեան «Հա'յ էր՝ ողնուծուծով, բանաստեղծ՝ մտքի ու սրտի  
 յետին քշիչովն իսկ: Բայց չէր գոհեր մէկը միսին: Հայութիւնը  
 իր էութիւնն էր, բանաստեղծութիւնը՝ իր կոչումը, առաքելութիւնը:  
 էութենէն կը քիտէր իր բանաստեղծութիւնը, բայց կը հօսէր դէպի  
 Արուեստի լայն ու համայնական ծովերը»<sup>24</sup>, կը գրէ Յ. Գեղարդ,  
 բանաստեղծին մահէն միայն երեք օր ետք...



«Հրահաւ»ը եթէ մարդ անհատի ստեղծագործ ոգիին անձնա-  
 կանացուած վկայութիւնն է՝ Սարաֆեանի կենսափորձէն հետա-  
 զօտուած, երկրորդ պոեմը՝ «Մասունցի Դաւիթ»ը սակայն, ազգա-  
 յին-հաւաքական գոյատեւման դիւցազնավէպն է, քերթողին հայ-  
 կականութենէն ու հոգեմշակութային իտեայներէն ծնունդ առնող:  
 «Մասունցի Դաւիթ» դիւցազնավէպի մշակումով, Սարաֆեան կը  
 զարգացնէ «Տասնչորս» ին մէջ յայտնաբերած իր ազգային մտա-  
 կրնայ մղած ըլլալ սփիւտեանայ այս «ճամբորդը», որպէսզի ժողո-  
 վըրդական դիւցազնավէպի մը մշակումը կատարէ եւ ցարդ կա-  
 տարուած քազմաթիւ մշակումներուն կողքին, իր «Մասունցի  
 Դաւիթ»ը յօրինէ:

<sup>23</sup>) Նոյն տեղը, էջ 407:  
<sup>24</sup>) «Ջարիուսե Գրահաւը», «Ազգային», Պէյրուս, 19 Դեկտեմբեր 1972, էջ 6:

Տեսանք Մարդը՝ «Հրահալ»ին մէջ, ստեղծագործական իր անդադրում նիգով եւ արուեստով ինկզինէլ յանրժացնելու հաւատում: Հոս կը տեսնենք հայը, որ կ'որոնէ, կամ աւելի նիշդ՝ աներածնունդինը կը զգայ նորօրեայ Սասնայ Մուտի մը, որ պիտի բերէ կարօտն ու երազը անցած-գացած դարերու, հայկական արտ՝ արիւնին, մեր պատմութեան մէջ ճառագայթող այն ազնուական ու յանդուզն ոգիին, որ, բանաստեղծին իսկ հաստատումով՝ «մարդկութեան գլխուն նետուած Սասունցի Դաւիթի մը ոսկիներուն յափը»<sup>24</sup> հաշուել տայ՝ նիւթապաշտ աշխարհին: Սարափեան կ'որոնէ այն ոգեղէն ուժը, որ մեր պատմութեան պիտի տայ նոր ժամանակներու մէջ ապրելու եւ գոյատեւելու կորովը-կամքը եւ իմաստութիւնը, որոնք կը մարմնաւորուին Սասունցի Դաւիթի տիպարով, որ յաջողեցաւ ի սպառ ջնջել ժամանակաւոր ու անցողակի փառէնքով յոյսորսացող Միլիոններն անգամ: Սասունցի Դաւիթին ընդմէջէն, Սարափեան կ'որոնէ սփիւտահայ ու հայրենի եղբայրները համախմբող Հայաստան մը, քանզի «հայրենիքի մը պէտքը կայ միշտ»<sup>25</sup> Հայ ապրելու համար: Իսկ համախմբումը միայն ազգային իտալի մը շարք կարելի է՝ Սասնայ Մուտի մը պաղ- պաջուն գոյութեամբ, որովհետեւ եւ Սփիւտի մէջ, եւ Խորհրդային Հայաստանի մէջ ձուլման վտանգին ենթարկուած հայը կարիքն ունի այդ ոգեղէն, արեւմտ ժառանգուած ոգեղէն ուժին, իրրեւ իր հոգիին ու մշակութիւն առանցք ու յենարան:

Աւանդական պոեմի մը մշակումով, ոչ միայն չի դադրիր Սարափեանի ուղեորութիւնը տիեզերքի մէջ, այլեւ նոր հուն կը գրտնէ: Գոյապաշտութիւն քարոզող բանաստեղծ-սփիւտահայը իր իսկութեան ու արեւան մէջ է, որ կ'ամրացնէ ինկզինէլ, երբայլու համար նոր ժամանակներու ոլորտները: Ինքնահաստատում՝ արեւմտ, ինքնահաստատում՝ պատմութեամբ, ինքնահաստատում՝ անցեալն ու ներկան կամրջելով, անցեալի տառապանքն ու հերոսութիւնը, ժառանգութիւնն ու ոգին իւրացնելով: «մեր պատմութիւնը յիշելով, մեր տառապանքն ու հերոսութիւնը յիշելով է, որ կրնանք շարունակել մեր գոյութիւնը»<sup>26</sup>, կ'ըսէ Սարափեան:

Ջարդ, գաղթ ու տարագրութիւն տեսած հայ բանաստեղծը կը հաւատայ, որ իւրաքանչիւր հայու հոգիին մէջ Սասունցի Դաւիթի մը ծառայումով է միայն, որ յուսապայծառ արշալոյսներով կ'ողորուի մեր ազգային-գոյութեանական պայքարը՝ ընդդէմ ձուլումի եւ քաղաքակիրթ երկիրներու ախորժակներուն: Այս է խորհուրդը «Սասունցի Դաւիթ» պոեմին:

(Շար. 3 եւ վերջը յաջորդով) ՍԵՂԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

<sup>24</sup> «Մեր պատմութիւնը», ԵՆ. Սարափեան. Երկեր, Երևան, 1988, էջ 814.  
<sup>25</sup> «Արժանա նետեր», Նույն տեղը, էջ 320.  
<sup>26</sup> Նույն, էջ 322.

Պ. ՄՆԱՊԵԱՆ

**«ԵՍ ԻՄ ԱՆՈՂ»Ի  
ՈՒԻՍԱԿԱՆԸ**

-Բ-

«Ես իմ անոջ»ի ողիսական»ը դրուագող նախորդ յօդ-  
ւածը կը վերջանար սա հաստատումով:

Կը սկսի «Ես իմ անոջ»ի երկրորդ կեանքը:

Երկրորդ կեանքը կը սկսի յիսունական թուականներու  
կէսերուն, բանաստեղծութեան հայրենական վերջին (1946)  
հրատարակութենէն ութ տարի ետք, 1954ին, հոն լոյս ընծայ-  
ւած ժողովածուին մէջ անոր տեղ տրուած էջէն (37):

Բայց «Ես իմ անոջ»ը ապրած է նաեւ լուռ, այլ գործօն  
չբջան մը, որ լի է յատկանշական ու սրտաուշ մանրամաս-  
նութիւններով:

Այս վերջիններէն կատարուած մէկ-երկու նմոշներուն  
մատնանշումը շահեկանութենէ զուրկ պիտի չըլլար հաւանա-  
բար, տրուած ըլլալով, որ անոնց ետին պարզուող ոգին կը  
պատմէ իր հոգեւոր ժառանգութեան ամբօրէն կառչած հայ  
ժողովուրդին անսուտ բնագոյն մասին:

Հաստատուած իրողութիւն է, որ ժողովուրդի հոգիին  
մէջ մուտք գործելու ուժ ու հմայք ունեցող ստեղծագործու-  
թիւնները բրտութեամբ արգիլելու համար կալ միայն մէկ  
միջոց, - հանել նոյն ժողովուրդին հոգին, այլապէս ապարդիւն  
եղած է ու ապարդիւն է ամէն հետապնդում, հուրի կամ սուրի  
ամէն սպառնալիք, գործադրութիւն:

Բռնակալութեանց մականին տակ առնուած ժողովուրդ-  
ները լաւ կը ճանչնան նոյն արիւնարբուններուն դէմ  
յարմարականօրէն ծառայած այս ճշմարտութիւնը, անոնց շար-  
քին՝ առաւելագոյն չափով մը մենք՝ Հայերս, սասանեան  
Յազկերտէն մինչեւ թուրք սուլթանները եւ «ոտից գլուխ»  
թրքացած վրացի Ստալինն ու Բերիան:

Վրացիներու թրքութեան ներքեւ ու թրքութեան հակա-  
ռակ իր ոգեկան գանձերուն հաւատարմօրէն կառչած մեր  
ժողովուրդին յայտնաբերած հնարամտութիւններուն ու  
յանդգնութեան յարակցարար, անշուշտ, մտքերուն մէջ ուր-

ւազձուեցան թրքական լուծին տակ արգիլուած մեր արժէքներուն հետ գաղտնօրէն կապ պահելու համար մեր մտաւորականներուն կիրարկած եղանակները, այնուամենայնիւ, «Ըս իմ անուշ»եան մէկ-երկու փորձառութիւններ պարզելէ առաջ, շահեկանութենէ զուրկ պիտի չլլար մատնանշել պոլսահայ մեր նախկին մտաւորականներուն միջոցառումներէն քանի մը հատը, որոնք երեւցան մեծահռչակ լեզուագէտ Հրաչեայ Աճառեանի «Կեանքիս յուշերից» հատորին մէջ (էջ 38-39):

«Հայոց պատմութեան դասեր էլ կային, ինչպէս վերել տեսնեմք: Այդ էլ չէր արգելում, տանկական գրաքննութիւնը (Մեարիֆ) դեռ իր ստամբները չէր ցոյց տուած:

«Սակայն եկաւ մի օր, երբ Մեարիֆը երեւաց: Հայոց պատմութիւնը արգելուեց: Կառավարութիւնից մի պաշտօնեայ եկաւ եւ բոլոր աշակերտների դասագրքերը քննելով, նրանց վրայ թոյլտուութեան կնիք խփեց: Հայոց պատմութեան դասագրքերը դուրս մնացին:

«Այն ժամանակ Զոյաֆեան անուն մէկը հետեւեալ խորամանկ միջոցը մտածեց: -Հրատարակեց մի տեսակ Հայոց պատմութիւն, որի միայն առաջին մի քանի երեսներն էին խօսում Հայկի եւ ուրիշ մահապետների մասին շատ համատու կամ Արգար թագաւորի մասին եւ այսպիսի անմեղ քաներ, որոնց յաջորդում էր ընդարձակօրէն Կոստանդնուպոլսի պատրիարքների պատմութիւնը: Այսպիսով գիրքը ազատ արտօնութիւն էր ստանում վաճառուելու եւ իրրեւ դասագիրք գործածուելու: Ուսուցիչը ուզածիդ չափ ընդարձակում եւ աւելացնում էր Հայոց պատմութիւնը, իսկ պատրիարքների պատմութիւնը՝ բոլորովին դէմ գցում:

«Այսպիսի խորամանկ միջոցներ շատ էին սովորել կոստանդնուպոլսեցիք- արգելուած քտերը փոխել էին եւ նրանց տեղ նոր ցուցանիչ քտեր դրել. օրինակ՝ Հայաստան ասելու տեղ, ասում էին Վերին Միջագետք կամ Ծիծեռնակի երկիր: Մի հեղինակ Նալբանդեանի անունը, որ արգելուած էր, դարձրել էր Պալտարեան, իսկ նրա «Ազատութեան երգը» դարձրել էր «Աշխատութեան երգ» եւ երգում էին:

Աշխատութիւն գոչեցի,  
Թող որոտա՛ իմ գլխին...

«Մեարիֆի գործունէութեան այս սկզբնաւորութիւնը 1888 թուականին եղաւ»:

*Վարչական կարգով արգիլուած գեղեցկութիւններուն ճակատագիրը կրկնուեցաւ նաեւ «Ըս իմ անուշ Հայաստանի» բանաստեղծութեան առիթով:*

Ինչպէս ծանօթ է պատմութենէն, անոր գրառման վաղորդայնին նաեւ մեր երկրին վրայ չտքեցաւ սեփական Հայրենիք ու ոգեկան ինքնուրոյնութիւն մերժող կարմիր վարդապետութիւնը, ըսել է՝ առաջին օրէն անիկա հանդիպեցաւ նաեւ արտաքին ցուցմունքներուն սպասարկող ներքին ցեցերուն հալածանքին, բայց հակառակ իրեն դէմ շղթայագերծուած խաչակրութիւններուն եւ նոյն պատճառներով ձեռնարկուած հեղինակային ուրացումներուն, ո՛չ միայն դուրս չելաւ ժամանակակիցներու հոգիներէն, այլեւ ուղղակի ալեկոծեց յաջորդ սերունդներուն արիւնը, իր յարակայ փոթորկումներով:

Հարկ կա՞յ ըսելու, որ Նորայր Դարադեաններու, Եղիա Չուբարներու, Արտաշէս Ոսկերչեաններու, Աղասի Վարդանեաններու եւ Յարութիւն Մկրտչեաններու մակարդակը ունեցող ու թերաճ մնալու գիտակցութեամբ տուալտող միւսներուն ճօճած սուրբերով Հնարաւոր չէր խլացնել «Սո իմ անուշ» ի յաղթական աղաղակները, ոչ այլ Ստալին-Բերիա ճիւղաներուն մահասփիռ մուրճերը ի վիճակի էին փոշիացնել հոգիներուն մէջ թափանցելու ուժով կնքուած անոր հմայքները:

Ըսուած է, որ յորդահոս աղբիւրներուն հունը փոխել Հնարաւոր եղած է միշտ, կասեցնել երբեք:

Սոյն գրութեան նախորդ հատուածին մէջ ընթերցողը անգամ մը հաղորդուեցաւ նոյն ճշմարտութեան մէկ գրսեւորումին՝ Չարենց, Խանյան, Բակունց եւ երեք ուրիշ անձնաւորութիւններու ծաղկաձորեան հանդիպումին, «Սո իմ անուշ» հեղինակին նախափերջին հաւաքածոյէն (1932) դուրս չպրտուած օրերէն ընդամէնը երեք տարի ետք, անոր երկարաձգուող ծիսական հմայքին ներքեւ:

Քիչ ծանօթ կամ բոլորովին անծանօթ մարդերը տարբեր վերաբերում չունեցան «Սո իմ անուշ» հանդէպ:

Երեւանի «Դպրատիւն» շաբաթաթերթի 14 Սեպտեմբեր 1989 թուակիր Համարին մէջ, օրինակ, Աւթանդիլ Պալեան ստորագրող մտաւորական մը կը պատմէ:

«Շնորհիւ Արտաւազդ Աւագեանի եւ քասարգեչարցի ուսանող, մշտապէս սիրելի Հրանտ Գալոյեանի, ինստիտուտի ուսանողներից շատերը ծանօթ էին Չարենցի ստեղծագործութիւններին եւ անգիր արտասանում էին: Ինստիտուտի գեղարվեստական ինժնագործ խմբի ուժերով տրուած մի համերգի ժամանակ արտասանուեց Չարենցի շուրջ տասը բանաստեղծութիւն, այդ թւում նաեւ հանրայայտ «Սո իմ անուշ»ը, ի հարկէ, առանց հեղինակի անունը տալու (որպէս հեղինակ յայտարարում էր որեւէ երիտասարդ բանաստեղծի անուն՝ Կապուտիկեան, Շիրազ, Էմին, Եւայլէ): Չարենցին հրապարակելու այդ ձեւը ըմտրել էր Արտաւազդ Աւագեանը:

«Արտաւազդ Աւագեանի ազատագրկուելուց յետոյ նրա անուան շուրջ լեզբնդանման պատմութիւններ էին հիւսում:

Մենք բոլորին հաւատում էինք, հաւատում էինք առանց կասկածելու, քանզի նրա կեանքը Ստեփանակերտում եւնց լեզենդի էր մնաց:

«Դատաւորի այն հարցին, թէ ինչու քաղաքացի Աւագեանի մէկ աչքը չկայ, որքան յայտնի է նրա աչքերը օղջ էին ուսանողական տարիներին, պատասխանել է.

«Նս այն ահա այս մատնեքով հանեցի ու շարտեցի քեզ մնաց մի դատաւորի երեսին, համոզելու համար, որ Չարեանցը սլաքառ արեւի չափ արդար է եւ նրա մնաց մեծ: Դա 1937 թիւն էր, երբ Սրեւանի համալսարանի քանասիրական բաժնի երրորդ կուրսի ուսանող էի եւ ինձ բռնել էին ուսանողական ցոյցին ակտիւօրէն մասնակցելու համար: Իսկ ցոյցը պահանջում էր ազատել Չարեանցին»:

*Մարդը եւ մարդոց ընտիրները առ ոչինչ Համարող 1937ի ահաբեկչական մթնոլորտին մէջ Չարեանցի ազատութիւնը պահանջելու նշանախօսքով կազմակերպուած Երեւանի ուսանողական ցոյցը, ի հարկէ, պատիւ կը բերէ կազմակերպիչներուն թէ մասնակիցներուն, եւ բանաստեղծին արդարութեան համար իրենց աչքէն հրաժարած ուսանողներուն օրինակը առհաւատչեան է անփոխարինելի արժէքներու համար ստանձնուած գերագոյն զոհարելութեան: Ի՞նչ բախտ եւ միաժամանակ ի՞նչ կեցուցիչ Հպարտութիւն ամէնուս համար, որ ապրող ու ապրելու սահմանուած ժողովուրդի մը մասին վկայող նման յանձնառու հոգիներ չպակսեցան մեզի այդ մուսլ օրերուն, Արտաւազդ Աւագեաններ չպակսեցան ու չպակսեցան Հրանտ Գալոյեաններ, որոնց արութեան երկրորդ օրինակը մէջբերուած վերի հատուածին մէջ է նորէն, իրենց հնարագէտ վերաբերումը «Նս իմ անուշ»ի առիթով, որ ի գէմս կապուտիկեանի, Շիրազի, էմինի եւ այլքի կ'արտասանուէր մինչեւ անգամ հրապարակային համերգներու ժամանակ, ի լուր ամենեցուն, խայտաբղէտ հոգէառներու մոլեռանդ ջոյիւրի մը ներկայութեան...*

*Արձանագրուած բազում վկայութիւններ կան գրականութեան պատմութեան մէջ, ու անհամար ուրիշներ՝ յուշագրական էջերուն, որ 1935էն սկսեալ մինչեւ 1955, ամբողջ քսանամեակ մը, Հայաստանի մէջ տեղի ունեցած բոլոր տարեդարձներուն ու մեծ հանդիսութիւններուն ընթացքին արտասանուած է ու բռնու, ու երկարատեւ, ու յոտնկայս ծափահարութիւններու արժանացած բոլլեւիկեան տրիբուն Նայիրի Չարեանի «Ստալին» չափածոն.*

Աֆիլէսին Հոմերն երգեց, Ռուստամ Զալիմ՝ Թիրգուսին,  
Ոսկեգօծուեց հազար երգով Բոնապարտի փառքը սին.

Ըսել պէտք է, որ նոյն փառքին երբեք չարժանացաւ «Նս

իմ անուշ Հայաստանի»՝ Չարենցի ո՛չ կենդանութեան 15 տարիներուն եւ ոչ ալ յետ-մահու երկարած երկրորդ 15 տարիներուն:

*Խորհրդային Հայաստանի տուեալ 20ամեակին, Չարենցի քնարերգած «Սոսիալական Հայաստանի» կը թուի, թէ միայն մէկ անգամ աւելի ուժգին հնչած է Նայիրի Չարենցի դիւցազներգած «Ստալին»էն, Չարենցի աւագ դստեր՝ Արփենիկ Չարենցի վկայութեամբ, որուն արձանագրութիւնը երեւցաւ «Նորք» ամսագրի 1990 տարեշրջանի թիւ 9ի էջերուն (86-87).*

«Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման տարեդարձի օրը հանրապետական օլիմպիադա էր յայտարարւած, որ տեղի էր ունենալու Նոյեմբեր 29ին՝ արուեստի աշխատողների ֆամ դաեիմում:

«Մեր մանկատունը նոյնպէս մասնակցում է օլիմպիադային: Ինձ յանձնարարուած է արտասանել Նայիրի Չարենցի «Մտային» բանաստեղծութիւնը.

*Աքիլէսին Հոմերն երգեց, Ռուստամ Զային՝ Ֆիրդուսին,  
Ոսկեգօծուեց հազար երգով Բոնապարտի փառքը սին...*

«Ռուստամը անգիր եմ արել եւ քանի՛ անգամ անգիր արտասանել յանձնաժողովի անդամների առջև. գոհ եմ թոյրը, գոհ է հանրապետական միջոցառման կոմիտէի նախագահը:

«Ահա գալիս է Նոյեմբերի 29ը. կոմֆերանսիէն յայտարարում է. «Նայիրի Չարենցի «Մտային», արտասանում է Արփենիկ Չարենցը»: Սոսիալական վարմամբ գալիս-կանգնում եմ յայտարարողի տեղը եւ ասում. Սոյիշէ Չարենցի՝ «Սոսիալական Հայաստանի» ու սկսում «Սոսիալական»ը...: Լուռ է դաեիմը, լուռ է աշխարհը, խօսում է Սոյիշէ Չարենցի հոգու երկունքի պահը...: Յետոյ վերջացնում եմ բանաստեղծութիւնը եւ լռում, իսկ դաեիմը ոտքի կանգնելով՝ մի այնպիսի կարկուտ, ծափահարութիւն է տեղում, որ խլացնում է ամէն բան...

«Դաեիմն իր հանձնարի հետ սիրոյ ցայցի մէջ էր, եւ հօրս հետ՝ սիրոյ դաշնութեան...»:



*Ամուսններու ճամբով «Սոսիալական Հայաստանի» կապուած հրապարակային թէ լուռ պատմութիւնների մասին յաւելուածական ծանօթութիւն մը հաղորդելու համար, աւելորդ պիտի չլլար հաւանաբար թարմացնել նաեւ նշանաւոր հանրային գործիչ ու հրապարակագիր Վահան Նաւասարդեանի եւ Սոյիշէ Չարենցի միջեւ ապրուած մէկ յուշը, Հոտմի մէջ, պատմուած նոյնինքն Նաւասարդեանի կողմէ, 1967ին Գաւիթէի մէջ լրջ*

**ընծայած «Չարենց» անուն գործին էջերուն.**

«Մի օր, մեր պոռոյտներից մեկին, Չարենցի հետ յամրա-  
ֆայլ կտրում էին հնուքեանց յուշարձաններով այնքան պեր-  
ճացած Հռոմի շքեղագոյն պողոտան -Via Imperia:

«Երբ հասանք պողոտայի այն կետին, ուր, այդ հին ու  
պատմական անցքի մէկ պատին, բարձրաբանդակ արձանացած  
էին երեք հսկայ քարտէսներ, մի պահ կանգ առինք:

«Այս քարտէսները շինուած էին Փաշական իշխանութեանց  
շրջանին: Նրանցից առաջինը ներկայացնում էր աշխարհը Հռո-  
մի հիմնադրման թուականին, այսինքն՝ մեր թուարկութիւնից  
753 տարի առաջ:

«Այդ քարտէսի վրայ, Փոքր Ասիոյ մէջ, շքեղօրէն փռուած  
էր անմեկնելի խորհուրդներով լի մեր անմահ հայրենիքը -  
Հայաստան:

«Ուրիշ ազգեր -թուրք, վրացի, արաբ եւայլն- չկային:

«Պահը, վայրը, մեր թուականութիւնից շուրջ ութ դար  
առաջ ապրող Հայաստանի քարտէսը էր երբեմն աշխարհին  
տիրակալած Յաւրժական Հռոմի մէկ պատմական պատին, եւ  
իր իսկ՝ խելագարուած ամբոխների երիտասարդ եւ հզօր երգչի  
ներկայութիւնը,- այս ամէնը ինձ տրամադրեցին Չարենցի շքեղ  
երգը՝ «Ես իմ անուշ Հայաստանի»ն քաղցրութեամբ եւ լի  
հոգիով արտասանելու:

«Հայրենասիրական մէկ խոր ու խորհրդաւոր զգացման  
մէջ միացած եւ մեր աչքերը յառած այն Հայաստանին, որ  
ապրում էր մեզանից շուրջ 2700 տարի առաջ, ես արտասանում  
էի «Չարենց»ը, իսկ Չարենցն էլ լուռ ունկնդրում էր ինձ:

«Բանաստեղծը անակնկալի չեկաւ, որեւէ բառով չընդմի-  
ջեց արտասանութիւնս, սակայն երբ աւարտեցի, դարձաւ ինձ եւ  
մեղմ ձայնով ու յայտնօրէն յուզուած ասաւ.

«Եթէ իմանայի, թէ այդքան դուք պիտի սիրէք այդ  
կտորը, ես այն չէի գրի...»

«Ի՞նչ, չէ՞ք գրի, լո՞ւրջ էք ասում դուք այդ, իսկապէ՞ս  
որ չէիք գրի,- անկեղծ վրդովումով ասի իրեն:

«Չարենցը չպատասխանեց:

«Հարցումներս իմֆինն նորէն կրկնուեցին. տեսնելով, որ  
պատասխանի հմ սպասում, Չարենցը դարձաւ ինձ եւ աւելի  
քաղցր եւ մտերմիկ շունչով ասաւ.

«Ո՛չ, կը գրէի, բայց չէի հրատարակի...» (24-25):

*Չարմանայի է Չարենցի «Եթէ գիտնայի»ն:*  
*Նոյնպէս եւ՝ «Չէի գրի»ն:*  
*Նմանապէս՝ «Չէի հրատարակի»ն:*  
*Չանանք պարզիլ զգացուած զարմանալին:*  
*Արդարեւ,*  
*«Կարսի Հնոց»ին մէջ ոսկոր կազմած,*



Դաշնակցական հրամանատարներու շուքին կամաւորական գունդերուն մաս կազմած,

Հայաստանի Հանրապետութեան օրօք մշակութային նախարար Նիկոլ Աղբալեանի կողմէ մեծ բանաստեղծ հռչակւած,

Նոյն նախարարութեան մէջ ձեւական պաշտօնի մը տիրացած

Եղիշէ Չարենց, աւելի քան ուրիշ բանաստեղծ մը՝ լաւ կը ճանչնար «դուքը» եւ քաջ գիտէր, թէ ինչ որակ ունի անոնց գաղափարական բովանդակութիւնը, անդառնալիօրէն ինչ կը սիրեն անոնք եւ ինչ կ'ատեն անդառնալիօրէն:

Այո, հայրենիքի վերստեղծման ու յանուն ազատութեան ինկած հսկաներուն եւ իր օրով դեռեւս շնորհ մեծագործներու փաղանգին ճանաչումը մօտիկէն ու խորունկէն ըրած բանաստեղծը, Չարենց, չէր կրնար ներքին գաղտնարաններուն կամ գգրոցին մէջ թաքուն պահել դաշնակցականներուն կամ համակիր բազմութիւններու հոգիին մէջ անպայմանօրէն արձագանգելու բնոյթ ունեցող իր բառը, տողը, տունը, քերթուածը, գիրքը: Չէ՛ր կրնար: Եթէ դաշնակցականներուն հաճոյ թուելու հաւանականութիւնը զսպէր իր պոռթկուն ապրումները, կը գրուէին միթէ իր հայրենավառ ու «արնավառ» բազում ու բազմաթիւ տաղերը:

Նկատել տանք, որ «չէի գրի», «կը գրէի, բայց չէի հրատարակի» բառախաղային յայտարարութիւնը եւ նոյնանման դատարկահունչ բազում ուրիշներ կատարուած են 1924-25 թուականներուն, երբ «կարմիր պոետ»ը առաւելագոյն չափով մը կարմրեցաւ:

Արդարեւ, Չարենց ո՛չ «Սոմա»ն քնարերգած օրերուն, ո՛չ «Ամբոխներ»ը հետորած 1918ին, ո՛չ «Բառիպոստ»ներ ճշարտացած 1920ի կէսերուն եւ ոչ ալ «Մեծ առօրեայ» պատկերացուցած 1922ին այնքան ծայրայեղութիւններ դուրս տուած էր, որքան պատահեցաւ ատիկա 1924 Նոյեմբերէն մինչեւ 1925 Յուլիս երկարող ամիսներուն, երբ արտասահման շրջագայելու կուսակցական կարմիր շնորհ մը եղաւ իրեն, եւ ինք՝ վարձահատոյց եղած մարդու անզուսպ գեղումներով իր նախորդ երկու տարիներուն ստորագրած անկարելի գործերուն վրայ գումարեց նոյնքան անկանգնելի շարք մը նոր վրիպանքներ, «Լեւոնիստ» ու Ալիմ» եւ նոյն շրջապատին ընթացքին գրած «ալիանման» ուրիշներ, իր կոյր մուկանդութեան մէջ առաջ երթալով ա՛յնքան՝ որ թոյլ տուաւ ինքզինքին արինարբու Գէորգ Աթարբեկեանին անգամ ամօթայի ձօները շաղկապելու:

Հաշուական այդ մթնոլորտին մէջ, Չարենց կրնար «Ծախմ անուշ»ի առիթով Վահան Նաւասարդեանին ըրած յայտարարութիւնը կատարել եւ ատիկա այն դիւրութեամբ, որ գրուեցաւ «Լեւոնիստ» ու Ալիմ» ու դարպասուեցան Լենինէն «մի գոյգ»

կօշիկ աղերսած ու «մի գոյգ» կօշիկ ստացած Լենինի մուտիկները...

Բայց այդ մոլորութիւնը երկար չէր կրնար տեւել:  
Ու երկար չտեւեց:

Չարենց հետագային գրեց այնպիսի գործեր, որոնք գիտէր, որ պիտի սիրուին «գուք»երու կողմէ, ու սիրուեցան, ու գիտէր, որ նոյն գործերը կրնան խաչի ճանապարհ դառնալ իրեն, ու թէեւ «գուք»երու արութեամբ ու արեամբ սրբագործած տեսականներէն քաղած իր յղացումներուն մէկ մասը տողերուն անդունդին վստահեցաւ, բայց մեծարած Ալիները ու դարպասած մուտիկները եւ խելագարուած ամբողջներու կցորդ դարձած իւրայինները չուշացան զինք խաչ հանել:

Չարենցի լենինեան շարքին մասին եղած այս ոչ հաճոյ ակնարկութիւններուն ի լուր, ցանկապատին ետեւէն կրնայ մէկը յանկարծ ձայնը բարձրացնելով յիշեցնել Դաշնակցութեան դէմ սարքած անոր բանաստեղծութիւնները, «Սոցետ»ը եւ մանաւանդ երկարաչունչ «Դաշնակցականներին»ը, եւ այլն:

Առանց հաշուի առնելու նման հաւանականութիւնները ըսենք, ու ըսենք ամենայն անկեղծութեամբ, որ թէ՛ «Սոցետ»ին եւ թէ՛ Դաշնակցութիւնը հարուածելու մտքով շարադրուած «Դաշնակցականներին» անուն կտորին մէջ աւելի՛ բանաստեղծութիւն կայ, քան համայնավարութեան ի գովք հիւսած Չարենցի «կարմրաշառայ» էջերուն մէջ, բացառելով, թերեւս, «Մեմֆ փոզ զարկիմֆ»ը, ուր յուզումի տարրեր չեն պակսիր:

Այս բոլորին կողքին, ի հարկէ, կարեւորագոյնը այն է, որ «գուք»երը անվերապահօրէն սիրեցին «նա իմ անուշ»ը ու յաջորդական սերունդներուն սիրելի դարձուցին զայն, ոչ թէ անոր համար, որ «սիրումներ» չաղ տուած է անիկա, այլ, ինչպէս պիտի ըսէր եղբարբախտ բանաստեղծը ինք, անիկա ունէր «իւղալի ու հիւթալի» բովանդակութիւն մը, բովանդակութեան հետ՝ բանաստեղծական առինքնող մթնոլորտ մը, անբացատրելի այն ուժը, որուն երբեմն արուեստ անունը կու տան մարդիկ...

(Շար. 2)

ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

Գ

**ՄԻՒԱՅԻԼ ՆԱՅԻՄԷ**

Բանաստեղծ, արձակագիր, ընկաղատ եւ իմաստասէր Միխայիլ Նայիմէ ծնած է 17 Հոկտեմբեր 1889ին, Լեռնալիքաւանի Պիսքենքէ գետը:

Բազմաթիւ մրցանակներու արժանացած եւ շուրջ երկու տասնեակ լեզուներու քարգմանուած Միխայիլ Նայիմէ արարերէն եւ անգլերէն (4 հատր) լեզուով մշակած է գրական բոլոր սեռերը:

Իր գլխաւոր գործերն են՝ «Կար ու չկար», «Մերտառի գիրքը», «Ով որդի ազածի», «Չօթահասուն», «Քրիտառի ներշնչութիւն», եւ այլն:

Մահացած է 18 Փետրուար 1989ին:



Ձ

**ՇԱՀԱՆԴՈՒՆՑ**

**ՃԱՄԲԵՉՐԻ ՉՐՈՅՅՆԵՐ**

**ՄԻՒԱՅԻԼ ՆԱՅԻՄԷԻ ՀԵՏ**

Գիւղ բնի, բայց պսե մը կանգ առնել Սաննիցի փէշերուն պլլուած սա բոյնին առջեւ, ուր կը թարտամ սիրտերը մարդոց, շինականներու, որոնք իրրեւ արծիւներ սեգ կը սաւառնին սարալանջի հովերուն հետ, դէպի բարձունքը գագաթներու:

Կանաչ-կարմիր ու կապոյտ. այս երեք գոյները կը շոյեն այժերդ. կապոյտը կու գայ երկինքէն, հովանոցի նման կը ծածկէ լեռ ու ձոր, ժայռերն ու այգիները, մրգաստանները, որպէսզի անոնք չմսին հովերէն, չֆրտնին արեւներէն: Այս իրողութիւնը գիտէ նայնիսկ լմ ժեմիլը, որ առանց հովանոցի

տունեն դուրս չ'ելլեր ամբար տօթին, խնայելու համար իր գլխուն, դեմքի կաթնագոյն մաշկին. չըլլայ որ արեւը խածնէր անոր կարագի մմանդ նակատը, որ ախորժակ կը գրգռէ մա՛նուանդ ուշ առատունքուն, երբ արեւը չափած կ'ըլլայ արդէն Ղանեմ գերդաստանին տուներն ու պարտէզները: Այդ պահեքուն Ըմ ժեմիլ շորորալէն կ'երթայ սուպահի (առատտան կանուխ ժամերու այցելութիւն՝ դրացիներուն կամ գիւղի ծայրին շնչող բարեկամներու հետ սուրբ խմելու արարողութիւն):

Կանաչը՝ յորդուն այգիներն են, մրգաստանները, վիթխարի ընկուզենիներով հովանաւորուած: Խորի ընտանիքին կալածներուն մէջ կը խոկան հնամենի ընկուզենիները, որոնց շուրջն հանգստանալու համար քարքարուտ կածաններէն կ'երթայինք, արեւներէն խանձուած, երագելով Ըմ ժեմիլի կապոյտ հովանոցը:

Կարմիրը՝ սրածայր, եռանկիւնաձեւ, եանելի ռնաւորու՜մով կղմհնարածակ տուներն էին, որոնք քեզ կը երաւիբէին օ՛չ միայն սուպահիէ, այլեւ՝ յետմիջօրէի երկար ժամերու այցելութեան, այս պարագային հիւրասիրտելու Պիսքենթի կարմիր ու ոսկի խնձորներով, Յունիսի կիսուն հասունցած ու միւնչե Յուլիսի վերջը իրենց կարմիր ժպիտը ծաղկեցնող կեռասներով: Սաննիմի դեղձերը կը հասուննային Սեպտեմբերին. ու Սեպտեմբերը հասուն ամիսն էր գիւղին, բերքահաւաքի, երբ Ըմ ժեմիլ չէր տեսնուեր այլեւս Պիսքենթի կածաններուն կանաչին մէջ. ան գացած կ'ըլլար Սաննիմ, ուր այգիները ուշ կը հասուննային՝ իրենց ողկոյզներու ոսկիները շոպլելով այգեկուտքի մասնակից մշակներուն, գիւղագնացներուն:

Ըմ ժեմիլ կը սիրէր մնալուն հիւրը եւ այցելուն ըլլան տան մը, որ բառած էր Պիսքենթ գիւղի հիւսիսային մէկ բլուրին, որ կ'երեւէր գիւղի միակ կարողիւնէն, որ ծեծուած ըլլալով ճմբան բուխերէն ու ճիւններէն, խորշ ու փոսեր ստեղծած էին, երբեմն կրծելով Ըմ ժեմիլին կօշիկին սուր կրունկները: Նուրբ երեսնալու սիրոյն այս կլոր ու փափուկ միսերով գեղջկուհին տուրք կու տար գեղեցիկ երեսնալու: Ինք՝ որ տարին մէկ անգամ հագիւ մայրաքաղաք կ'իջնէր, կարեւոր գնում մը կատարելու, ո՞ւր պիտի հագնէր բարակ կրունկներով կօշիկները: Թող մաշէին անոնք. խիճերն ու խոտերը, փուշերն ու փոսերը բող կրծէին զանոնք. Ապու ժեմիլ նորը կը բերէր...: Միայն թէ Ըմ ժեմիլ մնար գիւղին գեղեցկուհին, նագելին, փնտռուած կիճը:

Իրմէ լսած էի, թէ բլուրին բառած այդ մենաւոր տունը, որ իրեն կը քաշէր աչքերը գիւղագնացներուն ու գրօսաշրջիկներուն, տունն էր մշահաւոր բանաստեղծ, փիլիսոփայ ու վիպագիր Միխայիլ Նայիմէի: Այնուհետեւ աչքերս կը մնային սեւեռուն այդ կանաչ-կարմիր, ծաղկուն տան վրայ, բաղձանքով մը, որ կարելիութիւն ստեղծուէր այցելութիւն մը տալու անուանի յիբանանցիին:

Ըմ ժեմիլ յանախ կ'անցնէր այդ երապուրիչ «վիլլա»յին կողէն, քիչ անգամ քայլերը կ'ուղղէր ետ:

Օր մը հարցուցի իրեն, թէ կարելի՞ էր այցելել քանաստեղծին, պատասխանեց ուրախութեամբ եւ գարմանով.

-Ուշա՞յն... ինչո՞ւ ոչ. Նայիմէն շատ հիւրասէր ու ազնիւ մարդ է: Միշտ տունը կ'ըլլայ: Եթէ կ'ուզես հեռաձայնով ալ կրնաս խօսիլ: Ես իր թիւը տամ Քեզի, որպէսզի երբ երբս, ուրիշ հիւրեր չըլլան մօտը: Առանձին անկի յարմար է:

Հեռաձայնեցի մոյն օրն իսկ: Նայիմէն պարզ ու սիրալիր, լիբանանեան ռնով, բայց մեղմ ձայնով ըսաւ.

-Ահլէն... սահաֆիէ՞... Ահլա ուս սահլա... (-Բարեւ... թղթակի՞ց ես... բարի եկար...):

Ժամադրուեցանք...  
Ու հիմա ես եմ բարձրացողը եօթը-ութ սանդուխներէն վեր գտնուող շքամուտէն, երկու կողմերը վարդեմիներով եզերուած, որոնց շուք կ'ընէին խնձորենիներ, կեռասնիներ, դեղձնիներ եւ տանձնիներ:



Օգոստոսի առաւօտ մըն է. գիւղը կը լողայ արեւի ծովուն մէջ: Մշակները արթնցած են արշալոյսի առաջին նառագայթներուն հետ: Մրգաստանները հասուն են. բարիք քաղելու եղանակը սկսած է արդէն: Պարակներու խորշերէն կը լսուի ծղրիթներու համերգ՝ չընդմիջուող յայտագրով: Երգը կը տարածուի լուսեան մէջ: Ծղրիթներու երկարող երգը կը յուշէ, թէ օրը տաք է ու իրենք պիտի երգեն միևնչեւ որ... նաթին: Կը մտածեմ այդ անբերուոյթ միջատ-քնակիչներուն մասին. ուրկէ՞ սորված են երածշտութեան այնքան մերդաշնակ կատարումներ:



Գիւղէն քարեկամուտի մը զիս կ'առաջնորդէ քանաստեղծին տունը: Վարդ ու կարմրած խնձորները մեզ կը դիտէին չորս կողմէն: Թէեւ դուռը բաց է, բայց չենք համարձակիր ուղղակի ներս մտնել: Դրան ելեկտրական կոճակը սեղմելու առիթը չենք ունենար սակայն. մեր ռոմանայնը արդէն իմացուցած է մեր գալուստը, ու երիտասարդուտի մը բաց դրան գիմաց երեւնալով՝ մեզ ներս կը հրաւիրէ, «Ահլա ու սահլա» (բարի եկաք) կրկնելով, լիբանանեան հիւրասէր լեզուով:

-Ըսի՞նք (պարտնը) տունն է, չէ՞...  
Երիտասարդուտի մեզ կ'առաջնորդէ արդիական կահաւորումով հիւրասրահ մը: Խնդրուած շոյլութիւն չկայ, ոչ ալ ցուցահանդէսեան յարդարանք: Ամէն ինչ պարզ է ու գեղեցիկ: Մեր նայուածքը գամուեցաւ գրադարանի մը վրայ, որուն մէջ կային գեղակազմ գիրքեր, աշխարհաեղակ մտածողներու հարստութիւնները ամփոփող: Պատերէն կախուած էին արուեստի գործ սիրուն նկարներ:

Կողմի սեփական կը յայտնուի միջահասակ, նուրբ կազմը-  
 ւածով, թխադեմ, աղամանդի մանր ֆարի մը փայլը ունեցող  
 պնդուն աչքերով, նուր պիտերով մարդ մը, մոխրագոյն գգես-  
 տով: Ինքն է, սիրալիր կ'ընդունի մեզ ու ձեռքը կ'երկարէ ժըպ-  
 տուն, բայց այդ ժպիտը վայրկեանակամ ստեղծուող եւ նոյն վայր-  
 կեանին մարդ դերասանական արտայայտութիւն չէ, որովհե-  
 տեւ այդ ժպիտը դեմքի գիծերուն մէջ քաֆնուած ուրիշ գոյն մըն  
 է, անոնցմէ անբաժան, ներդաշնակ:

Ակներեւ է իր համեստութիւնը, նոյնիսկ՝ ամօթխած, երե-  
 խայի մը նման, երկու երիտասարդուհիներու դիմաց: Իր այդ  
 տրամադրութիւնը եւ վերագրեցի իր խոնարհութեան, ինքնա-  
 բուխ խառնուածքի արդիւնք, հոգիէն թխող գեղեցկութիւն մը:

Գիտեմք, որ Միխայիլ Նայիմէ անուն մըն է ո՛չ միայն լիբա-  
 նանեան գրական աշխարհին, այլեւ՝ հոչակ մը, տարածուած  
 այս պատիկ երկրի սահմաններէն դուրս, շատ հեռուները, Ա-  
 մերիկաներէն մինչեւ Ռուսաստան:

Լիբանանեան համեստ, բայց առիւնեղ գիւղի մը՝ Պիս-  
 ֆանթայի այս գաւակը, նակաւոր դարձուցած Սաննիմի, միայն  
 քարձուցէ ու բարձրութիւն տեսած ըլլալով, բարձրանալու քաղ-  
 ձանքը իր մէջ հաւատք դարձուցած էր ժայռային անխախտ  
 սկզբունքով: Իր գործերէն մաս մը կարդացած էի: Մեծանգի  
 խորհրդածող մը թուացած էր ինծի, մարդասէր մը անկասկած:  
 Հեղինակ էր այդ օրերուն 26 հատորներու, 22ը՝ արաբերէն, եւ  
 չորսը՝ անգլերէն:

Արդև իր ծննդավայրին մէջն եմ, ծննդավայր՝ որ ներշնչ-  
 չումի ազդիւր եղած է եւ զինք բարձրացուցած վերելք վերելք,  
 իր մէջ ստեղծելով ոգեղէն Սաննիմ մը:



Մեր տեղերը գրաւել ետք, պահ մը լռութիւն կը տիրէ:  
 Աչքերս կը դեզերին պատերէն կախուած գեղանկարներուն վրայ:  
 Բայց հարկ է սկսիլ զրոյցը: Ուրկէ՞ եւ ո՞ր նիւթով սակայն...:  
 Բարեկամուհիս գրոյցին թելը կը թունէ քանաստեղծին մասին,  
 անոր գրականութեան շուրջ մանրակրկիտ ծանօթութիւններ  
 տալով, առանց մոռնալու, որ Պիսֆենթէ հպարտ է իր գաւա-  
 կով...: Ապա կրկին լռութիւն: Ինծի այնպէս կը թուէր, թէ ընկե-  
 բակցուհիս սպասած է իր նիւթը: Ես կը խզեմ լռութիւնը:

— Խորհրդապաշտ դպրոցին հարազատ հետեւորդ մը կը  
 թուիք ինծի. ճի՞շդ է արդեօք բնորոշումս:

— Տեսանելի գոյութիւնները արդէն ըմբռնելի են ու շօշափե-  
 լի, բոլորին կողմէ: Հարկ է թափանցել ներքին աշխարհին,  
 մտնել հոգիներէն ներս:

— Ներկայիս ի՞նչ կը գրէք:  
 — Ձեռնարկած եմ նոր գիրքի մը, կ'ըստ կարճ ու կտրուկ:  
 — Ի՞նչ է նիւթը...

-Նիւթը...: Այդ մասին ոչինչ կրնամ ըսել, որովհետեւ վերջնական ձեւի մը չեմ բերած տակաւին:

-Անգլերէնով գրել կը նախընտրէք, թէ ձեր մայրենի լեզուով:

-Նիւթեր կան, գորս անգլերէնով գրել կը նախընտրեմ:

-Շրկար ատեն Միացեալ Նահանգներ ապրած էք. ի՞նչ է ձեր տպաւորութիւնը այդ մեծ երկրին մասին:

-Այո, բնական տարի ապրած եմ Ամերիկա, գտնուած եմ մաշակաւորի տարրեր անկիւնները, սակայն կիրամանէն գեղեցիկ երկիր մը չեմ գտած: Եթէ կիրամանէն լաւ վայր մը գտնէի՝ բնակամարտ պիտի չվերադառնայի. ասիկա կ'ըսեմ ոչ թէ անոր համար, որ կիրաման հայրենիքս է, այլ որովհետեւ կիրաման իրապէս գեղեցիկ երկիր մըն է, արեւաշատ, հանելի կլիմայով, իր հովասուկ լեռներով, ջրառատ գիւղերով, իր յորդ պարտէզներով, մրգաստաններով, իր ծովով ու բնութեան շնորհած բոլոր բարիքներով: Ինձի համար կիրաման այն միակ երկիրն է, ուր կ'արժէ ապրիլ:

Կիրամանի գեղեցկութիւնը ցայտուն դարձնելու համար բանաստեղծաշունչ բանաստեղծ մը արտասանեց, շատ մեղմ եւ հաղորդական շեշտով.

Կիրաման բազմակրթութեան կեդրոն եղած է, երբ աշխարհ խաւարի մէջ էր: Հպարտ եմ, որ կիրամանի այս գիւղին գաւակն եմ...

-Բացի գրականութենէն, արուեստի ո՞ր միւզը կը նախասիրէք:

-Դժուար է համեմատութիւն մը ընել. բոլոր արուեստներն ալ սիրելի են ինձի,- երաժշտութիւն, նկարչութիւն, ճարտարապետութիւն: Ժամանակին նկարած եմ, բայց հետեւողական աշխատանք չեմ կատարած այդ ուղղութեամբ: Կեդրոնացած եմ գրականութեան վրայ: Երաժշտութիւնն ալ շատ կը սիրեմ:

-Բացի Ամերիկայէն, ո՞ր երկիրներու մէջ գտնուած էք:

-Եւրոպայի ամբողջ: Սովետ Միութիւն գտնուած միջոցիս հետաքրքրուեցայ Հայաստանի մասին. ըսին, թէ Հայաստան գեղեցիկ երկիր մըն է: Երեւանը յուսաւոր մայրաքաղաք մը, աշխարհին հետ մրցելու կարող: Փափաքեցայ այցելել, բայց ժամանակ չունէի:

Կարն լուսեմէ մը ետք, զրոյցիմ միւթը փոխուեցաւ եւ ստացաւ ընկերային ու հոգեբանական գոյն: Ներկայացող առիթը յարմար նկատելով՝ հարցուցի.

-Ինչո՞ւ չէք ամուսնացած...

-Որովհետեւ ասպարէզս թոյլատու չէր: Ձեռք կրնար պետք եղած չափով հետաքրքրուիլ կնոջմովս, զբաղիլ ընտանիքովս: Եղբայր մը ունիմ ամուսնացած: Ու այս երիտասարդուհին հղորս աղջիկն է. ան՝ որ ձեզ ընդունեց:

Երիտասարդուհին արդէն սուրբ կը մատրուակեր մեզի: Ան ժպտեցաւ.

Ի՞նչ կարծիք ունիք կիներու մասին: Ոմանք կիները կը համեմատեն սատանաներու հետ...: Արդա՞ր է այդ որակումը:

Նորբ՛հ: Ես մեծ յարգանք ունիմ կիներու հանդէպ: Այրը առանց կնոջ թերի ու կիսատ գոյութիւն մըն է: Կ'արժէ կնոջ հոգիին թափանցել, լաւ ճանչնալ զինք: Մարդիկ կան, որոնք կնոջ մէջ կը տեսնեն միայն մարմինը, միւր...: Պարբերաբար թու եւ լրագիրներու լայնփն ու երկայնփն փոռած մերկ կիներու նկարները կ'իմը չեն ներկայացնել իր ամբողջութեամբ: Կ'իմը միայն ֆիզիքական ներկայութիւն չէ, այլ՝ ոգի, առանց որում գայն ճանչնալ, անոր ներաշխարհին թափանցել կարելի չէ...

Արդէն ժամ մը անցած էր, բայց մեծ մտածողին հաղորդականութիւնը մեզ կը փառալերէր: Մեր աչքերը կրկին մտածողին պատերէն կախուած նկարներուն, նոր հարցումներ կ'որոնէինք, մինչ ան ծանօթութիւն կու տար նկարներուն մասին: Մատով ցոյց տալով երկու նկար՝ ըսաւ.

Այս երկու գեղանկարները ճշպարան Խալիլի ստեղծագործութիւններն են. հաւնեցա՞ք:

Այդ ուղղութեամբ երբ հարցումներ ուղղեցի, Նայիմէ պատասխանեց.

Ճշպարան Խալիլ ճշպարան որքան մեծ բանաստեղծ, նոյնքան տաղանդաւոր գեղանկարիչ մըն էր. սխանչելի նկարներ ունի: 15 տարի բարեկամութիւն ըրած եմ հետը: Հանճարեղ մարդ էր:

Բայց շուտ կորսնցուցինք, ըսաւ բարեկամուսիս յուզումով:

Այո. չարաչար կ'աշխատէր, գիշերներ կը լուսցնէր եւ անյազ կը խմէր, ինչ որ ֆայֆայեց իր առողջութիւնը, եւ հագիւ 47 տարեկան, մահացաւ:

Չէ՞ք կարծեր, որ մարդոց սահմանուած օրերը քիչ են. հասունութեան հագիւ հասած՝ կը հետանան այս աշխարհէն, առանց իրագործելու իրենց տաղանդը, առանց կենսագործելու իրենց փորձառութիւնը:

Ով գիտէ ճշպարան Խալիլ դեռ որքան ըսելիք եւ ընելիք ունէր...

Կեանքի տարօրինակ երեւոյթներու շուրջ տեսակետները տալով, զգացիմք, թէ իրապաշտ մարդն է Նայիմէ, միշտ ընդունող թակասագրի խաղերը:

Իմաստուն գրագէտին խօսքերը մեր ականջին մէջ կը դրոշմւնէին: Լուս կ'ունկնդրէինք զինք, որ քիչ ետք հարցումներ ուղղեց հայ ժողովուրդի մասին ընդհանրապէս, ու մեր մամուլին եւ գրականութեան մասին՝ մասնատրապէս: Պատասխանեցի ըստ պատշաճի, ապա հրածեշտ առիմք գրագէտէն, որ փափաք յայտնեց կրկին հանդիպելու:

Անիէն ուս սահլէն, կրկնեց՝ կրկին տեսնուելու բաղձանքը շեշտելով: Խոստացայ ու հրածեշտ առի այնքան համակրելի



անձնաւորութեան, վերադարձի գանապարհիմ խոկալով իր մեծութեան մասին:

**ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԻՊՈՒՄՍ**

Պայթած էր լիրամանեան պատերազմը, եւ ամբողջ Լիրամանի ժողովուրդը կ'ապրէր դժոխային կացութեան մը մէջ: Մեր ընտանիքը ապաստան գտած էր Պիսեմբէ գիւղը, որ ամբողջ մեր մախաւիքած գիւղն էր, սիրելի ամառանոցը: Ծանօթ էինք շրջանին, հետեւաբար մենք զմեզ կը զգայինք ապահով, հեռու՝ քնդամօթներու եւ ռումբերու որոտէն, սարսափէն:

Գիւղին մէջ թեւ անմիջական պատմալիք չկար մահուան ու այլ տագնապներու, քայց պարտէզներու մէջ կեանքը սառուցեալ վիճակ մը կը պարզէր: Մշակներու կանչերը չէին լսուեր հեռուներէն: Ծղրիթներն իսկ լռած էին, ու տխրութիւնը ընդհանրական էր:

Արդեօք ի՞նչ վիճակի մէջ էր Նայիմէն: Մտաբերեցի զինքն ու, առանց ժամադրութեան՝ ներկայացայ իրեն, նոյն քնակարանին մէջ: Ո՞ւր պիտի երթար բանաստեղծը, երբ իր հայրենիքը կ'այրէր: Արդէն խոստացած էի կրկին հանդիպիլ իրեն: Երկու տարի անցած էր մօտաւորապէս առաջին այցելութեանէս: Այսօր, երբ ես ալ ինչպէս վերադառնալու յոյս չունէի մօտիկ ապագային, գտնէ հոգեկան միջիթարութիւն զգացի մեծ լիրամանցիին մօտ...

Արդեօք ի՞նչ կը մտածէր Նայիմէն, այս անուր եւ անմախթութեան ռոքերգութեան մասին...: Արդեօք ի՞նչ ապրումներ խեղդեցին իր յոյսերը եւ արժանապատուութիւնը՝ երբ իր սիրելի հայրենիքը անսանձ ու անիշխանական տարրերու կողմէ կը թզկտուէր այսպէս...: Այս ի՞նչ աղետ էր, որ կ'այրէր իր սիրելի հայրենիքը...: Հեռաւոր աշխարհներէն, Միացեալ Նահանգներէն վերադարձած էր իր ծննդավայրին, իր հայրենիքին մէջ կեանքը շարունակելու ու հիմա այս անապասելին...

Երբքամ, ըսի ես ինձի հրաման մը արձակելով: Կ'արժէ տեսնել Նայիմէն, իմանալ իր տեսակետները, լսել իր հեռանկարներուն մասին...: Արդեօք երկար պիտի տեւէ՞ր այս պատեկազմը. վերջապէս փորձառու, աշխարհներ չափած մարդ է, բազմը. վերջապէս փորձառու, աշխարհներ կրնայ ունենալ, նագրագէտ, զգայուն: Նախագգացումներ կրնայ ունենալ, նախագգացումներ, որոնք մարդը կը վերածեն մարգարէի, գալիստի մասին հաստատումներ կատարելու հոգեկան գորութեամբ: Կը հաւատայի, թէ Նայիմէն այդ տիպարն է, ներշնչեալ անձնաւորութիւն...: Վերջապէս սա տգեղ եւ արտասովոր օրերուն մէջ կորսուածիս համար հոգեշունչ միջիթարութիւն մը կրնար ըլլալ Նայիմէն:

Տարի մը առաջ, ձմրան, այցելած էի իրեն Պէյրուֆի իր քնակարանը, որ կը գտնուէր Ժալ էլ-Տիպ արուարձանային շրջանին մէջ: Նորակերտ ու կոկիկ կահաւորումով քնակարան մըն էր, ուր կ'ապրէր դարձեալ եղբորը աղջկան հետ, որ ամուսնացած էր, ունէր աղջնակ մը: Հին ծանօթներու նման ողջագուրուեցանք, Նայիմէին հետ ունեցանք գրականութեան վերաբերեալ գրոյցներ: Այդ օր ան հետաքրքրուած էր դարձեալ հայ ժողովուրդի կեանքով, մանաւանդ լիբանանահայութեամբ, ինչ որ կը յայտնաբերէր, թէ անտարբեր չէր ան մեր ժողովուրդին նակատարգին հանդէպ, գիտէր, թէ անլոյծ ԴԱՏ մը ունիմք: Վկայութիւններ կը բերէր մեր արուեստագէտներուն մասին ու կը գրուատէր հայ ազգին առաքինութիւնները, աշխատասիրութիւնը եւ արուեստսէր ժողովուրդ մը ըլլալը, առանց մոռնալու անոր քաջութիւնը, դժուարութիւններու տոկալու իւրաքանչիւր գործիւնը եւ... թուրքին անիրաւութիւնը...



Նոյն առանձնատունը՝ պատկերներու գոգին մէջ շնչող: Վարդենիները միեւնոյն գեղեցկութեամբ ծաղկած են, դրան մուտքին թռչուններ կը գեղգեղեն. կարծես խոշոր վանդակ մը ըլլար այս «վիլլա»ն, այնքան հիւրասէր՝ բոլորին համար:

Անծանօթ մը չեմ. ինքնավստահ կը հնչեցնեմ դրան զանգը: Ինքն է քացողը. ոչինչ փոխուած է արտաքինէն: Միեւնոյն թերեւտն մարդն է, պնդուն աչքերով: Նայիմէի աչքերը շատ մտածել տուած էին ինծի. մոխրագոյնի երանգ մը, փայլուն ուլունքի նման: 75ը անց այդ տարիքին՝ տեսողութիւնը գորտուր, ժպիտը դեմքին, միշտ յարգալիր:

Անիկն ուս սահլէն...: Հրամեցէք...: Ինչ լաւ ըրիք...: Այս օրերուն Պէյրուֆէն եկողներ գրեթէ չկան: Համագիւղացիներ կ'այցելեն երբեմն, քայց...: Լիբանան կը մտաեզէ գիս...: Դուք հոս էք ուրեմն...: Կ'ըսեն, թէ շատ գէշ ոմրակոծումներ կ'ըլլան, ձայնասփիւռը մտիկ կ'ընեն...: Յուսահատական է...: Որո՞ւն միտքէն կ'անցնէր...: Թեւեւ ես գիտէի, թէ օր մը նման անհամութիւն մը պիտի ստեղծուէր...

Այս անմարդկային մթնոլորտը ձեզ ալ վիրաւորեց, ես ըսքէզ, ամչնալիք բաներ, որոնց սովոր չէր լիբանանցիին. մեր բարեբերուն խոտոր կը համեմատին նման ռեժիներ: Բնիկ, իրաւ ու անկեղծ լիբանանցիին, իսլամ ըլլայ թէ քրիստոնեայ, այս տեսակ ռեժիմին արարքներ չի գործեր: Երկիրը այրողները օտար ձեռքերը եղան, օտար վարձկաններ: Իսրայէլ ծանօթ է իր դաւերով եւ անոր գործակալները...: Յետոյ, ուրիշներ եւս թըշնամացան մեզի, չեմ գիտեր ինչո՞ւ: Բոլորն ալ կը նախանձին մեզի, այս փոքրիկ երկրին, անոր գեղեցկութեան: Միլիոնէ աւելի օտարներ կան Լիբանանի մէջ, որոնք կը վայլեն բարիքները այս երկրին, որ հարուստ է եւ նախանձելի դիրք ունի իր առեւ-

տուրով, շինարարութեամբ, նախաձեռնութեամբ, քաջութեամբ: Հայերն ալ հոս եկան, քայց անոնք միայն շինեցին ու շէնցուցին այս երկիրը եւ ոչ ոքի ափ բացին:

-Ի՞նչ կոչ մը ուղղեցի՞ք իրանացիներուն, իբրեւ իրանացի գրագէտ, փիլիսոփայ եւ անուանի դէմք:

-Ո՛չ, ի՞նչ բանի կ'օգնէ կոչը...: Ո՞վ պիտի լսէ...: Մարդիկ կորսնցուցած են իրենց գիտակցութիւնը, մտածելու կարողութիւնը. ամէն մէկը խենթ մը դարձած է ու կը վնասէ միւսին, չեն նայնար ո՛չ դրացի, ո՛չ հայրենակից...: Այսպիսի օրերուն կոչի ուժին չեմ հաւատար: Ձեռն ալ ուզեր նոյնիսկ տող մը գրել այս մասին:

-Պիտի չուզէի՞ք Լիբանանի արիւնալի բախումներուն մասն գիրք մը գրել, ձեր անկիւնէն դիտած՝ կշռելով օրուան հարցերը, վայրագութիւնները:

-Ո՛չ. ասիկա սիրելի եւ հետաքրքրական միւթ մը չէ ինձի համար:

-Ձեր երիտասարդութեան օրերուն փափաքած էք քաղաքական պաշտօն մը ստանձնել Լիբանանի մէջ:

-Քաղաքականութիւնը ընտանիքիս սիրած: Եթէ նոյնիսկ հանրապետութեան նախագահութիւն առաջարկէին, պիտի մերժէի. ասիկա իմ կայուն չէ:

-Ի՞նչ կը մտածէք Լիբանանի ապագային մասին. Լիբանան իր անկախութիւնը կրնա՞յ պահել...

-Լիբանան չի կրնար կորսնցնել իր անկախութիւնը: Հետզհետէ պիտի հանդարտի երկիրը. ամէն չարիք վերջ մը կ'ունենայ...

-Ձեր գրական աշխատանքները կը շարունակէ՞ք:

-Այո, օրական հինգ-վեց ժամ կ'անձաւոր կերպով կ'աշխատիմ:

-«Սապ'ուն» գիրքէն ետք ի՞նչ գործեր երատարակեցիք:

-Երեւոյն հատոր. անցեալ տարի վերջին գիրքս լոյս տեսաւ, «Մին ուա՛հի Մեսիհ» խորագիրով գիրքս. այս կը նշանակէ՝ «Յիսուսի ներշնչումէն»: Հիմա այդ գործս կը թարգմանեմ անգլերէնի: Թարգմանութիւնը անձամբ ես կը կատարեմ: Մօտ օրէն պիտի աւարտեմ:

-Ի՞նչ է թեման այս գիրքին:

-Քրիստոսի կեանքին նուիրուած է: Քրիստոսի այն 18 տարիներուն, որոնց շուրջ միշտ լուս մնացած է եկեղեցին եւ ոչ ոք բան գիտէ: Ուսումնասիրութիւններ կատարեցի եւ սեփական համոզումներ գոյացուցի: Գիտէ՞ք, Քրիստոս 12 տարեկանին կորսուեցաւ տանարին մէջ: Այդ տարիքէն մինչեւ 30 տարիքը ո՞ր մնաց ան: Ձեռք գիտեր: Այս 18 տարիներուն կեանքը պարզեցի:

-Համոզի՞չ է ձեր փաստարկումը:

-Աստահ եմ: Յիսուս 12 տարեկանէն մինչեւ 30 տարեկան, այսինքն՝ 18 տարիներ մնաց Մեռեալ ծովու շուրջ, հոն ստեղծը-

ւած աղանդի մը շրջանակին մէջ, գոր կը կոչէին «Սասնացի-  
ներ»։ Առանձին փիլիսոփայութիւն ունէին, ընկերային յատուկ  
սկզբունքներ ու կեցութեամբ։ Ընկերային-հասարակական կեան-  
քին շուրջ իւրայատուկ ըմբռնում։ Յիսուս մէկ անգամն էր  
անոնց։ Յովհաննէս Մկրտիչին հետ, որ Յիսուսէն վեց ամսու  
մեծ էր տարիքով։ Այդ դպրոցին աշակերտեցաւ Յիսուս եւ ապա  
սկսաւ իր առաքելութեան՝ հրաշքներուն։

-Քանի՞ էջնոց գիրք մըն է։  
-250 էջ։ Կրնամ ցոյց տալ ձեզի, մօտս օրինակ մը ունիմ։  
Պատկերագարդ կողքով, Յիսուսի դիմանկարով գիրք մըն  
էր. երբ նկարին կը նայէի, Միխայիլ Նիայիմէ ըսաւ.

-Յիսուս ընտր նկար չէ ունեցած, իսկ այս նկարը գծագրու-  
թիւնն է ուսու գեղանկարչի մը։ Այս նկարը պատմութիւն մը ունի։  
Յիսուսի օրերուն թագաւոր մը կը հիւանդանայ։ Լուր կը դրկեն  
Յիսուսի, որ գայ եւ բժշկէ հիւանդ թագաւորը։ Յիսուս գրադած  
ըլլալով՝ չի կրնար երթալ հիւանդ թագաւորին ինչ որ անոր կը  
դրկէ իր դէմքին նկարը, գոր ունեցած է յաթի կտոր մը երեսը  
քսելով։ Հիւանդ թագաւորը այդ պատկերաւոր յաթը կը քսէ  
երեսին եւ իսկոյն կը բուժուի։

-Գիտե՞ք, այդ թագաւորը հայ թագաւոր մըն էր, անունը՝  
Արգար...

Նայիմէ պահ մը կեցաւ, տեսակ մը շփոթով, ապա՝

-Այո, ես այդ անունը գրեցի ԱՊԺԱՐ։ Այդպէս ըլլալու է...

-Դ՞նչ անդրադարձ ունեցաւ այս գիրքը Եկեղեցիէն ներս.  
Եկեղեցականներ հակադրեցին։

-Շատ ջղայնացան, «Նայիմէն սուտ է» ըսին, բայց ես  
կարեւորութիւն չտուի։

-Հակամատենի՞ք ձեզ ամբաստանողներուն։

-Հակամատենի չեմ սիրել. բնաւ վեճ չեմ ստեղծեր։ Անոնք  
տուին իրենց կարծիքը։ Ես գրելիքս գրած էի։ Այդ էր նշմար-  
տութիւն։ Եկեղեցին դեռ Քրիստոսը չի ճանչնար։ Թաղած են  
գայն հագար կտորներով։ Պէտք է ճանչնալ իրաւ Քրիստոսը ու  
հետեւիլ անոր փիլիսոփայութեան, որ սիրոյ փիլիսոփայու-  
թիւնն է։

-Եկեղեցի կ'երթա՞ք, հաւատացեա՞լ էք։

-Եկեղեցի չեմ յաճախեր. ես կը հաւտամ աղօթքին։ Կ'աղօ-  
թեմ առանձինս՝ տանս մէջ։



Գիրքին նիւթը փակեցինք ու դարձեալ անցանք Լիբանանի  
տազնապին։ Նայիմէ ցաւով հաստատեց Լիբանանի մէջ գոյու-  
թիւն ունեցող բազմատեսակ կազմակերպութիւններու իր  
տեսակէտը՝ իբր վտանգի աղբիւր։

-Ամէն տեսակ կուսակցութիւն կայ մեր երկրին մէջ. այսֆա-  
նը շատ է։ Բոլորն ալ կը նզնին իրենց շահը ապահովել, մոռնա-

լով Լիբանանի շահերը: Ժամանակին, ավիդ մէջ դրամ թռնած, մոյնիսկ ցոյց տալով զայն մարդոց, կը քալէիր քիւմբերնորով, գիւղէն քաղաք, ոչ ոք ծուռ կը նայէր քեզի. գողութեան մասին մտածող չկար: Իսկ այսօր անապահովութիւն է: Պէտք է չորցնել Լիբանանը քանոզ օտար ձեռքերը: Կրօնքը ոչ մէկ պատճառ պէտք է ըլլայ խռովութիւններ ստեղծելու: Ես անդրադարձայ հայկական ջարդերուն, Եղեռնի 60ամեակին եւս, ու ըսի իմ խօսքս, թէ՛ անմեղներ ջարդեցին, որովհետեւ քրիստոնեայ էին: Ասիկա սարսափելի է: Մարդ արարածը պէտք է ըլլայ ազատ ու հետեւի իր ուզած կրօնքին:



Աւելի քան ժամ մը տնօր գրոյցի ընթացքին ես նկատեցի, թէ լիբանանցի գրող, անգլերէն ու արաբերէն 33 գիրքերու հեղինակ այս փիլիսոփայն այնքան ալ յռետես չէր Լիբանանի սպագայի նկատմամբ, եւ կը յուսայ, որ այս երկիրը տակաւին շատ խօսիլ պիտի տայ իր մասին, որովհետեւ ան երկիրն է գեղեցկութեան, սիրոյ եւ աշխատանքի:



Իր պատանեկան քանի մը տարիները անցրելով Ռուսիոյ սահմաններուն մէջ, Քիւր եւ այլուր, նախակրթարանի ուսումը հոն ստացած է, իսկ երիտասարդութեան Միացեալ Նահանգներու մէջ հետեւած է քարճարագոյն ուսման, հմտանալով անգլերէն լեզուին մէջ:

Մ. Նայիմէ իր կեանքին քան տարիները կ'անցընէ Միացեալ Նահանգներ, յատկապէս Նիւ Եորք ու Նիւ Եորքի շրջակայքը: Հոս կը սորվի անգլերէն եւ կը սկսի մոյն լեզուով ստեղծագործել: Ամերիկան գաղտնի չունի լիբանանցի գրագէտին ու իմաստասէրին համար, բայց կարծես ձանձրոյթ կը զգայ օտար այդ հողերուն վրայ ու կ'երագէ իր հայրենիքը, իր ծննդավայր գիւղը:

Մեր տեսակցութեան միջոցին, հարցուցի-  
«Պարոն Նայիմէ, դուք՝ որ Ամերիկա ապրած էք երկար տարիներ, երկրին լեզուն իրացուցած ու անգլերէնով գիրքեր հրատարակած էք, ինչո՞ւ վերադարձաք Լիբանան, մա՛նաւանդ ներկայիս, երբ ամէն մարդ չըսենք, բայց շատեր կը ցանկան այդ Նոր աշխարհին մէջ ապրի...»

Նայիմէ քննադատ մը ունեցաւ, փայլուն աչքերը անգամ մը եւս պնդեցին, յետոյ ըսաւ.

«Այո, քան տարի ապրեցայ Նիւ Եորքի եւ Միացեալ Նահանգներու կարգ մը քաղաքներուն մէջ, բայց չսիրեցի այդ երկիրը: Այս պէտք է խոստովանիմ: Տարօրինակ, անբնական երկիր մըն է Ամերիկան: Օր մը պատուհանիս առջեւ կայնած կը

դիտելի նիւ Եորքի ամենէն լայն պողոտան, որ անագին խնդում, եռուզեռ, ինքնաշարժներու եւ մարդոց խառնիճադանն մը կը պարզէր: Մարդիկ շուար ու հեճոտ, կարծես բան մը կորսնցուցած ըլլային ու գայն փնտռէին աջ ու ձախ վագելով: Ըսի եւ ինծի. այս մարդիկը ի՞նչ կորսնցուցած են, որ այսպէս խելայեղ վագֆի մէջ են: Ինչո՞ւ համար այսքան իրարանցում՝ պատահ մը հացի համար...: Յոգնեցուցիչ էր նոյնիսկ այդ տեսարանը դիտելը, ո՛ր մնաց հոն ապրիլը: Նոյն վայրկեանին որոշեցի վերադառնալ գիւղս՝ Պիսիճնի, հանդարտ ու խաղաղ, անաղմուկ ու անվրդով գիւղս:

Ապա, գիւղի տան իր պատուհանէն մօտենալով դուրսի աշխարհին, բնութեան հետ գրուցելու նման ըսաւ ինծի, լայնածիր աշխարհ մը ցոյց տալով, կանաչի մէջ պարող լեռնաշղթան Սանիմի եւ հեռունները Ույուն էլ-Սիմէնի...

Այր տեսնէ՞ք այս բնութիւնը. կեանքն իսկ է: Համատարած լռութիւն է, միայն թռչուններու գեղգեղելը կը լսուի...: Հոս դրախտային աշխարհ է...: Ես չուզեցի կեանքս շարունակել խառնիճադանին մէջ...



Ու երկար ապրեցաւ գիւղի մարդը, իր համագիւղացիներուն հետ: Զմբան ամիսներուն կու գար Պէյրութ, Անթիլիասի մօտիկ շրջանի մը մէջ ապրելու, իր գիրքերուն եւ իր ստեղծագործական աշխարհին յանձնուած: Գարնան հետ կը քարձրանար գիւղ, ուր կը վայելէր բնութեան բարիքները, պսպղուն ժայռերու, կեռասենիներու, խնձորենիներու, դեղձենիներու հրաշալի համանուագին հետ, ակամջը լարած թռչնագգիներու համերգին:

Աստուած իրեն շնորհած էր երկարակեաց ըլլալու բախտը: Ապրեցաւ մինչեւ 99-100 տարիքի:

1890ին ծնած Միխայէլ Նայիմէ մեզմէ քաժնուեցաւ 1989ի Փետրուարին, իր ետին ձգելով իւրայատուկ գրականութիւն մը, որ 20րդ դարու համամարդկային գրականութեան լուսագոյն մտոյշներուն շարքին կը դասուի ապահովարար:

Միխայէլ Նայիմէ ծանօթ անուն է համայն Լիբանանի, ինչպէս նաեւ՝ Արեւելի եւ Արեւմուտքի գրական աշխարհին մէջ:

ՇԱՀԱՆԳՈՒԽՏ

**ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ**

**«ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ»**

Հեղինակ՝ Ժիրայր Գանիկեան  
(Պեյրուք, 1996)

Ժիրայր Գանիկեան

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ  
ՈՐՈՆՈՒՄՆԵՐ**

ՊԵՅՐՈՒՔ  
1996

Քային հարցերուն վրայ ու ընթերցող լայն խաւի մը սեփականութիւնը դարձնել հետեւողական այն որոնումները, գորս յաջողած է արդիւնաւորել այս գրքին հեղինակը՝ րանասիրական կայուածին մէջ իր ցուցարեւած անդուլ եւ անխնայ աշխատասիրութեան շնորհիւ:

Նորատիպ հատորը Ժիրայր Գանիկեանի երրորդ գիրքն է, առաջինն ըլլալով Պեյրուքի Հայկազեան Դպրոցի հայ մամուլի հաւաքածոներուն ցուցակը (1974, մեքենագիր եւ քաղմագրը-

Անցեալ տարուան Փետրուար ամսուն, Պեյրուքի հայ մամուլը առաջին արձագանգ մը տուած էր արդէն լիրանանահայ մատենագէտ, րանասէր եւ կրթական մշակ Ժիրայր Գանիկեանի նորատիպ այս հատորին մասին՝ խանդավառ տողերով նկարագրելով այն րագմամարդ գիւնծօնը, որ կայացած էր տեղւոյն «Թէքեան» կեդրոնին մէջ, «Բանասիրական որոնումներ»ուն լոյս ընծայման րարեքաստիկ առիթով:

Հիմա, երբ մեր սեղանին է հասած հետաքրքրական այս մատենանը, կ'արժէր պահ մը ուշադրութիւն ստեղծել հոն արծարծուող գրական-մշակութային հարցերուն վրայ ու ընթերցող լայն խաւի մը սեփականութիւնը դարձնել հետեւողական այն որոնումները, գորս յաջողած է արդիւնաւորել այս գրքին հեղինակը՝ րանասիրական կայուածին մէջ իր ցուցարեւած անդուլ եւ անխնայ աշխատասիրութեան շնորհիւ:

ւած), որում կը յաջորդէր, 1984ին, խիստ այժմեական գեղատիպ հատոր մը՝ «Հայ նոր պարբերականն մամուլը 1967-1981», որ մէկ կողմէ հայ մամուլի անառարկելի մասնագետ մը կը շահեցնէր Ափիւտին, միւս կողմէ ալ ու միանգամըմիշտ՝ կ'ապացուցէր հեղինակին բանասերի գորաւոր ջիղը, որ յոգնիլ չի ճանչար բնաւ ու իր պրպտումներն ու ճիգերը գիտէ արդիւնատրելի քացառաբար ակադեմական մերձեցումներով ու խղճամիտ եւ հիմնատրեայ տեսութիւններով:

Իր վերջին գիրքին հրատարակութենէն անցած էր արդէն աւելի քան 10 տարի: Դանիելեան, այս ժամանակամիջոցին, թե՛բաւ մը ցուցարբրած էր դէպի կրթական ասպարէզը ու պաշտօնի կոչուած ՀԲԸՄի Յովակիմեան-Մանուկեան եւ Դառուի Յակոբեան գոյգ վարժարաններէն ներս, որպէս տնօրէն: Եւս առանկ' պատասխանատու խմբագիր նշանակուած էր «Շիրակ» գրական ամսագրին: Պաշտօններ, գորս ձեռնհասօրէն ու նուիրումով կը վարէ ցայսօր: Բայց ինչ որ ամէնէն էականն է, ան պիտի շարունակէր գրիչ շարժել բանասիրական ու մատենագիտական հարցերու շուրջ, պարբերաբար երեւնալով «ՀԱՅԿԱՎԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՈՒՄ»-ին ու իր իսկ խմբագրած «Շիրակ»ի էջերէն, միշտ հետամուտ նո'ր յայտնագործումներու, նո'ր գիտերու: Ահա, տարբեր առիթներով գրուած այդ յօդուածներն են, որ եկած են մէկտեղուիլ ներկայ հատորին մէջ, կողքի մը տակ ամփոփելով առանկաբար հայ մամուլին եւ ընդհանրապէս հայ բանասիրական կայուածին առընչուող նիւթերու երկար շարք մը, որ կրնայ շահագրգռել ո'չ միայն այդ մարզին սակաւաթիւ մտաւորականները, այլեւ՝ մեր մշակոյթով խանդավառ ընթերցող խաւը եւս:

368 էջոց նորատիպ այս հատորը լոյսին եկած է «Ալեք Մանուկեան Մշակ. Հիմնադրամ»ի եւ Լիգայոնի «Կիւլպէնկեան» հիմնարկութեան հայկական բաժնի նիւթական յատկացումներով: Հեղինակը գայն ձօնած է «հայ լրագրութեան առջիններէն՝ Ալդարարի (1794-1796) լոյս ընծայման երկհարիւրամեակին, եւ հայ լրագրութեան հիմնադիրին՝ Յարութիւն քինյ. Շմաւունեանի մշտադալար յիշատակին»: Յառաջաբանը կը պատկանի Հայաստանէն գրականագետ Լեւոն Հախվերտեանի, որ «բանասիրական որոնումների հրճուանքն ու տառապանքը» խորագրեալ իր գիրքով կը շեշտէ բանասերէն պահանջուած գլխաւոր յատկանիշները. «Անսպառ համբերութիւնից բացի, [նա] պէտք է փաստի՝ հետքերը քրքրելու, անվերջանալի անելու աննահանջ յամառութիւն, վերջապէս, քնարական շեղումներից ապատ ստուգապատում գրելաձեւ»:

Ինչպէս դիտել տուիմք արդէն, գիրքը ամբողջութեամբ կ'աղերսուի հայ մամուլին, տիպ ու տառին եւ անոր երախտաւորներուն: Եւ հակառակ այս ընդհանուր թեմային, հեղինակը յարմար դատած է գայն բաժնել 3 անջատ ենթամասերու, բժախնդրօրէն դասաւորելով մէկտեղելի նիւթերը ու համախմբելով զանոնք առանձին խորագիրներու տակ:



Այսպես, գիրքին Ա. մասը կը կրէ «Էջեր հայ մամուլի եւ տպագրութեան պատմութենէն» վերադիրը (էջ 9-138): Այստեղ, Դանիէլեան կը փորձէ (ու ի վերջոյ կը յաջողի) գտնել ինքնուրուից հայ լրագրութեան առաջին պատմաբանին, որ ուրիշ մէկը չէ՝ եթէ ոչ «Բաւմաւիտ»ի անդրանիկ խմբագիր Հ. Գաբրիէլ վրդ. Այվազովսիին: Հետաքրքրական է իմանալ, որ հայ պարբերական մամուլի պատմագրութեան սկզբնական քայլերը կ'առնուին հայերէն առաջին թերթին՝ «Ալդարար»ի լոյս ընծայումէն (1794, Մատրաս) աւելի քան 50 տարիներ յետոյ: Արդարեւ, ամէնէն առաջ, 1850ին է որ Վիեննայի Միֆթարեան հայրերէն Փիլիսոփոս վրդ. Յամբեան՝ տեղւոյն «Եւրուպա» շաբաթաթերթին մէջ «Ազգային լրագիրներուն ու օրագիրներուն պատմութիւնը» խորագրեալ յօդուածաշարք մը կը ստորագրէ, ներկայացնելով 17 անուն հայերէն թերթ: Աւելի ուշ, 1863ին, Գրիգորիս վրդ. Ալեքեան (հետագային՝ ընտրեալ կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ) իր երատարակած «Թռչնիկ Պեգասեան» հանդէսին մէջ (Պոլիս) կը կատարէ նշանակաւոր փորձ մը, մինչ նիշոյ նոյն տարին՝ իրեն կը հետեւին հայագետ-արեւելագետ Վիլհոլմ Լանկլում (Revue de l'Orient-ի մէջ կու տայ 69 թերթի անուն) եւ Թադէոս Միլերգատեանց, որ ֆրանսական մայրաքաղաքի «Փարիզ» կիսամսեայի մէջ ընթերցողին կը ծանօթացնէ 77 անուն հայերէն թերթեր...

Դանիէլեանի պրպտումները ցոյց կու տան սակայն, թէ վերոնշեալ յօդուածներէն աւելի առաջ, 1874ին, Վենետիկի «Բաւմաւիտ»ին մէջ հրատարակուած անստորագիր գրութեամբ մը, թերթին խմբագիրը՝ Հ. Գաբրիէլ Այվազովսի կը հանդիսանայ հայ լրագրութեան առաջին պատմաբանը, որ խօսելով իրեն ժամանակակից հայերէն լրագիրներու մասին, ընթերցողին հանգամանօրէն կը ներկայացնէ 9 անուն հայատառ թերթեր: Բայց այս ընդհանուր բաղուածքին մէջ ինչ որ աւելի հետաքրքրական է, այն է՝ թէ վերոնշեալ 4 պատմագիրներէն միայն Ալեքեան վարդապետն է, որ իր յօդուածին մէջ կը յայտնաբերէ Մատրասի «Ալդարար»ը ու գայն կը համարի անդրանիկ հայ լրագիրը: Հաստատում մը, որ հետագային չհերքուեցաւ քննու ու այսօր՝ նուիրականացած պատմական իրողութիւն մըն է արդէն:

Այլ առիթով մը, «Հայ պարբերական մամուլի հարցեր» գրութեամբ, Դանիէլեան հարկ կը սեպէ յստակացնել հայ մամուլի ընդհանուր թիւը: Այդ առընչութեամբ, նաեւ կը բաղդատէ այս մարզին մասնագէտներուն կարծիքները (Գարեգին Լեւոնեան, Հ. Մկրտիչ Պօտուրեան, Արտաշէս Կարինեան, Յովհ. Պետրոսեան, Ամալիա Կիրակոսեան, Արտաշէս Տէր Խաչատուրեան, եւ այլն) ու համամիտ կը գտնուի անոնց՝ որոնք «մեր օրերուն կը համարակից 4000ի հասցնել ընդհանուր գումարը հայ պարբերաթերթերուն»: Այնուհետեւ, Դանիէլեան կը ցուցակագրէ եւ կը ծանօթացնէ անյայտ մնացած աւելի քան 100 պարբերաթերթի անուններ, որոնք տեղ չեն գտած մատենագիտական առկայ (մինչեւ 1978) ցուցակներուն մէջ: Ան չի մոռնար

աւելցնել ման՝ թէ «հայ մամուլով վրադող բանասէրներու ուշադրութեան պէտք է արժանանայ օտար լեզուներով լոյս տեսած ու տեսնող թերթերու պարագան, որոնց թիւը երբեք անրհամարելի չէ: Վերջին հաշուով, հայերու կողմէ հրատարակուած պարբերաթերթերը, որոնց բովանդակութիւնն ալ եթէ արտացոլացումն է տուեալ շրջանի հայութեան մշակութային ու կենցաղային կեանքին, ոչ միայն կարելի չէ անտեսել, այլ և, կը խորհինք, անպայմանօրէն հարկ է պանոնք եւս ներգրաւել հայ «պարբերական մամուլ» հասկացողութեան մէջ, եւ հետեւաբար՝ հայ մամուլի ցանկերուն մէջ, ինչ որ կարգ մը բանասէրներ ըրած են ու կ'ընեն: Այլ իօսքով, այդ օտար լեզուով լոյս տեսնող պարբերաթերթերուն տալ նոյն հրաւումնքը, որ բոլորին կողմէ սրուած է հայատառ թրքերէն թերթերուն» (էջ 35):

«Ակնարկ Լիբանանի մամուլի պատմութեան» յօդուածով, հիմնուելով իր բաղած տեղեկութիւններուն վրայ, Ժ. Դանիէլեան կը վստահեցնէ, թէ յիբանանահայ առջիննիկ թերթը 1913ին Պէյրութի Ամերիկեան համալսարանի Հայ Ուսանողական Միութեան նախաձեռնած «Միութիւն» ձեռագիր պարբերականն է, որմէ լոյս տեսած ըլլալ կը կարծուի Յ. Ստեփանյանի խմբագրութեամբ՝ երբեմնի գաշակցական գործիչ Թ. Սրուանդ Խաթանասեանի անձնական վկայութեան: Ասյմ թերթէն օրինակներ չեն պահուած: Ստոյգ է ման, թէ ստոր կը յաջորդէ Ջահիլի «Լոյս» խմբարտիպ երկէջանի թերթիկը՝ Յակոբ Մարթայեանի խմբագրութեամբ (սակկա Առնիկէն հմուտ լեզուարան եւ թրքագէտ Յակոբ Տիրաչարն է, որ 1918ին իրրեւ թրքական բանակի սպայ՝ Ջահիլէ կը գտնուէր): Լիբանանահայոց երրորդ թերթն ալ կը հանդիսանայ Ճիպէլի ամերիկեան որբանոցին «Հոսանք»ը (1921): Այսպիսով, ճշդիւ է ետ առաջին երեք թերթերը, Դանիէլեան կու տայ յիբանանահայ 35 պարբերաթերթերու անուններ, որոնք «ցարդ (նկատի ունի 1973 թուականը- Լ.Շ.) ոչ մէկ յիշատակութեամբ արժանացած են մատենագիտական աշխատասիրութիւններու մէջ»: Ասոնց մէջ սակայն, մեր ուշադրութիւնը գրաւեցին անուններ, որոնց մասին գոյութիւն ունեցող տուեալները հակասական են տակաւին: Օրինակ, Ժ. Դանիէլեան կը յիշատակէ «Նոր Բաստիլլ» անունով ձեռագիր թերթ մը, հետեւեալ մամրամասնութիւններով. «Կատմութիւն (Սուրիա), 1927 Օգոստոս: Արաբերէն եւ հայերէն բովանդակութեամբ: Յօդուածներ ստորագրած են՝ հնչակեան գործիչ Սարգիս Տիրունի, Յարութիւն Մատէեան եւ Հայկապոն Պօլաճեան՝ ծածկանուններով: Մէկ թիւ» (ՏԵՍ էջ 85): Մինչդեռ, նորագոյն տուեալով մը, մեր ձեռքին տակ գտնուող Արտ. Տէր Խաչատրեանի «Ս. Դ. Հ. Կ. ի մամուլը» հատորիկին մէջ (Պէյրութ, 1992), նոյն թերթը ներկայացուած է իրրեւ «Նոր Պասթիլ», հետեւեալ ծանօթագրութեամբ. «խմբարտիպ: Արուստ կղզի (Լիբանան):

1927-1928: Հրատ. Ս. Տիսրունի, արաբ հայրենաստերներու հետ» (ՏԵՄ 02. գրքակազմ, էջ 32):

Թէ՛ անունի, թէ՛ հրատարակութեան վայրի եւ թէ տպագրութեան եղանակի հիմնովին տարբեր տուեալներ:

Նմանապէս, երկրորդը կը ստեղծուի Ժ. Դանիէլեանի յիշատակած «Հնչակեան Մատենան» անունով հրատարակութեան պարագային ալ (Պէյրութ, 1952-1955, 6 պրակ), իսկ Արտ. Տէր Խաչատուրեան ակնարկելով այդ «Մատենան»-ին, վերոյիշեալ իր գրքակին մէջ կը գրէ. — «Թէ՛ն ամսաթիւ եւ տարեթիւ կը կրեն անոնք, սակայն մասնով չեն կրնար սեպուիլ: Առանձին նիւթեր են, առանձին (մէկ) հեղինակի գործ: Անոնց պարբերականութիւնը չի կրնար պահուիլ պարբերական մասնովի մաս կապմել տալ» (ՏԵՄ 02. աշխատասիրութիւնը, էջ 6-7):

Յաջորդող էջերուն մէջ, առանձին յօդուածով մը, Ժ. Դանիէլեան կ'ուրուագծէ Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Հասկ» պաշտօնաթերթին անցած ուղին (1932-82), անոր յիմնաւեակին առիթով: Կարծես որդէ դերը մասնաւորաբար անոր առաջին խմբագրին՝ Բարգէն Աթոռակից կաթողիկոս Կիլիկեանին եւ համանուն հայագիտական տարեգիրքի (Ա. թիւր՝ 1948-ին) հիմնադիր՝ Գարեգին Ա. Յովսէփեանց հայրապետին: Իր եզրակացութիւնը հետեւեալն է. — կը մնայ յուսալ եւ մաղթել, որ ՀԱՍԿ ամսագիրը, նոր ուժերու, նոր աշխատակիցներու ներգրաւումով, վերստին վերածուի երջանակալիշատակ Բարգէն Կաթողիկոսի «Ատոք Հասկ»-ին եւ վերստին դառնայ երջանակալիշատակ Գարեգին Ա. Կաթողիկոսի պատկերացուցած «ԽԱՍԱՔԱՐԱՆ հայ գիտական մտաւորականութեան»:

Անցնելով հայ գիրքի պատմութեան՝ Դանիէլեան նոր յայտնաբերումներ կը կատարէ Հայաստանի առաջին տպարանին եւ անոր առաջին հրատարակութիւններուն մասին: Մանօթ իրողութիւն է, թէ Հայաստանի հողին վրայ հաստատուած առաջին տպարանը կը հանդիսանայ Ս. Էջիմածնի տպարանը, քացուած՝ 1771ին, Սիմէոն Սրեւանցի Կաթողիկոսի օրօք: Բայց ցարդ ակնհայտ շփոթ մը տիրած էր Մայր Աթոռի տպարանէն լոյս ընծայուած առաջին գրքին անուան առ թուականին շուրջ: Դանիէլեան ճշդումներ եւ ուղղումներ կատարելով այս մասին աշտայայտուած բանասէրներու (Ռ. Իշխանեան, Թէոդիկ, Արտակ եպս. Սմբատեանց, եւ այլն) դատումներուն մէջ, կ'եզրակացնէ թէ Ս. Էջիմածնի տպարանին երախայրիքը կը հանդիսանայ հիմնադիր հայրապետին «Գիրք Աղօթից որ կորչի Ջրօսարան հոգեւոր» փոքրածաւալ գրքակը, լոյսին եկած՝ 1772ին: Անոր կը յաջորդէ միեւնոյն կաթողիկոսին պատրաստած հաստափոր մէկ «Տօնացոյց»ը, 1774ին:

«Բանասիրական որոնումներ»-ու ք. մասով (էջ 139-268), հեղինակը սեւեռումի կ'ենթարկէ «Հայ մամուլի եւ գիրքի երախտաւորներ»ը: Ու սկիզբէն եւեթ ան կը հմայէ մեզ իր յայտնաբերումներով եւ անսոգիւտ տեղեկութիւններով:

Արդարեւ, պէտք է ընդգծել շուտով, որ արկածախնդրական վէպի մը մման հետքերը բնութեամբ կարդացուող ուսումնասիրութիւն մըն է այս գլուխին առաջին ընդարձակ յօդուածը (շուրջ 60 էջ)՝ «Յովսէփի փաշա Վարդանէան»՝ ակնանաւոր լրագրողն ու վիպագիրը» խորագրեալ, ուր լոյսին կու գայ «Ազապի» վէպին եեղինակ ու ժԹ. դարու պոլսահայ յառաջապահ սերունդի ամենէն պայծառ ու հեղինակաւոր դէմքերէն մէկուն կեանքին ու ազգային գործունէութեան ընդհանուր նկարագիրը, գուգահեռարար համադրելով անոր մասին ցարդ գոյութիւն ունեցող անդեկութիւններն ու վկայութիւնները, հուսկ հարրատացնելով գանձնէ առաջին անգամ օգտագործուող արխիւային մոր նիւթերով ու փաստաթուղթերով:

Ուսանած՝ Վիեննայի Միսիթարեանց վանքը, Յովսէփի փաշա Վարդանեան (1815-1879) շուրջ 55 տարի պաշտօնավարած է Օսմանեան արքունի նաւարանին մէջ՝ հասնելով ծովակալութեան Ա. Բարգմանի («Պահրիյէ պաշ Բերքիմանը») պատճառներ դիրքին: Այլ լեզուներու կողմէն նա՛ն հմուտ տանկագէտ, Վարդան փաշա (յանախ այսպէս կոչած են զինք) 1852-1868 Պոլսոյ մէջ կը հրատարակէ հայատառ թրքերէնով քաղաքական լուրջ լրագիր մը՝ «Մէճմուսայի հաւատարիս», «խոհականութեամբ եւ հասունութեամբ դիտելով աշխարհի քաղաքական եւ տնտեսական վերիվայրումները, գիտական ու տնտեսական վիթխարի յառաջընթացը, եւ գանձնէ փոխանցելով իր պատկանած ժողովուրդին՝ անոր հասկցած լեզուով»:

Բեղուն գրչի տէր, միշտ հայատառ թրքերէնով ստեղծագործելով, Վարդան փաշա 1851ին կը հրատարակէ իր եռլեզու «Ազապի»-ն, թուրք գրականութեան առաջին վէպը (հայերէնի Բարգմանուած բանասէր Գառնիկ Ստեփանեանի կողմէ ու երկիցս տպուած Երեսն, 1953ին եւ 1979ին: Վէպին յատկանատառ թրքերէն կրկնօրինակն ալ լոյս տեսած է Պոլիս, 1991ին): «Ազապի»-ին կը յաջորդեն այլ վէպեր եւս, որոնք այդ օրերուն բանագրանքի կ'ենթարկուին Վատիկանի հովանին վայելող Ամտոն Հասուն տիրաւորական պատրիարքի յատուկ կոնդակով: Դանիէլեան հետեւեալ ձեռով կ'եզրափակէ իր տողերը այս վէպին մասին. «Եթէ հայերէնով գրուած ըլլար Ազապին, հայ գրականութեան արձակը շահած պիտի ըլլար իրապաշտ «գլուխ-գործոց» մը, իսկ արեւմտահայ վիպագրութիւնը սկսած պիտի ըլլար իրմով, փոխանակ Յովհ. Հիսարեանի Մաքրուիի եւ Խոսրով (1851) ռոմանթիկ վէպով՝ գրուած եւրոպական ռոմանթիկներու անմիջական ազդեցութեան տակ»:

Յաջորդող էջերը նայմեան հետաքրքրական պատուհաններ կը բանան մեր առջեւ: Այսպէս, «Ստեփան Ռակաւի ԱՐԵՆԷԼ Բ. հանդէսի առեղծուածը» օգտակար տուեալներ կը մէկտեղէ՝ ժամանակագրական կարգով ֆրանսահայոց երկրորդ թերթը հանդիսացող «Արեւելք» կիսամսեայ հանդէսին (1855-56) լոյս ընծայուած 15 բիւրուն մասին: «Տիրան Բէլէկեան, «Ճիհան» շաբաթաթերթ եւ Վրթանէս Փափապեան» յօդուածը կ'անդրադառնայ Պոլսոյ «Սապահ» օսմանե-

րեն նշանաւոր օրաթերթի խմբագրապետ Տ. Քելեկեանի (1862–1915, Եղեռնի զոհ) հրապարակագրական գործունէութեան անձանօթ մէկ երեսին, որ կը դրսեւորուի «Ճիւղան» հայատառ թրքերէն շաբաթաթերթին հրատարակութեամբ՝ 1884–85 (ընդամենը 32 թիւ)։ Դանիելեան շեշտը կը դնէ Քելեկեանի լեզուագիտութեան վրայ ու կը յայտնէ, թէ հայերէնի ու թրքերէնի կողքին ան լատապէս կը տիրապետէր ֆրանսերէն եւ անգլերէն լեզուներուն ալ՝ աշխատակցած ըլլալով Լոնտոնի անգլիական կարգ մը թերթերուն ու խմբագրելով Եգիպտոս հրատարակուող ֆրանսերէն լրագիրներ։ «Ինչպէս 19րդ դարու բազմաթիւ այլ երախտաւորներու պարագային, նոյնպէս ալ Տիրան Քելեկեանի լրագրական-գրական շուրջ 25ամեայ գործունէութիւնը՝ հայկական, թրքական ու եւրոպական շրջանակներու մէջ, յատկապէս ժամանակաշրջանի հայ-թուրք փոխարարութիւններու լոյսին տակ, հարկ է որ անելի համապարփակ եւ մանրապնդին ուշադրութեան եւ ուսումնասիրութեան արժանանայ», *Կեդրափակէ ան (էջ 229)*։

Այլ գրութեամբ մը, «Երուխանը հայ-թուրք լարաբերութիւններու մասին («Շաւիղ» կիսամետայ հանդէսի էջերէն)» խորագրեալ, լուսարձակի տակ կ'առնուի Եղեռնի զոհ մեր գրագէտներէն՝ Սրուբանի (Սրուանդ Սրմաէշխան-լեան) ստորագրած ազգային-ֆաղափական քննարկի շարք մը յօդուածները, լոյս տեսած ի՞ր իսկ խմբագրութեամբ Վառնայի մէջ հրատարակուող «Շաւիղ» հանդէսին մէջ, 1900–1901 թուականներուն (թերթը լոյս տեսած է ընդամենը 20 թիւ)։

Այս քաժինը կ'աւարտի Յակոբ Օշականի նախահեղեղեան հրապարակագրական գործունէութեան անձանօթ մնացած մէկ երեսին վերյայտնումով եւ Շահան Շահնուրի «Նահանջը» վէպին գրառման առընչուող գրական ակնարկով մը։

Գիրքին երրորդ եւ վերջին մասը (էջ 271–342) մէկտեղումն է տարբեր առիթներով (1971–1986) գրի առնուած գրախօսականներու եւ մատենագիտական ճշգրտումներու, որոնք առաւելաբար կը սեւեռուի մամուլի եւ տիպ ու տառի աշխարհին վրայ։ Այստեղ, մեծապէս օգտաշատ աշխատանք մըն է Հայկ. Սով. Հանրագիտարանի 7–8–9րդ հատորներուն արեւմտահայ մամուլին վերաբերող բառայօդուածներուն մասին կատարուած ճշգրտումները, լրացումներն ու դիտողութիւնները, որոնք աներբաժնէն է որ նկատի առնուին յատկապէս Հայաստանի մեր բանասէրներուն եւ մատենագէտներուն կողմէ։

Առ ի դիրութիւն պրպտողներուն, գիրքը կ'աւարտի յիշատակուած անձնանուններու եւ պարբերաթերթերու լիակատար անջատ ցանկերով։

\*

Ժիրայր Դանիելեանի նորատիպ հատորը, անկասկած, արժեքաւոր ներդրում մըն է մատենագիտական կարեւորին մէջ

ընդհանրապէս, ու հայ մամուլի պատմութեան համար՝ մասնաւորաբար: Իր ծայրայեղօրէն բծախնդիր մօտեցումը ձեռք առնելու հարցերուն նկատմամբ՝ ամբողջական վստահութիւն կը ներշնչէ ընթերցողին ու տեղ չի բողբոջ տարակուսանքի կամ վերապահութեան, ինչ որ առանձին արժանիք մըն է արդէն: Մնաց որ, իր գործածած գիտական ու միաժամանակ հանրամատչելի լեզուն ալ, միացած՝ դիրահաղորդ ձեռն, գիրքը ի սկզբանէ սիրելի կը դարձնեն միջին ընթերցողին:

Ժամանակաշրջանի մը մէջ, երբ Սփիւռքի հայատառ մամուլը կ'ապրի իր երկդարեայ պատմութեան երաշտի եւ ընկրկումի պահերէն մին, երբ անոր ապագան լուստեսութիւն չի բռնադատուիր իրապաշտ յետէ հայու, «Բանասիրական ուրոնումներ»ը կարօտի հայեացք մըն են դէպի մեր հարուստ անցեալը, դէպի այդ անցեալը փառաւորած իրա՛ւ երախտաւորները:

(Հայէպ) ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ

(\*) Իր սոյն յօդուածին առիթով, տողատակի ծանօթագրութեանց մէջ, հեղինակը թիւրիմացաբար բացայայտ շփոթի մէջ է՝ երբ կը գրէ. «Թուրքիոյ սահմանակից՝ Պուլկարիան մեծ ցնցումներու տարիներուն (1894-96, 1915, 1922) կը հանդիսանայ ոչ միայն առաջին կարգի պատսպարան մը փախչող հայրերուն համար, այլեւ արտասահման կամ Սփիւռք կոչուող մեր նորագոյն իրականութեան աւճէն աշխոյժ կեդրոններէն մէկը, Վառնայի, Բուսուզի, Տիրիպէի, Սոփիայի, Փլովտիւի, Պատմոպոլի, Շումլինի, Փաւլովոյի, Պուրկասի, Բուսէի եւ Սիլվէի հայագաղութներով (Տե՛ս էջ 233, ընդգծումները՝ մեզմէ): Պարզ է, որ Ֆիլիպէն ու Փլովտիւը միեւնոյն քաղաքին տարբեր անուանումներն են, այնպէս ինչպէս՝ Բուսէն եւ Ռուսուզը...





ջացնելով՝ Ամենայն Հայոց Հայրապետը կ'հզարակացնէ, որ Մայիս 28ի խորհուրդով ու երազով իր կեանքը ջերմացուցած Եղիշէ Մանուկեան եղաւ վերջին տարիներու «մեծագոյն հրեւոտղներէն մէկը», որ ապրեցաւ Արցախի գոյամարտին եւ ազատ ու անկախ Հայաստանի համրապետութեան առթած հրեւոտղները:

Լուսանկարներու պատկերներով նոյնպէս «Կեանքս» հատորին աւելի քան կէսը (էջ 15-237) կը գրաւեն յուշագրական մասերը, որոնք նամբայ կ'ընեն կենսագրական նշանակութիւն ունեցող մանրամասնութիւններէ, կը դանդաղին որբանոցներու եւ կրթական օճախներու (Բէլլէնեան որբանոցի, Մելգոնեան կրթական հաստատութեան, Հայ Ճեմարանի...), մարզական ու մշակութային միութիւններու եւ մեր հաւաքական կեանքը կազմաւորող գաւազան այլ միաւորներու դիմաց, որպէսզի իր ամբիջական շրջապատը Եղիշէ Մանուկեան ներկայացնէ ամբողջական գոյներով: Մարզական, թատերական, մշակութային, կրթական, ազգային եւ եկեղեցական նշանակալի գործունէութիւններն ու յարթանակները, տագնապներն ու հերոսական շրջանները կը կազմեն ամփոփ պատկերը ո՛չ միայն իր, այլեւ՝ կիպրահայ ու լիբանանահայ գաղութի շուրջ յիմնամաս կեանքին:

Եղիշէ Մանուկեան խոր ակնածամբով կ'արտայայտուի իր եւ մեր հաւաքական կեանքի վրայ իրենց անջնջելի դրոշմը դրած կրթական մշակներու, ազգային ու միութեանական պատասխանատուներու, հայ եկեղեցւոյ եւ մամուլի ներկայացուցիչներու եւ նոյնիսկ համեստ, բայց անձնորայ մարդիկներու մասին, որոնք կը կոչուին Յակոբ Օշական ու Բարսեղ Կանաչեան, Յովհաննէս Մահիմեան ու Կարապետ Սաաքեան, Վահան Էփենտի Տօնապետեան ու Վարդավառ Յովհաննէսեան, Զարեհ Ա. եւ Խորէն Բ. Կաթողիկոսներ, Մանուկ Ասլանեան կամ Հայկ Պալեան, եւ այլն:

Ներգաղթի տարիներուն Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հ.Յ.Գաշնակցութեան դէմ նիւթուած դաւերը, անոնց յաջորդած ազգային-եկեղեցական տագնապի դերակատարները, շրջապագործուած խաչակրութիւններն ու տգեղ երեւոյթները, «Նորայր ենք մենք» քարոզած երջանկայիշատակ Զարեհ Ա. Կաթողիկոսի լուռ տառապանքն ու շիջումը եւ յարակից մանրամասնութիւններ Եղիշէ Մանուկեան թուղթին կը յանձնէ մտաւորականի պարկեշտութեամբ: Այս ոմին, աւելի նիշող՝ յանձնառու մարդուն մասին յաւելեալ գաղափար մը կը ներկայացնեն հեղինակին հրապարակագրական վաստակէն բաղուած «Մարագրականներ ու յօդուածներ», «Հ.Մ.Ը.Մ.ական՝ առ յաւէտ», «Վաւերական արժէքներ» եւ «Ամենագոր մամուլը» անուն քաժիւնները:

Եղիշէ Մանուկեանի «Կեանքս» հատորը կը փակուի մարդիկ միութեանական պատասխանատու, մտաւորական ու համրային մշակ հեղինակին քազմարեղուն կեանքն ու վաստակը բարձր գնահատող «Վկայութիւններ» (էջ 349-390) գլուխով, որուն կը յաջորդէ «Փոխան վերջաբան» գրուած «Միբան» խորագրեալ կարճ գրութիւնը:





**«ՄՈՐԵՍ  
ՊԱՏԿԵՐՆԵՐ»**  
(«Եղիկակ»  
Կարապետ Հաննիսեան)



*«Երակ»* հրատարակատու-  
նէն 1906ին լոյս տեսած *«Մտորեսայ  
պատկերներ»* անուն հատորը, որ  
կազմուած է իրերայաջորդ դաս-  
տիմներէ եւ 416 էջերու երկայնքին ի  
մի կը խմբէ Կարապետ Հաննիսեանի  
ընտրովի յօդուածները, որոնք լոյս

տեսած են իրանանահայ մամուլի՝ *«Արարատ»*, *«Ազդակ»*, *«Զարթօնք»*  
օրաթերթերու եւ *«Երիտասարդ Հայ»* ու *«Մասիս»* շաբաթաթերթերու  
էջերուն, վերջին երեք տասնամեակներուն:

*«Մայրի բուրդ հայրենիք»*, *«Լրագրութիւն»*, *«Զայնսփիւռ-  
Հեռատեսիլ»*, *«Նոր տարի»*, *«Պատերազմական տարիներ»*, *«Մտո-  
րումներ»*, *«Ճամբորդական»* խորագիրներուն տակ ամփոփուած 141  
կտորներ կ'անդրադարձան կենցաղային, ազգային, մշակութային, մար-  
զական, ընկերային, հայրենասիրական եւ իրանանեան կեանքի գաւա-  
զան երեսներուն: Սեղմ, երգիծախառն եւ լրագրական անմիջականու-  
թեամբ ու հպանցիկ ոնով թուղթիմ յանձնուած պատկերներ եւ կարճ  
յօդուածներ են անոնք առհասարակ, որոնք իրանանեան բարձր  
*«Մովսէսեան Թիւն»*, *«Մեր պարահանդէսները»*, *«Պուրճիհրապա-  
րակը»*, եւ այլն) սեւ ու մութ երեսները կը գետնդն մեր հաւաքական  
հպարտութիւններուն ու ցաւերուն կողքին (*«Հայերը Լիբանանի մէջ  
երէկ եւ այսօր»*, *«Արաքս փողոցին վրայ»*, *«Հայ Ուիլիամը»*, *«Մարտ-  
եանի Հետքերով»*, *«Թաղականը»*, *«Օժանդակ տիկիներ»*), եւ այլն):

Օրուան հրատապ հարցերու, երեսոյթներու, մախածոնութիւն-  
ներու, պահանջներու, ամանորեան թելադրանքներու եւ այլ անդրա-  
դարձներու լոյսին տակ գրուած ակնարկներն ու պատկերները մախա-  
պատերազմեան Լիբանանի, հատորին 165 էջերը գրաւած *«Պատերազ-  
մական տարիներ»* ը առաւել յստակ կը դարձնեն հեղինակին մտասե-  
նումներն ու յոյզները՝ հրդեհներու եւ տենչերու ահաւոր այիքներուն  
միջեւ տատանող Լիբանանի ցակատագրին կշռոյթներով:

Տագնապի, սիրոյ եւ հաւատքի արտայայտութիւն հանդիսացող  
այս քաժինի պատկերներուն եւ սրտի խօսքերուն կը յաջորդեն *«Մտո-  
րումներ»* (26 կտոր) եւ *«Ճամբորդական»* (5 կտոր) եզրափակիչ մասե-  
րու յօդուածները, որոնց առաջին խումբը հասարակաց նոյն խորագի-  
րին տակ կը խմբէ մեր իրականութենէն անընդհատ հեղինակին քննա-

դատական յօդուածներն ու մեր մնայուն արժէքներուն նշանակութիւնը ընդգծող խոհերը, իսկ երկրորդը՝ անոր նախորդական տպաւորութիւններն ու ասորումները՝ Մ. Նահանգներու եւ Գանատայի մեր գաղութներուն տրուած երկու տարրեր այցելութիւններէ ետք:

Կարապետ Հաննէսեանի ամերիկեան գոյգ փորձառութիւնը թարգմանող խոհերով ալ կը փակուի *«Առօրեայ պատկերներ»*ը, որ կը դառնայ հպանցիկ վկայութիւն մը՝ Ափիւռֆի, բայց ի մասնաւորի լիբանանահայ գաղութի վերջին 30-35 տարիներու փորձառութիւններուն մասին:

**«ՄԵՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ՝ ՉՐՈՅՅՆԵՐ»...**

(Նեդիսակ՝ Ղ. Ժիրայր)



Միացեալ Նահանգներու Ուոթըրթաուն քաղաքին մէջ գործող «Ջարիֆ» հրատարակչատունէն, 1996ին լոյս տեսաւ քաղցկեղի հետեւանքով 1991ին վաղահասօրէն մահացած սփիւռեալ հրապարակագիր եւ մշակութային գործիչ Ղ. Ժիրայրի (աւագանի անունով՝ Ժիրայր Ղարիպեան) *«Մենութեան մէջ՝ գրոյցներ...»* անուն յօդուածներու ժողովածուն:

160 էջերէ կազմուած այս ժողովածուն, որ կը բաղկանայ հինգ մասերէ, ընդհանուր գաղափար մը կը փոխանցէ Հայաստանի եւ Ափիւռֆի գլխաւոր հարցերով շարունակ տագնապած Ղ. Ժիրայրի մասին՝ ուսանողի տարիներէն մինչեւ իր վաղահաս մահը: Հատորին առաջին գրութիւնը ստորագրուած է 21 տարեկանին, իսկ վերջինը՝ մահէն կարճ ժամանակ մը առաջ՝ 1991ին: Թիւով՝ 31 գրութիւններ եւ *«Ժիրայրէն՝ Ժիրայրին»* խորագրեալ կարճ մամակ մը, որ ձեռով մը կը հանդիսանայ վերջաբանը *«Մենութեան մէջ՝ գրոյցներ...»* հատորին:

Հատորը կը բացուի Վրէժ-Արմէնի *«Ժիրայրին այս գիրքը»* կարճ ներածականով: Երեսնամեակի մը վրայ տարածուող յօդուածներու այս փունջը ներկայացնելով՝ *«Իր պարզ խօսքերով, անսեթեւեթ եւ միա-*

ժամանակ իւրապատկօրէն առողջ ոճով» ընթերցողներու համակրանքին արժանացած Ղ. Ժիրայրի վաստակը գնահատելէ ետք, հատորին խմբագիրը կ'եզրափակէ.

*«Իր հարիւրաւոր գրութիւններէն գրեթէ պարագայաբար ու շատ ենթակայական կերպով այստեղ բերուած կտորները առաջին հայեացքով կ'ընան թուիլ անկապ, արդիւնք՝ տարբեր պարագաներու տակ, տարբեր պայմաններու բերմամբ ու տարբեր տրամադրութիւններու մէջ գրուած ըլլալուն, սակայն ուշադիր ընթերցումը ցոյց պիտի տայ անոնց հասարակ յայտարարը, որովհետեւ անոնք հաւանաբար հարազատօրէն մեզի կը բացայայտեն Ղարիպեան Ժիրայրը՝ իր ապրումներուն ու խոհերուն ընդմէջէն»:*

*«Գոյամարտ»էն մինչեւ «Հայրենիք», «Թուրք դեսպանին դասը», «Կու տանք հաւատքով», «Ժամանակ չկայ...»* խորագրեալ բաժինները կ'ամփոփեն տարբեր միութեան շօշափող գրութիւններ: Եթէ առաջինին մէջ իրարու կը յաջորդեն ուսանողական տարիներու ազգային ապրումները եւ սփիւռքահայ մամուլի տագնապներն ու երգները, կոչումն ու առաջնորդութիւնը պատկերող յօդուածներ, երկրորդ ու երրորդ գլուխի գրութիւնները առաւելաբար կը կեդրոնանան Հ.Յ.Ինչունակցութեան հսկաներուն ամենաժողովրդային դասերուն, գոհարարութեան յանդիմանական եւ անհաւատարմական ամենին եւ հայակերտ պատգամին վրայ: Ինչ կը վերաբերի հատորը փակող *«Ժամանակ չկայ...»* բաժինի թիւով 6 գրութիւններուն, դարձեալ տարիներու յուշերը գիրի վերածած երկու յօդուածներու կողմէն՝ կը կարգանք հայ թատրոնի երկու մուտքներուն՝ Մանուկ Մարութեանի եւ Ժորժ Սարգիսեանի վաստակին անդրադարձող գոյգ յօդուածներ, Հայաստանէն Մ. Նահանգներ արտագաղթած հայերու տուայտանքը պատկերող կտոր մը եւ հուսկ՝ հիւանդանոցային իր փորձառութենէն ծնած *«Ժամանակ չկայ...»* (21 Օգոստոս 1991) անուն գրութիւնը, որ ձեռով մը կը դառնայ կարապի երգը եղերաբախտ հեղինակին:

**ԳԵՈՐԳ ԹԵՄԻՉԵԱՆԻ**  
 արաբերէն հատընտիրը՝  
 «Սերենատ»



«Բարեկամութիւն» հրատարակչատան «Բանաստեղծական հատընտիրներ» մատենաշարի իրրեւերկրորդ հատոր, 1995ին, Հալէպի մէջ լոյս տեսած է «Բագին» ի աշխատակիցներէն բանաստեղծ Գեորգ Թեմիզեանի «Սերենատ» անուն արաբերէն լեզուի վերթողագիրը:

Լուսի Գասապեանի եւ Ղասսան Քաննոյի թարգմանական նիւթերով արաբերէնի փոխադրուած այս հատորը, որ կը հաշուէ 112 էջ, կը բացուի բանաստեղծին «Թուղթեր» խորագրեալ կարճ ներածականով:

Երեք բաժիններէ բաղկացող այս վերթողագիրքին առաջին մասով արար ընթերցողին կը հրամցուին Գեորգ Թեմիզեանի «Մով եւ կղզի» (1967-1973) երախայրիքէն բաղուած 11 բանաստեղծութիւն: Ասոնց կը յաջորդեն «Շարժում» (1973-1982) հատորի 7 վերթուածները, իսկ 62րդ էջէն սկսեալ՝ «Սերենատ» վերթողագիրքի թիւով 15 ստեղծումները, որոնք կը գրուեն հատորին կէտը:

«Սերենատ» հատընտիրը փակող կողմին վրայ տեղ գրուած է սուրիացի անուանի բանաստեղծ Նագիհ Ապու Աֆաշի արտի խօսքը: Յայտնելէ ետք, թէ Գեորգ Թեմիզեան կը հանդիսանայ «անգութ եւ վայրագ որսորդներ»ու, այսինքն՝ բանաստեղծութիւնը սպաննած մեծամիտներու կողմէ «մահուան դատապարտուած հագուագիտ եղնիկին» (բանաստեղծութեան) վստահութիւն եւ հոգի ներշնչող մշտնադարձ արտաստեղծութեան, սուրիացի գրագէտը կ'աւելցնէ. «Ան «յատուկ» ձայն մըն է, որ անդադար կը լսուի նեխած եւ այլանդակուած ձայներու երգչախումբին մէջ: Տարօրինակ թուշունի մը պէս՝ իր վախին աղօթքները կ'արտասանէ ազուաներու, թուեակներու եւ տգեղութիւն տարածողներու երամին մէջ:

Եզրակացնելով, Նագիհ Ապու Աֆաշ կ'ընդգծէ. «Ազնիւ, խոր եւ պարզ ձայն մը, զոր մարդկային նախաինամութիւնը պահպանեց ապականումէ եւ այլանդակումէ: Ձայն մը՝ որ իր սպիտակ թուղթերու մակերեսին տակաւին կը շարունակէ բարախել խեղդուող սիրտի մը պէս. մտերիմ սիրտ մը, որ նախամարդերու հոգիներուն ոսկեծուլած սիրտը դաշինքը հաստատելէ զատ ոչինչ գիտէ: Այս իսկ պատճառով, ան չի դադարիր մեզի յղելէ իր նամակները... աւերակներուն տակէն»:

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԼՈՒՐԵՐ**

**ՀԱՅ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝  
ՊԱՏԸՆ-ՊԱՏԸՆԻ  
ՌԱՏԻՌԱԿԱՅԱՆԷՆ**



Գերմանիոյ Պարն-Պատրն Բադա-  
քի Հիւստֆոնստի Պատրն-Պատրն  
նախնայանը, որ գերման ունկնդիր-  
ներուն ծանօթ է իր մշակութային եւ  
գրական հաղորդումներով, ամէն կի-  
րակի կը սփռէ համաշխարհային գրա-  
կանութեան յայտնի դէմքերէն մէկուն

եւ անոր գրականութեան նուիրուած  
քօնիսե (է'իմանկար) հաղորդաշարը:  
Մնորիւ «Բագին»ի աշխատակից-  
ներէն Բաթի Գանդեանի (Գեապ-  
նեան) հետեւողական ճիգերուն՝ վեր-  
ջերս, հայ գրականութիւնն ալ մուտք  
գործած է համաշխարհային գրակա-  
նութեան կարկառուն դէմքերուն  
նուիրուած այն հաղորդաշարէն ներս՝  
յանձինս Տահան Տահմուրի, Եղիշէ Զա-  
րեմցի, Զահրատի եւ Զարեհ Խրա-  
խունիի:

Շուրջ տարի մը առաջ, իր կարգ մը  
պատմածներէն («Պճեղ մը անուշ  
սիրտ», «Լիւքսենպուրկի պահապա-  
նը», «Զաթոսթէ», «Իսթանպուլ») եւ  
«Նահանջը առանց երգի» վեպէն կա-  
տարուած Լադուածներով ու կենսագ-  
րական ամփոփ գիծերով Տահան Տա-  
հմուրը ներկայացնելէ ետք, 25 Մայիսի  
հաղորդումով ան գերման ունկնդիր-  
ներուն ծանօթացուցած է Եղիշէ Զա-  
րեմցի քանաստեղծը՝ տարրեր շրջանի  
քանաստեղծութիւններէն ու «Երկիր  
Նախիրի» վեպէն կատարուած քննորոշ  
մէջքերումներով:

17 Օգոստոսին, վերոնշեալ երկու  
հաղորդումներուն յաջորդած է երրորդ  
մը՝ «Քերթողներ Զահրատ եւ Խրա-  
խունի-գրական դիրքերու վերադա-  
տում՝ դժուարին պայմաններու տակ»  
խորագրով: Ճաննիկեանով եւ Գալս-  
տեանով սկսող պուրահայ յետ եղբուն-  
եան քանաստեղծութեան ուրուանկա-  
րը կազմելէ ետք, այն հաղորդաշարը

կեդրոնացած է Ջահրատի և Խրա-  
թունիի ֆերթոդական առանձնայա-  
կութիւնները ընդգծելու աշխատանքին  
վրայ և մէջքերած՝ անոնց բանաստեղ-  
ծական համոզումները դրսևորող գա-  
նազան ֆերթուածներ:



**«ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ  
40 ՕՐԵՐԸ»  
ԵՒ ԹՐՔԱԿԱՆ  
ՀԱԿԱԶԴԵՅՈՒԹԻՒՆԸ**

Հայկական Սֆիւռֆի Հետազոտա-  
կան Կեդրոնին կազմակերպութեամբ՝  
Փարիզի մէջ վերջերս կայացած է բա-  
նաստական երեկոյ մը՝ ձրանց Վեր-  
ֆելի *«Մուսա լերան 40 օրերը»* վէպին  
քրքրեմ բարգձմանութեան առիթով:  
Բանաստեղծ է բարգձմանիչը՝ մտաւո-  
րական և Պոլսոյ Մարդկային Իրա-  
ւանց Պաշտպան Յանձնախումբի նա-  
խագահ Իսաիկ Ջարախոյ, որ այս  
առիթով Փարիզ հրաւիրուած է կեդ-  
րոնին կողմէ:

Ջարախոյի բանաստեղծութիւնը իր-  
քն խորագիր ունեցած է *«Հրատարա-  
կութիւնը թուրքերոյ մէջ. Պատմու-  
թիւն, յիշողութիւն և փոքրամաս-  
նութիւններ»* նախադասութիւնը:

Առաջին հերթին բացման խօսքով  
հանդէս եկած է Հ.Ա.Հ.Կ.ի տնօրէն Ժան-  
Քլոտ Բէպպան, որ յայտնած է, թէ  
Իսաիկ Ջարախոյի տիկինը՝ Այիշէ  
Նուր, ևս հրաւիրուած է Փարիզ, սա-  
կայն քրքական իշխանութիւնները չեն  
արտօնած, որ ան թուրքիայէն դուրս

գայ: Այիշէ Նուր, որ իր ամուսնոյն  
հետ հիմնած է «Պելլէ» («Փաստա-  
բուր») հրատարակչատունը, ներկա-  
յիս կը դատուի, որովհետեւ ան մարդ-  
կային իրաւանց պաշտպանութեան գոր-  
ծիչ է: Այիշէ Նուր նախապէս 2 տարի  
բանտարկուած է և վերջերս դարձեալ  
բանտարկութեան դատասարտուած:

Անտեսելով բազում արգելքներ և  
յաղքահարելով գանազան դժուարու-  
թիւններ, «Պելլէ» հրատարակչատու-  
նը կը հրատարակէ Հայկական Յնդա-  
պանութեան վերաբերող գիրքեր,  
որոնց շարքին եղած են Փրոֆ. Վա-  
հագն Տատրեանի և Իվ Թերնոնի հա-  
տորները: Յարդ «Պելլէ» հրատարա-  
կած է հայերու, երեսներու, յոյներու,  
ասորիներու և ֆիլիպինոյ մասին աւե-  
լի էան 300 հատորներ, որոնք մեծաւ  
մասամբ գրուած են քրքական իշ-  
խանութիւններուն կողմէ:

Այնուհետեւ, յօսք առած է հրատա-  
րակիչը, որ յայտնած է, թէ իր մեծա-  
գոյն հրազը եղած է քրքրեմի բարգ-  
ձմանի *«Մուսա լերան 40 օրերը»* վէպը:  
Ան մանրամասնօրէն խօսած է թուր-  
քիոյ կացութեան մասին՝ լուսարձակի  
տակ բերելով մարդկային իրաւանց  
բիրտ ոտնահարումները:

«ԱՆԱՊԱՏԻ ԼՌՈՒԹԵԱՆ ՄՇՏԱՐԹՈՒՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԸ»



Մարկատի Ս. Յարութին մատուռը

Մեծ Եղեռնի 82րդ տարեկիցին առի-  
բով, Նիւ Եորքի Ազգային Առաջնոր-  
դարանը հրահապարակած է տեսերիզ  
մը՝ «Անապատի լուսինն մշտաբ-  
թուն արձագանգները» խորագիրով:  
Վաւերագրական հագուագիւտ  
պատկերներով հարուստ այս տեսերի-  
զը կը բացուի Տէր-Ջօրի անապատին  
մեծեղային տեսարանով, ուր «ամէն ինչ  
հայ անունով ու արիւնով է կնկուած»:  
Ապա, իրարու կը յաջորդեն Եփրատ  
գետը, հայ տարագրութեան մահաշուք  
կնդրոցները, հայ ժողովուրդի երա-  
շափառ յարութեան վկաները հանդի-  
սացող Տէր-Ջօրի Սրբոց Նահատակաց  
եկեղեցին ու Մարկատի Ս. Յարութին  
մատուռը, Հայէպի նշանաւոր որբա-  
նոցներն ու պատմական նշանակութիւն  
ունեցող հիւղաւանները, եկեղեցիներն  
ու դպրոցները, ինչպէս նաեւ՝ Եղեռնէն  
նողոպրած վերապրողներ, որոնք  
իրենց արցունքն աչքերով եւ յուզում-

նախեղդ աղաւաղուած հայերէնով՝  
պատմութեան կը յանձնեն իրենց ակա-  
նատեսի վկայութիւնները:  
Սյնուհետեւ, Տէր-Ջօրի կիզիչ արե-  
ւուն տակ, ոսկրացած ու տկար մատնե-  
րով, աւազին վրայ եայոց այրուքները  
իրենց գաւակներուն սորվեցուցած հայ  
մայրերու անպարտելի վնասկանութե-  
նէն թափ ու թռիչք առնելով՝ այս վաւե-  
րագրական ժապաւէնը հանգամանօրէն  
կ'անդրադառնայ տեղահանուած հայ  
ժողովուրդը գրկաբաց հիւրընկալած  
Սուրիոյ մարդկային ու սապնչական  
կեցութեան, երբ պատմական կուռ ներ-  
կայացումէ մը ետէ, լուսարձակի տակ  
կ'առնէ սուրիահայ գաղութի կենսու-  
նակ առօրեան, ուր նահատակ ցեղի  
ժառանգորդ մերօրեայ հայ մանուկնե-  
րը այսօր հայոց տառերը կը սորվին  
քնակալ պայմաններու մէջ եւ հայերէն  
երգերը կը հնչեցնեն ինքնավստահ ու  
հպարտ բարձր ձայնով:

50 վայրկեան տնտղութեամբ  
«Անապատի լուսնեան մշտարթուն»  
արձագանգները» անուն այս վաւե-  
րագրական տեսերիզը պատրաստուած  
է Հայաստանի «Հայֆիլմ» ընկերակ-  
ցութեան կողմէ: գործակցութեամբ  
Սուրիոյ Հայ Դատի յանձնախումբին:

լուսարձակի տակ առած մախլին փա-  
ռատօմբը: Աթոհոյմ կը ձգտի ներկա-  
յացնել ահմամ, աշխարհագրական րա-  
ժտնում եւ ազգային ու ցեղային կաղա-  
պար չնամչցող համաշխարհային այն  
մշակոյթը, որ ներդաշնակ կ'ընթանայ  
աշխարհի միութիւնը հետապնդող  
հայերուն հետ:

Յառաջիկայ Մարտի վերջաւորու-  
թեան եւ Ապրիլի առաջին օրերուն կա-  
յանալիք Աթոհոյմի մշակոյթի միջազ-  
գային համագումարը, որուն պիտի  
մասնակցին աշխարհի 185 երկիրնե-  
րու մշակոյթի նախարարները կամ  
անոնց ներկայացուցիչները, իր տեսա-  
կին մէջ պիտի ըլլայ համաշխարհային  
առաջին համդիպումը: Պետական հո-  
վանադրութիւն վայելող այս համա-  
գումարին պիտի մասնակցին միջազ-  
գային եւ ոչ-պետական մշակութային  
բազմաթիւ կազմակերպութիւններ, ինչ-  
պէս՝ ԵՆՆԵՄԻՍ, ՄԱԿի մաս կազմող Բար-  
գաւանման եւ Մշակոյթի Միջազգա-  
յին Կազմակերպութիւնը եւ մշակու-  
թային բազմաթիւ ընկերակցութիւն-  
ներ ու հաստատութիւններ:

ՄԱԿը, իր Բարգաւանման եւ Մշա-  
կոյթի Միջազգային Կազմակերպու-  
թեան այժմու նախագահին՝ ՄԱԿի  
նախկին ընդհանուր ճարտուղար Խա-  
ֆէ Փերէզ Տեբուէլարի միջոցաւ գոր-  
ծօն մասնակցութիւն պիտի բերէ, որ-  
պէսզի Աթոհոյմի պաշտօնակալ հան-  
դիպումը եւ անոր գուգաւեռ կայանա-  
լիք ոչ-պետական միջազգային կազ-  
մակերպութիւններու համագումարը  
մշակեն համաշխարհային կամ տիե-  
զերական մշակոյթի ամբողջական  
ծրագիր մը, որ պիտի ծառայէ աշխար-  
հի բոլոր երկիրներու մշակութային-  
բազմակերպական բարգաւանման ու  
դէպի ամբողջական ժողովրդավարու-  
թիւն ընթացող հայերու արդիւնատը-  
ման:

**ՇՈՒԷՏ ԿԸ  
ՀԻՐԸՆԿԱԼԷ  
ՄՇԱԿՈՅԹԻ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
Ա. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ**

Շուէտի մշակութային նախարարու-  
թեան բոլոր բաժանումները եւ պե-  
տական զանազան սպասարկութիւն-  
ները ներկայիս յծուած են տնտղագին  
աշխատանքի, որպէսզի յառաջիկայ  
զարման կայանալիք Մշակոյթի Միջազ-  
գային Առաջին Համագումարը ըլլայ  
անմասնաճիւղ եւ անթերի փառատօն  
մը, իսկ Աթոհոյմը՝ ոչ միայն Եւրո-  
պայի, այլեւ՝ համայն աշխարհի մշա-  
կութային մայրաքաղաքը:

Այս դարու մշակոյթին միջազգա-  
յին եւ համաշխարհային բովանդակու-  
թիւնը շեշտելու նախանձախնդրու-  
թեամբ՝ շուէտացի պատասխանատու-  
ները ամէն միզ ի գործ կը դնեն, որ-  
պէսզի մէկ կողմէ օգտուին եւրոպական  
մշակոյթի նուիրուած համագումար-  
ներ կազմակերպած մայրաքաղաքներ-  
րու փորձառութեան եւ, միւս կողմէ՝  
գերազանցեն միայն ազգային ու եւրո-  
պական մշակոյթներու յատկանիշները



### ԻՍԱՀԱԿԵԱՆԻ «ՃԵՆԿԻՉԽԱՆ»Ը՝ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԲԵՄԻՆ ՎՐԱՅ

Իսամական թատերական Արևսաներու Բարձրագոյն Հիմնարկի ամփոփարոնին մէջ, վերջերս, հիմնարկին քառերայունը ներկայացուցած է Աւետիք Խահակեանի «Ճենկիչխան» պատմամեծիկն քննակնակացած բնագիրը, սուրիահայ քառերակն գործիչ եւ քննադրիչ Մանուէլ Ճիմիի քննադրութեամբ:

45 վայրեկեան տնտրութեամբ այս քառերայունը քննագիրը կը կրէ հաւաքական ստորագրութիւնը յունարիւն անդամներուն, հսկողութեամբ՝ հիմնարկի երկարամեայ դասախօս ու սուրիական քառերակն շրջանակներու կողմէ բարձր գնահատուած քննադրիչ Մանուէլ Ճիմիի:

Արաքական եւ սուրիական մամուլէն կ'իմամանէ, որ Ճենկիչխանի կեանքի վերջին օրերը պատկերացնող իր այս գործով՝ Մանուէլ Ճիմի քննադրութեամբ ցուցած է մահուան մղձաւանջի ծանր մթնոլորտին տակ կեանք, կասկածամիտ, խորամանկ, սարսափահար եւ աշխարհէն մեկուսացած հսկողութեան տիպար մը, որ կը հակադրուի երկրագունդին կեանք գրաւած արիւնարբու բռնատէրին վայրագ կերպարին:

Վրանիս մէջ ամփոփուած Ճենկիչխանի վերջին օրերուն ընդմէջէն՝ Մանուէլ Ճիմիի քննակնակացումը կը լսակնակները անոր մանկութեան եւ յազարանակներու յուշերուն, կը ստեղծէ սուր քայտումներու հակասական հոգեվիճակներ, երբ գլխաւոր հերոսը բարձրաձայն կը խորհրդածէ կեանքի, մահուան, մեծութեան, յաղթանակի, մանկութեան, կորուստի, յուսախառութեան եւ այլ նիւթերու մասին, կամ



զանտնէ կ'արծարծէ իր մօր, ընկերակից թիկնապահին եւ շին իմաստունին հետ ունեցած երկխօսութիւններուն միջոցաւ:

«Կուտ, հաւազկեր եւ տրամաբիկ հիւսուածքով» քննագիրին շէֆտիրեան մակարդակը տոյունող բնագրաներն ու յօդուածագիրները կը ծանրանան Մանուէլ Ճիմիի քառերակն ինքնուրոյն լեզուին վրայ, որ խօսքին չափ կարեւորութիւն կ'ընծայէ արտայայտչական այլ միջոցներու՝ կացութիւնները քարգմանող պարին, շարժումին, երաժշտութեան, քննադրարարումին եւ սայնային հնարներուն, որոնք *«Կ'անցնին առարկայական սահմանէն անդին եւ կ'արտայայտեն այն կացութիւնները, զորս խօսքը չի յաջողիր արտայայտել»*, ինչպէս կը գրէ Լոնտոն երասարակուող «Ալ-Ուսաթ» շարաքաթերը:

«Ալ-Ուսաթ» շարաքաթերի մշակութային էջին մէջ տեղ գտած «Սուրիական «Ճենկիչխան»ը՝ ինքնատիպ փորձառութիւն մը» խորագրեայ անդ-

բարձր կերպով. «Այս փորձառութիւնը բաւական ազատցն է, որ սուրբական թատրոնը ի վիճակի է հրամցնելու նորը եւ յատկանշականը, երբ անոր կ'ընծայուին անհրաժեշտ տուեալները»:

Իսկ սուրբական «Տունուն» շաբաթը թատերական ֆնանսատնրէն Մուսթաֆա Ապպուտ, «Ճենկիզխան» բռնակալը կ'իյնայ խղճմտանքի ափին մէջ՝ խորագրեալ իր վերլուծական յօդուածով՝ մէկ առ մէկ անդրադառնալով ետք այս թատերական ներկայացման յաջողութիւնը երաշխաւորած ազգակներուն, դերակատարներուն խաղարկութեան, յարակից մանրամասնութիւններուն եւ բնագրիչին «թատերական ամբողջական ներկայացում» մտայնացման, դիտել կու տայ, որ իր այս գործով Մանուէլ Ճինի անլի կը բիրտիցանէ տարիներու ուշագրաւ կենսափորձով ձեւաւորուած իր թատերական ծրագիրը, որ «կը ձգտի ստեղծել թատերական ներկայացում մը, որ գլխաւորաբար կը հիմնուի միայն պատկերին վրայ»:

Աւստիք Իսահակեանի պատմութեան ֆէն թատերական քարտ ու հարուստ պահերու ոլորտներուն քարտնայած Մանուէլ Ճինի բնականաբար մին արժէքը շեշտելու նպատակով՝ սուրիացի

թատերական ֆնանսատը կ'ըզրափակէ. «Ճենկիզխան» թատերական ներկայացում մըն է, որ կ'իլրականացնէ կարեւոր եւ որակական ուսում մը թատրոնի բեմադրիչ Մանուէլ Ճինի թատերական ուղեւորութեան մէջ եւ կը խորացնէ անոր թատերական ծրագիրը, որուն իրականացման ի խնդիր ան կ'աշխատի երկար տարիներէ ի վեր, տքնաջան կենսունակութեամբ: Ինչ կը վերաբերի նախնի, Ճենկիզխանի անձնաւորութեան ընտրութեամբ՝ ան չի ձգտիր միայն կատարել պատմական ներկայացումը այս մարդասպանին, այլեւ կ'առաջնորդուի անկի խոր մտահոգութենէ մը, այս կերպարին ու անոր գործած վայրագութիւններուն միջոցաւ կատարել ընթացումը այն բազմաթիւ դէպքերուն, որոնք կը կատարուին մեր ժամանակակից աշխարհին մէջ»:

Դամասկոսի բնիկ վրայ արձանագրած իր յաջողութիւնէն ետք, անցնալ տարեկներին, Մանուէլ Ճինի «Ճենկիզխան»ը սուրիական թատրոնը ներկայացուցած է Գահիրէի մէջ կայացած Թատրոնի Միջազգային Փառատօնին եւ արժանացած՝ կազմակերպիչներուն, թատերական մասնագետներուն ու տեղւոյն թատերասէր հասարակութեան քարտը գնահատանքին:

**ՄՏԱՑԱՆՔ**

**ՄՏԱՑԱՆՔ**

**ԿՈՏՐԱԾ ՍՐԻՆԳԸ**

—Վէպ—

հեղինակ՝ Ծահանդուխտ  
Հրատարակություն՝ Համազգային Հայ Կրթական Միության  
Տպարան՝ Համազգայինի «Վահե Սէթեան»  
Պէյրուք, 1997, 173 էջ

•

**ԹԱԽԾՈՏ ՔՆԱՐ**

—Բանաստեղծություններ եւ արձակ էջեր—

հեղինակ՝ Թաթուլ Այնեճեան  
Հրատարակություն՝ Համազգայինի «Ս. Վրացեան» մասնաճիղի  
տպարան՝ Համազգայինի «Վահե Սէթեան»  
Պէյրուք, 1997, 245 էջ

•

**ՏԱՐՏԱՄ ՏՈՂԵՐ**

—Բանաստեղծություններ—

հեղինակ՝ Մագօ Արեան  
Պէյրուք, 1997, 128

•

**ԻՐԱՆԱՀԱՅ ՈԳԵՇՈՒՆՉ ԲԱՆԱՍՏԵՂԵԸ՝ ՎԱՐԱՆԳ**

—Ուսումնասիրություն—

հեղինակ՝ Թորոս Թորանեան  
Հրատարակություն՝ տպարան «Կիլիկիա»  
Պալէպ, 1997, 190

**ԼՈՅՍ ՏԵՍԱԻ**

**ԼՈՅՍ ՏԵՍԱԻ**

**ՑԱՅՄԱԻՈՒՐԳ**

—խորհրդածություններ—

հեղինակ՝ Պօղոս Սնայեան  
Հրատարակություն՝ տպարան հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ  
Անթիլիաս, 1997, 128 էջ

ՀԻՔԱՆԱՆ	
Հատավաճառ	10.000 Լ.Ո.
Տարեկան բաժնեգին	40.000 Լ.Ո.
ՍՈՒՐԻԱ	
Հատավաճառ	200 Ս.Ո.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	
Տարեկան բաժնեգին	40 Ամերիկեան տոլար

**پاكين**

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية  
المدير المسؤول  
السيد ارتين كارنيك فرانجيان

•

**PAKINE**  
REVUE MENSUELLE  
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire  
Dr. A. KAZANDJIAN

•

**Բ Ա Գ Ի Ն**

ԱՄՍԱԳԻՐ  
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր  
ԳՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ

Խմբագրության անդամ  
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հասցե՝  
Centre Culturel SHAGHZOYAN  
Bordj Hammoud — Liban